



# ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ա Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Դ Ե Ս

ISSN 1829-1775



Թ. 16 ՓԵՏՐՎԱՐ 2014



ՀԻՊՈԹԱԼԱՄՈՒՄԻ ՎԵՐՏԵՍՈՂԱԿԱՆ ԿՈՐԻՉԻ ԶԱՅԶԱՅՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԹՐԵՍԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՏԱՌԻՐԻՆ ՆԵՐԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ **ԷԶ 3**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՍԵԼՈՒ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐՔՈՒՐՆԵՐՈՒՄ ԿԱԼՑԻՈՒՄԻ ԵՎ ՄԱԳՆԵԶԻՈՒՄԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ **ԷԶ 142**



ՈՐՈՇ ՀԱԿԱԿՈՌՈՉԻՈՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԻԳԻԵՆԻԿ-ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ **ԷԶ 153**





ISSN 1829-1775



ԵՐԵՎԱՆԻ Մ. ԶԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER M. HERATSI

**ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**  
ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

**MEDICINE**  
**SCIENCE AND EDUCATION**  
SCIENTIFIC AND INFORMATIONAL JOURNAL

ՓԵՏՐՎԱՐ - թ. 16  
FEBRUARY - No. 16

ԵՐԵՎԱՆ - 2014  
YEREVAN - 2014

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Գլխավոր խմբագիր, խորհրդի նախագահ՝ Նարիմանյան Մ.Չ.

Գլխավոր խմբագրի տեղակալ, խորհրդի նախագահի տեղակալ՝ Ավետիսյան Լ.Ռ.

Պատասխանատու քարտուղար՝ Բայկով Ա.Վ.

Խորհրդի անդամներ՝ Աշոտյան Ա.Գ. Ավագյան Տ.Գ. Ավետիսյան Ս.Ա. Բաբլոյան Ա.Ս. Բիշարյան Մ.Ս. Հակոբյան Վ.Պ. Սիսակյան Հ.Ս. Մկրտչյան Լ.Մ. Նավասարդյան Գ.Ա. Շաքարյան Ա.Ա. Սահակյան Լ.Ա. Տատինջյան Վ.Գ.

Սրբագրիչներ՝ Հակոբյան Ա.Է. Հովսեփյան Գ.Կ.

Համակարգչային ձևավորող-օպերատոր՝ Աղաջանյան Ա.Ս.

EDITORIAL BOARD

Editor in Chief: Narimanyan M.Z.

Deputy Editor: Avetisyan L.R.

Executive secretary: Baykov A.V.

Editorial advisory board: Ashotyan A.G. Avagyan T.G. Avetisyan S.A. Babloyan A.S. Bisharyan M.S. Hakobyan V.P. Sisakyan H.S. Mkrtchyan L.M. Navasardyan G.A. Shakaryan A.A. Sahakyan L.A. Tatintsyanyan V.G.

Technical Editors: Hakobyan A.E. Hovsepian G.K.

Layout/Design: Aghajanyan A.S.

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Երևանի Մ. Զեյնալու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ Հասցե՝ Երևան, Կոյունիք 2, 0025 Հեռախոս՝ (+374 10) 58 25 32 Էլ. փոստ՝ msej@ysmu.am Գրանցման վկայականի համար՝ 03Ա054456, տրված՝ 07.06.2002թ. Տպաքանակ՝ 200 Համարի թողարկման պատասխանատու՝ Բայկով Ա.Վ. Թողարկման տարեթիվ՝ 2014

Տպագրումը՝ «Լեգալ Պլյուս» իրատարակչություն Հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3 Հեռ.՝ (+374 10) 23 11 09, (+374 10) 27 69 92

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Table with 2 columns: Article Title and Page Number. Includes titles in Armenian and English, such as 'ВЛИЯНИЕ ТАУРИНА НА ПОКАЗАТЕЛИ ВАРИАБЕЛЬНОСТИ РИТМА СЕРДЦА...' and 'УЛЬТРАСТРУКТУРА И ВЫРАЖЕННОСТИ ЛИМФАДЕНОПАТИИ ПРИ ИНФЕКЦИОННОМ...'.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Table with 2 columns: Article Title and Page Number. Includes titles in Russian, such as 'ОБУЧЕНИЕ, ОСНОВАННОЕ НА ПРОБЛЕМЕ' and 'УСЛОВИЯ ЗАВИСИМОСТИ ХАРАКТЕРА И ВЫРАЖЕННОСТИ ЛИМФАДЕНОПАТИИ...'.

ՀՏԴ. 612.117:612.821

## ՀԻՊՈԹԱԼԱՄՈՒՄԻ ՎԵՐՏԵՍՈՂԱԿԱՆ ԿՈՐԻՉԻ ԶԱՅԶԱՅՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԹՐԵՍԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՏԱՌԻՐԻՆ ՆԵՐԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Սահակյան Ն.Ա., Սիմոնյան Լ.Յու., Շողերյան Ս.Ա.  
ՀՊԱՀ, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն

**Բանալի բառեր՝** հոգեհուզական սթրես, տաուրին, ՍՌՓ ՄՎ, ՀՀՄՀ, իմոբիլիզացիա, ԷՍԳ, հիպոթալամուս:


Սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները գերակշռում են բնակչության մահացության տեսակարար կշռի մեջ՝ դրանով իսկ դառնալով սոցիալ-բժշկական արդի խնդիր: Մարդու օրգանիզմի հարմարվողական մեխանիզմներին ներկայացվող ֆիզիոլոգիական պահանջները օրեցօր մեծանում են նրա վրա ունեցած ծայրահեղ գործոնների ազդեցությամբ: Հատկանշական է, որ այս համակարգի հիվանդությունների զարգացման մեջ մեծ նշանակություն ունեն տարաբնույթ, առավելապես հոգեհուզական սթրեսի ազդեցությունը: Վերջինս, ինչպես նաև ցանկացած տեսակի սթրեսի հետևանքով ձևավորվող պրեմորբիդ (նախահիվանդություն) շրջանները բնորոշվում են սթրեսային ռեակցիայի առաջատար մեխանիզմի՝ հիպոթալամո-հիպոֆիզ-մակերիկամային համակարգի (ՀՀՄՀ) ակտիվացմամբ [8], որի համար պատասխանատու գլխուղեղի բարձրագույն կառույցների, մասնավորապես վերտետողական (supra-optic nucleus (SON)) և հարվորոթային (paraventricular nucleus (PVN)) կորիզների ազդեցությամբ էլ նշված իրավիճակներում պայմանավորված է վեգետատիվ ֆունկցիաների (սիրտ-անոթային, շնչառական համակարգի) կարգավորիչ գործընթացների և օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ վիճակի վերահսկողությունը [13]: Սթրեսային իրավիճակներում նյարդային դիսֆունկցիայի հետևանքով ձևավորվող բազմաթիվ ախտահարումների դեպքում (սրտային անբավարարություն, ռիթմի խանգարումներ) խիստ կարևորվում են դրանց կանխարգելմանը նպաստող միջոցները, որոնց շարքը աստիճանաբար ընդլայնվում է: Այս առումով հետաքրքիր է տաուրին ամինթթուին, որի բարերար ազդեցությունը սրտային անբավարարության դեպքում դեռևս 1980-ական թվականներին բացահայտվել է Ազունայի կողմից [5]: Եվ չնայած տաուրինի հակասթրեսային ազդեցության բացահայտման որոշ ուսումնասիրություններին [8]՝ այնուամենայնիվ այս ուղղությամբ կատարված բացահայտումները սակավաթիվ են:

Վերջին տարիներին սթրեսային իրավիճակների ժամանակ օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիաների


գնահատման տեսանկյունից ուշագրավ է ՍՌՓ ՄՎ-ի (սրտային ռիթմի փոփոխականության մաթեմատիկական վերլուծություն) մեթոդը, որը կիրառելի է ոչ միայն փորձարարական ֆիզիոլոգիայում, այլև բժշկության բնագավառում: ՍՌՓ-ն օրգանիզմի ամբողջ համընդհանուր ռեակցիան է՝ ի պատասխան արտաքին և ներքին միաջավայրի ազդեցության, որն արտահայտում է սիրտ-անոթային համակարգի վրա բազմաթիվ կարգավորիչ ազդեցությունների հետևանքով [1]: Ներկայացվող աշխատանքում սրտային ռիթմի վերլուծության ամբողջ գործընթացը կատարվել է «ELEPHIS» ծրագրային համակարգի միջոցով [3]: Աշխատանքում ուսումնասիրվել է վերտետողական կորիզի քայքայման ազդեցությունը սթրեսի ենթարկված առնետների սիրտ-անոթային համակարգի գործունեության վրա տաուրին ներարկելու դեպքում:

### Հետազոտության նյութը և մեթոդները

Հետազոտությունները կատարվել են սպիտակ ոչ գծային առնետների վրա (քաշը՝ 200-220գ): Աշխատանքում սթրեսը (5 ժամ տևողությամբ) առաջացվել է անշարժացմամբ՝ (իմոբիլիզացիոն սթրես) մեջքի վրա վերջույթները ամրակցելով: Հարկ է նշել, որ փորձարարական ֆիզիոլոգիայում անշարժացումը հոգեհուզական սթրեսի մոդել է և գնահատվում է որպես հարուցված սթրես՝ թույլ ֆիզիկական, հոգեբանական ուժեղ բաղադրիչներով [6]: SON-ի միակողմանի էլեկտրոլիտիկ քայքայումը նեմբուտալային անզգայացմամբ (35մգ/կգ) անողային հոսանքով (70 միկրովոլտ) իրականացվել է երկբևեռ, խողովակաձև էլեկտրոդով: SON-ի կորորիկատներն են՝ AP=1,3, L=1,8, DV=9,6 [10]: ԷՍԳ-ի (էլեկտրասրտագիր) գրանցումը (5 րոպե տևողությամբ) կատարվել է արծաթյա էլեկտրոդներով արտածման ստանդարտ երկրորդ եղանակով՝ ձախ թաթ, աջ ոտք: ՍՌՓ-ի ցուցանիշների մաթեմատիկական վերլուծությունը կատարվել է անշարժացումից առաջ, անմիջապես հետո, ինչպես նաև SON-ի քայքայումից 7 և 14 օր անց, ինչպես առանց տաուրինի, այնպես էլ տաուրինի ներարկմամբ (50մգ/կգ չափաբաժնով): ՍՌՓ-ի մասին սովորաբար դատում են ըստ R-R ինտերվալների տևողության: Այդ նպատակով



**Նկ. 1** SON-ի քայքայման ազդեցությունը ՍՌՓ-ի ցուցանիշների վրա հետսթրեսային փուլի 7-րդ և 14-րդ օրերին առանց տաուրինի



**Նկ. 2** SON-ի քայքայման ազդեցությունը ՍՌՓ-ի ցուցանիշների վրա հետսթրեսային փուլի 7-րդ և 14-րդ օրերին տաուրինի ներարկման պայմաններում

մաթեմատիկական վերլուծության են ենթարկվել EՍԳ-ի R-R ատամիկների միջակայքների ժամանակային շարքերը (ինտերվալագրանցում): ՍՌՓ ՄՎ մեթոդը բնութագրվում է ստատիստիկ և հիստոգրաֆիկ մի շարք ցուցանիշներով, որոնցից աշխատանքում ներկայացվում են հետևյալ 3-ը՝

- ◆ CR (cardial Rate)՝ սրտային ռիթմ,
- ◆ IVE (index of vegetative equilibrium)՝ վեգետատիվ հավասարակշռության ինդեքս,
- ◆ ITRS (index of tension of regulatory systems)՝ կարգավորիչ համակարգերի լարվածության ինդեքս:

**Յետազոտության արդյունքներ և դրանց քննարկումը**

ՍՌՓ-ի ցուցանիշները արտացոլում են ոչ միայն բուն սիրտ-անոթային համակարգի վեգետատիվ կարգավորման առանձնահատկությունները, այլև բնութագրական են վեգետատիվ նյարդային համակարգի բոլոր կարգավորիչ գործընթացների համար [2]: Այս հանգամանքը, բնականաբար զգալիորեն բարձրացնում է նշված ցուցանիշների դերն ու նշանակությունը ուղեղի կարգավորիչ մեխանիզմների ֆունկցիաների գնահատման ախտորոշիչ գործընթացներում: Մեր փորձերում գնահատվել է հիպոթալամուսի վերտետողական կորիզի քայքայման ազդեցությունը առնետների սիրտ-անոթային համակարգի գործունեության վրա հետսթրեսային փուլում, ինչպես առանց տաուրինի, այնպես էլ տաուրինի ներարկմամբ: Փորձաշարում հետազոտվել են 2 խումբ առնետներ: 1-ին խմբում սթրեսի ենթարկված առնետների SON-ի քայքայման ազդեցությունը ՍՌՓ-ի հետազոտվող ցուցանիշների վրա հետսթրես-

ային փուլում գնահատվել է առանց տաուրինի: Փորձաշարի այս փուլում հետազոտվող ցուցանիշները՝ CR, IVE, ITRS, դրսևորվել են գրեթե նույն օրինաչափություններով: Նշված ցուցանիշներից հետսթրեսային փուլի 14-րդ օրը որոշակիորեն վերականգնվել է միայն սրտային ռիթմը՝ (CR): Յետսթրեսային փուլի 7 և նույնիսկ 14-րդ օրերին IVE՝ վեգետատիվ հավասարակշռության և կարգավորիչ համակարգերի լարվածության ինդեքսների (ITRS) բարձր ցուցանիշները հավանաբար բացատրվում են այն տեղաշարժերով, որոնք ընկած են վազոպրեսիներգիկ նեյրոնների կողմից իրականացվող օսմոկարգավորիչ ֆունկցիաների և օրգանիզմի ջրային հաշվեկշռի կարգավորման հիմքում [7]:

Վազոպրեսինի քանակի նվազումը, որը տվյալ դեպքում պայմանավորված է SON-ի քայքայմամբ, հավանաբար ուղեկցվում է պաթոլոգիկ մի շարք պրոցեսներով՝ օրգանիզմի հեղուկ հոմեոստազի հիմնական հսկողության խանգարմամբ և որպես հետևանք՝ ընթանում հեղուկի մեծ քանակի արտազատմամբ: Համաձայն որոշ տվյալների [11] վազոպրեսինը ակտիվացնում է սիմպաթոդրենալային համակարգը՝ դրանով իսկ ինչ-որ չափով նվազեցնելով սթրեսային ազդեցության շեմը: Ենթադրվում է, որ սթրեսային իրավիճակում վերջինիս քանակի կտրուկ նվազումը և դրանով պայմանավորված ախտաբանական տեղաշարժերը օրգանիզմում ձևավորում են գերլարված իրավիճակ: Մեր կողմից հետազոտված բարձր ցուցանիշները վկայում են մի կողմից՝ սիմպաթիկ ազդեցությունները գերակշռելու (IVE), մյուս կողմից՝ սրտային ռիթմը կարգավորող բարձրագույն կառույցների լարվածության մասին (ITRS) (Նկ. 1): Այլ պատկեր է դիտվել սթրեսի ենթարկված այն

առնետների դեպքում, որոնց վերտեսողական կորիզի քայքայմանը 14 օր շարունակ հաջորդել է տաուրինի ներորովայնային ներարկումը: Այս ընթացքում հետազոտվող հիստոգրաֆիկ ցուցանիշները՝ CR, IVE, ITRS, վերականգնվել են: Ինչպես երևում է տվյալներից (Նկ. 2), սթրեսից հետո ստուգիչի հետ համեմատ կտրուկ աճել է սրտային ռիթմը, որը, նույն մակարդակում պահպանվելով վերտեսողական կորիզի քայքայումից հետո, լիարժեք վերականգնվել է միայն տաուրին ներարկելու դեպքում: Հատկանշական է, որ սթրեսից հետո դիտվող IVE-ի բարձր ցուցանիշները, որոնք վկայում են սիմպաթիկ ազդեցությունները գերակշռելու մասին, նույն մակարդակում պահպանվելով SON-ի քայքայումից հետո, աստիճանաբար վերականգնվել են միայն տաուրինի ներարկումից հետո: ՍՌՓ-ի մաթեմատիկական վերլուծությամբ կատարվող հետազոտություններում առավել հաճախ հանդիպող ցուցանիշներից է ITRS-ն, որն արտացոլում է սիմպաթիկ մեխանիզմների ընդգրկմամբ ընթացող կարգավորման գործընթացների կենտրոնացման չափը: Մեր փորձերում ստուգիչը մոտավորապես 3 անգամ գերազանցած այս բարձր ցուցանիշները, անփոփոխ մնալով SON-ի քայքայումից հետո, վերականգնվել և նորմային են հասել միայն հետսթրեսային փուլում տաուրին ներարկելու դեպքում: Այսպիսով, գնահատելով SON-ի քայքայման ազդեցությունը սթրեսի ենթարկված առնետների ՍՌՓ-ի վրա՝ կարող ենք եզրակացնել, որ առաջին խմբի սթրեսի ենթարկված առնետների դեպքում SON-ի քայքայումից հետո դիտվող սիմպաթիկ համակարգի ընդգրկված ակտիվացումը պահպանվել է նաև հետսթրեսային փուլում: Երկրորդ խմբի սթրեսի ենթարկված առնետների SON-ի քայքայ-

ումից հետո տաուրին ստացած կենդանիների դեպքում դիտվել է սիմպաթիկ ակտիվության նվազում՝ պարասիմպաթիկ ազդեցության գերակշռմամբ: Հարկ է նշել, որ տաուրին ստացած կենդանիների սիմպաթ-պարասիմպաթիկ փոխհարաբերությունների նորմալացումը հաստատվում է նաև մասնագիտական գրականության այն տվյալներով, համաձայն որոնց՝ սիմպաթիկ նյարդային համակարգի գերակտիվության դեպքում այս ամինաթթուն օգտագործվել է որպես հանգստացնող պրեպարատ, մինչև նույն ժամանակ ամրապնդել սրտամկանը՝ պահպանելով կալցիում իոնների հաշվեկշիռը [4]: Մեր փորձերում, տաուրինի ազդեցության տվյալներից դատելով, կարելի է եզրակացնել, որ այս ամինաթթուն օրգանիզմի ադապտիվ հնարավորությունները կարող է բարելավել նաև սիրտ-անոթային համակարգի գործունեությունը կարգավորող բարձրագույն կառույցների (լիմբիկ համակարգ, գլխուղեղի կեղև) վրա ունեցած իր վերականգնող հատկության շնորհիվ՝ հատկապես կարևորելով այն հանգամանքը, որ վերջինս գլխուղեղում գերակշռող հինգ ամինաթթուներից մեկն է: Հավանաբար սթրեսային պայմաններում օրգանիզմում առաջացող տաուրինի պակասության լրացումը նպաստում է սիրտ-անոթային համակարգի գործունեությունն ապահովող բարձրագույն կառույցների կարգավորմանը:

Այսպիսով, ելնելով նշված համակարգի գործունեության վրա ունեցած կարգավորման բնույթից, կարող ենք ենթադրել, որ տաուրինը ունի վերականգնող ազդեցություն և կարող է դառնալ այն միջոցներից մեկը, որը կանխում է սթրեսի հետևանքով զարգացող սիրտ-անոթային համակարգի մի շարք ախտահարումներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Баевский Р.М. Математический анализ сердечного ритма при стрессе. М., Наука, 1984, с. 22
2. Баевский Р.М. Научно-теоретические основы использования анализа сердечного ритма для оценки степени напряжения регуляторных систем организма. Материалы международного симпозиума. „Компьютерная ЭКГ на рубеже столетий“. М., 1999, Электронное издание
3. Геворкян Э.Г. Система компьютерной оценки функционального состояния регуляторных механизмов мозга человека в норме и патологии. Сборник: „Современные аспекты радиацион. медицины и ожогов“ Ереван, 2003, с. 105-115
4. Захаров И.В. Клиническая эффективность дибикора при лечении артериальной гипертензии у беременных // Автореферат диссертации на соискание ученой степени кандидата медицинских наук, Волгоград, 2007
5. Azuma J., Takihara K., Awata N. et al. Taurine and failing heart : experimental and clinical aspects. Prog. Clin. Biol. Res., 1985, 179: 195-213
6. Boldwine O.R. Zheng G. The effects of voluntary exercise and immobilization on hormonal immunity and endocrine responses in rats. Physiol. Behav., 61, pp. 447-453, 1997
7. Ihrasher T.N., Brouen C.J. Drinking and vazopresin release during ventricular in fusions of hipotalamic solutions. American journal of physiology, 2000, 238, B 340-5
8. Herman J.P., Ostrander M.M., Muller N.K. Limbic system mechanisms of stress regulation: hypotalamic-pituitary-adrenocortical axis // Prog. Neuropsychopharmacol. Biol. Psychiatry, 2005, Vol. 29, № 8, pp. 1201-1213
9. Nakagawa K., Kuriyama K. // Effect of taurine on alteration in adrenal functions induced by stress. Jpn J. Pharmacol., 1975 Dec; 25 (6), pp. 737-746
10. Paxinos G., Watson C. The rat brain in stereotaxic coordinates Elsevier, Academic press., 5 th-ed, 367p. 2005
11. Schrier R.W., Abraham W.T. Hormones and hemodynamics in heart failure // N. Engl. J. Med., 1999, Vol. 341, pp. 577-585
12. Viveros-Paredes J.M. Dysregulation of the Th1/Th2 cytokine profile is associated with immunosuppression induced by hypotalamic-pituitary-adrenal axis activation in mice. // Int. immunopharmacol., 2006, Vol. 6, N 5, p. 774-781
13. Zelena D., Mergl Z., Foldes A. et al. Role of hypotalamic inputs in maintaining pituitary-adrenal responsiveness in repeated restraint // Am. J. Physiol. Endocrinol. Metab., 2003, Vol. 285, N 5, pp. 1110-1117

## РЕЗЮМЕ

## ВЛИЯНИЕ РАЗРУШЕНИЯ СУПРАОПТИЧЕСКИХ ЯДЕР НА ДЕЯТЕЛЬНОСТЬ СЕРДЕЧНО-СОСУДИСТОЙ СИСТЕМЫ КРЫС В ПОСТСТРЕССОВЫЙ ПЕРИОД В УСЛОВИЯХ ДЕЙСТВИЯ ТАУРИНА

Տաակյան Ն.Ա., Տիմոնյան Լ.Յ., Շոգերյան Ս.Ա.  
 АГПУ, кафедра физиологии человека и животных

**Ключевые слова:** психоэмоциональный стресс, таурин, математический анализ variability ритма сердца, иммобилизация, ЭКГ, гипоталамус.

Целью данного исследования явилось изучение влияния разрушения супраоптических ядер (СОЯ) на деятельность сердечно-сосудистой системы крыс в постстрессовый период в условиях действия таурина. Для изучения и оценки функции сердечно-сосудистой системы нами применялась методика математического анализа variability ритма сердца (МА ВРС). Интраперитонеальное введение таурина крысам с

разрушенными СОЯ в постстрессовом периоде приводит к восстановлению изученных показателей ВРС. Из полученных нами экспериментальных данных можно предположить, что в стрессовых ситуациях в организме возникает дефицит таурина и для улучшения деятельности сердечно-сосудистой системы необходимо применение таурина, оказывающего, вероятно, модулирующее действие на функциональное состояние организма и способствующее стабилизации деятельности сердечно-сосудистой системы.

## SUMMARY

## THE INFLUENCE OF THE SUPRAOPTIC NUCLEUS DECOMPOSITION ON THE ACTIVITY OF THE CARDIOVASCULAR SYSTEM OF RATS UNDER STRESS IN THE CONDITIONS OF INJECTION WITH TAURINE

Sahakyan N.A., Simonyan L.Yu., Shogeryan S.A.  
 ASPU, Chair of Human and Animal Physiology

**Keywords:** stress, psychoemotion stress, taurine, HRV MA, immobilization, ECG, hypothalamus.

In the present report the influence of the supraoptic nucleus (SON) destruction on the activity of the cardiovascular system of rats under stress in the conditions of taurine injection was studied. For the evaluation of the cardiovascular system, the HRV MA (the method of mathematical analysis of the heart rhythm variability) was applied. There was SON destruction in rats af-

ter immobilization for 5 hours, and intra abdominal injection with 50mg/kg dose of taurine was carried out immediately after the decomposition. The influence of taurine was evaluated on the 7th and then the 14th days. The results of the studies showed that all the examined parameters were restored in the animals that had received taurine. This which allows assuming that taurine has beneficial influence on the activity of the cardiovascular system and is endowed with recovery features.

УДК: 612.117:612.821

## ВЛИЯНИЕ ТАУРИНА НА ПОКАЗАТЕЛИ ВАРИАБЕЛЬНОСТИ РИТМА СЕРДЦА И МОРФОФУНКЦИОНАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ ПАРАВЕНТРИКУЛЯРНЫХ ЯДЕР КРЫС ПРИ ИММОБИЛИЗАЦИОННОМ СТРЕССЕ

Саакян Н.А.

Армянский государственный педагогический университет, Кафедра физиологии человека и животных

**Ключевые слова:** математический анализ variability ритма сердца, гипоталамо-гипофизарно-адренортикарная система, таурин, иммобилизационный стресс, ЭКГ, паравентрикулярные ядра.

На протяжении десятилетий функциональная активность гипоталамо-гипофизарно-адренортикарной системы (ГГАС) при стрессе остается интригующим объектом изучения в области медицины и физиологии. Как известно, при многих патологических состояниях отмечается гиперактивация ГГАС, что связано с ее дисрегуляцией на уровне паравентрикулярных ядер (ПВЯ) гипоталамуса, который представляет собой уникальный центр регуляции вегетативных функций организма (дыхательной, сердечно-сосудистой). В настоящее время все большее внимание уделяется механизмам регуляции сердечно-сосудистой системы со стороны лимбических структур, в частности гипоталамуса, при различных патологических состояниях либо психоэмоциональном стрессе, вызывающих различного рода изменения в ее деятельности. Для изучения и оценки этих изменений при воздействии стресса нами применялась методика математического анализа variability ритма сердца (МА ВРС) [1] на фоне разрушения ПВЯ и в условиях применения таурина – одной из пяти аминокислот, необходимых для нормальной деятельности организма [3].


### Материалы и методы

Эксперименты были проведены на белых лабораторных крысах-самцах (n=30), массой 200-220 г. Иммобилизация животных (5 часов) проводилась в положении на спине с фиксацией конечностей. Во II-ом стандартном отведении регистрировали ЭКГ животных с помощью серебряных электродов, прикрепленных на соответствующих конечностях. Одностороннее элетролитическое разрушение ПВЯ анодным током у наркотизированных нембуталом крыс (35 мг/кг внутривентрикулярно) осуществлялось с помощью биполярного концентрического электрода по атласу Вистар. Запись ЭКГ проводилась у бодрствующих животных до и сразу

после иммобилизации. Далее производилось одностороннее разрушение ПВЯ. На 7-ой и 14-ый день постстрессового периода регистрировали ЭКГ при ежедневном введении таурина (50 мг/кг внутривентрикулярно). Данные были обработаны с помощью электронной таблицы Microsoft Excel. Уровень статистической достоверности различий сравниваемых экспериментальных данных определяли с помощью t-критерия Стьюдента. Гистохимический анализ изменений ПВЯ гипоталамуса в постстрессовый период, как без таурина, так и с таурином оценивался по активности  $Ca^{2+}$ -зависимой кислой фосфатазы [2]. Данный методический подход основан на выявлении внутриклеточных фосфорсодержащих соединений, занимающих ключевые позиции в обменных энергетических процессах, направленных на сохранение и поддержание жизненно-важных систем.


### Результаты и их обсуждение

Наряду с частотой сердечных сокращений (до и после стресса - 284 и 404 уд/мин, спустя 7 и 14 дней после применения таурина - 329 и 290 уд/мин соответственно,  $p < 0,001$ ) нами приведены два функционально значимых индекса ВРС: вегетативный показатель ритма (ВГР) и индекс напряжения регуляторных систем (ИНРС). Повышение уровня ВГР до и после стресса (8,9 и 34 у.е. соответственно,  $p < 0,001$ ), свидетельствует о сдвиге вегетативных процессов в сторону преобладания симпатических влияний, который после разрушения ПВЯ в постстрессовом периоде в течение 7-и и 14-и дневного применения таурина почти нормализуется (16,8 и 11,5 у.е. соответственно). Выявленные изменения обнаружены и в динамике ИНРС, почти пятикратное повышение которого после стресса указывает на напряженность функционирования вегетативной нервной системы (до 333 и после 1635 у.е. соответственно,  $p < 0,001$ ). Иная картина наблюдается у животных с разрушенными ПВЯ, получивших в постстрессовом периоде таурин в течение 7-и и 14-и дней (702 и 475 у.е. соответственно,  $p < 0,001$ ). Уже на 7-ой день наблюдается тенденция нормализации показателей, а к 14-ому



**Рис. 1 А** В цитоплазме парвоцеллюлярных клеток ПВЯ представлен крупноглыбчатый центральный хроматин

**Рис. 1 Б** В цитоплазме макроцеллюлярных клеток ПВЯ наблюдается осадок свинца с высокой фосфатазной активностью



**Рис. 2** Клеточные структуры (А, Б) паравентрикулярного ядра (PVN) крыс, подвергнутых 5-часовому иммобилизационному стрессу и инъекции таурина. Представлены регенерированные нейроны с высокой фосфатазной активностью: в цитоплазме парвоцеллюлярных клеток (А), в эктопированных ядрах и цитоплазме макроцеллюлярных клеток (Б), в перикарионе и коротких толстых отростках мелкозернистый осадок фосфата свинца локализован равномерно

дно происходит почти полное их восстановление, что свидетельствует о положительном протекторном влиянии таурина. Необходимо отметить, что в наших экспериментах животные после стресса (даже при одностороннем разрушении ПВЯ) без применения таурина не выживали.

Нормальная активация центральных гипоталамических и экстрагипоталамических центров, продуцирующих кортиколиберин при стрессе, представляет собой необходимое условие для развития адаптивного стрессорного ответа, в то время как недостаточная или избыточная секреция кортиколиберина приводит к развитию постстрессовой патологии. Поскольку ПВЯ являются источником гипофизотропных нейропепти-

дов КРФ (кортиколиберин-релизинг-фактор) и аргинин-вазопрессина, которые стимулируют секрецию АКТГ (адренокортикотропный гормон) в передней доле гипофиза [6], то можно предположить, что повреждение ПВЯ снижает нейрогуморальную связь между гипоталамусом и гипофизом, оставляя последний без полноценной центральной регуляции, в связи с чем у животных, по-видимому, уменьшается возможность быстрого реагирования на острый стресс. Вероятно длительное интраперитонеальное введение таурина у крыс с разрушенными ПВЯ в постстрессовом периоде приводит к восстановлению изученных показателей ВРС. Однако активация центрального звена ГГАС при стрессе во многом определяется участием не только гипоталаму-

са, но и других структур лимбической системы головного мозга (миндалевидное тело, аммонов рог, медиальная префронтальная кора и др.) и таурин, являясь одной из 5-и необходимых для нормального функционирования мозга аминокислот, по-видимому, возмещает, корректирует возникшую дисфункцию ПВЯ гипоталамуса и других звеньев лимбических структур в стрессовых ситуациях. Важно отметить, что существуют достаточно убедительные данные, демонстрирующие роль таурина как активного осморегулятора, что особенно важно для нейронов головного мозга [4]. По некоторым данным в гипоталамусе выход во внеклеточное пространство таурина оказывает протекторное действие на нейроны [5]. Наряду с указанными исследованиями нами проводился гистохимический анализ изменений структуры ПВЯ гипоталамуса крыс, подвергнутых 5-часовому иммобилизационному стрессу. На представленных рисунках ясно видно, что в клетках ПВЯ резко замедлены процессы фосфорилирования (рис. 1 А): в цитоплазме гранулярный осадок фосфата свинца обнаруживается в виде тонкого кольца под клеточной мембраной или же равномерно рассеян. Фосфатазная активность крупных нейронов выше (рис. 1 Б): ядра набухшие, эктопированные, осадок фосфата свинца сконцентрирован в одном из полюсов клетки, что придает им вид полулуны.

Гистохимическое исследование воздействия ами-

нокислоты таурина на структуру ПВЯ гипоталамуса крыс, подвергнутых 5-часовому иммобилизационному стрессу, в разные постстрессовые сроки (3-7 дней) показало, что в исследуемом нами отделе мозга наблюдается полная регенерация нейронов; морфологическая картина практически не отличается от таковой интактных клеток по форме и размерам. В гипоталамическом паравентрикулярном ядре представлены регенерированные парвоцеллюлярные клетки с высокой фосфатазной активностью в цитоплазме (рис. 2 А). У этих клеток пока еще ядра эктопированы и отличаются фосфатазной активностью, что характерно для дегенерированных клеток, тогда как в цитоплазме регенерированных магноцеллюлярных клеток, у которых видны короткие толстые отростки, равномерно рассеян мелкозернистый осадок фосфата свинца (рис. 2 Б).

Из полученных нами экспериментальных данных можно предположить, что в стрессовых ситуациях в организме возникает дефицит таурина. В связи с этим для улучшения центральной регуляции сердечно-сосудистой системы необходимо применение таурина, с целью оказания протекторного действия на нейроны ПВЯ, улучшения функционального состояния мозга и тем самым стабилизации деятельности сердечно-сосудистой системы.

## ЛИТЕРАТУРА

1. Баевский Р.М. и соавт. Математический анализ сердечного ритма при стрессе. М., Наука, 1984
2. Меликсетян И.Б. Выявление активности  $Ca^{2+}$ -зависимой кислой фосфатазы в клеточных структурах мозга крыс. Морфология (Санкт-Петербург.), 2007, т. 131, № 2, с. 77-80
3. Azuma J., Sawamura A., Awata N. et al. // Therapeutic effect of taurine in congestive heart failure: a double-blind crossover trial. Clin. Cardiol., 1985, N 8, pp. 276-282
4. Huxtable R. Role of taurine in the central nervous system // Journal of Biomedical Science, 2010, V. 72, pp. 101-163
5. Sha D., Wei J., Jin H. Mechanism of neuro-protective function of taurine. Exp. Med. Biol., 2009, 643: pp. 169-179
6. Zelena D., Mergl Z., Foldes A. Role of hypothalamic inputs in maintaining pituitary-adrenal responsiveness in repeated restraint // Am. J. Physiol. Endocrinol. Metab., 2003, V. 285, N 5, pp. 1110-1117

## ԱՄՓՈՓՈՒՄ

**ԻՍՈՐԻԼԻԶԱՑԻՈՆ ՍԹՐԵՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՌԻՐՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՍՌՓ-Ի ԵՎ ՀԱՐՓՈՐՈՔԱՅԻՆ ԿՈՐԻԶԻ ՄՈՐՖՈՖՈՒՆԿՑԻՈՆԱԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ***Սահակյան Ն.Ա.**ՀՊԱՀ, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն***Բանալի բառեր`** *իմոբիլիզացիոն սթրես, հարվորոքային կորիզ, տաուրին, ՀՀԱՀ, ՍՌՓ ՄՎ, ԷՍԳ:*

Աշխատանքի հիմնական նպատակն է գնահատել տաուրինի ազդեցությունը սթրեսի ենթարկված առնետների սրտային ռիթմի փոփոխականության (ՍՌՓ) և հարվորոքային կորիզի մորֆոֆունկցիոնալ փոփոխությունների վրա: Սթրեսի ենթարկված առնետների ՀՓ-ի կորիզի քայքայմանը հաջորդել է տաուրինի ներորովայնային ներարկումը, որի արդյունքում

դիտվող հետազոտվող ՍՌՓ-ի ցուցանիշների վերականգնումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ այս ամինաթթուն օրգանիզմի հարմարվողական հնարավորությունները կարող է բարելավել սիրտ-անոթային համակարգի գործունեությունը կարգավորող բարձրագույն կառույցների վրա ունեցած իր վերականգնող հատկության շնորհիվ: Դրա վառ ապացույցն է տաուրին ստացած կենդանիների ՀՓԿ-ի մորֆոֆունկցիոնալ փոփոխությունների գնահատումը:

## SUMMARY

**INFLUENCE OF TAURINE IN RATS HEART RHYTHM VARIABILITY AND MORPHOLOGICAL CHANGES OF PARAVENTRICULAR NUCLEUS AFTER IMMOBILIZATION STRESS***Sahakyan N.A.**ASPU, Chair of Human and Animal Physiology***Keywords:** *stress, immobilization, taurine, heart rhythm variability, cardio-vascular system.*

This report is about the studies of the influence of the paraventricular nucleus (PVN) destruction on the activity of the cardio-vascular system of rats under stress in the conditions of taurine injection. For the evaluation of the cardiac system, the MA HRV (the method of mathematical analysis of the heart rhythm variability) was applied. There was PVN destruction in rats after

immobilization for 5 hours, and immediately after decomposition with intra abdominal injection with taurine with the dose 50mg/kg was carried out. The influence of taurine was evaluated on the 7<sup>th</sup> and then the 14<sup>th</sup> days. The results of these studies showed that all the examined parameters were restored in the animals that had received taurine. This allows assuming that taurine has beneficial influence on the activity of the coronel system and is endowed with recovery features. We have also studied the morphofunctional changes of PVN.

ՀՏԴ. 616.381-008.718

# ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՈՐԲՈՔԱՅԻՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇՈՎ ԱՌՆԵՏՆԵՐԻ ԹՈՔԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ ՀԻՊԵՐՏԵՆԶԻԱՅԻ ԴԵՊՈՒՄ

Միրիչանյան Մ.Մ.<sup>1</sup>, Պապյան Ա.Վ.<sup>2</sup>, Հարությունյան Յ.Վ.<sup>1</sup>

<sup>1</sup> ԵՊԲՀ, վիրաբուժության թիվ 4 ամբիոն

<sup>2</sup> ԵՊԲՀ, ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն

**Բանալի բառեր՝** ներորովայնային ճնշում, համակարգային բորբոքային ռեակցիայի համախտանիշ:

**Ներածություն:** Ներորովայնային հիպերտենզիան (ՆՈՅ) ժամանակակից բժշկության արդիական խնդիրներից մեկն է [5, 7]: ՆՈՅ-ով հիվանդների շրջանում որովայնի խոռոչում ճնշման բարձրացումը հանգեցնում է բազմաօրգանային անբավարարության համախտանիշի (ԲՕԱՀ) զարգացմանը [9]: Հարաճող ՆՈՅ-ով հիվանդների մահացությունը 40-100% է [1, 4]:

Ներորովայնային ճնշումը (ՆՈՃ) որովայնի խոռոչում առկա ճնշումն է: Ըստ Կ. Թոյենսի և համահեղինակների (2000)՝ ներորովայնային ճնշման նորմալ արժեքը 0-7 մմ ջրի սյուն է, և գրեթե յուրաքանչյուր որովայնահատումից հետո գործնականորեն բարձրանում է մինչև 5-12 մմ ջրի սյուն:

ՆՈՃ-ի առավելագույն արժեքը, ըստ որի կարելի է ենթադրել ՆՈՅ-ի մասին, մինչ օրս վիճելի է, քանի որ այս բարդության ձևավորումը, ըստ Բ. Գելֆանդի (2005), հիմնականում պայմանավորված է հիվանդների ֆիզիոլոգիական առանձնահատկություններով:

10 մմ սնդ. սյ-ից ցածր ՆՈՃ ունեցող հիվանդների դեպքում հիմնականում ՆՈՅ չի դիտվում, իսկ 25 մմ սնդ. սյ-ից բարձրի դեպքում հաճախ զարգանում է ներորովայնային կոմպարտմենտ համախտանիշը (ՆԿՀ) [11]: 10-25 մմ սնդ. սյ. ՆՈՃ ունեցող հիվանդների դեպքում ՆԿՀ-ի առաջացման հավանականությունը պայմանավորված է զարկերակային ճնշման և որովայնի առաջային պատի առաձգականության առանձնահատկություններով [10, 12]:

Ներորովայնային կոմպարտմենտ համախտանիշի միջազգային միության (WORLD SOCIETY OF THE ABDOMINAL COMPARTMENT SYNDROME - Antwerp, Belgium 2007) բնորոշմամբ՝

- ◆ *Ներորովայնային հիպերտենզիան* (ՆՈՅ) ՆՈՃ-ի կայուն աճն է 12 մմ ս.ս. և բարձր, որն արձանագրվում է 4-6 ժամվա ընթացքում առնվազն երեք անգամ չափելիս, առանց տեսանելի օրգանական ախտահարումների,
- ◆ *Ներորովայնային կոմպարտմենտ համախտանիշը* (ՆԿՀ) ՆՈՃ-ի 20 մմ ս.ս. բարձր ցուցանիշ

է, որն ուղեկցվում է առնվազն մեկ օրգանի ֆունկցիայի խանգարումով [6]:

Վերջին տարիներին հրատարակված մասնագիտական գրականության (WSACS, 2011) տվյալների համաձայն՝ ՆԿՀ-ի առաջացման պատճառները բազմազան են. ըստ Ս. Մալքոնի (2000)՝ դրանք բաժանվում են չորս խմբի՝ 1) հետվիրահատական, 2) հետվնասվածքային, 3) հիմնական հիվանդությունների բարդություններ և 4) նպաստող գործոններ: Վերջին խմբին են պատկանում համակարգային բորբոքային ռեակցիայի համախտանիշը (ՀԲՌՀ) և սեպսիսը:

Չնայած վերջին տասնամյակում սեպսիսի և ՀԲՌՀ-ի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններին՝ այս համախտանիշների մահացությունը էականորեն նվազեցել է դեռ չի հաջողվում: Այն կայուն բարձր է (40-70%) [6, 13, 15, 19], ուստի ՀԲՌՀ-ն և սեպսիսը շարունակում են մնալ ժամանակակից բժշկագիտության ամենարդիական խնդիրներից մեկը [14, 17]: Ըստ որոշ մասնագետների [2, 17]՝ բարձր մահացության պատճառն այն է, որ ՀԲՌՀ-ի և սեպսիսի ախտորոշումը կատարվում է ուշացումով, ուստի և նպատակային բուժումը սկսվում է ոչ ժամանակին:

ՀԲՌՀ-ն օրգանիզմի համակարգային բորբոքային պատասխանն է ցանկացած ազդակի նկատմամբ (վնասվածք, վարակ, վիրահատություն և այլն), որի դեպքում խաթարվում է բորբոքամետ և հակաբորբոքային միջնորդների միջև դինամիկ հավասարակշռությունը [18, 20]:

Ռ. Բոնեի (1992) բնորոշմամբ և 2001 թ. International Sepsis Definitions Conference եզրակացությամբ հաստատվել է, որ ՀԲՌՀ-ի ախտորոշումը հիմնավորվում է հետևյալ 4 կլինիկա-լաբորատոր ցուցանիշներից առնվազն երկուսի առկայության դեպքում՝

1. ջերմաստիճանը 38°C և բարձր կամ 36°C և ցածր,
2. սրտի կծկումների հաճախականությունը (ՍԿՀ) 90 զարկ/րոպե և ավելի,
3. շնչառության հաճախականությունը (ՇՀ) 20/րոպե և ավելի կամ PaCO<sub>2</sub> 32 մմ ս.ս.-ից ցածր,
4. լեյկոցիտները 12,0x10<sup>9</sup>/լ և ավելի կամ 4,0x10<sup>9</sup>/լ և ցածր, կամ տհաս ձևերի քանակը 10%-ից ավելի: Ծայրահեղ վիճակներում հիվանդների ախտա-

Ֆիզիոլոգիական պրոցեսների հիմքում ՉԲՌ-ի պատճառով առաջացող մազանոթների թափանցելիության բարձրացումն է: ՉԲՌ-ն հանգեցնում է մազանոթներից հեղուկի արտահոսքին դեպի միջբջջային տարածություն, հատկապես դեպի աղիքների պատեր, միջընդերք և հետորովայնամզային տարածություն [8]:

ՆՈՃ-ի բարձրացման և համակարգային բորբոքման ռեակցիայի համախտանիշի միջև առկա ախտածին կապերը ուսումնասիրելու համար կատարվել է առնետների փորձարարական հետազոտություն:

**Ջետազոտության նպատակն է** ուսումնասիրել ՉԲՌ-ով առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները՝ պայմանավորված ՆՈՃ-ի ցուցանիշի բարձրացմամբ:

**Նյութը և մեթոդները:** Ջետազոտությունը իրականացվել է 30 սեռահասուն, 160-200 գրամ քաշով, սպիտակ ոչ ցեղային արու առնետների վրա: Կենդանիները պահվել են 5 վանդակների մեջ, յուրաքանչյուրում 6 առնետ, 18-22°C ջերմաստիճանային (օրական 12 ժամ լույս, 12 ժամ մութ) պայմաններում՝ սննդից և ջրից ազատ օգտվելու հնարավորությամբ: Ջուրը տեղադրված է եղել հատուկ կաթոցիկներով, իսկ սնունդը դրված է եղել կենդանիների գլխի վերևում տեղադրված կերակրամաններում: Ջետազոտությունը որևէ էթիկական խնդիրներ բարձրացնող գործողություններ (ցավի առաջացում, ջրի կամ սննդի ընդունման սահմանափակում, զգայական սահմանափակում կամ խթանում և այլն) չի պարունակել:

Կենդանիների վրա միջամտությունները կատարվել են «Լաբորատոր կենդանիների պահման և փորձեր անցկացնելու ուղեցույցի» պահանջներին համապատասխան, ինչպես նաև հաշվի են առնվել փորձարարական նպատակով ողնաշարավոր կենդանիների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի պահանջները (Ստրասբուրգ, 18.03.1986թ.), ասեպտիկայի և անտիսեպտիկայի կանոնները:

Ջետազոտության մեջ ընդգրկված կենդանիները բաժանվել են 4 խմբի: Առաջին (վերահսկվող) խմբում (n=6) եղել են ինտակտ առողջ առնետներ: Երկրորդ (n=8), երրորդ (n=8) և չորրորդ (n=8) խմբերի առնետներին ներորովայնային ներարկվել է 100մգ/կգ չափաբաժնով պիրոզենալ (լիպոպոլիսախարիդ) դեղը, որից 2-4 ժամ անց ի հայտ են եկել ՉԲՌ ախտանիշները: Երրորդ և չորրորդ խմբերի առնետների դեպքում ՉԲՌ-ն մոդելավորելուց հետո կատարվել է ՆՌ-ի մոդելավորում հետևյալ եղանակով. թեթև եթերային գոլորշիների ազդեցությամբ մեջքի վրա պառկած վիճակում ներորովայնային ներարկվել է 15-35մլ 0,9%-անոց ֆիզիոլոգիական լուծույթ և ստացվել է համապատասխան

նաբար 12-15 և 16-20 մմ ս.ս. ՆՈՃ: Ներորովայնային ճնշումը չափվել է ներուղիղաղիքային եղանակով՝ ME-DIPLUS 5410 Rectal balloon catheter, 4.5 Fr-ով:

ՉԲՌ և ՆՌ մոդելավորելուց 24 ժամ անց օրգանների և հյուսվածքների ձևաբանական փոփոխությունները ուսումնասիրելու նպատակով կատարվել է առնետների դեկապիտացիա՝ նեմբուտալային անզգայացմամբ:


Ուսումնասիրվել են առնետների թոքերում առաջացած ձևաբանական փոփոխությունները:

Հյուսվածքները պահպանվել են 10%-անոց չեզոք բուֆերային ֆորմալինի լուծույթում: Պատրաստվել են պարաֆինային սալիկներ, որոնցից ստացվել են 4 մկմ հաստություն ունեցող հատույթներ: Հատույթները ներկվել են հեմոտոքսիլին և եոզին եղանակով: Ձևաբանական փոփոխությունները գնահատվել են OLYMPUS CX41 SYSTEM մանրադիտակով, պատկերների x40, x100, x200, x400 խոշորացումներով:

**Արդյունքները և դրանց վերլուծությունը**


Առաջին (վերահսկվող) խմբի առնետների (n=6) թոքերի ձևաբանական պատկերը եղել է նորմալի սահմաններում:

Երկրորդ խմբի (n=8) առնետների դեպքում ՉԲՌ-ն մոդելավորելուց հետո թոքերի պարենխիմում նկատվել է գերարյունություն, ալվեոլների միջնապատում և խոռոչներում օջախային պոլիմորֆ ինֆիլտրացիա (սկ. 1):




**Սկ. 1.** Երկրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x100 ներկված H&E եղանակով)


Երրորդ խմբի առնետների թոքերում հայտնաբերվել են անոթների գերարյունություն, ալվեոլների պատերի արտահայտված հաստացում, նկատվել է լիմֆոհիստիոցիտար (մակրոֆագա) ինֆիլտրացիա, ալվեոլոցիտների պոլիֆերացիա (ինտերստիցիալ թոքաբորբի պատկեր): Սակայն թոքի դրոնքի ավշային հանգույցները եղել են ինտակտ (սկար 2-3):



**Նկ. 2.** Երրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x100 ներկված H&E եղանակով)



**Նկ. 3.** Երրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x200 ներկված H&E եղանակով)




**Նկ. 4.** Երրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x100 ներկված H&E եղանակով)

Երրորդ խմբի առնետների դեպքում ինտերստիցիալ թոքաբորբին զուգընթաց հայտնաբերվել են նաև օջախային արյունազեղումներ հեմոսիդերոզով, օջախային այտուց (նկար 4-6):


Չորրորդ (n=8) խմբի առնետների դեպքում ՅԲՈՂ-ի ախտանիշներ առաջանալուց հետո մոդելավորվել է II աստիճանի ՆՌՅ (16-20 մմ ս.ս.): Այս խմբի առնետների թոքերում հայտնաբերվել են ավելուների պատերի հաս-

տացում, լիմֆո-հիստիոցիտար չափավոր ինֆիլտրացիա, ավելուցիտների չափավոր բազմացում և արտահայտված շուրջբրոնխային բորբոքային ռեակցիա:


Չորրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունների պատկերը ներկայացված է նկար 7-8-ում:




**Նկ. 5.** Երրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x200 ներկված H&E եղանակով)



**Նկ. 6.** Երրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x200 ներկված H&E եղանակով)



**Նկ. 7.** Չորրորդ խմբի առնետների թոքերի ձևաբանական փոփոխությունները (x40 ներկված H&E եղանակով)



**Նկ. 8.** Չորրորդ խմբի անոտների թոքերի ձևաբանական փոփոխությունները ( $\times 100$  ներկված H&E եղանակով)

**Եզրահանգումներ:** Այսպիսով, մեր փորձարարական հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ

ՋԲՌ-ով անոտների դեպքում թոքերի պարենխիմում նկատվում է գերարյունություն, ալվեոլների միջնապատում և խոռոչներում օջախային պոլիմորֆ բջջային ինֆիլտրացիա: Իսկ ՋԲՌ-ով անոտների դեպքում և՛ I աստիճանի (12-15 մմ ս.ս.), և՛ II աստիճանի (16-20 մմ ս.ս.) ներորովայնային հիպերտենզիա մոդելավորելուց հետո թոքերում հայտնաբերվում է անոթների գերարյունություն, ալվեոլների պատերի հաստացում, լիմֆոհիստիոցիտար (մակրոֆագալ) ինֆիլտրացիա (ինտերստիցիալ թոքաբորբ), ինչպես նաև ալվեոլոցիտների պրոլիֆերացիա: Այս փուլի ձևաբանական փոփոխությունները վկայում են նաև սիրտ-անոթային համակարգի հնարավոր ախտահարման մասին, և անհրաժեշտ է սրտամկանի լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել՝ զուգահեռներ անցկացնելու նպատակով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- An G, West MA. Abdominal compartment syndrome: a concise clinical review. Crit Care Med 2008; 36:1304.
- Beat Mullera, Kenneth L. Becker. - Procalcitonin: how a hormone became a marker and mediator of sepsis. //SWISS MED WKLY 2001;131:595-602 www.smw.ch
- Cheatham ML, Ivatury RR, Malbrain ML, Sugrue M (2006) Options and challenges for the future. In: Ivatury R, Cheatham M, Malbrain M, Sugrue M (eds) Abdominal Compartment Syndrome. Landes Bioscience, Georgetown, pp 295-300
- Cheatham ML, Safcsak K. Is the evolving management of intra-abdominal hypertension and abdominal compartment syndrome improving survival? Crit Care Med 2010; 38:402.
- Cheatham ML, Safcsak K. Percutaneous catheter decompression in the treatment of elevated intraabdominal pressure. Chest 2011; 140:1428.
- Engel C., Brunkhorst M., Bone H. G. et al. - Epidemiology of sepsis in Germany: results from a national prospective multicenter study // Intensive Care Med., 2007, V. 33, №4, P. 606 - 618
- Gestring M. et al., 2012 <http://www.uptodate.com/contents/abdominal-compartment-syndrome/contributors>
- [http://en.wikipedia.org/wiki/Abdominal\\_compartment\\_syndrome](http://en.wikipedia.org/wiki/Abdominal_compartment_syndrome)
- Malbrain M.L.N.G. Abdominal pressure in the critically ill//M.L.N.G. Malbrain// Curr.Opin.Crit.Care. - 2000. - Vol.6. - P.17-29.
- Malbrain ML, Chiumello D, Pelosi P, et al (2005) Incidence and prognosis of intraabdominal hypertension in a mixed population of critically ill patients: a multiple-center epidemiological study. Crit Care Med 33:315-322
- Schein M, Ivatury R. Intra-abdominal hypertension and the abdominal compartment syndrome. Br J Surg 1998; 85:1027.
- Sugrue M (2005) Abdominal compartment syndrome. Curr Opin Crit Care 11:333-338
- Yol S. Is urinary bladder pressure a sensitive indicator of intra-abdominal pressure?/S. Yol, A. Kartal, S. Tavli et al.//Endoscopy. - 1998. - Vol. 30. - P. 778-780
- Бархатова Н. А. - Детоксикационная и противовоспалительная терапия генерализованных форм инфекции мягких тканей//Научно-практический журнал Хирургия им. Н. И. Пирогова, 2009, N5, стр. 27 - 30
- Гаин Ю.М. Синдром абдоминальной компрессии в хирургии//Ю.М. Гаин, С.А. Алексеев, Б.Г. Богдан// Белорусский мед. журнал. 2004., №3,9. - С.20-31.
- Гельфанд Б.Р., Проценко Д.Н., Игнатенко О.В., Ярошецкий А.И.. Синдром интраабдоминальной гипертензии (обзор литературы) // Consilium medicum. 2005. Том 07/N 1.
- Гельфанд Б.Р., Проценко Д.Н., Игнатенко О.В., Ярошецкий А.И.. Синдром интраабдоминальной гипертензии (обзор литературы) // Consilium medicum. 2005.Том 07/N 1.
- Гельфанд Е.Б., Гологорский В.А., Гельфанд Б.Р. Клиническая характеристика абдоминального сепсиса у хирургических больных // Consilium medicum, Интенсив. тер. - 2000. - №1.
- Руднов В.А. Сепсис, современное состояние проблемы: Учебно-методическое пособие. - Екатеринбург, 2000. - 29 с.
- Шестопапов А.Е., Бакеев Р.Ф. Современные аспекты объёмзамещающей терапии острой кровопотери у раненых // Акт. вопр. интенсив. тер. - 2001. -№ 8-9.-С.6-12.

## РЕЗЮМЕ

**МОРФОЛОГИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЕ ЛЕГКИХ У КРЫС С СИНДРОМОМ СИСТЕМНОЙ ВОСПАЛИТЕЛЬНОЙ РЕАКЦИИ ПРИ РАЗВИТИИ ВНУТРИБРЮШНОЙ ГИПЕРТЕНЗИИ**

Мириджанян М.М.<sup>1</sup>, Папян А.В.<sup>2</sup>, Арутюнян Г.В.<sup>1</sup>

<sup>1</sup> ЕГМУ, Кафедра Хирургии № 4

<sup>2</sup> ЕГМУ, Кафедра патологической анатомии и клинической морфологии

**Ключевые слова:** экспериментальное исследование, внутрибрюшное давление, синдром системного воспалительного ответа.

Внутрибрюшная гипертензия – одна из актуальных проблем современной медицины. У больных с внутрибрюшным давлением повышение давления в брюшной полости приводит к развитию синдрома полиорганной недостаточности.

Для изучения патогенетических связей между повышением внутрибрюшного давления и синдромом системной воспалительной реакции было проведено экспериментальное исследование на крысах, целью которого являлось изучение морфологических изменений легких у крыс с синдромом системной воспалительной реакции, в зависимости от степени повышения внутрибрюшного давления.

Спустя 24 часа после моделирования синдрома системной

воспалительной реакции и внутрибрюшной гипертензии изучались развившиеся морфологические изменения легких.

В данном экспериментальном исследовании при синдроме системной воспалительной реакции выявлены гиперемия паренхимы легких, с очаговой полиморфно-клеточной инфильтрацией в альвеолах. А у крыс при синдроме системной воспалительной реакции с внутрибрюшной гипертензией (I и II степени) в легких обнаружено полнокровие сосудов, утолщение перегородок альвеол с лимфо-гистоцитарной (макрофагальной) инфильтрацией (интерстициальная пневмония), с пролиферацией альвеолоцитов. Морфологические изменения в этой стадии свидетельствуют о возможном вовлечении сердечно-сосудистой системы, что требует изучение изменений миокарда.

## SUMMARY

**LUNG CHANGES OF RATS WITH SYSTEMIC INFLAMMATORY RESPONSE SYNDROME IN STAGE OF INTRA ABDOMINAL HYPERTENSION**

Mirijanyan M.M.<sup>1</sup>, Papyan A.V.<sup>2</sup>, Harutyunyan H.V.<sup>1</sup>

<sup>1</sup> YSMU, Department of Surgery No. 4

<sup>2</sup> YSMU, Department of Pathological Anatomy and Clinical Morphology

**Keywords:** experimental research, intra-abdominal pressure, systemic inflammation reaction syndrome.

Intra-abdominal hypertension (IAH) is one of the actual problems of modern medicine. The increase of intra abdominal pressure in patients with IAH leads to the development of multiple organ dysfunction syndrome (MODS).

Experimental research has been carried out to investigate pathogenic links between the increase of intra abdominal pressure (IAH) and systemic inflammatory reaction syndrome (SIRS) in rats. The aim of this research is to study lungs morphological changes in rats with SIRS depending on level of intra abdominal hypertension (IAH). Morphological changes originated in rats' lungs were examined 24 hours later after SIRS and IAH mod-

eling.

Our experimental research data indicate that hyperemia of lungs parenchyma, focal polymorph cellular infiltration in alveoli septum and cavities are observed in rats with SIRS.

At modeles with intra abdominal hypertension of both grades I (12-15mm Hg) and II (16-20 mm Hg), hyperemia of vessels, thickening of alveoli septa, lymphohistiocytic (macrophageal) infiltration (interstitial pneumonia) as well as proliferation of alveocytes are revealed in lungs of rats with SIRS.

Morphological changes of this stage are sugestive for possible involvement of cardiovascular system and require additional studies of myocardium.

# ԱՂԻՔԻ ՊԱՏԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՈԼԻԽՈՍԻԳՄԱՅՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՈՒՄ

Խոստիկյան Ն.Գ.<sup>1</sup>, Հակոբյան Ա.Ս.<sup>2</sup>, Հակոբյան Գ.Ա.<sup>1</sup>

<sup>1</sup> ԵՊԲՀ, Ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն

<sup>2</sup> ԵՊԲՀ, Կոլոպրոկտոլոգիայի ամբիոն

**Բանալի բառեր՝** դոլիխոսիզմա, աղիքների նյարդային համակարգ, մորֆոլոգիա:


## Արդիականությունը

Ըստ Ս. Նավենի տվյալների՝ բրոնխիալ փորկապությունը Անգլիայում թաքնված ազգային խնդիր է, որի կապակցությամբ բուժվում է բնակչության 50%-ը, Գերմանիայի բնակչության՝ 30%-ը, աշխարհի բնակչության՝ 37-50%-ը, զարգացած երկրների երիտասարդ բնակչության՝ 3%-ը, միջին տարիքի բնակչության՝ 8%-ը, ծերերի՝ 20%-ը: Զրոնիկական կոլոստագի տարածվածությունն ամբողջ աշխարհում այդ խնդիրը դարձնում է քաղաքակրթության հիվանդություն [8,9]:


Մասնագիտական գրականության տվյալների համաձայն՝ մինչև 20 տարեկան անձանց բրոնխիալ փորկապությունների պատճառը հաստ աղիքի անատոմիական առանձնահատկություններն են, 20-40 տարիքային խմբի դեպքում՝ անոռեկտալ ախտաբանությունը: 40-ն անց տարիքային խմբի դեպքում բրոնխիալ փորկապության պատճառ կարող են լինել անոռեկտալ, հոգեծին, նյարդածին, էնդոկրին, ստամոքսաղիքաբանական ախտաբանությունները [6]:

Ըստ վիճակագրական հետազոտությունների տվյալների՝ տևտեսապես զարգացած երկներում բնակչության 2,5-20%-ը տառապում է բրոնխիալ փորկապությամբ, որոնցից յուրաքանչյուր երրորդը պայմանավորված է չբացահայտված պատճառագիտության կամ նյարդածին մեգադոլիխոկոլոնով [1]: Հայտնի է, որ բրոնխիալ փորկապության հաստաղիքային կանգը, որը կայուն է պահպանողական բուժման նկատմամբ, հաճախ պայմանավորված է հաստ աղիքի զարգացման և կպման անոմալիաներով: Խթաղիքի ինտրամուրալ նյարդային համակարգի զարգացման արատները կարող են հանգեցնել հաստ աղիքի որոշակի հատվածների գալարակծկանքներից անջատմանը, ինչպես նաև վեր տեղակայված հատվածների ատոնիայի և լայնացման, որն էլ արտահայտվում է փորկապությամբ և ներթունավորմամբ: Զրոնիկական կոլոստագի համախտանիշը, որը զուգակցվում է խթաղիքի չբացահայտված պատճառագիտության չափերի մեծացմամբ, գնահատվում է որպես իդեոպաթիկ մեգադոլիխոկոլոն:


Ի տարբերություն ազանգլիոնար ձևերի՝ խթաղիքի ինտրամուրալ նյարդային համակարգի պաթոմորֆոգենեզը իդեոպաթիկ և նեյրոգեն մեգադոլիխոկոլոնի դեպքում անբավարար է ուսումնասիրված [1]: Սիզմայածն խթաղիքի՝ Նորմայից ավելի երկարացումը (1մ և ավելի) հավելյալ գալարների ձևավորմամբ գնահատվում է որպես դոլիխոսիզմա: Դոլիխոսիզմայով պայմանավորված բրոնխիալ փորկապության դեպքում առկա են ոչ միայն հաստաղիքային կանգի ախտանիշներ, այլև ի հայտ են գալիս արտաղիքային ախտանիշներ, որոնք և դառնում են առաջնային: Դրանք են՝ Էնցեֆալոպաթիան (ուղեղախտությունը), լեղուղիների դիսկինեզիան (դժվարաշարժությունը), բրոնխիալ փորկապության փոխախառնաբերությունը, լեղապարկաբորբը, տասներկամատնյա աղիքի բորբոքումը, ստամոքսի և տասներկամատնյա աղիքի խոցը, բրոնխիալ պիելոնեֆրիտը, հենաշարժական և սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները, մաշկի, աչքերի ախտահարումները, որոնք հավանաբար կապված են հաստ աղիքում անտրոպոմորֆ տիպի պորտոկավալ հավելյալ բերանակցումների առկայությամբ: Այդ պատճառով, լյարդը շրջանցելով, ընդհանուր արյան հոսք են անցնում տարբեր նյութեր, այդ թվում նաև հիստամինը [3]: Կ. Ն. Սալամովը և համահեղինակները, Ս. Մ. Հենրին նշում են, որ երկարած հաստ աղիքը նպաստում է աղիքային պարունակության տեղաշարժի դանդաղեցմանը, որն էլ իր հերթին նպաստում է հեղուկի հավելյալ հետներծծմանը և ծանրացնում է շնորոգված ածխաջրերի բակտերիային ֆերմենտային ճեղքումը: Աղիքային պարունակության ծավալի քննարկումը և մածուցիկության փոփոխությունը հանգեցնում են օրգանի պատի զգացողության թուլացման և պարունակության կանգի՝ խորացնելով ախտաբանական տեղաշարժերը: Այսպիսով, հաստ աղիքի չափերը կարևոր դեր ունեն բրոնխիալ փորկապության ախտածնության գործում [1,3]: Չնայած որոշ մասնագետներ նշում են, որ խթաղիքի երկարած հատվածների և փորկապության միջև ուղիղ համեմատական կապը բացակայում է [2,4]: Մեր կողմից իրականացվող գիտական աշխատանքը նվիրված է վիրահատության ենթարկված մեծահասակ հիվանդների դոլիխոսիզմայով պայմանավորված բրոնխիալ փոր-




ա) Աղիքի լորձաթաղանթի բորբոքային ինֆիլտրացիա, ենթալորձային շերտի այտուց, հենքի ֆիբրոզ, ուռճացում, անոթների գերարյունություն (հեմէոզին  $\times 100$ ):



բ) Աղիքի միջկանաչային զանգվիոնի այտուց՝ նեյրոնների վակուոլային սնուցախանգարման երևույթներով (հեմէոզին  $\times 400$ ):



գ) Աղիքի շճաթաղանթի անոթների գերարյունություն, կանգ և շուրջանոթային լիմֆոցիտոցիտար ինֆիլտրացիա (հեմէոզին  $\times 100$ ):



դ) Լիմֆոցիտների օջախային կուտակում շճաթաղանթի անոթի շուրջը (հեմէոզին  $\times 400$ ):

**Նկ. 1. Սիզմայածև աղիքի ձևաբանական պատկերը դոլիխոսիզմայով հիվանդների դեպքում**

կապության դեպքում հաստ աղիքի ձևաբանական ուսումնասիրությանը: Հիմք ընդունելով, որ բրոնխիկական կոլոստոզի ախտաբանության հիմքում աղիքի պատի նյարդամկանային համակարգի ախտահարումն է [3,7,5], կատարվել է հիվանդների մասնահատված սիզմայածև աղիքիների հյուսվածաբանական հետազոտություն:

**Հետազոտության նյութը և մեթոդները**

Հյուսվածաբանական հետազոտության են ենթարկվել “Իզմիրյան” բժշկական կենտրոնում վիրահատված 20-40 տարեկան 29 հիվանդների (20 իգական սեռի, 9 արական սեռի, միջինը՝ 28 տարեկան) սիզմայածև խթաղիքները: Բոլոր խթաղիքների տարբեր հատվածներից

պատրաստվել են պարաֆինային բլոկներ և սերիական հյուսվածաբանական հատվածներ, որոնք ուսումնասիրվել են հեմատոքսիլին-էոզինի, ալցիան կապույտի, ըստ Վան Գիզոնի՝ պիկրոֆուբսինի, Նիսլի և Գուլջիի՝ ըստ Ֆոքսի մոդիֆիկացիայի հյուսվածաբանական մեթոդներով:

**Հետազոտության արդյունքները**

Իգական սեռի հիվանդների սիզմայածև խթաղիքների հյուսվածաբանական պատրաստուկների ուսումնասիրությամբ պատի շերտերում հայտնաբերվել են հետևյալ փոփոխությունները՝ լորձաթաղանթի սեփական թիթեղի բրոնխիկական բորբոքում, անոթների գերարյունություն, կանգ, հեմոսիդերոզի մանր տեղամասեր, Էպի-

թելի դեակվամացիայի օջախներ, որոշ հատվածներում գեղձերի կիստոզ լայնացում (սկ.1ա, հեմէոզին):

Ենթալորձային շերտում հայտնաբերվել են այտուց, ուռճացում, անոթների գերարյունություն, տեղ-տեղ մանր արյունազեղումներ, շուրջանոթային լիմֆոլեյկոհիստիոցիտար ինֆիլտրատներ, որոշ դեպքերում լիմֆոիդ ֆոլիկուլների հիպերպլազիա՝ դրանց անոթավորմամբ (սկ.1բ, հեմէոզին):

Մկանային շերտերի փոփոխությունները ներկայացված են եղել հիպերտրոֆիայով, ֆրագմենտացիայով, փեղեքմամբ, միջմկանային բորբոքային լիմֆոհիստիոցիտար կուտակումներով, երկայնական մկանային շերտի անգիոմատոզով, այդ անոթների կանգով, որոշ դեպքերում մանր արյունազեղումներով և հեմոսիդերինի մանր կուտակումներով: Մկանաթելերի միջև նկարագրվել են նաև շուրջանոթային լիմֆոիդ կուտակումներ, առկա է եղել նաև թույլ ֆիբրոզ, իսկ որոշ պատրաստուկներում բորբոքային ինֆիլտրատները գրավել են միջմկանային գանգլիոնների տեղը: Բոլոր դեպքերում միջմկանային գանգլիոնները առկա են եղել հատածի ամբողջ երկարությամբ և հանդես են եկել բազմաձևությամբ՝ կլոր, օվալ, շրջայական ձգվող խիտ կազմությամբ, փռված, ուռճացված, ձևափախված, դատարկ: Այն հատվածներում, որտեղ մկանաթելիկների ցրիվ դասավորությունը և հենքի այտուցը առավել արտահայտված են եղել, միջմկանային գանգլիոնները մեր կողմից ցրված և դատարկ են գնահատվել: Այն գանգլիոններում, որտեղ թափանցել են անոթներ և բորբոքային բջիջներ, նեյրոնները բացակայել են: Հայտնաբերվել են միայն գլխալ բջիջներ: Ուռճացված գանգլիոններում հաշվվել են 2-4 հսկա նեյրոններ, որոնցից շատերը ենթարկված են եղել վակուոլային սնուցախանգարման: Մեր կողմից քիչ քանակի գանգլիոններում հնարավոր է եղել հայտնաբերել նորագոյացող գանգլիոններ: Գուլջիի մեթոդով կլոր և ձգվող գանգլիոններում հայտնաբերվել են 3-5 տանձաձև նեյրոնների ուրվագծեր, որոնց կորիզները բացակայել են:

Բոլոր պատրաստուկներում նկարագրվել է աղիքի շճաթաղանթի և հարադիքային ճարպաբջջանքի անոթների գերարյունություն, կանգ, մանր և խոշոր արյունազեղումներ, նեյտրոֆիլ լեյկոցիտներից կազմված բորբոքային ինֆիլտրատներ: Ինֆիլտրատում հայտնաբերվել են նաև եոզինոֆիլներ, մակրոֆագեր, լիմֆոցիտների շուրջանոթային կուտակումներ (սկ.1գ, դ, հեմէոզին):

Նույն տարիքային խմբի արական սեռի հիվանդների սիզմայաձև խթանադիքիների հյուսվածաբանական հետազոտությամբ հայտնաբերված ձևաբանական փոփոխությունները Եական տարբերություն չեն ունեցել իգական սեռի շրջանում վերը նկարագրվածից: Սակայն առավել արտահայտված է եղել մկանային շերտերի գերաճը, փե-

ղեքումը, ֆրագմենտացիան, հենքի այտուցը: Միջմկանային գանգլիոնները նույնպես աչքի են ընկել բազմազանությամբ, սակայն դրանք առավել պահպանված են գնահատվել իգական սեռի նույն տարիքային խմբի համեմատությամբ: Մեծ գանգլիոններում հնարավոր է եղել հաշվել 8-9 նեյրոններ, իսկ կլոր, փոքր գանգլիոններում՝ 2-3 նեյրոններ: Պետք է նշել, որ այս դեպքերում նույնպես որոշ գանգլիոններ հյուսված են եղել բորբոքային բջիջների՝ դեպի գանգլիոն թափանցման և մկանաթելերի փեղեքման պատճառով:

### Եզրակացություն

Մեր հետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ երկու սեռերի դեպում էլ աղիքի պատի բոլոր շերտերում առկա են եղել արտահայտված ախտաբանական տեղաշարժեր, սակայն ակնառու փոփոխություններ նկարագրվել են միջմկանային գանգլիոններում: Դրանք աչքի են ընկել բազմաձևությամբ, որոշ գանգլիոններում հստակ հաշվվել են հսկա նեյրոնները, մյուս գանգլիոնները եղել են հյուսված, երբեմն գնահատվել են դատարկ: Նրանցում նկարագրվել են նեյրոնների վակուոլային դիստրոֆիա, բորբոքային բջիջների առկայություն՝ գանգլիոնների լրիվ տրանսֆորմացիայով: Գանգլիոններում նկարագրվել է նաև անոթների ներած: Ինչպես վերը նկարագրված է արական սեռի հիվանդների դեպքում, միջմկանային գանգլիոններն առավել պահպանված են եղել նույն տարիքային խմբի իգական սեռի հիվանդների համեմատ:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունները լրացնում են տարբեր պատճառներով առաջացած քրոնիկական փորկապության հետևանքով վիրահատված հիվանդների հաստ աղիքի ձախ հատվածների ձևաբանական հետազոտության նկարագրությունների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տվյալները [3,5]: Մեր հետազոտության արդյունքներից պարզ է դառնում, որ աղիքի պատի ձևաբանական փոփոխությունները՝ դոլիխոսիզմայով պայմանավորված քրոնիկական փորկապության դեպքում առավել ծանր են արտահայտված իգական սեռի հիվանդների շրջանում: Իգական սեռը քանակապես գերակշռում է նշված տարիքային խմբում, հատկանշական է նրանց աղիքային գանգլիոններում ծանր, բարդ ախտաբանական տեղաշարժերը՝ պայմանավորված նեյրոնների քանակական, որակական, ձևաբանական փոփոխություններով: Աղիքային գանգլիոնների քանակական և որակական գնահատմամբ մեր հետազոտության արդյունքում ակնկալում ենք դոլիխոսիզմայի դեպքում սահմանել չափորոշիչներ՝ հաստ աղիքի մասնահատման սահմանները որոշելու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев Е.В. Обоснование хирургического лечения идеопатического мегадолихоколон; Автолеф. Дисс. Канд. Мед наук, Ростов-на-Дону, 2006 г.
2. Воробьев Г.И., Жученко А.П.и соав. Хирургические аспекты хронических запоров у взрослых. Материалы научно-практической конференции проктологов. Тула 1986;8-10
3. Джавадов Э.А Хирургическое лечение хронического колостазы, Хирургия 12, 2009г.
4. Кабанова И.Н. Клиническое значение радионуклидных исследований в диагностике хронических запоров: Дис. Д-ра. Мед. Наук М 1997
5. Лымарь М.С. Аспекты диагностики и хирургическое лечение хронического запора у взрослых Автореф.диссер. кандидата медицинских наук : Ростов-на-Дону, 2008, 160 с.
6. Хаммад Е.В., Григорьева Г.А., Анализ причин хронических запоров, результаты лечения, Москва - РЖГГК- 2000- N4-с. 84-87
7. Gabrio Bassotti1, et al.Chronic constipation: no more idiopathic, but a true neuropathological entity Gastroenterology and Hepatology From Bed to Bench. 2011;4(3):109-115
8. George Peppas, Vangelis G. Alexiou, Eleni Mourtzoukou and Matthew E. Falagas Epidemiology of constipation in Europe and Oceania: a systematic review, BMC Gastroenterology 2008, 8:5
9. Higgins P.D., Johanson J.F. Epidemiology of constipation in North America: a systematic review. Am J. Gastroenterol. 2004;99:750-759.

## РЕЗЮМЕ

## МОРФОЛОГИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ СТЕНКИ КИШКИ ПРИ ХРОНИЧЕСКИХ ЗАПОРАХ, ОБУСЛОВЛЕННЫХ ДОЛИХОСИГМОЙ

Хостибян Н.Г.<sup>1</sup>, Акопян А.С.<sup>2</sup>, Акопян Г.А.<sup>1</sup>

<sup>1</sup> ЕГМУ, Кафедра патологической анатомии и клинической морфологии

<sup>2</sup> ЕГМУ, Кафедра колопроктологии

**Ключевые слова:** долихосигма, энтеральная нервная система, морфология.

Вышеуказанными методами нами были подвергнуты гистологическому исследованию отделы сигмовидной кишки оперированных больных, страдающих долихосигмой – 29 больных (20 – женщин, 9 – мужчин) 20-40 лет, средний возраст которых составил 28 лет. У больных обоих полов во всех оболочках стенки кишки наблюдались патологические сдвиги, однако выраженные изменения наблюдались в межмышечных ганглиях. Они отличались полиморфизмом: в некоторых ганглиях отчетливо подсчитывались гигантские нейроны, в других обнаруживались истощенные нейроны, некоторые - описываемые как пустые (в них наблюдались вакуолярная дистрофия нейронов, наличие воспалительных клеток, полная трансформация ганглиев). В ганглиях имело место также

врастание сосудов. Как было описано выше, у лиц мужского пола межмышечные ганглии были более сохранены, чем у лиц женского пола той же возрастной группы.

Таким образом, полученные результаты идентичны с данными, имеющимися в литературе. Это относится к морфологическим описаниям левых отделов толстой кишки оперированных больных, страдающих хроническим запором в силу различных причин. Очевидно, что морфологические изменения стенки кишки при хроническом запоре, обусловленном долихосигмой, наиболее тяжело выражены у лиц женского пола. Представители женского пола количественно превалировали в отмеченной возрастной группе; обращают на себя внимание характерные тяжело выраженные патологические сдвиги в их кишечных ганглиях, связанные с количественными и качественными морфологическими изменениями ганглиев.

## SUMMARY

## MORPHOLOGICAL CHANGES OF LARGE INTESTINAL WALL IN CHRONIC CONSTIPATION CONDITIONED WITH DOLICHOSIGMOID

Khostikyan N.G.<sup>1</sup>, Hakobyan A.S.<sup>2</sup>, Hakobyan G.A.<sup>1</sup>

<sup>1</sup> YSMU, Department of Pathological Anatomy and Clinical Morphology

<sup>2</sup> YSMU, Department of Coloproctology

**Keywords:** dolichosigmoid, enteric nervous system, morphology.

Parts of sigmoid colon of operated patients suffering from dolichosigmoid have undergone histological investigation by the above mentioned methods. 29 patients at the age of 20-40 (20 females and 9 males, the average age was 28 years old) have been investigated. Expressed pathological shifts have been in all layers of the intestine in both sexes. But visible changes were noted in myenteric ganglions. They varied in shape, giant neurons existed in some ganglions, other ganglions were sometimes exhausted. They were evaluated as empty. In some of them neurons vacuolar dystrophy was noted, presence of inflammatory cells (lymphocytes) with complete transformation of ganglions. Vessels have developed in ganglions. As we have mentioned

above, myenteric ganglions are considered to be more preserved in the males than in the females of the same age group.

Thus, our investigations add to the data in the literature on the description of morphological examination of the left parts of large intestine in patients operated for chronic constipation of different etiology. Our data obtained show that the morphological changes of the intestinal wall are more severely expressed in females with chronic constipation caused by dolichosigmoid. Females prevail in number in the mentioned age group. It is of special attention that complicated and severe pathological shifts in ganglions are due to quantitative and qualitative morphological changes of neurons.

# ՍԻԳՄԱՅԱԶԵՎ ՀԱՍՏ ԱՂԻՔԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐԱԿՏԻԿ ԱՌՈՂՋ ՄԱՀԱՑԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈՏ

Խոստիկյան Ն.Գ.<sup>1</sup>, Հակոբյան Ա.Ս.<sup>2</sup>, Հակոբյան Գ.Ա.<sup>1</sup>, Ավետիսյան Է.Ե.<sup>3</sup>

<sup>1</sup> ԵՊԲՀ, ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն

<sup>2</sup> ԵՊԲՀ, կոլոպրոկտոլոգիայի ամբիոն

<sup>3</sup> Ի.Մ. Սեչենովի անվան առաջին պետական բժշկական համալսարան

**Բանալի բառեր՝** սիգմայածև հաստ աղիք, մորֆոլոգիա, աղիքային նյարդային համակարգ:

## ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակ ունենալով ուսումնասիրել դոլիխոսիգմայով տառապող հիվանդների հաստ աղիքների ձևաբանական առանձնահատկությունները՝ կապված աղիքային նյարդային համակարգի ձևաբանական փոփոխությունների հետ և ավելի ճշգրիտ որոշելու նրա դերը այդ հիվանդության պաթոգենեզում, մենք կարծում ենք, որ շատ ավելի հավաստի տվյալներ կստացվեն, եթե հետազոտությունը սկսենք պրակտիկ առողջ մահացած մարդկանց մոտ սիգմայածև աղիքի ձևաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունից: Ստացված տվյալները կհամեմատվեն այն փոփոխությունների հետ, որոնք ակնկալում ենք ստանալ դոլիխոսիգմայով տառապող հիվանդների մասնահատված աղիքների ձևաբանական ուսումնասիրության ժամանակ:

Հաստ աղիքը մարսողական համակարգի հեռակա հատվածն է, որի երկարությունը կարող է լինել 150-200սմ, իսկ լայնությունը՝ 3-8 սմ: Հաստ աղիքի տարբեր հատվածներ ունեն կառուցվածքային և ֆունկցիոնալ յուրահատկություններ: Սիգմայածև աղիքի երկարությունը մեծահասակ մարդու մոտ կազմում է 15-67 սմ, իսկ 70% դեպքերում այն տատանվում է 24-46 սմ սահմաններում: Այս պարագայում այն անվանում են նորմոսիգմա, 24 սմ-ից կարճ լինելու դեպքում՝ բրախիսիգմա, իսկ 46 սմ-ը գերազանցելու դեպքում՝ դոլիխոսիգմա: Սիգմայածև աղիքի տրամագիծը միջինում տատանվում է 4-6 սմ սահմաններում, իսկ 6 սմ-ը գերազանցելու և պատերի լայնացման դեպքում այն անվանում են մեգասիգմա [4,1]: Սիգմայածև աղիքում հաուստրանների թիվը կախված է նրա երկարությունից: Նրանց քանակը կարող է լինել 9-35, միջինում 18, լայնությունը 1-3 (1,6±0,6): Հասուստրանների միջև եղած հատվածների տրամագիծը 1-4 (1,9±0,1)սմ է [3]: Հաստ աղիքի երկարությունը գնահատվում է հաուստրանների թվով, որը կախված է սեռից, տարիքից, կոնստիտուցիոնալ առանձնահատկություններից: Տղամարդկանց մոտ հաուստրանների թիվը ավելի շատ է կանանց հետ համե-

մատած, հիպերսթենիկ կոնստիտուցիոնալ տիպի մոտ ավելի շատ է նորմո- և ասթենիկների համեմատ, 17-74 տարեկանում նկատվում է հաստ աղիքի բոլոր հատվածների երկարության փոփոխություն՝ կարճացում, բացի սիգմայածև հատվածի, որտեղ տարիքի հետ հաուստրանների թիվը աճում է, ոչ թե նվազում: Հաստ աղիքի դիստալ հատվածների երկարության աճը պայմանավորված է հավելյալ զալարների առաջացմամբ [2]: Սիգմայածև հաստ աղիքի միջընդերքի տեղագրական անատոմիան նույնպես բնորոշվում է տարատեսակությամբ և կախված է մարդու մարմնակազմության տիպից: Նրա արտաօրգանային զարկերակային հունը նույնպես աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով և կախված է մարմնակազմվածքից և միջընդերքի չափերից, իսկ ներօրգանային զարկերակային հունը նույնպես ունի առանձնահատկություններ, սակայն կախված չէ մարմնակազմության տիպից [2]:

Հաստ աղիքը մշտապես գտնվում է որոշակի տոնուսի մեջ, որը ապահովում է մկանային համակարգը՝ նյարդային կարգավորման շնորհիվ (ինտրամուրալ աղիքային նյարդային համակարգ, թափառող նյարդի և սիմպաթիկ նյարդերի ճյուղավորումներ): Նյարդային բջիջների և թելերի հսկայական ամբողջությունը, որը անվանվում է աղիքային նյարդային համակարգ տեղակայված է ստամոքս-աղիքային համակարգի պատում, որտեղ նյարդային և շրջապատող գլխալ բջիջները առաջացնում են միմյանց հետ սերտորեն կապված գանգլիոններ: Նրանցում կուտակված են միլիոնավոր բջիջներ, որոնց ելուստները նյարդավորում են հարթ մկանները, գեղձային էպիթելը, մարսողական տրակտի արյան մազանոթային ցանցը, լեղուղիները, ենթաստամոքսային գեղձը: Բարակ և հաստ աղիքում նյարդային բջիջների զգալի քանակները ձևավորում են երկու հիմնական գանգլիոններ՝ ենթալորձային Մեյսնեյան և միջմկանային Աուերբախյան: Միջմկանային հյուսակը գտնվում է արտաքին երկայական և ներքին շրջանածև մկանային շերտերի միջև, կազմված է փոքր գանգլիոնների և նյարդաթելերի ցանցից, որոնք առանց ընդհատվելու առկա են գաստրոինտեստինալ տրակտի ողջ երկարությամբ և լայնությամբ: Միջմկանային գանգլիոնները տարբերվում են իրենց ձևով, չափերով, կենդանիների

տարբեր տեսակների աղիներում տեղակայման առանձնահատկություններով [5]:

Ներկայումս գրականության մեջ բավականին մեծ թվով հրապարակումներ կան աղիքային նյարդային համակարգի ախտաբանության վերաբերյալ: Ինչպես հայտնի է աղիքային նյարդային համակարգի վնասումները բերում են հաստ աղիքի ֆունկցիոնալ խանգարումների առաջացման: Այժմ ժամանակակից բժշկության արդիական խնդիրներից է խրոնիկական փորկապությունը: Խրոնիկական փորկապության առաջացման բազմաթիվ պատճառներ կան: Այնուամենայնիվ շատ հեղինակներ խրոնիկական փորկապության առաջացման պատճառ են համարում դոլիխոկոլոնը՝ հաստ աղիքի երկարացումը, որը բերում է աղիքային պարունակության երկարատև կանգի: Մեր կողմից իրականացվող գիտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել աղիքի պատի բոլոր շերտերի ձևաբանական փոփոխությունները դոլիխոսիգմայով պայմանավորված խրոնիկական փորկապությունների ժամանակ: Հետազոտության ճշգրիտ, հավաստի արդյունքներ ստանալու համար մեր կողմից ուսումնասիրության կենթարկվել են հիվանդների թվին հավասար պրակտիկ առողջ մահացածների սիգմայաձև հաստ աղիքները:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հաստ աղիքի բոլոր շերտերի ձևաբանական ուսումնասիրության համար դատաբժշկական դիախերձումների ժամանակ վերցվել են 22 պրակտիկ առողջ մահացածների սիգմայաձև աղիքի 6-8 սմ երկարությամբ հատվածներ: Մակրոսկոպիորեն բոլոր դեպքերում հաստ աղիքի շճաթաղանթը հարթ էր, փայլուն, առկա էին 2 հաուստրաներ, տրամագիծը 4-6 սմ էր, բնորոշ աղիքային պարունակությամբ: Մահացածները եղել են 19-79 տարեկան, միջինում՝ 48 տարեկան, կին՝ 6, տղամարդ՝ 16: Բոլոր 22 դեպքերի հաստ աղիքներից պատրաստվել են պարաֆինային բլոկներ, որոնցից ստացվել սերիական հիստոլոգիական հատածներ: Մեր կողմից օգտագործվել են ներկման հետևյալ մեթոդները. հեմատոքսիլին-էոզին, ալցիան կապոյտ, պիկրոֆուրսին ըստ Վան-Գիզոնի, Գուլջի մեթոդը ըստ Ֆոքսի մոդիֆիկացիայի:


### ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իգական սեռի 6 դիակների սիգմայաձև աղիքներից պատրաստված հիստոլոգիական պրեպարատների հետազոտությունը վերը նշված մեթոդներով թույլ է տվել նկարագրել լորձաթաղանթի սերիական շերտերի թույլ արտահայտված բորբոքային ներսփռում լիմֆոցիտներով, պլազմատիկ բջիջներով, նեյտրոֆիլ լեյկոցիտներով,


տեղ-տեղ մակերեսային Էպիթելի դեսկվամացիայի օջախներով: 60-ից բարձր տարիք ունեցող դիակների սիգմայաձև աղիքներում նկարագրվել է լորձաթաղանթի գեղձային Էպիթելի ապաճական փոփոխություններ: Բոլոր դեպքերի պրեպարատներում ենթալորձային շերտում նկարագրվում է տարբեր արտահայտվածության ուռճեցում, թելերի փեղեքում, մանր անոթների գերարյունություն, տեղ-տեղ եզակի արյունազեղումներ: Մկանային շերտի հարթ մկանային բջիջների հիպերտրոֆիա նկարագրվել է 3 դեպքում, 3 դեպքում նկարագրվել է հարթ մկանային բջիջների փեղեքում, 1 դեպքում նկարագրվել է հարթ մկանային շերտի հոմոգենիզացիա: Միջմկանային զանգվածները տեսանելի են աղիքի պատի ամբողջ լայնությամբ, դրանք ներկայացված են կլոր կամ երկայնաձիգ ձգված կուտակումների տեսքով: Վերը նշված 3 դեպքերում՝ 60-ից բարձր տարիք ունեցող դիակների միջմկանային որոշ զանգվածներ եղել են դիստրոֆիկ փոփոխություններով և Գուլջի մեթոդով ուսումնասիրելիս զանգվածների նեյրոնները դժվարությամբ են հայտնաբերվել: Շճաթաղանթի հիստոլոգիական հետազոտությամբ նկատելի տեղաշարժեր չեն նկարագրվել, միայն մի դեպքում հարաղիքային ճարպաբջջանքում նկարագրվել է թույլ արտահայտված բորբոքային ներսփռանք: Արական սեռի 16 դիակների հաստ աղիքների հիստոլոգիական պրեպարատների հետազոտությամբ հայտնաբերվել են գրեթե նույն փոփոխությունները, որոնք նկարագրված են վերևում, այստեղ նույնպես ավելի մեծ տարիքի դիակների հաստ աղիքային զանգվածների դիստրոֆիկ փոփոխություններ են նկատվել: Շճաթաղանթի և հարաղիքային ճարպաբջջանքի անոթների գերարյունություն նկարագրվել է մի քանի դեպքերում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ


Այսպիսով սիգմայաձև աղիքի ուսումնասիրությունը վերը նշված մեթոդներով թույլ է տվել եզրակացնել, որ համարյա բոլոր դեպքերում դիտվել է լորձաթաղանթի սերիական շերտերի թույլ արտահայտված բորբոքային ներսփռում լիմֆոցիտներով, պլազմատիկ բջիջներով, լեյկոցիտներով, մակերեսային Էպիթելի դեսկվամացիա, ավելի մեծ տարիքային խմբի մոտ՝ գեղձերի ապաճական փոփոխություններ (նկ.1ա): Ենթալորձային շերտում դիտվել է այտուց, ուռճեցում, թելերի փեղեքում, անոթների գերարյունություն, տեղ-տեղ մանր արյունազեղումներ (նկ.1բ): Մկանային շերտում՝ շրջանաձև և երկայնական շերտերի միջև աղիքի պատի ամբողջ երկարությամբ տեսանելի են միջմկանային զանգվածները (նկ.1գ): Որոշ դեպքերի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել են մկանային շերտի հիպերտրոֆիա,




ա) Աղիքի լորձաթաղանթը պահպանված է ենթալորձային և մկանային շերտերի հենքը այտուցված է (հեմատոքսիլին-էոզին × 100)



բ) Նկատվում է լորձաթաղանթի մակերեսային ծածկող էպիթելի աննշան դեսկվամացիա, հենքի մուկոիդ ուռճեցում (ալցիան-կապույտ × 200)



գ) Աղիքի շրջանաձև և երկայնական շերտերի միջև ամբողջ երկարությամբ տեսանելի են միջմկանային գանգլիոնները (հեմատոքսիլին էոզին × 200)



դ) Աղիքի միջմկանային շերտի գանգլիոնում առկա են խոշոր նեյրոնները (Գուլջիի մեթոդ × 400)

**Նկ. 1.** Սիզմայաձև հաստ աղիքի մորֆոլոգիական պատկերը պրակտիկ առողջ մահացած մարդկանց մոտ

հարթ մկանային բջիջների դիստրոֆիկ փոփոխություններ, հոմոգենիզացիա, պիկրոֆոսֆինոլ ներկման ժամանակ դեղնավուն ներկված հարթ մկանային շերտում որոշ դեպքերում նկատվել են վարդագույն ներկված շարակցահյուսվածքային թելեր՝ ֆիբրոզի օջախների ձևով: Գուլջիի մեթոդով ներկելիս աղիքի պատի դեղնավուն ֆոնի վրա, ամբողջ երկարությամբ հայտնաբերվել են գանգլիոնները, մուգ ներկված նեյրոններով:

Այս նեյրոնների առկայությունը բոլոր ուսումնասիրված դեպքերում վկայում է պրակտիկ առողջ մարդկանց մոտ Նյարդային համակարգի համեմատաբար պահպանվածության մասին (Նկ. 1դ): Որոշ դեպքերում նկատվել է շճաթաղանթի հաստացում և անոթների գերարյունություն, հարադիքային ճարպաբջջանքի անոթների աննշան գերարյունություն և շուրջանոթային թույլ արտահայտված բորբոքային ներսփռանքի առկայություն:

Այսպիսով հետազոտությունները ցույց են տալիս, որ պրակտիկ առողջ մահացած մարդկանց մոտ, հիվանդության կլինիկական և անամնեստիկ գանգատների բացակայության դեպքում, սիգմայածև աղիքի ձևաբանական առանձնահատկությունները պայմանավորված են տարիքային, կոնստիտուցիոնալ գործոններով:

Մեր հետազոտության արդյունքներում կտրվեն պրակտիկ առողջ մահացածների սիգմայածև աղիքների և դոլիխոսիգմայով տառապող հիվանդների մասնահատված աղիքների ձևաբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծության արդյունքները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Байтингер В.Ф., Аксененко А.В Сфинктеры сигмовидной ободочной кишки человека // Сибирский государственный университет, Томск, 1994, с. 174-181
2. Макаров А.Ф. Типовая анатомия брыжейки и артериального русла сигмовидной кишки человека // Анатомия человека, / Автореферат диссертации, 2010
3. Черненко А.Н., Жук Е.Г. Анатомо-физиологические особенности толстой кишки в рентгеновском изображении // Кафедра лучевой диагностики, БелМАПО, Материалы конференции, 2001, с. 97-102
4. Трифонов Е.В Пневмапсихосоматология человека // Русско-англо-русская энциклопедия, 15-е изд., 2012
5. John Barton Furness The enteric nervous system, 2006

## РЕЗЮМЕ

### МОРФОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СИГМОВИДНОЙ ТОЛСТОЙ КИШКИ У ПРАКТИЧЕСКИ ЗДОРОВЫХ УМЕРШИХ ЛЮДЕЙ

Хостибян Н.Г.<sup>1</sup>, Акопян А.С.<sup>2</sup>, Акопян Г.А.<sup>1</sup>, Аветисян Э.Е.<sup>3</sup>

<sup>1</sup> ЕГМУ, кафедра патологической анатомии и клинической морфологии

<sup>2</sup> ЕГМУ, кафедра колопроктологии

<sup>3</sup> Первый Московский государственный медицинский университет имени И.М. Сеченова

**Ключевые слова:** сигмовидный толстый кишечник, морфология, энтеральная нервная система.

В данной работе нами изучалась морфологическая картина сигмовидной кишки у 22 практически здоровых лиц мужского и женского пола от 19 до 79 лет, умерших по разным причинам. Из тканей сигмовидной кишки были изготовлены парафиновые блоки, гистологические препараты, которые были исследованы различными методами при обработке гематоксилин-эозином, альциановой синью, пикрофуксином по Ван-Гизону и методом Гольджи в модификации Фокса. В результате исследования во всех случаях была выявлена слабо выраженная лимфоплазмоцитарная инфильтрация собственных слоев слизистой оболочки кишечника. У лиц старше 60 лет наблюдались: атрофические изменения желез слизистой оболочки, слабо выраженный отек подслизистой оболочки, набухание, гиперемия сосудов, а в некоторых случаях - гипер-

трофия мышечных слоев с дистрофическими изменениями железистых клеток и стромы. В части случаев описаны: утолщение серозной оболочки, незначительная гиперемия сосудов околокишечной жировой клетчатки. Таким образом, изучение морфологической картины сигмовидной кишки практически здоровых лиц, умерших по тем или иным причинам, выявило незначительные морфологические изменения, связанные с возрастными, а также конституциональными особенностями. Данные литературы также указывают, что анатомические особенности сигмовидной кишки, топографические и сосудистые особенности брыжейки зависят от пола, возраста и типа телосложения. В планируемой нами работе в дальнейшем будут проведены параллели и различия между морфологической картиной сигмовидной кишки у практически здоровых лиц и больных с долихосигмой.

## SUMMARY

### MORPHOLOGICAL FEATURES OF COLON SIGMOIDEUM IN PRACTICALLY HEALTHY PEOPLE WHO DIED

Khostikyan N.G.<sup>1</sup>, Hakobyan A.S.<sup>2</sup>, Hakobyan G.A.<sup>1</sup>, Avetisyan E.E.<sup>3</sup>

<sup>1</sup> YSMU, Department of Pathological Anatomy and Clinical Morphology

<sup>2</sup> YSMU, Department of Coloproctology

<sup>3</sup> First Moscow State Medical University after I.M. Sechenov

**Keywords:** colon sigmoideum, morphology, enteric nervous system.

In this work we studied the morphological picture of the sigmoid colon from healthy individuals who died. We studied the sigmoid colon among 22 healthy males and females who died at the age of 19-79. In all cases, colon paraffin blocks and histological preparations were prepared and examined with hematoxylin-eosin, alcian blue, picro-fuchsin by Van Gieson, by Golgi in the modifications by Fox. The study found that all the cases in the age group of above 60 had a poorly marked lymphoplasmacytic infiltration of the intestinal mucosa, atrophic changes in the glands, poorly defined sub-mucosal edema, swelling, congestion of blood vessels, and in some cases muscle layers hypertrophy

with dystrophic changes of glandular cells and stroma were revealed. In some cases micro-preparations thickening of serous membrane and slight congestion of the vessels of perienteric adipose tissue were describes. Thus, the study of sigmoid colon of healthy individuals who died showed that the insignificant morphological changes were associated with the age and constitution. The literature also claims that the anatomical features of the colon and vascular topographical features of the mesentery depend on sex, age, and body type. In the proposed work we will continue to draw parallel and discover the differences between the morphological picture of the sigmoid colon in healthy individuals and patients with dolichosigma.

# ՈՐՈՇ ԶՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ՄԵՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ «ՉՈՐԱԹԱՆ» ԹԹՎԱԿԱԹՆԱՅԻՆ ՍՆՆԴԱՆՅՈՒԹԸ ԿԻՐԱՌԵ-ԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավագյան Մ.Ն., Կալիկյան Չ.Գ., Ավագյան Վ.Մ., Սելիմյան Ա.Ե., Աբրահամյան Ա.Յ., Հակոբյան Վ.Է., Վարդանյան Լ.Շ. «ԱլտՄեդ» բժշկական կենտրոն

**Բանալի բառեր՝** աղիքների միկրոֆլորա, քրոնիկական հիվանդություններ, թթվակաթնային սննդանյութ:

## Ներածություն

Ներկայում ամբողջ աշխարհում, այդ թվում Հայաստանում չափազանց շատացել են քրոնիկական հիվանդությունները, որոնք զգալիորեն ազդում են երկրի ներուժի վրա: Հայտնի է, որ այդ հիվանդությունները անառողջ սննդի, շրջակա միջավայրի և ապրելակերպի ազդեցության հետևանք են: Նպաստող գործոններից են նաև ախտաբանական որոշ վիճակներ (կենսաբանական գործոններ), ինչպեսիք են՝ աղիքների դիսբիոզը, նյութափոխանակության և իմունային համակարգի խանգարումները, որոնք բարդացնում են թե՛ հիվանդության, թե՛ դրա բուժման ընթացքը [11]:

Աղիքների դիսբիոզը մակրոօրգանիզմ-աղիքների միկրոֆլորա-շրջակա միջավայր էկոհամակարգի բաղադրիչների փոխգործակցության մեխանիզմների խանգարումն է: Այն միշտ երկրորդական և կլինիկա-լաբորատոր համախտանիշ է, որը զարգանում է մի շարք հիվանդությունների ու ախտաբանությունների դեպքում և բնորոշվում է աղիքների միկրոֆլորայի քանակական և որակական կազմի փոփոխություններով, ինչպես նաև նյութափոխանակության և իմունային համակարգի շեղումներով, որոնք կարող են արտահայտվել կլինիկական ախտանիշներով: Հիմնական ախտանիշները պայմանավորված են աղիքների գործունեությամբ՝ փորլուծություն, փորկապություն, վթնածություն, որովայնային ցավեր և այլն [9, 13, 15]:

Վերջին տարիներին կատարվել են բազմաթիվ հետազոտություններ տարբեր ախտաբանությունների դեպքում աղիքների միկրոէկոլոգիական շեղումների դերի և դրանց շտկման ուղիների վերաբերյալ: Ներկայիս պատկերացումների համաձայն՝ առավել տարածված քրոնիկական հիվանդությունների բուժման համալիրում ընդունված է կիրառել վերականգնողական գործընթացին և հիմնական բուժման արդյունավետությանը նպաստող լրացուցիչ պրոբիոտիկ միջոցներ [2,5,8]: Մասնավորապես նշվում են պրոբիոտիկ թերապիայի տարբեր ազդեցությունները ստամոքս-աղիքային բազմաթիվ հիվանդությունների, սեռական ինֆեկցիաների,

իմունիտետի խանգարումների դեպքում [6,9,15]: Հետազոտվել են որոշ պրոբիոտիկների ազդեցությունները առողջիկ հիվանդությունների, ռևմատոիդ արթրիտի դեպքում: Կան տվյալներ, որ այդ միջոցները նպաստում են արյան մեջ խոլեստերինի և շաքարի մակարդակի կարգավորմանը [7, 10, 12-14]:

Հայրենական մասնագիտական գրականության մեջ նույնպես կան հրատարակություններ՝ նվիրված պրոբիոտիկ միջոցների, մասնավորապես «Նարինե» սննդանյութի կիրառման ուսումնասիրություններին [1,3,4]: Այնուամենայնիվ, առկա տեղեկատվությունը հակասական է և ոչ միշտ գիտականորեն հիմնավորված [17]:

**Այս աշխատանքի նպատակն է** գնահատել Նոր հայկական «Չորաթան» թթվակաթնային սննդանյութի կիրառման ազդեցությունը մի շարք քրոնիկական ոչ վարակիչ հիվանդությունների դեպքում աղիքների միկրոֆլորայի շեղումների կարգավորման վրա և ուսումնասիրել տվյալ հիվանդությունների բուժման սխեմաներում «Չորաթանը» որպես կանխարգելիչ և վերականգնողական միջոց ընդգրկելու հնարավորությունները:

## Նյութը և մեթոդները

Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի «ԱլտՄեդ» բժշկական կենտրոնում ՀՀ Գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված «Հայկական «Չորաթան» թթվակաթնային սննդանյութի կիրառումը ավանդական և այլընտրանքային բժշկության մեջ» ծրագրի շրջանակներում:

Տարբեր ախտաբանություններով (մարսողական համակարգ, ալերգիկ հիվանդություններ, երկրորդ տիպի շաքարային դիաբետ) բժշկի դիմած հիվանդները նախ՝ մանրամասն զննվել են, այնուհետև՝ կատարվել է լաբորատոր և գործիքային համապատասխան հետազոտություններ, որոնցից պարտադիր է եղել կղանքի բակտերիոլոգիական հետազոտությունը: Կղանքի *Նախնական* («առաջ») բակտերիոլոգիական քննության արդյունքների հիման վրա աղիքների միկրոֆլորայի

**Աղյուսակ 1**

«Չորաթան» ընդունելուց առաջ և հետո հետազոտության մեջ ընդգրկված մասնակիցների բաշխվածությունը՝ ըստ կլինիկական ախտորոշման

Ախտաբանություններ	Չետա- զոտ.	Արական	Իգական	Ընդամենը		Մինչև 18 տ.	18 տ. և բարձր
	առաջ	n=42	n=99	n= 141	%	n=35	n=106
	հետո	n=40	n=80	n= 120		n=33	n=87
Մարսողական համակարգի հիվանդություններ	առաջ	12	32	44	31,2	11	33
	հետո	11	25	36	30,0	10	26
Ալերգիկ հիվանդություններ	առաջ	9	25	34	24,1	9	25
	հետո	9	20	29	24,2	9	20
Շաքարային դիաբետ երկրորդ տիպի	առաջ	12	20	32	22,7	-	32
	հետո	12	15	27	22,5	-	27
Առանց կլինիկական ախտորոշման	առաջ	9	22	31	22,0	15	16
	հետո	8	20	28	23,3	14	14

շեղումներ ունեցող ընդհանուր առմամբ 141 անձինք տեղեկացված համաձայնությամբ ընդգրկվել են «Չորաթան» թթվակաթնային սննդանյութի կիրառմամբ հետազոտության հիմնական խմբերի մեջ՝ ըստ ախտահարված օրգան-համակարգերի՝ մարսողական համակարգի հիվանդություններ (**ՄԳԳ**), ալերգիկ հիվանդություններ (**ԱԳ**), երկրորդ տիպի շաքարային դիաբետ (**ՇԴ**): Այդ ախտաբանությունների կլինիկական ախտանշաններից բացի, հիվանդները նշել են աղիքների գործունեության խանգարման գանգատներ՝ որովայնի ցավեր, ծակոցներ, վքնածություն, փորլուծություն, փորկապություն: Որպես վերահսկիչ խումբ՝ հետազոտության մեջ ընդգրկվել են նաև աղիների դիսբիոզով, բայց առանց կլինիկական ախտորոշման անձինք (**ԱԱ**), որոնք չեն ունեցել ծրագրում ընդգրկված հիվանդությունների որևէ ախտորոշում, սակայն աղիների գործունեության հետ կապված որոշակի գանգատներ են ունեցել:

Չիվանդներին նշանակվել են համապատասխան դեղորայքային բուժման սխեմաներ, որոնց մեջ ներառվել է նաև Չորաթան թթվակաթնային սննդանյութը, իսկ առանց կլինիկական ախտորոշման անձանց նշանակվել է միայն «Չորաթան»: «Չորաթան» թթվակաթնային սննդանյութը ստեղծվել է Ա. Սելիմյանի կողմից մշակված կենսա-տեխնոլոգիական եղանակով՝ մածուկը քամելուց ստացված խտանյութը չորացնելու միջոցով: Այն դեղնավուն փոշի է և մոտ 50 մլն. չափաքանակով 100գ նյութի մեջ պարունակում է լակտոմանրէներ և 6 ամինաթթուներ՝ ընդհանուր քանակով 0,5 գ 100գ նյութի մեջ [16]: «Չորաթան» թթվակաթնային սննդանյութը անցել է «Ստանդարտների ազգային ինս-

տիտուտ» ՓԲԸ-ի լաբորատոր փորձաքննությունը և դրա արդյունքների հիման վրա ստացել տեխնիկական պահանջներին համապատասխանության վկայական՝ 26.07.2010թ.:


«Չորաթանը» ընդունելու տևողությունը եղել է 8 շաբաթ, իսկ չափաբաժինը որոշվել է ըստ տարիքի, աղիքների դիսբիոզի աստիճանի և անհատական տանելիության մակարդակի՝ կազմելով 1-2 պատիճից օրական 2-3 անգամ: Բուժման ընթացքում հիվանդների վիճակը վերահսկվել է որոշակի պարբերականությամբ: «Չորաթանի» թերընկալության դեպքում, որն արտահայտվել է հիմնականում այրոցով, չափաբաժինը նվազեցվել է: Վիճակի վատթարացման պատճառով բուժումն ընդհատելու կամ հետագա մասնակցությունից հրաժարվելու հետևանքով կղանքի *կրկնակի* («հետո») բակտերիոլոգիական քննություն կատարվել է միայն 120 մասնակիցների դեպքում (85,1%):

Չետազոտության արդյունքների տվյալների վիճակագրական վերլուծությունը իրականացվել է Microsoft Office Excel ծրագրի միջոցով համընդհանուր ճանաչում ստացած վիճակագրական մեթոդներով: Որոշվել են երևույթների տարածվածության ցուցանիշները (P) տոկոսներով, ցուցանիշների միջին սխալները (m): Արդյունքների հավաստիությունը 95% (p<0,05) հավանականությամբ գնահատվել է Ֆիշերի  $\phi^*$  ոչ պարամետրիկ չափորոշիչի կիրառմամբ:

«Չորաթան» ընդունելուց առաջ և հետո կղանքի բակթնություն անցած խմբերի բաշխվածությունը, ըստ ախտորոշման, սեռի և տարիքի, ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Յետազոտության արդյունքները և դրանց քննարկումը**

Այսպիսով, հետազոտության առաջին փուլում ստացվել են կղանքի նախնական բակտերիոլոգիական քննության տվյալները (n=141), համաձայն որոնց՝ արձանագրվել են աղիքների միկրոֆլորայի առանձին բաղադրիչների էական քանակական շեղումներ: Տվյալները պատկերավոր կերպով ներկայացված են նկ. 1-ում:




Նկ. 1. Աղիքների միկրոէկոլոգիական շեղումները

Ինչպես երևում է, առավել մեծ շեղումները նկատվում են լակտո- և բիֆիդոբակտերիաների քանակներում, որոնք նվազել են համապատասխանաբար 81,6% և 78,7% դեպքերում: Պայմանական ախտածին միկրոֆլորայի ներկայացուցիչներից առավել հաճախ դիտվում է կլոստրիդիաների քանակի աճ 29,1% դեպքերում: Հատկանշական է, որ աղիքների միկրոֆլորայի պատկերում առկա են որոշակի տարբերություններ՝ պայմանավորված ախտաբանություններով. այսպես՝ մարսողական համակարգի ախտաբանություններով հիվանդների շրջանում առավել տարածված է բիֆիդոբակտերիաների քանակի նվազումը (93,2%), այն դեպքում, երբ լակտոբակտերիաների նվազումը բավականին ցածր է (65,9%): Աչքի է ընկնում Candida սնկերի աճը շաքարային դիաբետով հիվանդների շրջանում (31,3%):

Աղիքների միկրոֆլորայի շեղումների գործող դասակարգման համաձայն՝ որոշվել է դիսբիոզի աստիճանը: Ըստ այդմ՝ հիվանդների բաշխվածությունը պատկերավոր կերպով ներկայացված է նկ. 2-ում:

Ինչպես երևում է աղյուսակում և գծապատկերում, թեթև դիսբիոտիկ շեղումների բաժինը հատկապես մեծ է առանց կլինիկական ախտորոշման և ավերգիայով հիվանդների խմբերում՝ կազմելով 35,5% և 32,4%, իսկ առավել ծանր շեղումների բաժինը այդ խմբերում կազմում է միայն 22,6% և 29,4% համապատասխանաբար: Մինչդեռ ծանր դիսբիոտիկ շեղումները գերակշռում են շաքարային դիաբետով և առավել ևս մարսողական համակարգի ախտաբանություններով խմբերում՝ կազմե-

լով 50,0% և 52,3% համապատասխանաբար, այն դեպքում, երբ հատկապես վերջին խմբում թեթև շեղումների տեսակարար կշիռը նվազագույնն է և կազմում է 13,6%:



Նկ. 2. Հիվանդների կառուցվածքը՝ ըստ աղիքների դիսբիոզի աստիճանի

«Զորաթան» ընդունելուց հետո 120 հիվանդների կղանքը ենթարկվել է կրկնակի բակտերիոլոգիական քննության, որի տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

«Զորաթան» ընդունելուց առաջ և հետո աղիքների բակտերիոլոգիական պատկերը ընդհանուր առմամբ բարելավվել է, իսկ միկրոֆլորայի առանձին ցուցանիշների շեղումների վերլուծությունը ցույց է տալիս դրանց էական տարբերությունները՝ ըստ խմբերի: Լակտոբակտերիաների շեղումները հավաստիորեն ( $p < 0,05$ ) նվազել են բոլոր խմբերում, բացի մարսողական համակարգի հիվանդությունների խմբից, մինչդեռ վերջինում և առանց ախտորոշման խմբում հավաստիորեն նվազել են ( $p < 0,05$ ) բիֆիդոբակտերիաների շեղումները: Պայմանական ախտածին և ախտածին միկրոֆլորայի աճը զգալիորեն նվազել է գրեթե բոլոր խմբերում: Միևնույն ժամանակ որոշ առանձին ցուցանիշների շեղումներ մեծացել են, սակայն այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի չեն ( $p > 0,05$ ):

«Զորաթան» ընդունելուց առաջ և հետո աղիքների միկրոֆլորայի ցուցանիշների կարգավորման համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ առավել կարգավորվել են պայմանական ախտածին և ախտածին միկրոֆլորայի ցուցանիշները (70,3-100,0%), ինչպես նաև 63,2-68,3%-ով բարձրացել է նորմալ միկրոֆլորայի մակարդակը (լակտո-, բիֆիդոբակտերիաներ և աղիքային ցուլիկ): Տարբեր հիվանդություններով մասնակիցների տվյալներում առկա են որոշակի առանձնահատկություններ: Ի տարբերություն մյուս խմբերի՝ մարսողական համակարգի հիվանդությունների դեպքում լակտոբակտերիաների մակարդակի բարելավումը

**Աղյուսակ 2**

Հիվանդների բաշխվածությունը՝ ըստ աղիքների միկրոֆլորայի առանձին ցուցանիշների, «Չորաթան» ընդունելուց առաջ և հետո

Աղիքների միկրոֆլորայի առանձին ցուցանիշների խանգարումներ		Հետազոտված խմբեր									
		ՄՀԳ (n=36)		ԱԳ (n=29)		ԵԴ (n=27)		Առանց ախտորոշման (n=28)		Ընդամենը (n= 120)	
		Առաջ	Հետո	Առաջ	Հետո	Առաջ	Հետո	Առաջ	Հետո	Առաջ	Հետո
Լակտոբակտերիաների նվազում	բաց.	25	26	28	21	23	10	25	16	101	73
	%±m	69,4±7,7	72,2±7,5	96,6±3,6	72,4±8,5*	85,2±7,0	37,0±9,5*	89,3±6,0	57,1±9,5*	84,2±3,3	60,8±4,5*
Բիֆիդոբակտերիաների նվազում	բաց.	35	19	19	12	22	18	19	11	95	60
	%±m	97,2±2,8	52,8±8,3*	65,5±9,0	41,4±9,3	81,5±7,6	66,7±9,2	67,9±9,0	39,3±9,4*	79,2±3,7	50,0±4,6*
E.coli-ի նվազում	բաց.	24	18	18	16	15	16	12	11	69	61
	%±m	66,7±7,9	50,0±8,3	62,1±9,2	55,2±9,4	55,6±9,7	59,3±9,6	42,9±9,5	39,3±9,4	57,5±4,5	50,8±4,6
Թույլ ֆերմենտատիվ ակտիվությամբ E.coli-ի բանակի աճ	բաց.	2	1	7	-	1	-	5	1	17	2
	%±m	5,6±3,8	2,8±2,8	24,1±8,1	-	3,7±3,7	-	17,9±7,4	3,6±3,6	14,2±3,2	1,7±1,2
E.coli-ի հեմոլիզող և լակտոզաբացասական ձևերի բանակի աճ	բաց.	2	-	4	-	1	2	1	-	6	2
	%±m	5,6±3,8	-	13,8±6,5	-	3,7±3,7	7,4±5,1	3,6±3,6	-	5,0±2,0	1,7±1,2
Կլոստրիդիաների բանակի աճ	բաց.	13	8	9	4	8	6	7	2	37	20
	%±m	36,1±8,0	22,2±6,9	31,0±8,7	13,8±6,5	29,6±9,0	22,2±8,2	25,0±8,3	7,1±4,9	30,8±4,2	16,7±3,4*
Candida սնկերի բանակի աճ	բաց.	6	1	5	1	10	4	1	-	22	6
	%±m	16,7±6,2	2,8±2,8	17,2±7,1	3,5±3,5	37,0±9,5	14,8±7,0	3,6±3,6	-	18,3±3,5	5,0±2,0*
Այլ ախտաֆլորայի բանակի աճ	բաց.	6	1	2	-	1	-	-	-	9	1
	% ± m	16,7±6,2	2,8±2,8	6,9±4,8	-	3,7±3,7	-	-	-	7,5±2,4	0,8±0,8


\* Ցուցանիշների տարբերությունը «Չորաթան» ընդունելուց առաջ և հետո հավաստի է p<0,05 հավանականությամբ:

բարձր չէ (36,0%), մինչդեռ բիֆիդոբակտերիաների և պայմանական ախտածին ֆլորայի բարելավումը ցածր է շաբարային դիաբետոս (45,5% և 37,5%, համապատասխանաբար), իսկ աղիքային ցուպիկի կարգավորումը՝ ալերգիայով հիվանդների շրջանում (44,4%): Մյուս ցուցանիշների բարելավումը գերազանցում է 50%-ը, և հատկապես լավ են կարգավորվել առանց ախտորոշման խմբի ցուցանիշները (առնվազն 66,7%-ով):

«Չորաթան» ընդունելու ընթացքում և ավարտին կատարվել է հիվանդների ընդհանուր վիճակի գնահատում, որի դեպքում դիտարկվել են հատկապես աղիքների գործունեության հետ կապված սուբյեկտիվ փոփոխություններ՝ կղման կարգավորում, ցավերի, վթնածության և այլ ախտանիշների վերացում /նվազում/ կամ հակառակը: Նկ. 3-ում ներկայացված է հիվանդների (n=141) բաշխվածությունը՝ ըստ նրանց վիճակի փոփոխությունների:

Այսպես՝ «Չորաթան» ընդունած հիվանդների մեծ մասը (77,3%) նշում է դրական ազդեցության առկայությունը: Միայն 18%-ը չի զգացել որևէ տարբերություն և 5%-ի դեպքում նկատվել է հիմնականում այրոցով ու-

ղեկցված վիճակի վատացում՝ պայմանավորված «Չորաթանի» թերընկալությամբ:



Նկ. 3. Հիվանդների կառուցվածքը՝ ըստ «Չորաթան» ընդունելու հետ կապված վիճակի սուբյեկտիվ փոփոխությունների

Առավել նկատելի փոփոխություններ նշում են առանց ախտորոշման և ալերգիայով (համապատասխանաբար 87,1% և 82,4%), իսկ ավելի քիչ՝ շաբարային դիաբետոս և հատկապես մարսողական համակարգի հիվանդություններով մասնակիցները (համապատասխանաբար

71,9% և 68,2%), որը հավանաբար պայմանավորված է առկա (հիմնականում քրոնիկական և ծանր ընթացքով) հիվանդությունների զարգացման մեխանիզմներով:

Հետազոտության մեջ ընդգրկված հիվանդությունների բուժման սխեմաներում «Չորաթան» թթվակաթնային սննդամթերքի վերականգնողական և կանխարգելիչ ազդեցությունը ուսումնասիրելու նպատակով նաև վերլուծություն է կատարվել տարբեր ախտաբանություններով հիմնական և համեմատական խմբերի հիվանդների համապատասխան հիվանդությունների բուժման ընթացքի միջև: Այսպես՝ «Չորաթան» ստացող հիմնական ախտաբանական խմբերում, ստանդարտ սխեմաներով բուժվող հիվանդների համեմատ (առանց «Չորաթանի»), նկատվել է բուժման տևողության (օրերի) որոշակի կրճատում, ինչպես նաև համապատասխան կլինիկա-լաբորատոր ցուցանիշների (լեյկոցիտների ցուցանիշները մարտոդական համակարգի հիվանդությունների, արյան մեջ գլյուկոզայի մակարդակը շաքարային դիաբետի, իմունաբանական ցուցանիշները ալերգիայի դեպքում և այլն) բարելավման մի-

տումներ ավելի կարճ ժամանակահատվածում, սակայն ստացված արդյունքները հավաստի չեն:

### Եզրակացություն

1. «Չորաթան» կիրառելուց առաջ և հետո ստացված կղանքի բակտերիոլոգիական հետազոտության տվյալներում առկա են որոշ դրական փոփոխություններ, որոնք դեռևս հստակեցման անհրաժեշտություն ունեն:
2. «Չորաթանը» ընդունելուն զուգընթաց՝ հիվանդների կղանքի բակտերիոլոգիական պատկերի և սուբյեկտիվ վիճակի փոփոխությունները պայմանավորված են առկա հիվանդությունների բնույթով և ընթացքի ծանրությամբ:
3. «Չորաթանի»՝ տարբեր ախտաբանությունների բուժման արդյունավետության բարձրացմանը նպաստող ազդեցությունը առավել լիարժեք ուսումնասիրելու և որպես կանխարգելիչ ու վերականգնողական միջոց թերապևտիկ սխեմաներում ընդգրկելու ցուցումները մշակելու նպատակով անհրաժեշտ են մի շարք լրացուցիչ հետազոտություններ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Акопян Л.Г., Чарян Л.М., Дадиванян О.А. Сравнение лечебно-диетического продукта «Наринэ» с другими бактериальными препаратами. Медицинская наука Армении 2002; 42 (4): 108-112.
2. Андреева И.В. Потенциальные возможности применения пробиотиков в клинической медицине. Клин микробиол антимикроб химиотер 2006; 8; 2: 151-172.
3. Давтян О.Я., Габриелян С.А. Новый взгляд на кисломолочный продукт «Наринэ». Сб. мат. VI нац. научно-мед. конгресса «Здоровье человека», НИЗ МЗ РА; Ереван 2007; 308-311.
4. Ерзнкян Э.Л. Молочнокислые бактерии и их роль в оздоровлении человека. Нелекарственные методы лечения, профилактики ряда заболеваний и долголетие. Сб. арм. технол. акад. по материалам семинаров Арзни-2005, Ереван 2005: 48-58.
5. Ливзан М.А., Костенко М.Б. Пробиотики в практике врача-терапевта. Справочник поликлинического врача 2008; 3: 8-12.
6. Ушкалова Е.А. Роль пробиотиков в гастроэнтерологии. Фармация 2007; 6: 16-23.
7. Brophy S., et al. Internet-based randomised controlled trials for the evaluation of complementary and alternative medicines: probiotics in spondyloarthritis. BMC Musculoskel Disorders 2008;9(4):1-8.
8. Gill H.S., Guarner F. Probiotics and human health: a clinical perspective. Postgrad Med J 2004; 80: 516-526.
9. Hwang J.S., Im C.R., Im S.H. Immune disorders and its correlation with gut microbiome. Immune Network 2012; 12(4): 129-138.
10. Kim N.Y., Ji G.E. Effects of probiotics on the prevention of atopic dermatitis. Korean J Pediatr 2012; 55(6): 193-201.
11. Mai V., Draganov P.V. Recent advances and remaining gaps in our knowledge of associations between gut microbiota and human health. World J Gastroent 2009; 15(1):81-85.
12. Moroti C., et al. Effect of the consumption of a new symbiotic shake on glycemia and cholesterol levels in elderly people with type 2 diabetes mellitus. Lipids in Health and Disease 2012, 11: 29.
13. Musso G., Gambino R., Cassander M., Obesity, Diabetes, and Gut Microbiota. The hygiene hypothesis expanded? Diabetes Care 2010; 33: 2277-2284.
14. QuanToh Z., Anzela A., Tang M.L.K., Licciardi P.V. Probiotic therapy as a novel approach for allergic disease. Frontiers in Pharmacology 2012; 3 (Article 171): 1-14.
15. Ritchie M.L., Romanuk T.N. A Meta-Analysis of Probiotic Efficacy for Gastrointestinal Diseases. PLoS ONE 2012; 7(4): 1-11.
16. Selimian A., Tamanian G. New Approach to the Significant Reduction of Green House Gases (GHG) in Pork and Poultry Production. IOSR J of Agricul and Veterin Science, 2013; 2(2): 18-22.
17. Szajewska H. Advances and Limitations of Evidence-Based Medicine – Impact for Probiotics. Ann Nutr Metab 2010; 57(1): 6-9.

## РЕЗЮМЕ

## ИЗУЧЕНИЕ ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ АРМЯНСКОГО КИСЛО-МОЛОЧНОГО ПРОДУКТА ЧОРАТАН В ТЕРАПИИ НЕКОТОРЫХ ХРОНИЧЕСКИХ ЗАБОЛЕВАНИЙ

Авакян М.Н., Каликян З.Г., Авакян В.М., Селимян А.Е., Абрамян А.Г., Акопян В.Э., Варданян Л.Ш.  
 Медицинский центр “АльтМед”

**Ключевые слова:** микрофлора кишечника, кисло-молочные продукты, хронические заболевания.

В статье представлены результаты исследования, проведенного в рамках проекта базового финансирования Государственного комитета по науке РА “Применение армянского кисло-молочного продукта Чоратан в традиционной и альтернативной медицине”. Демонстрируются данные изучения нарушений микрофлоры кишечника у пациентов с различными патологиями (болезни пищеварительного тракта, аллергия, сахарный диабет 2 типа), на основании бактериологического анализа кала. В качестве контрольной группы включены пациенты без клинического диагноза, но с жалобами, связанными с деятельностью кишечника. Больным с клиническим диагнозом продукт Чоратан был включен в комплексную терапию ос-

новных заболеваний, а участникам без диагноза был назначен только Чоратан. Представлен сравнительный анализ данных исследования кала 120 участников до и после применения продукта Чоратан, а также субъективного состояния пациентов на фоне применения Чоратана, на основании чего можно сделать вывод об имеющихся позитивных изменениях, уровень которых зависит от исходного состояния больных и имеющегося клинического диагноза. Тем не менее, с целью получения более достоверных данных и уточнения возможности и показаний к применению кисло-молочного продукта Чоратан в качестве вспомогательного восстановительного средства в терапии вышеуказанных патологий требуются дальнейшие углубленные исследования.

## SUMMARY

## THE STUDY OF POSSIBILITIES OF USE OF THE ARMENIAN FERMENTED MILK PRODUCT “CHORATAN” IN THE TREATMENT OF SOME CHRONIC DISEASES

Avakyan M.N., Kalikyan Z.G., Avakyan V.M., Selimyan A.E., Abrahamyan A.H., Hakobyan V.E., Vardanyan L.Sh.  
 Medical Center “AltMed”

**Keywords:** gut microflora, fermented milk products, chronic diseases.

The results of study which was implemented in the frame of project “The use of Armenian fermented milk product “Choratan” in traditional and alternative medicine” of State Committee of Science of RA with basic financing are presented in the article. The data of gut microflora disturbances revealed on the base of bacteriological analysis of stool of the patients with different pathologies (digestive tract diseases, allergy, II type diabetes mellitus) are demonstrated. The patients without any clinical diagnosis but with some complaints regarding to bowels activity were included as control group. The Choratan was inserted in the com-

plex therapy of basic diseases and was only prescribed to the participants without diagnosis. The comparative analysis of data of 120 patients’ stool bacanalyses performing before and after use of Choratan and also the changes in subjective states of the patients during the treatment with use of Choratan is presented. According to this analysis it can be concluded that the positive changes are taken place and their level depends on the initial state and the clinical diagnosis of the patients. Nevertheless, in order to receive more significant data and clarify the possibilities and indications to use of Choratan fermented milk product as an auxiliary restorative remedy in the therapy of above mentioned diseases the further deeper studies are needed.

# ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԳԱՆԳՈՒՂԵՂԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՔՈՎ, ԳԼԽՈՒՂԵՂԻ ՑՆՑՈՒՄՈՎ ՀԻՎԱՆՂՆԵՐԻ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Միրզոյան Յ.Յ.  
ԵՊԲՀ, Նյարդավիրաբուժության ամբիոն  
«Արմենիա» ՀԲԿ, Նյարդավիրաբուժական բաժանմունք

**Բանալի բառեր՝** գանգոլդեղային վնասվածք, մեկուսացված բուժում, գլխուղեղ, ցնցում, բարելավում:

Վնասվածքների թիվը ամբողջ տարեցտարի աշխարհում աճում է [5,8], և գանգոլդեղային վնասվածք (ԳՈՒՎ) մահացության աճի և ազգաբնակչության աշխատունակության նվազման հիմնական պատճառներից մեկն է՝ կազմելով բոլոր վնասվածքների շուրջ 30-60%-ը [1,3,7]: ԳՈՒՎ-երից գլխուղեղի ցնցումը կազմում է շուրջ 50% [6]: Գործնականում առողջացում կամ կայուն փոխհատուցում դիտվում է փակ ԳՈՒՎ-ով հիվանդների միայն 30%-ի շրջանում: Նույնիսկ թեթև ԳՈՒՎ-ով հիվանդների շուրջ 15%-ի դեպքում դիտվում են որոշ խանգարումներ, այսպես կոչված, «պոստկոմոցիոն» համախտանիշի ձևով, որը հանգեցնում է աշխատունակության ժամանակավոր կորստի [2, 9]: Թեթև աստիճանի ԳՈՒՎ-ի ժամանակին ախտորոշումն ու բուժումը եսպես նպաստում է հիվանդների վաղ ապաքինմանն ու աշխատունակության վերականգնմանը [4]: Հաշվի առնելով գլխուղեղի ցնցումների լայն տարածվածությունը, հետվնասվածքային շրջանում դիտվող բարդությունները՝ մշտապես արդիական են գլխուղեղի ցնցումով հիվանդների բուժման, դրա կազմակերպման խնդիրները: Սրանք մշտական կատարելագործման կարիք ունեն, որը հնարավոր է կուտակված փորձը պարբերաբար ուսումնասիրելու դեպքում:

**Նպատակը:** Ուսումնասիրել մեկուսացված ԳՈՒՎ-ը, գլխուղեղի ցնցումով հիվանդների բուժման կազմակերպման խնդիրները ՀՀ տարբեր հիվանդանոցներում, առաջարկել դրա բարելավմանն ուղղված մոտեցումներ:

**Մեթոդները և նյութը:** Ուսումնասիրվել են Երևանի 3 նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ «Արմենիա» ՀԲԿ-ում, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում, «Էրեբունի» ԲԿ-ում և ՀՀ մարզային 5 կենտրոններում՝ Գյումրիում, Վանաձորում, Աշտարակում, Հրազդանում, Կապանում (այսուհետ կտրվեն միայն քաղաքների անունները) տեղակայված հիվանդանոցներում 2007-2011-ին ստացիոնար բուժում ստացած մեկուսացված ԳՈՒՎ-ով, գլխուղեղի ցնցումով հիվանդների հիվանդության նկարագրերը: Գյումրիի և Վանաձորի հիվանդա-

նոցներում կան համակարգչային շերտագրության (ՀՇ) հետազոտություն իրականացնող ու նյարդավիրաբուժական ծառայություններ, աշխատում է 1 նյարդավիրաբույժ, մնացած քաղաքներում նման ծառայություններ չկան, նյարդաբանական զննում իրականացնում է նյարդաբանը: Կապանը քաղաքը Երևանից 320 կմ հեռավորության վրա է, Հրազդանը՝ 40 կմ, Աշտարակը՝ 13 կմ (ՀՀ մարզպետարանների պաշտոնական կայք էջ): Ուսումնասիրվել է 1376 հիվանդության նկարագիր: Կատարվել է պարզ տոկոսային հաշվարկ: Ընդունվելիս հիվանդների նյարդաբանական վիճակի տվյալներն արտացոլված են աղյուսակ 1-ում:

Հիվանդները ընդունվել են հիվանդանոց վնասվածք ստանալու տարբեր օրերին, ըստ այդմ նրանք բաժանվել են խմբերի՝ վնասվածքի 1-ին օրն ընդունված հիվանդներ, 2-3-րդ օրերին ընդունված հիվանդներ, 4-րդ օրը և դրանից հետո ընդունված հիվանդներ: Տարբեր հիվանդանոցներում հիվանդների բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Հիվանդները ընդունվել են վերակենդանացման բաժանմունք կամ այլ բաժանմունքներ, որոնք նախատեսված են կայուն վիճակում գտնվող հիվանդների բուժման համար: Նեղ մասնագիտացված հիվանդանոցներում դրանք նյարդավիրաբուժական, իսկ մյուս հիվանդանոցներում՝ վիրաբուժական, վնասվածքաբանական, ընդհանուր մասնագիտացված բաժանմունքներն են: Վերակենդանացման բաժանմունք են ընդունվել «Արմենիա» ՀԲԿ-ում 33 (12,6%) հիվանդ, «Էրեբունի» ԲԿ-ում՝ 15 (19,2%), «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում՝ 529 (95,8%), Գյումրիում՝ 11 (5,8%), Վանաձորում՝ 2 (1,9%): Մնացած հիվանդները ընդունվել են վերը նշված մյուս բաժանմունքներ: Ընդհանուր վիճակը կայունանալուց հետո «Արմենիա» ՀԲԿ-ի վերակենդանացման բաժանմունքում 3 օր և ավելի տևողությամբ բուժում են ստացել 5 (1,9%) հիվանդ, «Սբ.Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում՝ 11 (2%) հիվանդ, Գյումրիում՝ 3 (1,6%) հիվանդ:

Հաջորդ՝ աղյուսակ 3-ում, ներկայացված են գանգոլդեղային ցնցումների և ՀՇ հետազոտության արդյունքները:

**Աղյուսակ 1**

Հիվանդների նյարդաբանական վիճակի տվյալները ընդունվելիս\*

Նյարդաբանական վիճակի տվյալները	«Արմենիա» ՋԲԿ	«Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ	«Էրեբունի» ԲԿ	Գյումրի	Վանաձոր	Հրազդան	Կապան	Աշտարակ
Գիտակցության կորուստ	192 73,56%	318 57,61%	53 67,95%	147 76,96%	53 50,48%	54 72,97%	46 56,79%	30 88,24%
Ամենգիա	103 39,46%	103 18,66%	38 48,72%	89 46,60%	42 40%	42 56,76%	40 49,38%	31 91,18%
Ընդհանուր գանգուղեղային երևույթներ	210 80,46%	394 71,38%	63 80,77%	176 92,15%	97 92,38%	72 97,30%	62 76,54%	33 97,06%
Պարզ	233 89,27%	431 78,08%	62 79,49%	161 84,29%	78 74,29%	67 90,54%	63 77,78%	25 73,53%
Զափավոր մթազևած	19 7,28%	114 25,65%	11 14,10%	23 12,04%	24 22,86%	6 8,11%	13 16,05%	9 26,47%
Խոր մթազևած	5 1,92%	5 0,91%	2 2,56%	1 0,52%	2 1,90%	0	2 2,47%	0
Սոպոր	2 0,77%	0	1 1,28%	6 3,14%	0	1 1,35%	2 2,47%	0
Կոմա 1	1 0,38%	0	1 1,28%	0	1 0,95%	0	1 1,23%	0
Հի որոշվել հարբածության պատճառով	1 0,38%	2 0,35%	1 1,28%	0	0	0	0	0
Մենինգային ախտանշաններ	3 1,15%	69 12,50%	5 6,41%	13 6,80%	7 6,66%	13 17,57%	64 79,01%	13 38,24%
Օջախային ախտանշաններ	14 5,36%	7 1,27%	8 10,25%	52 27,23%	45 42,86%	3 4,05%	26 32,09%	3 8,82%
Նիստազմ (ակնախաղ)	246 94,25%	450 81,52%	70 89,74%	166 86,1%	68 64,76%	64 86,49%	56 69,14%	23 67,65%

\* տրված են հիվանդների թիվը և նրանց տոկոսային մասնաբաժինը:

**Աղյուսակ 2**

Ընդունվելիս հիվանդների բաշխվածությունը ըստ վնասվածք ստանալու օրվա\*

հիվանդանոց	1-ին օրը	2-3-րդ օրերին	4-րդ օրը և դրանից հետո
«Արմենիա»	222 (85,06%)	28 (10,73%)	11 (4,21%)
Աշտարակ	33 (97,06%)	1 (2,94%)	0
Գյումրի	166 (86,91%)	21 (10,99%)	4 (2,09)
«Էրեբունի»	65 (83,33%)	9 (11,54%)	4 (5,13%)
Կապան	75 (95,59%)	4 (4,94%)	2 (2,47%)
Հրազդան	62 (83,78%)	12 (16,22%)	0
«Սբ. Գ. Լուսավորիչ»	499 (81,34%)	31 (5,62%)	22 (3,99%)
Վանաձոր	92 (87,62%)	11 (10,48%)	2 (1,9%)

\* աղյուսակում ներկայացված են հիվանդների թիվը և մասնաբաժինը:

Մնացած հիվանդանոցներում ՀՇ հետազոտություն չի իրականացվել, իսկ գանգի ռենտգենաբանական հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Ակնահատակի զննում է իրականացվել «Արմենիա» ՋԲԿ-ում 219 (83,9%), «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում 355 (64,3%), «Էրեբունի» ԲԿ-ում՝ 39 (50%), Գյումրիում՝ 16 (8,4%), Հրազդանում՝ 4 (5,4%) հիվանդների շրջանում, Վանաձորում՝ 1 (0,95%) հիվանդի դեպքում:

Ըստ ստացիոնար բուժման տևողության՝ առանձնացվել են հետևյալ խմբերը. հիվանդներ, որոնք բուժվել են 1-2 օր, 3-7 օր, 8-14 օր, 15 օր և ավելի: Ըստ այդմ՝ տարբեր հիվանդանոցներում հիվանդները բաշխվել են այնպես, ինչպես ներկայացված է աղյուսակ 5-ում:

Հիվանդների մի մասը դուրս է գրվել լավանալուց հետո, մնացածները հրաժարվել են հետագա ստացիոնար բուժումից կամ տեղափոխվել են այլ հիվանդանոց: Լավանալուց հետո «Արմենիա» ՋԲԿ-ից դուրս է գրվել 73 (28%) հիվանդ, «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ից՝ 211 (38,2%), «Էրեբունի» ԲԿ-ից՝ 36 (46,2%), Գյումրիի հիվանդանոցից՝ 68 (35,6%), Հրազդանի հիվանդանոցից՝ 26 (35,1%), Վանաձորի հիվանդանոցից՝ 35 (100%), Կապանի հիվանդանոցից՝ 74 (91,4%), Աշտարակի հիվանդանոցից՝ 6 (17,7%) հիվանդ, հետագա ստացիոնար բուժումից հրաժարվել են համապատասխանաբար՝ 187 (71,7%), 339 (61,4%), 42 (53,9%), 122 (63,9%), 41 (55,4%), 0%, 6 (7,4%), 28 (82,4%):

Հիվանդները հիվանդանոցից դուրս են գրվել անփո-

**Աղյուսակ 3**

Գանգի ռենտգենարանական և ՅՇ հետազոտության արդյունքները

Ֆիվանդանոց	Ռենտգենագրություն	ՅՇ-հետազոտության արդյունքները	Թիվը	Մասնաբաժինը
«Արմենիա»	Գծային կոտրվածք	Չի կատարվել	1	0,4%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	2	0,8
	Նորմա	Չի կատարվել	222	85,1%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	28	10,7%
	Չի կատարվել	Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	8	3,1%
	<b>Ընդհանուր թիվը</b>			<b>261</b>
«Սբ. Գ. Լուսավորիչ»	Չի կատարվել	Չի կատարվել	1	0,18%
	Նորմա	Չի կատարվել	513	92,9%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	28	5,1%
	Չի կատարվել	Չի կատարվել	4	0,72%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	6	1,09%
<b>Ընդհանուր թիվը</b>			<b>552</b>	<b>100%</b>
«Էրեբունի»	Գծային կոտրվածք	Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	1	1,28%
		Ներհրված կոտրվածք	1	1,28%
	Նորմա	Չի կատարվել	26	33,33%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	3	3,85%
	Չի կատարվել	Չի կատարվել	1	1,28%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	46	58,97%
<b>Ընդհանուր թիվը</b>			<b>78</b>	<b>100,00%</b>
Գյումրի	Գծային կոտրվածք	Չի կատարվել	4	2,1%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	1	0,5%
	Ներհրված կոտրվածք	Ներհրված կոտրվածք առանց ուղեղա-կյուրթի վնասման	1	0,5%
	Նորմա	Չի կատարվել	164	85,9%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	10	5,2%
	Չի կատարվել	Չի կատարվել	6	3,1%
		Առանց տրավմատիկ ախտահարման նշանների	5	2,6%
<b>Ընդհանուր թիվը</b>			<b>191</b>	<b>100,00%</b>

փոխ վիճակում, լավացումով կամ զգալի լավացումով, երբ ընդհանուր և նյարդաբանական վիճակում առկա շեղումները գրեթե ամբողջովին նահանջել են: Ըստ այդմ՝ «Արմենիա» ՅԲԿ-ից զգալի լավացումով են դուրս գրվել 57 (21,8%) հիվանդ, «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ից՝ 143 (25,9%), «Էրեբունի» ԲԿ-ից՝ 19 (24,4%), Գյումրիի հիվանդանոցից՝ 9 (4,7%), Յրազդանի հիվանդանոցից՝ 0, Վանաձորի հիվանդանոցից՝ 15 (14,3%), Կապանի հիվանդանոցից՝ 44 (79%), Աշտարակի հիվանդանոցից՝ 2 (5,9%), լավացումով՝ համապատասխանաբար՝ 95 (36,4%), 180 (32,6%), 37 (47,4%), 108 (56,5%), 48 (64,9%), 43 (41%), 13 (16,1%), 13 (38,2%): Յիվանդա-

նոցից դուրս գրվելիս հիվանդների մի մասն է ստացել խորհուրդներ, իսկ մնացածը՝ ոչ: «Արմենիա» ՅԲԿ-ում խորհուրդներ չեն ստացել 47 (18%), «Էրեբունի» ԲԿ-ում՝ 4 (5,1%), «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում՝ 141 (25,5%), Գյումրիում՝ 12 (6,3%), Վանաձորում՝ 18 (17,1%), Կապանում՝ 5 (6,2%), Յրազդանում՝ 3 (4,1%), Աշտարակում՝ 9 (26,5%) հիվանդներ:

**Քննարկում:** Նեղ մասնագիտացված հիվանդանոցներում էականորեն տարբերվում են աշխատանքի կազակերպման սկզբունքները գլխուղեղի ցնցումով հիվանդների բուժման հարցում: Այսպես՝ «Սուրբ Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում վերակենդանացման բաժանմունք

**Աղյուսակ 4**

Գանգի ռենտգենագրության սովյալները այն հիվանդանոցներից, որտեղ միայն ռենտգենագրություն է կատարվել

Հիվանդանոց	Ռենտգենագրություն	Հիվանդների թիվը	Հիվանդների մասնաբաժինը
Աշտարակ	Նորմա	32	94,12%
	Չի կատարվել	2	5,88%
	Ընդհանուր	34	100,00%
Կապան	Գծային կոտրվածք	16	19,75%
	Ներհրված կոտրվածք	1	1,23%
	Նորմա	61	75,31%
	Չի կատարվել	3	3,70%
	Ընդհանուր	81	100,00%
Հրազդան	Գծային կոտրվածք	1	1,35%
	Նորմա	39	52,70%
	Չի կատարվել	34	45,95%
	Ընդհանուր	74	100,00%
Վանաձոր	Գծային կոտրվածք	7	6,67%
	Նորմա	94	89,52%
	Չի կատարվել	4	3,81%
	Ընդհանուր	105	100,00%

**Աղյուսակ 5**

Ստացիոնար բուժման տևողությունը\*

Հիվանդանոց	1-2 օր	3-7 օր	8-14 օր	15 և ավելի
«Արմենիա»	100 (38,31%)	95 (36,4%)	55 (21,07%)	11 (4,21%)
Գյումրի	74 (38,74%)	76 (39,79%)	40 (20,94%)	1 (0,52%)
«Էրեբունի»	21 (26,92%)	43 (55,12%)	12 (15,38%)	2 (2,56%)
Կապան	5 (6,17%)	2 (2,47%)	21 (25,93%)	53 (65,43%)
Հրազդան	36 (48,65%)	35 (47,3%)	2 (2,7%)	1 (1,35%)
«Սբ. Գ. Լուսավորիչ»	224 (40,58%)	177 (30,07%)	135 (24,46%)	16 (2,9%)
Վանաձոր	54 (51,43%)	37 (35,24%)	14 (13,33%)	0
Աշտարակ	23 (67,65%)	11 (32,55%)	0	0

\* աղյուսակում ներկայացված են հիվանդների թիվը և մասնաբաժինը:

Ե ընդունվել հիվանդների 95,83%-ը, իսկ մյուս 2 նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ 12,6-19,2%-ը: Շրջանային հիվանդանոցներում այս սովյալներն առավել համեստ են (0-5,9%): Նյարդավիրաբուժական ծառայություն ունեցող շրջանային հիվանդանոցներում վերակենդանացման բաժանմունք են ընդունվել 1,9-5,7% դեպքում, իսկ մնացած շրջանային հիվանդանոցներում վերակենդանացման բաժանմունք չեն ընդունվել: Սա վտանգավոր է, եթե հաշվի առնենք, որ գլխուղեղի ցնցում ախտորոշվում է գանգոսկրի կոտրվածքով (մինչև 21%), խոր մթազնման, սպորի կամ կոմայի մակարդակով գիտակցության խանգարումներով (մինչև 6,2%), մենինգային (մինչև 79%) և օջախային ախտահարման (մինչև 42,9%) ախտանիշներով հիվանդների դեպքում:

«Արմենիա» ՀԲԿ-ում, «Սբ.Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում և Գյումրիում հիվանդների շուրջ 2%-ը ընդունվել ու շարունակել են 3 օր և ավելի տևողությամբ բուժում ստանալ վերակենդանացման բաժանմունքում ընդհանուր վիճակը կայունանալուց հետո՝ անհարկի ավելացնելով բաժանմունքի ծանրաբեռնվածությունը:

Նեղ մասնագիտացված և նյարդավիրաբուժական ծառայություն ունեցող հիվանդանոցներում հիվանդների մոտ 40%-ը դուրս է գրվել անփոփոխ վիճակում, մնացած հիվանդների մեծ մասը դուրս է գրվել լավացումով: Առավել սակավաթիվ մասի դեպքում նկատվել է զգալի լավացում՝ նյարդաբանական վիճակում ունեցած շեղումների գրեթե լրիվ նահանջով: Հիվանդների մեծ մասը դուրս է գրվել հետագա ստացիոնար բուժումից հրաժարվելու պատճառով, նրանց 38-51%-ը ստացիոնարում անցկացրել է 1-2 օր: Այս օրինաչափությունը խախտվում է միայն «Էրեբունի» ԲԿ-ում, որտեղ անփոփոխ վիճակում դուրս է գրվել հիվանդների ավելի քան 28,2%-ը, լավացումով՝ 47,4%-ը, զգալի լավացումով՝ 24,4%-ը: Սա պայմանավորված է նրանով, որ այստեղից հիվանդների գրեթե կեսը դուրս են գրվել լավանալուց հետո՝ ստանալով 3-7 օր տևողությամբ ստացիոնար բուժում, իսկ 1-2 մահճակալ-օր բուժում ստացած հիվանդների մասնաբաժինը ընդհանուր հիվանդների թվով այս հիվանդանոցում ամենաբնիկ է եղել՝ վերոնշյալ հիվանդանոցների համեմատ (26,9%): Առավել շատ

մահճակալ-օր են զբաղեցրել հիվանդները Կապանում, որտեղից անփոփոխ վիճակով ամենաքիչ հիվանդներն են դուրս գրվել (4,9%): Սա հավանաբար պայմանավորված է նրանով, որ այն հեռադիր քաղաք է, Նյարդավիրաբույժներ չկան, Նյարդաբանները քիչ են, և հիվանդները ամբուլատոր բուժօգնություն ստանալու կամ այլ կլինիկա տեղափոխվելու հնարավորություն չունեն, ուստի նախընտրում են երկարատև բուժում ստացիոնար պայմաններում: Այստեղ հիվանդների 91,4%-ը ստացիոնար բուժում է ստացել ավելի քան 1 շաբաթ տևողությամբ ու դուրս գրվել լավանալուց հետո: Աշտարակում շատ բարձր է անփոփոխ վիճակում դուրս գրված հիվանդների թիվը (55,8%), քանի որ հիվանդների մեծ մասը (67,6%), ստանալով 1-2 օր բուժում, տեղափոխվել է կամ հրաժարվել հետագա ստացիոնար բուժումից, հավանաբար մեկնել Երևան, դիմել նեղ մասնագետի, բուժում ստացել ստացիոնար կամ ամբուլատոր պայմաններում: Երևան քաղաքից միջին հեռավորությամբ Յրազդան քաղաքում այս տվյալները մոտ են Կապանի և Աշտարակի տվյալների միջին թվաբանականին (35%) հիվանդների 48,6%-ն է բուժվել 1-2 օր, 55,4%-ը դուրս է գրվել ստացիոնար բուժումից հրաժարվելու կապակցությամբ: Բուժման տևողությունը դիտարկելիս կարևոր է նաև քննարկել, թե հիվանդները վնասվածքի որ օրն են ընդունվել հիվանդանոց: Դիցուք՝ հիվանդների գերակշիռ մասը ընդունվել է հիվանդանոց վնասվածքի 1-ին օրը (նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ 81,3-85,1%-ը, շրջանային հիվանդանոցներում՝ 83,8-97,1%): Վնասվածքի առավել ուշ շրջանում՝ 4-րդ և ավելի օրերին հազվադեպ են դեպքերը (նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ 4-5,1%, որոշ շրջանային հիվանդանոցներում՝ 1,9-2,5%, իսկ Աշտարակում և Յրազդանում նման դեպքեր չկան): Այս դեպքերի նմանօրինակ սակավությունն էլ հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ գլխուղեղի ցնցումով հիվանդների բուժման տևողության մասին դատողություն անելիս հիմնական կողմնորոշիչը լինելու է ստացիոնար բուժման տևողությունը: Ելնելով Նյարդավիրաբուժական ծառայություններ ունեցող հիվանդանոցների տվյալներից՝ կարելի է պնդել, որ գլխուղեղի ցնցումով հիվանդներին բավարար են մինչև 1 շաբաթ տևողությամբ ստացիոնար հետազոտություններն ու բուժումը, եթե հետազոտություններում ներառվել են գլխուղեղի ՅՇ հետազոտությունը և ակնահատակի զննումը: Այս դեպքում գանգի ռենտգենաբանական հետազոտությունը ավելորդ ֆինանսական ծախս է և ճառագայթման չափաբաժին հիվանդի համար. այն դիտվել է 5,3-11,5%-ի դեպքում, առավել հաճախ՝ «Արմենիա» ՅԲԿ-ում:

Նյարդավիրաբուժական ծառայություն ունեցող

հիվանդանոցներից հիվանդներին դուրս գրելիս 5,1-25,4%-ի դեպքում խորհուրդներ չեն տրվել, որն, անշուշտ, մտահոգիչ է, քանի որ նման հիվանդների դեպքում պոստկոմոցիոն համախտանիշի զարգացման հավանականությունն ավելի մեծ է, որը կհանգեցնի աշխատունակության նվազմանը: Այս իմաստով ամենացածր ցուցանիշն ունի «Էրեբունի» ԲԿ-ն, ամենաբարձրը՝ «Սուրբ Գ. Լուսավորիչ» ԲԿ-ն, որը պայմանավորված է նրանով, որ «Էրեբունի» ԲԿ-ում հիվանդներն առավել երկարատև, խոր ստացիոնար հետազոտություններ և բուժում են անցնում, քան մյուս հիվանդանոցներում: «Սուրբ Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում 40,6%-ը բուժվում է 1-2 օր, հաճախ անցնում միայն գանգի ռենտգենաբանական հետազոտություն և դուրս գրվում հետագա բուժումից հրաժարվելու կապակցությամբ: Նման դեպքերում դժվար է տեղամասային Նյարդաբանի հսկողության տակ լինելու կամ ամբուլատոր պայմաններում բուժում նշանակելու խորհուրդ տալ, քանի որ հիվանդները լիարժեք չեն հետազոտվում: Կապանում և Յրազդանում միայն 4,1-6,2% հիվանդները խորհուրդներ չեն ստացել դուրս գրվելիս, իսկ Աշտարակում՝ 26,5%-ը, հավանաբար պայմանավորված նրանով, որ Աշտարակը մոտ է Երևանին, և հիվանդները հաճախ ինքնակամ դիմում են Երևանի տարբեր Նյարդավիրաբուժական ստացիոնարներ՝ հրաժարվելով Աշտարակում առաջարկված ստացիոնար հետազոտությունից: Նման հնարավորությունները Երևանից ունեցած հեռավորության պատճառով գրեթե հասու չէ Յրազդանի, առավել ևս Կապանի բնակչությանը, որի պատճառով էլ բժիշկները այդ քաղաքներում նշանակում են ամբուլատոր բուժում կամ սահմանում են տեղամասային Նյարդաբանի հսկողություն: Նյարդավիրաբուժական ծառայություն ունեցող մի հիվանդանոցից մյուսը հիվանդների տեղափոխությունները հազվադեպ են (0,4-1%): Զեռավոր Կապանից Երևան է տեղափոխվում հիվանդների 1,2%-ը, Յրազդանից՝ շուրջ 12,2%-ը: Վերջին հանգամանքը վկայում է այս քաղաքում բուժկազմակերպչական այնպիսի խնդրի մասին, որը հանգեցնում է չիմաստավորված լրացուցիչ ծախսերի, քանի որ նման հիվանդներին կարելի է բուժել տեղում, եթե բացասական դիսամիկա չի դիտվում հիվանդի Նյարդաբանական կամ ընդհանուր վիճակում: Նման խնդիրը բնորոշ է առհասարակ ՅՅ բոլոր շրջանային հիվանդանոցներին, եթե նկատենք, որ «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում և «Արմենիա» ՅԲԿ-ում բուժված գլխուղեղի ցնցումով հիվանդների 5,4-7,6%-ը, «Էրեբունի» ԲԿ-ում՝ 20,5%-ը տեղափոխվել են շրջանային հիվանդանոցներից: Ընդ որում, «Էրեբունի» ԲԿ-ն շրջաններից կենտրոն հիվանդներին տարհանելու սեփական շտապօգնության ծառայություն ունի, որի շնորհիվ էլ այդտեղ նման բարձր

ցուցանիշ է արձանագրվել:

### Յեռուություններ

1. Գլխուղեղի ցնցումների բուժումը կազմակերպելու առումով ՀՀ տարածքում չկա համակարգված միասնական մոտեցում: Խնդրին վերաբերող մոտեցումների տարբերությունը զգալի է բոլոր հիվանդանոցներում:
2. Շրջանային հիվանդանոցներում, որտեղ չկան նյարդավիրաբուժական և ՀՇ հետազոտություն իրականացնող ծառայություններ, պետք է ներդնել համակարգչային ծառայություն, որը համացանցի օգնությամբ հնարավորություն կտա բուժմանն առնչվող հարցերը քննարկել նյարդավիրաբույժի հետ: Գլխուղեղի ցնցումով հիվանդների բուժումը պետք է կազմակերպել տեղի հիվանդանոցում: Բուժման ընթացքում նյարդաբանական վիճակում բացասական փոփոխություններ ի հայտ գալուն

պես նյարդավիրաբույժի հետ քննարկել հետագա բուժման և հնարավոր բուժտարիանման հարցը:

3. ՀՇ հետազոտություն և նյարդավիրաբուժական ծառայություն ունեցող հիվանդանոցներում հիվանդին ընդունելիս իրականացվող հետազոտություններում անհրաժեշտ է ընդգրկել նյարդաբանական զննում, գլխուղեղի ՀՇ հետազոտություն, ակնահատակի զննում, որից հետո կայուն վիճակում գտնվող հիվանդին ընդունել նյարդավիրաբուժական բաժանմունք: Վերակենդանացման բաժանմունք ընդունված հիվանդներին պետք է տեղափոխել նյարդավիրաբուժական բաժանմունք հիվանդի ընդհանուր վիճակը կայունանալուց հետո: Ստացիոնար բուժման միջին տևողությունը սահմանել 1 շաբաթ, որից հետո իրականացնել ամբուլատոր բուժում տեղամասային նյարդաբանի հսկողությամբ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гайдар Б.В. Современные принципы хирургии сосудов головного мозга. Новые технологии в неврологии и нейрохирургии на рубеже тысячелетий. Материалы Российского конгресса, г. Ступино, 7-9 декабря 1999, с. 32
2. Левин О.С., Черняк З.В. Обзорение книги "Черепномозговая травма и посткоммоционный синдром". Под ред. М. Ризо, Д. Транела, 1996, Неврол. журн., 1997; 5: 53-9
3. Лебедев Э.Д. Анализ послеоперационной летальности в нейрохирургических и травматологических отделениях при внутричерепных вмешательствах / Материалы III съезда неврох. России, СПб, 2002, с. 690
4. Одинак М.М., Емельянов А.Ю., Коваленко П.А. Структура боевой травмы мозга и организация оказания неврологической помощи на этапах медицинской эвакуации в вооруженных конфликтах // Военно-медицинский журнал, 1997, № 1, с. 56-61
5. Стожаров В.В, Михайлов Ю.М., Мирошниченко А.Г. и соавт. Сравнительный анализ показателей дорожно- транспортного травматизма по данным МВД России и медицинских учреждений // Скорая мед. помощь, 2007, № 1, с. 12- 13
6. Талыпов А.Э., Петриков С.С., Пурусас Ю.В., Солодов А.А., Титова Ю.В. Современные методы лечения ушибов головного мозга. // журнал: "Неврология, нейропсихиатрия, психосоматика", т. N 1, 2011, с. 8-15
7. Халмуратов А.М. Научное обоснование системы оказания медицинской помощи на догоспитальном этапе пострадавшим с нейротравмой // Автореферат дисс. на соиск. уч. степ. к.м.н., специальность 14.02.03 / Общественное здоровье и здравоохранение. [Центр. НИИ орг. и информатизации здравоохранения], Москва, 2010, 25 с.
8. Davis D.P. Paramedic rapid sequence intubation for severe traumatic brain injury: perspectives from an expert panel / D.P. Davis, S.M. Faldiry, H.E. Wang et al. // J. prehospital emerg. care, 2007, Vol. 11, №1, PP. 1- 8
9. Muzic-Pavcov J., Bozic K. Subjective syndrome after head injury. Med Pregl., 1998; 51 (1-2): 41-4

## РЕЗЮМЕ

## ПУТИ ОПТИМИЗАЦИИ МЕДОРГАНИЗАЦИИ СТАЦИОНАРНОГО ЛЕЧЕНИЯ БОЛЬНЫХ С ИЗОЛИРОВАННОЙ ЧЕРЕПНОМОЗГОВОЙ ТРАВМОЙ, СОТРЯСЕНИЕМ МОЗГА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Мирзоян А.О.

ЕГМУ, Кафедра нейрохирургии

РМЦ “Армения”, Отделение нейрохирургии

**Ключевые слова:** *изолированная черепно мозговая травма, мозг, сотрясение, лечение, оптимизация.*

Целью данной работы является изучение проблем медорганизации стационарного лечения больных с изолированной черепно мозговой травмой (ИЧМТ), сотрясением мозга и путей их оптимизации в Республике Армения. В этой связи были изучены медицинские документы стационарных больных с ИЧМТ и сотрясением мозга (с 2007 по 2011 гг.) в нейрохирургических отделениях трех узкоспециализированных больниц города Еревана: РМЦ “Армения”, МЦ “Сурб Григор Лусаворич”, МЦ “Эребуни”, а также пяти региональных больниц РА (в городах: Гюмри, Ванадзор, Аштарак, Раздан, Капан). В общей сложности были изучены данные 1376 больных.

Выводы. В Республике Армения нет общего системного подхода в вопросах лечения сотрясения мозга. Подходы к решению данной проблемы во всех больницах достаточно различны. В региональных клиниках, где отсутствуют возможности нейрохирургической помощи и КТ-обследования, необходимо наладить систему интернет связи для обсуждения так-

тики лечения больных с нейрохирургами специализированных клиник. Лечение больных с сотрясением мозга необходимо организовать на уровне местных больниц. В случае появления в процессе лечения отрицательной динамики в неврологическом статусе больного необходимо обсудить с нейрохирургом вопросы дальнейшего лечения больного на месте или перевода его в специализированную клинику. В больницах с возможностью проведения нейрохирургического и КТ-обследований в комплекс проводимых диагностических мероприятий при поступлении больного необходимо включить: неврологическое обследование, КТ-обследование, осмотр глазного дна, после чего больного в стабильном состоянии принять в нейрохирургическое отделение. Из реанимационного отделения в нейрохирургическое перевод больного возможен только после стабилизации его состояния. Средней продолжительностью стационарного лечения следует считать одну неделю, после чего больного можно перевести на амбулаторное лечение под контролем участкового невропатолога.

## SUMMARY

## OPTIMIZATION OF MEDICAL ORGANIZATION OF PATIENTS WITH ISOLATED TRAUMATIC BRAIN INJURY, CONCUSSION OF BRAIN IN HOSPITALS OF THE REPUBLIC OF ARMENIA

Mirzoyan H.H.

YSMU, Department of Neurologic Surgery

“Armenia” RMC, Department of Neurosurgery

**Keywords:** *isolated traumatic brain injury, treatment, optimization, brain, concussion.*

The aim is to study organizational issues of patients with Isolated Traumatic Brain Injury (ITBI), concussion of the brain in the hospitals of the Republic of Armenia (RA), develop the ways of optimization. The medical records of patients with ITBI and concussion of the brain, treated from 2007 to 2011, were studied in 3 hospitals of Yerevan (“Armenia” RMC, “Saint Gregory The Illuminator” MC, “Erebuni” MC,) and in the regional hospitals of the cities of Gyumri, Vanadzor, Hrazdan, Kapan, Ashtarak. The study involved 1376 patients. Conclusions: There is no unified organizational system for treatment of patients with ITBI, and concussion of the brain. There are significant differences in approaches to address challenges in all hospitals. In the regional hospitals, where there is no pos-

sibility of neurosurgical care and CT scan, there is need in internet connection to discuss treatment issues with a neurosurgeon. Treatment of patients with brain concussion should be organized in local hospitals, but in case of negative dynamics in the neurological status it would be necessary to discuss with a neurosurgeon further tactics of treatment and possible transportation of a patient. In the hospitals with the neurosurgical, CT scan services, neurologic examination, CT scan, eye grounds examination are needed when patient is admitted to the hospital, after that the patients with compensative status should be taken to the neurosurgical department. A patient admitted to reanimation department should be transferred to neurosurgical department after the stabilization of his state. The average duration of inpatient treatment is considered to be a week, after that it's necessary to conduct an outpatient treatment controlled by a local neurologist.

ՐՏԴ. 616.831.957-001.2-053.89

## ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԳԱՆԳՈՒՂԵՂԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՔԻՑ ՅԵՏՈ ՉԱՐԳԱՑՈՂ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՍՈՒԲՂՈՒՐԱԼ ՅԵՄԱՏՈՄԱՅԻ ԲՈՒԺՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՏԱՐԲԵՐ ՀԻՎԱՆՂԱՆՈՑՆԵՐՈՒՄ, ԴՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Միրզոյան Յ.Յ.<sup>1,2</sup>, Պատրիկյան Դ.Ա.<sup>1,2</sup>, Ֆանարջյան Ռ.Վ.<sup>1</sup>, Եղունյան Մ.Ա.<sup>1,3</sup>

<sup>1</sup> ԵՊԲՀ, Նյարդավիրաբուժության ամբիոն

<sup>2</sup> «Արմենիա» ՀԲԿ, Նյարդավիրաբուժական բաժանմունք

<sup>3</sup> «Էրեբունի» ԲԿ, Նյարդավիրաբուժական բաժանմունք

**Բանալի բառեր՝** քրոնիկական, հեմատոմա, մեկուսացված, գանգուղեղային վնասվածք, սուբդուրալ, վիրահատական, բուժում, օպտիմալացում:

Քրոնիկական սուբդուրալ հեմատոմաները (արյունուռուցքները) հաճախ զարգանում են նախկինում տարած գանգուղեղային վնասվածքի (ԳՈՒՎ) հետևանքով [1,3]: Խնդրի կարևորությունն առավել է ընդգծվում, եթե նկատենք, որ ամբողջ աշխարհում տարեցտարի ավելանում է տրավմատիզմը [4,6]: Դեռևս դիսկուտաբիլ են քրոնիկական սուբդուրալ հեմատոմայի բուժմանն առնչվող մոտեցումները, որոնք վերաբերում են վիրահատական եղանակին և ծավալին, վիրահատության իրականացման ժամկետներին: Այդ իսկ պատճառով մեծ նշանակություն պիտի տրվի հիվանդի վիճակին, համալիր հետազոտությունների արդյունքներին [4,5]: Բազմաթիվ հետազոտությունների նպատակը եղել է բուժման հարցում մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան հիվանդության ընթացքի այս կամ այն փուլում առավել պահպանողական բնույթի վիրահատական մեթոդներ կիրառելու [1,2,3,5,7,8]: Բուժման հարցում առկա մոտեցումները, անխոս, պետք է մշտապես կատարելագործվեն, որը հնարավոր է կուտակված փորձը պարբերաբար ուսումնասիրելու դեպքում:

**Նպատակը:** Ուսումնասիրել մեկուսացված ԳՈՒՎ-ից հետո զարգացող քրոնիկական սուբդուրալ հեմատոմայի բուժմանն առնչվող մոտեցումները ՀՀ տարբեր հիվանդանոցներում, մշակել դրա բարելավմանն ուղղված մոտեցումները:

**Մեթոդները և նյութը:** Հետազոտությունը կատարվել է Երևանի 3 նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ «Արմենիա» ՀԲԿ-ում, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում, «Էրեբունի» ԲԿ-ում և ՀՀ մարզային 5 կենտրոններում՝ Գյումրիում, Վանաձորում, Աշտարակում, Հրազդանում, Կապանում (այսուհետ կտրվեն միայն քաղաքների անունները) տեղակայված հիվանդանոցներում: Գյումրիի և Վանաձորի հիվանդանոցներում կան համակարգչային շերտագրություն (ՀՇ) հետազոտություն իրականացնող ու նյարդավիրաբուժական

ծառայություններ, աշխատում է 1 նյարդավիրաբույժ, մնացած քաղաքներում նման ծառայություններ չկան: Նյարդաբանական գնում իրականացնում է նյարդաբանը: Ուսումնասիրվել են 2007-2011-ին ստացիոնար բուժում ստացած մեկուսացված ԳՈՒՎ-ից հետո զարգացած քրոնիկական սուբդուրալ հեմատոմայով (արյունուռուցքով) 166 հիվանդների հիվանդության նկարագրերը: Նման նկարագրեր եղել են միայն Երևանի և Գյումրիի հիվանդանոցներում: Կատարվել է պարզ տոկոսային հաշվարկ:

Ընդունվելիս հիվանդների շրջանում իրականացվել է օբյեկտիվ և նյարդաբանական գնում, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հիվանդների շրջանում կատարված գլխուղեղի ՀՇ հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

«Արմենիա» ՀԲԿ-ում 1 հիվանդ չի վիրահատվել, մնացած բոլոր հիվանդները վիրահատվել են տարբեր հիվանդանոցներում: Պայմանավորված նրանով, թե հիվանդներն ընդունվելուց հետո ինչ ժամանակահատվածում են վիրահատվել, բաժանվել են հետևյալ խմբերի. հիվանդներ, որոնք վիրահատվել են ընդունվելուց հետո՝ 1) 0-12 ժամերի ընթացքում, 2) 13-24 ժամերի ընթացքում, 3) 25 և ավելի ժամերի ընթացքում: Այդ խմբերում հիվանդների բաշխվածությունը տարբեր հիվանդանոցներում ներկայացված է աղյուսակ 3-ում:

Տարբեր հիվանդանոցներում տարբեր հիվանդների շրջանում վիրահատական տարբեր մուտքեր են կիրառվել հեմատոման դատարկելու համար: Դրանք ներկայացված են աղյուսակ 4-ում, որտեղ նշված են նաև այդ վիրահատություններից հետո կատարված կրկնակի վիրահատությունները:

Առաջին վիրահատությունից հետո կատարված ՀՇ հետազոտությամբ «Էրեբունի» ԲԿ-ում, «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում, Գյումրիում 1-ական հիվանդի դեպքում հայտնաբերվել է հիգրոմա /ջրուռուցք/ և գլխուղեղի այտուց, դատարկված հեմատոմայի մնացորդային ծավալ՝ «Էրեբունի» ԲԿ-ում, Գյումրիում, իսկ «Արմե-

**Աղյուսակ 1**

Նյարդաբանական և ընդհանուր վիճակի տվյալները\*

	Ախտանշանները (սիմպտոմներ)	Արմենիա	Ս.Գ.Լուսավորիչ	Էրեբունի	Գյումրի
Գիտակցություն	Գիտակցության կորուստ	21(28%)	10(32,26%)	6(15,38%)	11(52,38%)
	Աննեզիա	15(20%)	0	0	1(4,76%)
	Ընդհանուր գանգուղեղային երևույթներ	29(64,44%)	23(46%)	18(51,43%)	9(50%)
	Պարզ	24(32%)	8(25,81%)	19(48,72%)	3(14,29%)
	Չափավոր մթազնած	27(36%)	10(32,26%)	6(15,38%)	8(38,10%)
	Խոր մթազնած	16(21,33%)	8(25,81%)	9(23,08%)	1(4,76)
	Սոպոր	3(4%)	4(12,90%)	3(7,69%)	6(28,57%)
	Կոմա 1	3(4%)	1(3,25%)	1(2,56%)	3(14,29%)
	Կոմա 2	1(1,33%)	0	0	0
	Կոմա 3	1(1,33%)	0	0	0
	Եղել է սեղացիայի փուլում	0	0	1(2,56%)	0
	Պախիմոտոր գրգռվածություն	1(1,33%)	3(9,68%)	2(5,13%)	3(14,29%)
	Մենինգային ախտանշաններ	42(56%)	30(96,77%)	21(57,14%)	12(57,14%)
	Անիզոկորիա	2(2,67%)	2(6,45%)	3(7,69%)	5(23,81%)
	Ֆոտոռեակցիան բացակայում է	2(2,67%)	0	1(2,56%)	0
	Թույլ արտահայտված օջախային	29(38,67%)	14(45,16%)	11(28,21%)	11(52,38%)
	Չափավոր արտահայտված օջախային	23(30,67%)	11(35,48%)	16(41,03%)	1(4,76%)
	Խիստ արտահայտված օջախային	19(25,33%)	6(19,35%)	9(23,08%)	9(42,86%)
	Ակնագնդերի նիստազմ (ակնախաղ)	9(12%)	11(35,48%)	16(41,03%)	3(14,29%)
	Ընդհանուր վիճակը ծայրահեղ ծանր	7(9,3%)	0	0	0
Ընդհանուր վիճակը ծանր	24(32%)	21(67,7%)	28(71,8%)	18(85,7%)	
Ընդհանուր վիճակը միջին ծանրության	44(58,7%)	10(32,3%)	11(28,2%)	3(14,3%)	
Շնչառությունը սարքերով**	4(5,33%)	0	0	0	

\* աղյուսակի առանձին բաժնում տրված են հիվանդների թիվը և մասնաբաժինը:

\*\* շնչառական ֆունկցիայի խանգարման հետևանքով իրականացվել է արհեստական շնչառություն:

**Աղյուսակ 2**

Գլխուղեղի հետազոտության արդյունքները

Հիվանդանոց	ՀՇ-ի տվյալները	Թիվը	մասնաբաժինը	գլխուղեղի միջային կառույցների շեղումը		
				0-2մմ	3-10մմ	11մմ և ավելի
«Արմենիա»	Բազմախոռոչ սուբդուրալ հեմատոմա	7	9,3%	9(12%)	26(34,7%)	38(50,7%)
	Երկկողմանի սուբդուրալ հեմատոմա	15	20%			
	Քրոնիկական էպիդուրալ հեմատոմա	3	4%			
	Քրոնիկական սուբդուրալ հեմատոմա	35	46,7%			
	Սուբդուրալ հեմատոմա օրգանիզացիայի փուլում	15	20%			
Ընդհանուր	75	100%				
Գյումրի	Բազմախոռոչ սուբդուրալ հեմատոմա	1	4,8%	2(9,5%)	12(57,1%)	7(33,3%)
	Երկկողմանի սուբդուրալ հեմատոմա	7	33,3%			
	Քրոնիկական սուբդուրալ հեմատոմա	10	47,6%			
	Սուբդուրալ հեմատոմա օրգանիզացիայի փուլում	3	14,3%			
	Ընդհանուր	21	100%			
Էրեբունի	Բազմախոռոչ սուբդուրալ հեմատոմա	4	10,3%	4(10,3%)	17 (43,6%)	18(46,1%)
	Երկկողմանի սուբդուրալ հեմատոմա	7	17,9%			
	Էպիդուրալ հեմատոմա օրգանիզացիայի փուլում	1	2,6%			
	Քրոնիկական էպիդուրալ հեմատոմա	2	5,1%			
	Քրոնիկական սուբդուրալ հեմատոմա	16	41%			
	Հիզոնմա /ջրուռուցք/	1	2,6%			
	Սուբդուրալ հեմատոմա օրգանիզացիայի փուլում	8	20,5%			
Ընդհանուր	39	100%				
«Սբ. Գրիգոր Լուսավորիչ»	Երկկողմանի սուբդուրալ հեմատոմա	6	19,4%	7(22,6%)	13(41,9%)	11(35,5%)
	Քրոնիկական սուբդուրալ հեմատոմա	27	87,1%			
	Սուբդուրալ հեմատոմա օրգանիզացիայի փուլում	4	12,9%			
	Ընդհանուր	31	100%			

**Աղյուսակ 3**

Ընդունվելուց հետո մինչև վիրահատություն ընկած ժամանակահատվածը

Հիվանդանոց	0-6 ժամ	13-24 ժամ	1 օր հետո
«Արմենիա»	40(53,33%)	19(25,33%)	15(20%)
Գյումրի	18(85,71%)	1(4,76%)	2(9,52%)
«Էրեբունի»	22(56,41%)	14(35,9%)	3(7,69%)
«Սբ. Գ. Լուսավորիչ»	22(70,97%)	5(16,13%)	4(12,9%)

\*առանձին բաժնում տրված է տվյալ հիվանդանոցում վիրահատված հիվանդների թիվն ու մասնաբաժինը:

**Աղյուսակ 4**

Վիրահատության մուտքերը, կրկնակի վիրահատությունները\*

Հիվանդանոց	Վիրահատական մուտք	Կրկնակի վիրահատություն	
«Արմենիա»	Ոսկրապլաստիկ տրեպանացիա	18(24%)	Չեմատոմայի դատարկում հավելյալ տրեֆինացիոն անջքով
	Ռեզեկցիոն տրեպանացիա	8(10,7%)	Չեմատոմայի դատարկում հավելյալ ռեզեկցիայով
	Տրեֆինացիոն անջքեր	48(64%)	-
Գյումրի	Ոսկրապլաստիկ տրեպանացիա	5(23,8%)	-
	Ռեզեկցիոն տրեպանացիա	16(76,2%)	-
«Էրեբունի»	Ոսկրապլաստիկ տրեպանացիա	5(12,8%)	Ռևիզիա, հիգրոմաների դրենավորում
	Ռեզեկցիոն տրեպանացիա	1(2,6%)	-
	Տրեֆինացիոն անջքեր	33(84,6%)	Ռևիզիա, հիգրոմաների դրենավորում
«Սբ. Գ. Լուսավորիչ»	Կլոր ռեզեկցիոն տրեպանացիա*	31(100%)	Ռևիզիա, հիգրոմաների դրենավորում
			Չեմատոմայի դատարկում հավելյալ տրեֆինացիոն անջքով

\*հեմատոման դատարկվել է կլոր ռեզեկցիոն պատուհանից, որն ստեղծվել է շրջանաձև գլխիկ ունեցող տրապանով:

**Աղյուսակ 5**

Ինտենսիվ բուժման տևողությունը վերակենդանացման բաժանմունքում\*

Հիվանդանոց	1-2 օր	3-7 օր	8 օր և ավելի
«Արմենիա»	47(62,67%)	6(8%)	3(4%)
Գյումրի	13(61,9%)	7(33,33%)	1(4,76%)
«Էրեբունի»	25(64,1%)	1(2,56%)	3(7,69%)
«Սբ. Գ. Լուսավորիչ»	21(67,74%)	4(12,9%)	1(3,23%)

\* աղյուսակում ներկայացված են հիվանդների թիվը և մասնաբաժինը:

**Աղյուսակ 6**

Ստացիոնար բուժման տևողությունը\*

Հիվանդանոց	0-7 օր	8-14 օր	15 և ավելի
«Արմենիա»	2(2,66%)	44(58,67%)	29(38,67%)
Գյումրի	0	11(52,38%)	10(47,62%)
«Էրեբունի»	10(25,64%)	22(56,41%)	7(17,95%)
«Սբ. Գ. Լուսավորիչ»	1(3,23%)	12(38,71%)	18(58,06%)

\* աղյուսակում ներկայացված են հիվանդների թիվը և մասնաբաժինը:

նիա» ՉԲԿ-ում և «Էրեբունի» ԲԿ-ում 5-ական հիվանդի դեպքում դատարկված հեմատոմայի խոռոչում հայտնաբերվել են օդային բշտեր:

Ըստ վերակենդանացման բաժանմունքում իրականացված ինտենսիվ բուժման տևողության՝ առանձնացվել են հետևյալ խմբերը. հիվանդներ, որոնք բուժվել են՝ 1) 1-2 օր, 2) 3-7 օր, 3) 8 օր և ավելի: Ըստ այդմ տարբեր հիվանդանոցներում հիվանդները բաշխվել են այնպես, ինչպես ներկայացված է աղյուսակ 5-ում:

Հիվանդի վիճակի կայունացումից, կենսական կար-

ևոր ֆունկցիաների վերականգնումից, գիտակցության պարզեցումից հետո ավելի քան 2 օր շարունակվել է բուժումը վերակենդանացման բաժանմունքում՝ «Արմենիա» ՉԲԿ-ում՝ 10 (13,3%), «Էրեբունի» ԲԿ-ում՝ 2 (5,1%), «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում՝ 4 (12,9%), Գյումրիում՝ 7 (33,3%) դեպքում:

Ըստ ստացիոնար բուժման տևողության՝ առանձնացվել են հետևյալ խմբերը. հիվանդներ, որոնք բուժվել են՝ 1) 0-7 օր, 2) 8-14 օր, 3) 15 օր և ավելի: Ըստ այդմ տարբեր հիվանդանոցներում հիվանդները բաշխվել են

**Աղյուսակ 7**

*Հիվանդության ելքերն ու բարդությունները*

Հիվանդան	բարդություններ և ելքեր		
«Արմենիա»	Չեմատոման լիարժեք չի դատարկվել, պնևմոցեֆալիա	2	2,7%
	Գլխուղեղի այտուց	1	1,3%
	Պնևմոցեֆալիա, մենինգոէնցեֆալիտ	2	2,7%
	Թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա	2	2,7%
	Ստամոքս-աղիքային ուղու արյունահոսություն, սուր անեմիա, պոստհեմոռագիկ շոկ, թոքի այտուց	1	1,3%
	Թոքաբորբ, պառնելախոց	2	2,7%
	Մահ	4	5,3%
	Խիստ արտահայտված հեմիպարեզ	1	1,3%
	Թույլ արտահայտված հեմիպարեզ	8	10,67%
	Աֆագիա /խոսելակորուստ/	1	1,3%
Գյումրի	Թոքաբորբ	1	4,8%
	Ճակատային պսիխիկա	1	4,8%
«Էրեբունի»	Չեմատոման լիարժեք չի դատարկվել, պնևմոցեֆալիա	1	2,7%
	Գլխուղեղի այտուց	1	2,7%
	Թոքաբորբ	1	2,7%
	Մահ	1	2,7%
	Թույլ արտահայտված հեմիպարեզ	8	20,5%
	Աֆագիա /խոսելակորուստ/	2	5,1%
«Սբ. Գ. Լուսավորիչ»	Գլխուղեղի այտուց, հիգրոմա	1	3,2%
	Գլխուղեղի այտուց	1	3,2%
	Թոքաբորբ	1	3,2%
	Մահ	1	3,2%
	Թույլ արտահայտված հեմիպարեզ	4	12,9%

այնպես, ինչպես ներկայացված է աղյուսակ 6-ում.

Հիվանդությունը ունեցել է տարբեր ելքեր ու բարդություններ, որոնք ներկայացված են աղյուսակ 7-ում.

«Արմենիա» ՀԲԿ-ում 1 հիվանդ չի վիրահատվել, մնացած բոլոր հիվանդները վիրահատվել են տարբեր հիվանդանոցներում: Պայմանավորված նրանով, թե հիվանդներն ընդունվելուց հետո ինչ ժամանակահատվածում են վիրահատվել, բաժանվել են հետևյալ խմբերի. հիվանդներ, որոնք վիրահատվել են ընդունվելուց հետո՝ 1) 0-12 ժամերի ընթացքում, 2) 13-24 ժամերի ընթացքում, 3) 25 և ավելի ժամերի ընթացքում: Այդ խմբերում հիվանդների 1-ական դեպքում մահվան պատճառը գլխուղեղում կենսական կարևոր կենտրոնների կաթվածն է եղել, 2 դեպքում՝ թոքային զարկերակի թրոմբոէմբոլիան /մակարդուկախցանումը/, 1 դեպքում՝ սուր անեմիան /սակավարյունությունը/, պոստհեմոռագիկ շոկը, թոքի այտուցի զարգացումը, սուր շնչառական անբավարարությունը: «Արմենիա» ՀԲԿ-ում 1 (1,3%), «Էրեբունի» ԲԿ-ում 2 (5,1%) հիվանդ ընդունվելուց 1-2 ամիս առաջ վիրահատվել էին քրոնիկական սուբդուրալ հետամատոմայի կապակցությամբ, վիրահատությունից հետո գլխուղեղի ՉԸ հետազոտություն չէր իրականացվել, դուրս էին գրվել լավացումով:

**Քննարկում:** Քրոնիկական սուբդուրալ հետամոման հաճախ ուղեկցվում է օջախային ախտահարման նշաններով (92,3-100%), որի պատճառով հիվանդները

հաճախ ստացիոնար բուժման են դիմում հիվանդության սուբկլինիկական փուլում: Գրեթե բոլոր հիվանդանոցներ ընդունված հիվանդներից ոչ մեկը ծայրահեղ ծանր վիճակում չի եղել, բացառությամբ «Արմենիա» ՀԲԿ-ի (79,3%), որոնցից միայն 4 (5,3%) դեպքում շնչառական խանգարումները շտկելու համար իրականացվել է արհեստական շնչառություն: Այդ իսկ պատճառով վիրահատական բուժման ելքերը բավական լավ են, եզակի են մահվան դեպքերը, որ գրանցվել են «Էրեբունի» ԲԿ-ում և «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում, բացառությամբ «Արմենիա» ՀԲԿ-ում գրանցված 4 (5,3%) դեպքի, որոնցից 3-ի դեպքում, ի տարբերություն մնացած մահացած հիվանդների, մահվան ելքն ունեցել է արտաուղեղային պատճառաբանություն՝ թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա, սրտամկանի ինֆարկտ, ստամոքս-աղիքային ուղու սուր արյունահոսություն, թոքի այտուց, ՍՇԱ, ՍՍԱ: Բուժման արդյունավետությունն առհասարակ գնահատելու համար կարևոր է հաշվի առնել նաև հաշմանդամությանը հանգեցնող օջախային ախտահարման երևույթների արտահայտվածության աստիճանը դուրս գրվելիս և այն համեմատել ընդունվելիս ունեցած տվյալների հետ: Այսպես՝ դուրս գրվելիս հեմիպլեգիա չի դիտվել, խորը հեմիպարեզ դիտվել է «Արմենիա» ՀԲԿ-ում ընդամենը 1 դեպքում: Սակայն թույլ արտահայտված հեմիպարեզով դուրս են գրվել հիվանդների 10,7-20,5%-ը, մյուս՝

2 նեղ մասնագիտացված հիվանդանոցների համեմատ՝ գրեթե կրկնակի հաճախ դուրս են գրվել «Էրեբունի» ԲԿ-ից: Աֆագիայի /խոսելակորուստի/ երևույթներով են դուրս գրվել 1 հիվանդ «Արմենիա» ԶԲԿ-ից, 2-ը՝ «Էրեբունի» ԲԿ-ից: Գյումրիի հիվանդանոցից բոլոր հիվանդները դուրս են գրվել առանց էական շեղումների, բացառությամբ 1 հիվանդի, որի դեպքում առկա են եղել ճակատային պսիխոզի երևույթներ: Ինչպես արդեն նշել ենք, ընդունվելիս գրեթե բոլոր հիվանդներն ունեցել են օջախային ախտահարման նշաններ, ընդ որում, «Էրեբունի» ԲԿ-ում առավել հաճախ են ընդունվել չափավոր (41%) և խիստ (23,1%) արտահայտված օջախային ախտահարման երևույթներով հիվանդներ, քան «Արմենիա» ԶԲԿ-ում և «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում, որտեղ նրանք կազմել են համապատասխանաբար 30,7-35,5% և 19,4-25,3%: Գյումրիում առավել շատ են եղել խիստ արտահայտված օջախային ախտահարման երևույթներով հիվանդները (42,9%):

Հիվանդների մեծ մասը վիրահատվել է ընդունվելու առաջին 12 ժամվա ընթացքում, սակայն նրանց 7,7-21,3%-ը վիրահատվել է ընդունվելու հաջորդող օրերին: Ընդունվելու առաջին ժամերին հիվանդները սկզբունքորեն վիրահատել են հատկապես Գյումրիում (85,7%) և «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում (71%): «Էրեբունի» ԲԿ-ում հիվանդների մեծ մասը վիրահատվել է առաջին 24 ժամվա ընթացքում (առաջին 12 ժամերին՝ 56,41%, հաջորդ 12 ժամերին՝ 35,9%): «Արմենիա» ԶԲԿ-ում 45,3%-ը վիրահատվել են ընդունվելուց ավելի քան 12 ժամ հետո, ընդ որում, գրեթե միևնույն թվով հիվանդներ են վիրահատվել 13-24 ժամ և դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Անկախ միմյանցից տարբերվող այս մոտեցումներից՝ բուժման արդյունքները, ինչպես քննարկեցինք վերը, գրեթե նույնն են: Մոտեցումները տարբերվում են նաև վիրահատական եղանակների, մասնավորապես վիրահատական մուտքերի ընտրության հարցում: Այսպես՝ «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում բոլոր վիրահատությունների դեպքում հեմատոման դատարկվել է կլոր ռեզեկցիոն տրեպանացիայի միջոցով, «Էրեբունի» ԲԿ-ում՝ հիմնականում տրեֆինացիոն անցքերի միջոցով (84,6%), շատ ավելի հազվադեպ՝ ոսկրապլաստիկ տրեպանացիայով (23,8%), եզակի դեպքերում՝ ռեզեկցիոն տրեպանացիայով՝ ի տարբերություն «Արմենիա» ԶԲԿ-ի, որտեղ 8% (6) դեպքում է այն իրականացվել, իսկ տրեֆինացիոն անցքերով հեմատոման դատարկվել է 64% դեպքում, մնացած դեպքերում կատարվել է ոսկրապլաստիկ տրեպանացիա (28%): Գյումրիում մոտեցումը առանցքայնորեն է տարբերվում նեղ մասնագիտացված հիվանդանոցներում ցուցաբերած մոտեցումից: Այդտեղ 76,2%-ի դեպքում հեմատոման

դատարկվել է ռեզեկցիոն տրեպանացիայով, մնացած դեպքերում՝ ոսկրապլաստիկ տրեպանացիայով (23,8%): Այս կամ այն հիվանդանոցում իրականացված վիրահատական մուտքի ընտրության վերաբերյալ դատողություններ անելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ԶԾ հետազոտության արդյունքները: Մասնավորապես բազմախոռոչ հեմատոման կամ օրգանիզացիայի փուլում եղած հեմատոման կարելի է լիարժեք դատարկել ոսկրապլաստիկ տրեպանացիայով: Ըստ այդմ ԶԾ-ի նկարագրություններում նման արդյունքներ նշված են «Արմենիա» ԶԲԿ-ի 29,3%-ի դեպքում, սակայն ոսկրապլաստիկ տրեպանացիան քիչ է իրականացվել (28%), «Էրեբունի» ԲԿ-ում ԶԾ-ի նման արդյունքներ՝ 30,8%, ոսկրապլաստիկ տրեպանացիան իրականացվել է 23,8% դեպքում, որը վկայում է ԶԾ հետազոտության թերացման մասին, քանի որ քիչ չեն նման դեպքերը, երբ հեմատոման դատարկվել է տրեֆինացիոն անցքերի միջոցով: Գյումրիի և «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ի տվյալներն էական ազդեցություն չեն ունեցել մուտքի ընտրության հարցում, քանի որ բոլոր դեպքերում իրականացվել է ռեզեկցիոն կամ ոսկրապլաստիկ տրեպանացիա, որի դեպքում հեմատոման լիարժեք դատարկվում է, չնայած մեծ է վիրահատական ազդեցիան, հատկապես ռեզեկցիոն տրեպանացիայի դեպքում: «Արմենիա» ԶԲԿ-ում եղել է եզակի դեպք, երբ հեմատոման ներծծվել է պահպանողական բուժման արդյունքում:

Հետվիրահատական շրջանում 1-2 օր տևողությամբ վերակենդանացման բաժանմունքում ինտենսիվ թերապիա է իրականացվել հիվանդների 61,9-67,7%-ի դեպքում, բոլոր հիվանդանոցներում գրեթե հավասարապես՝ 3 օրից 1 շաբաթ՝ 2,6-12,9%-ի դեպքում, առավել հաճախ՝ «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում, իսկ Գյումրիում՝ 33,3%-ի դեպքում, 1 շաբաթից ավելի տևողությամբ՝ նեղ մասնագիտացված հիվանդանոցներում՝ 3,2-4,8%-ի դեպքում, Գյումրիում՝ 7,7%-ի դեպքում: Նկատենք նաև, որ հիվանդների 5,1-33,3%-ը շարունակել է բուժում ստանալ վերակենդանացման բաժանմունքում ընդհանուր վիճակի կայունացումից հետո 3 և ավելի օր տևողությամբ՝ ծանրաբեռնելով բաժանմունքի աշխատանքը: Առավել հաճախ դա դիտվել է Գյումրիում (33,3%), ավելի քան կրկնակի պակաս «Արմենիա» ԶԲԿ-ում (13,3%) և «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում (12,9%): Բուժման ընդհանուր տևողությունը առավել երկար է եղել «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում և Գյումրիում. ավելի քան 2 շաբաթ տևողությամբ այս հիվանդանոցներում բուժվել են հիվանդների համապատասխանաբար 58,1% և 47,6%-ը, փոքր-ինչ քիչ են նման դեպքերը «Արմենիա» ԶԲԿ-ում (38,7%), շատ ավելի քիչ՝ «Էրեբունի» ԲԿ-ում (18%), որտեղ հիվանդների 25,6%-ը հիվանդանոցից

դուրս է գրվել առաջին շաբաթվա ընթացքում: Չնայած ստացած բուժմանը՝ բոլոր հիվանդանոցներում էլ 2,7-4,8% դեպքում դիտվել են արտաուղեղային բարդություններ՝ կանգային թոքաբորբի ձևով: «Արմենիա» ՀԲԿ-ում առանձին դեպքերում դիտվել են նաև արտաուղեղային այնպիսի բարդություններ, ինչպիսիք են պառնկելախոցը, թոքային զարկերակի թրոմբոէմբոլիան, ստամոքս-աղիքային ուղու սուր արյունահոսությունը, սուր անեմիան, պոստհեմոռագիկ շոկը, թոքի այտուցը, սուր շնչառական և սրտանոթային անբավարարությունը: Իզոլոր չէ նկատել, որ որոշ հիվանդանոցներում 1,3-5,1% դեպքում հիվանդները նախքան ընդունվելը վիրահատություն են տարել քրոնիկական սուրբուրալ հեմատոմայի կապակցությամբ, վիրահատությունից հետո՝ ստացիոնար բուժման ընթացքում, չի կատարվել ՀՇ հետազոտություն: Վիրահատությունից հետո առհասարակ բոլոր հիվանդանոցներում էլ ՀՇ հետազոտություն, որը հստակ պատկերացում կտար զարգացող հնարավոր ուղեղային բարդությունների մասին, իրականացվել է սակավ դեպքերում (8-19,3%), առավել քիչ՝ «Արմենիա» ՀԲԿ-ում: Դինամիկայում կատարված ՀՇ հետազոտությամբ հիմնականում օդ է հայտնաբերվել հեմատոմայի խոռոչում (60-83,3%), Գյումրիում և «Սբ. Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում եզակի դեպքերում՝ հիգրոմա, գլխուղեղի այտուց, «Էրեբունի» ԲԿ-ում և Գյումրիում եզակի դեպքերում՝ հեմատոմայի մնացորդային ծավալ: Հետվիրահատական բարդությունների առիթով 2,7-6,4% դեպքերում իրականացվել են կրկնակի վիրահատություններ: «Արմենիա» ՀԲԿ-ում կրկնակի վիրահատություններն իրականացվել են մի դեպքում լրացուցիչ տրեֆինացիոն անցքերով, մյուս դեպքում հավելյալ ռեզեկցիոն տրեպանացիայով դատարկվել է հեմատոմայի մնացորդային ծավալը, օդը, իսկ «Էրեբունի» ԲԿ-ում և «Սուրբ Գ. Լուսավորիչ» ԲԿ-ում մեկական հիվանդի դեպքում կատարվել է հեմատոմայի խոռոչի ռեզեկցիոն և հիգրոմաների դրենավորում, ևս մեկի դեպքում՝ հեմատոմայի մնացորդային ծավալի հեռացում՝ լրացուցիչ տրեֆինացիոն անցքերի միջոցով: Չնայած հիվանդներից շատերը ունեցել են գլխուղեղի միջային կառույցների շեղումներ և որմնային (77,4-89,7%), սակայն վիրահատություններն իրականացվել են տարբեր ժամկետներում՝ առանց բուժման արդյունքների էական տարբերության, հետևապես կարելի է պնդել, որ վիրահատության ժամկետները հստակեցնելիս առավել կարևոր են հիվանդի նյարդաբանական վիճակում առկա շեղումները, մասնավորապես գիտակցության խանգարման մակարդակը և կենսական կարևոր ֆունկցիաների խանգարումները, քան ԿՏ հետազոտության արդյունքները:

Կենսական կարևոր ֆունկցիաների խանգարումները, քան ԿՏ հետազոտության արդյունքները:

**Հետևություններ:** Քրոնիկական սուրբուրալ հեմատոմայով հիվանդների բուժման վիրահատական եղանակների ընտրության հարցում նախապատվությունը պետք է տալ այն եղանակներին, որոնք ունեն նվազագույն վիրահատական ագրեսիա: Մասնավորապես անհրաժեշտ է դատարկել հեմատոման տրեֆինացիոն անցքերի միջոցով և միայն դրա անհնարինության դեպքում իրականացնել ոսկրապլաստիկ տրեպանացիա: ՀՇ հետազոտության արդյունքներն անհրաժեշտ են, սակայն միշտ չէ, որ կարող են վճռորոշ լինել վիրահատական մուտքի ընտրության հարցում: Հիվանդի ընդհանուր վիճակի կոմպենսացված լինելու, դինամիկայում բացասական փոփոխություններ չլինելու դեպքում հիվանդներին կարելի է վիրահատել առաջին 24 ժամվա ընթացքում՝ մանրակրկիտ նախավիրահատական շրջան անցկացնելուց հետո՝ հետագա արտաուղեղային բարդություններից խուսափելու նպատակով: Ընդհանուր կամ նյարդաբանական վիճակում աննշան բացասական դինամիկայի դեպքում պետք է անհապաղ վիրահատել: Հետվիրահատական շրջանում իրականացվող ինտենսիվ բուժման ընթացքում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ոչ միայն ներզանգային փոփոխություններին, այլև ուղեկցող հիվանդություններին՝ խորհրդակցելով համապատասխան մասնագետների՝ սրտաբանի, էնդոկրինոլոգի և այլոց հետ՝ արտաուղեղային տարբեր բարդություններից խուսափելու համար, որոնք կարող են հանգեցնել մահվան ելքի: Վերակենդանացման բաժանմունքում հիվանդի վիճակը կայունանալուց 1-2 օր հետո կենսական կարևոր ֆունկցիաների խանգարումներ չլինելու, պարզ գիտակցություն ունենալու դեպքում անհրաժեշտ է հետագա բուժումը շարունակել նյարդավիրաբուժական բաժանմունքում՝ դրանով իսկ անհարկի չծանրաբեռնելով վերակենդանացման բաժանմունքի աշխատանքը: Հետվիրահատական շրջանի 2-3 օրերի ընթացքում նյարդաբանական վիճակում դրական դինամիկայի բացակայության դեպքում պետք է իրականացնել գլխուղեղի ՀՇ հետազոտություն, իսկ մնացած դեպքերում այն անհրաժեշտ է իրականացնել մինչև ստացիոնարից դուրս գրվելը և դրանից հետո 1-2 ամսվա ընթացքում: Հիվանդների ստացիոնար բուժումը մեծ մասամբ կարելի է իրականացնել 1-2 շաբաթ տևողությամբ, որը կթեթևացնի նյարդավիրաբուժական բաժանմունքի ծանրաբեռնվածությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кротов А.В., Валева Е.К. Травматические хронические субдуральные гематомы у больных пожилого возраста: диагностика, хирургическое лечение // Казанский медицинский журнал, 2004, т. 85, N 4, с. 271-274
2. Лихтерман Л.Б., Кравчук А.Д., Потапов Т.К. и др. Хронические субдуральные гематомы: концепция саногенеза и результаты лечения // Диагностика и лечение тяжелой ЧМТ. М., 1997, с. 31-34
3. Потапов А.А., Лихтерман Л.Б., Кравчук А.Д. Хронические субдуральные гематомы. М., 1997
4. Стожаров В.В. Сравнительный анализ показателей дорожно-транспортного травматизма по данным МВД России и медицинских учреждений / В.В. Стожаров, Ю.М. Михайлов, А.Г. Мирошниченко и соавт. // Скорая мед. помощь. 2007, № 1, 12-13
5. Щиголов Ю.С., Цехановский Г.Б. Материалы II Российско-Американской научно-практической конференции. М., 2003, с. 188-191
6. Davis D.P. Paramedic rapid sequence intubation for severe traumatic brain injury: perspectives from an expert panel / D.P. Davis, S.M. Faldiry, H.E. Wang et al. // J. prehospital emerg. care. 2007, Vol. 11, № 1, PP. 1-8
7. Destandau J., Dartigues J.F., Cohadon F. Hematome sous-dural chronique de l'adulte // Neurochirurgie. 1987, 33, N 1.-PP. 17-22
8. Narayan R.K., Narayan T.M., Katz D.A., Kornblith P.L. Lysis of intracranial hematomas with urokinase in rabbit model // J. Neurosurg. 1985, Vol. 62, N 4 PP.580-586

## РЕЗЮМЕ

## ПОДХОДЫ ЛЕЧЕНИЯ ХРОНИЧЕСКОЙ СУБДУРАЛЬНОЙ ГЕМАТОМЫ, РАЗВИВАЮЩЕЙСЯ ПОСЛЕ ИЗОЛИРОВАННОЙ ЧЕРЕПНОМОЗГОВОЙ ТРАВМЫ, В РАЗНЫХ БОЛЬНИЦАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПУТИ ОПТИМИЗАЦИИ

Мирзоян А.О.<sup>1,2</sup>, Патрикян Д.А.<sup>1,2</sup>, Фанарджян Р.В.<sup>1</sup>, Егунян М.А.<sup>1,3</sup>

<sup>1</sup> ЕГМУ, Кафедра нейрохирургии

<sup>2</sup> РМЦ "Армения", Отделение нейрохирургии

<sup>3</sup> МЦ "Эребуни", Отделение нейрохирургии

**Ключевые слова:** хроническая субдуральная гематома, изолированная ЧМТ, хирургическое лечение, оптимизация.

**Целью** настоящего исследования является изучение подходов лечения хронической субдуральной гематомы (ХСГ), развивающейся после изолированной черепно-мозговой травмы (ИЧМТ), в разных больницах РА и путей их оптимизации. С 2007 по 2011 годы были изучены медицинские документы 166 стационарных больных ХСГ (развивающейся после ИЧМТ) в нейрохирургических отделениях трех узкоспециализированных больниц города Еревана: РМЦ "Армения", МЦ "Сурб Григор Лусаворич", МЦ "Эребуни", а также двух региональных больниц РА (в городе Гюмри).

**Выводы.** В выборе оперативного метода лечения ХСГ предпочтение нужно отдать тем методам, которые имеют минимальную оперативную агрессию. В частности, гематому нужно очистить через трепанационные отверстия, в случае невозможности - делать костно-пластическую трепанацию. Результаты компьютерной томографии (КТ) являются важными, но не решающими при выборе оперативного доступа. При компенсированном состоянии больного, отсутствии отрицательной динамики больного можно оперировать в течение

24 часов после тщательного предоперационного обследования для исключения возможных внемозговых осложнений. В случае незначительной отрицательной динамики в общем или неврологическом состоянии необходимо проведение срочной операции. Во время постоперационной интенсивной терапии особое внимание нужно уделять не только внутричерепным изменениям, но и сопутствующим заболеваниям. Необходим консилиум разных специалистов (кардиолога, эндокринолога и т.д.) во избежание внемозговых осложнений, которые могут привести к летальному исходу. После стабилизации состояния больного в реанимационном отделении, при отсутствии жизненно важных нарушений, при наличии ясного сознания, после 1-2 дней лечение можно продолжить в нейрохирургическом отделении, таким образом разгружая реанимационное отделение. В течение 2-3 послеоперационных дней в случае отсутствия положительной динамики в неврологическом статусе необходимо проведение КТ-обследования, в остальных случаях - перед выпиской из стационара и после выписки в течение 1-2 месяцев. Для стационарного лечения больных в большинстве случаев достаточно 1-2 недель, что приведет к разгрузке нейрохирургического отделения.

## SUMMARY

**APPROACHES TO TREATMENT OF CHRONIC SUBDURAL HEMATOMA DEVELOPING AFTER ISOLATED TRAUMATIC BRAIN INJURY IN VARIOUS HOSPITALS IN THE REPUBLIC OF ARMENIA, THE WAYS OF OPTIMIZATION**

Mirzoyan H.H.<sup>1,2</sup>, Patrikyan D.A.<sup>1,2</sup>, Fanarjyan R.V.<sup>1</sup>, Yeghunyanyan M.A.<sup>1,3</sup>

<sup>1</sup> YSMU, Department of Neurologic Surgery

<sup>2</sup> "Armenia" RMC, Department of Neurosurgery

<sup>3</sup> "Erebuni" MC, Department of Neurosurgery

**Keywords:** *isolated traumatic brain injury, surgical treatment, optimization, chronic subdural hematoma.*

**The aim** is to study the approaches to treatment of chronic subdural hematoma (CSH) developing after isolated traumatic brain injury (ITBI) in various hospitals in the Republic of Armenia (RA), and develop the ways of optimization. The medical records of patients with CSH developing after ITBI, treated from 2007 to 2011, were studied in 3 hospitals of Yerevan ("Armenia" RMC, "Saint Gregory the Illuminator" MC, "Erebuni" MC,) and in the regional hospital of the city of Gyumri. 166 patients were included in the study. Conclusions: when choosing surgical treatment method for CSH, it's necessary to give preference to those methods which have minimal operational aggression. In particular, CSH must be evacuated through trephination holes, and if that's impossible – then by bone-plastic trepanation. CT scan results are important but not decisive for the selection of operational access. If the patient is in a compensated condition and there is no negative dynamics, he can be operated within 24 hours after careful preopera-

tive examination to avoid possible extra cerebral complications. Emergency surgery is required in case of insignificant negative dynamics in general or neurological condition of a patient. During postoperative intensive therapy special attention should be paid to intracranial changes and related diseases. Consultation with different specialists (cardiologist, endocrinologist, etc) is needed in order to avoid extra cerebral complications that can lead to death. After stabilization of the patient's status, recovery of consciousness within 1-2 days, the decision of transferring the patient from the intensive care ward of the neurosurgical department must be taken by a neurosurgeon. In case of absence of positive dynamics of neurological status of the operated patients, CT scan within 2-3 postoperative days is necessary, and in other cases the CT scan is need before patient's discharge from the hospital and after discharge within 1-2 months. Postoperative hospital treatment in most cases can be made for 1-2 weeks for unloading neurosurgical department.

ՀՏԴ. 614.2:616.083.98

# ՆԱԽԱԿԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀՐԱՏԱՊ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հարությունյան Զ.Մ., Սարգսյան Հ.Տ.

ԵՊԲՀ, հանրային առողջության և առողջապահության ամբիոն

ՌԲՖ, արտակարգ իրավիճակների բժշկության և ռազմական թունաբանության ամբիոն

**Բանալի բառեր՝** բուժօգնության որակ, որակի կոմպոնենտներ, որակի կառավարում, շտապ, հրատապ բուժօօնություն, արտակարգ իրավիճակների բժշկություն:

Առողջապահության համակարգի որակի կառավարման հիմնախնդիրը արդի ժամանակաշրջանում ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն: Այն պայմանավորված է ցուցաբերվող բուժօգնության ոչ պատշաճ որակով, բժշկական ծառայությունների մատուցման և կառավարման ցանկացած փուլում առկա թերություններով, ռեսուրսախնայող կազմակերպման ձևերի (տնային, ցերեկային ստացիոնար), ինչպես նաև նոր տեխնոլոգիաների (հեռաբժշկություն) օգտագործման ցածր մակարդակով: Հակառակ այդ ամենի՝ օրեցօր մեծանում են հանրության պահանջները բժշկական ծառայությունների որակի հանդեպ: Բժշկական ծառայությունների որակի խնդիրներին են անդրադարձել ամերիկյան և եվրոպական մի շարք բժշկական կազմակերպություններ: Նրանց կողմից իրականացված գիտական աշխատանքների արդյունքները վկայում են, որ բուժօգնության որակի թերությունների 24,7%-ը պայմանավորված է բուժանձնակազմի որակավորմամբ, 14,7%-ը՝ հիվանդների թերի հետազոտմամբ, 13,8%-ը՝ բուժհիմնարկի աշխատանքների սխալ կազմակերպմամբ, 14,1%-ը՝ հիվանդի նկատմամբ անտարբեր վերաբերմունքով, 2,6%-ը՝ հիվանդի վիճակի թերագնահատմամբ: Ըստ Ամերիկյան բժշկական ասոցիացիայի տվյալների՝ ԱՄՆ-ում տարեկան 200 000 մարդ մահանում է բուժաշխատողների մեղքով [6], Եվրոպայում բուժօգնություն ստացած անձանց շրջանում տասից մեկ դեպքում հիվանդի առողջությանը վնաս է հասցվում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, բուժսպասարկման խնդիրներով պայմանավորված, միջևորդ (արբիտրաժային) դատարանում տարեկան 10 հազար բողոքարկված դեպքերի 52%-ը առնչվում է բժշկական սխալներին, 10%-ը՝ վիրաբուժական միջամտություններին, 10%-ը՝ հետվիրահատական բարդություններին, իսկ մնացածը՝ այլ պատճառներին: Ռուսաստանում կատարված հետազոտությունների համաձայն՝ հիվանդների շրջանում հիվանդությունների ախտորոշումներից յուրաքանչյուր 3-րդը սխալ է լինում [7]: Պարզ է, որ անհետաձգելի իրավիճակներում, հատկապես նախահիվանդանոցային փուլում զգալիորեն մեծանում է սխալվելու

ոիսկը:

Վերոնշյալից ակներև է նախահիվանդանոցային հրատապ բուժօգնության որակի կառավարման համակարգի հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված հատուկ գիտահետազոտական աշխատանքների անցկացման արդիականությունն ու անհրաժեշտությունը: Եական նշանակություն է ձեռք բերում նախահիվանդանոցային բժշկական ծառայությունների մատուցման կազմակերպման և որակի կառավարման հարցերի խոր և բազմակողմանի վերլուծությունը:

К сожалению, имеются лишь разрозненные данные относительно способности энтеротоксина *S. perfringens* индуцировать продукцию ЦК [19], хотя этот механизм также может играть важную роль в развитии заболевания.

Клинические наблюдения, посвященные анализу влияния продукции энтеротоксина *A. C. perfringens* на особенности течения ОКИ ограничиваются единичными статьями [10, 33].

Нами было проведено динамическое обследование 273 больных ОКИ различной этиологии для изучения частоты выявления маркеров и уровня токсинов *S. difficile* А и В и энтеротоксина *S. perfringens* типа А с использованием иммунологических тест-систем [3].

Исходя из полученных данных, можно предполагать, что при ОКИ в 40% случаев развитие патологического процесса обусловлено дополнительным воздействием клостридиальных токсинов (чаще в сочетании *S. difficile* с *S. perfringens*, чем изолированно). Выявление маркеров клостридиальных токсинов с помощью простого высокочувствительного иммунологического метода (РКА на планшетах на основе рекомбинантных белков токсинов клостридий), может использоваться в качестве дополнительного теста в диагностике бактериальных кишечных инфекций, в изучении патогенеза ОКИ, при оценке тяжести течения заболевания, эффективности проводимой терапии и при определении контингента больных с риском развития антибиотико-ассоциированных колитов [2].

Таким образом, недооценка роли клостридий в этиологической структуре и особенностях клинического течения острых кишечных инфекций смешанной этиологии показывает важность анализа бактериальных токсинов в фундаментальных и прикладных научных исследованиях.

## ЛИТЕРАТУРА

1. Воротынцева Н. В., Горелов А. В. Влияние биологических свойств возбудителя на клинические проявления сальмонеллеза у детей //Эпидемиология и инфекционные болезни. - 2004. - № 1. - С. 41-47.
2. Гюлазян Н.М., Белая О.Ф. Белый Ю.Ф. Пак С.Г. Возможности этиологической расшифровки кишечной инфекции неустановленной этиологии// Второй Санкт-Петербургский международный экологический форум «Окружающая среда и здоровье человека» (1-4 июля 2008г): материалы форума. Вестник Российской Военно-Медицинской Академии. Приложение №2 (часть I).- № 3 (23).- 2008.- С. 322-323.
3. Гюлазян Н.М., Белая О.Ф. Белый Ю.Ф. Пак С.Г. Выявление маркеров токсинов клостридий при различных вариантах течения острых кишечных инфекций// Клиническая лабораторная диагностика.- 2008. - №3. - С.46-49.
4. Нетесов С.В. Инфекции: новые угрозы в XXI веке //Молекулярная медицина. - 2004. - № 4. - С. 41- 49.
5. Abrahao C., Carman R.J., Hahn H., Liesenfeld O. Similar frequency of detection of Clostridium perfringens enterotoxin and Clostridium difficile toxins in patients with antibiotic-associated diarrhea //Eur. J. Clin. Microbiol. Infect. Dis. - 2001. - V. 20. - P. 676-677.
6. Adak G.K., Long S.M., O'Brien S.J. Trends in indigenous foodborne disease and deaths, England and Wales: 1992 to 2000 //Gut. - 2002. - V. 51. - P. 832-841.
7. Asha N.J., Wilcox M.H. Laboratory diagnosis of Clostridium perfringens antibiotic-associated diarrhoea//J. Med. Microbiol. - 2002. - V. 51. - P. 891-894.
8. Bartlett J.G. COMMENTARY: Bartlett J.G, Onderdonk AB, Cisneros RL, Kasper DL. Clindamycin-Associated Colitis Due to a Toxin-Producing Species of Clostridium in Hamsters. J Infect Dis 1977; 136:701 //J. Inf. Dis. - 2004. - V. 190. - P. 202-209.
9. Brett M.M., Rodhouse J.C., Donovan T.J., Tebbutt G.M., Hutchinson D.N. Detection of Clostridium perfringens and its enterotoxin in cases of sporadic diarrhea //J. Clin. Pathol. - 1992. - V. 45. - P. 609-611.
10. Camacho N., Espinosa C., Rodriguer C., Rodriguer E. Isolates of Clostridium perfringens recovered from Costa Rican patients with antibiotic-associated diarrhoea are mostly enterotoxin-negative and susceptible to first-choice antimicrobials //J. Med. Microbiol. - 2008. - V. 57 (pt 3). - P. 343-347.
11. Chakrabarti G., Zhou X., McClane B.A. Death Pathways Activated in CaCo-2 Cells by Clostridium perfringens Enterotoxin //Infect. Immun. - 2003. - V. 71. - P. 4260-4270.
12. Cornillot E., Saint-Joanis B., Daube G. et al. The enterotoxin gene (cpe) of Clostridium perfringens can be chromosomal or plasmid-borne //Mol. Microbiol. - 1995. - V. 15. - P. 639-647.
13. Desselberger U. Emerging and Re-emerging Infectious Diseases //J. Infection. - 2000. - V. 40. - P. 3-15.
14. Furuse M. Claudin-1 and -2: novel integral membrane proteins localizing at tight junctions with no sequence similarity to occluding //J. Cell. Biol. - 1998. - V. 141. - P. 1539-1550.
15. Hardy S.P. et al. Cationic currents induced by Clostridium perfringens type A enterotoxin in human intestinal Caco-2 cells //J. Med. Microbiol. - 1999. - V. 48. - P. 235-243.
16. Hatheway C. L., Toxigenic Clostridia //Clin. Microbiol. Rev. - 1990. - P. 66-98.
17. Katahira J., Inoue N., Horiguchi Y. Et al. Molecular cloning and functional characterization of the receptor for Clostridium perfringens enterotoxin //J. Cell Biol. 1997. - V. 136. - P. 1239-1247.
18. Kokai-Kun J.F., Benton K., Wieckowski E.U., McClane B.A. Identification of a Clostridium perfringens enterotoxin region required for large complex formation and cytotoxicity by random mutagenesis //Infect. Immun. - 1999. - V. 67. - P. 5634-5641.
19. Krakauer T., Fleischer B., Stevens D.L. et al. Clostridium perfringens enterotoxin lacks superantigenic activity but induces an interleukin-6 response from human peripheral blood mononuclear cells //Infect. Immun. - 1997. - V. 65. - P. 3485-3488.
20. Lukinma S., Takkunen E., Siitonen A. Molecular epidemiology of Clostridium perfringens related to food-borne outbreaks of disease in Finland from 1984 to 1999 //Appl. Environ. Microbiol. - 2002. - V. 68. - P. 3744-3749.
21. McClane B.A. Enterotoxigenic Clostridia: Clostridium perfringens and Clostridium difficile//In: Gram-positive Pathogens (Fischetti, V.F. et al., eds). - ASM Press. - 2000. - P. 551-562.
22. Mead P.S., Slutsker L., Dietz V. et al. Food-related illness and death in the United States //Emerg. Infect. Dis. - 1999. - V. 5. - P. 607-625.
23. Miyakawa M.E.F., Creydt V.P., Uzal F.A. et al. Clostridium perfringens Enterotoxin Damages the Human Intestine in vitro //Infect. Immun. - 2005. - V. 73. - P. 8407-8410.
24. Miyamoto K., Fisher D.J., Li J. et al. Complete Sequencing and Diversity Analysis of the Enterotoxin-Encoding Plasmids in Clostridium perfringens Type A Non-Food-Borne Human Gastrointestinal Disease Isolates //J. Bacteriology. - 2006.-V. 188. - P.1585-1598.
25. Morita K. Claudin multigene family encoding four-transmembrane domain protein components of tight junction strands //Proc. Natl. Acad. Sci. USA. - 1999. - V. 96. - P. 511-516.
26. Rahner C., Mitic L.L., McClane B.A., Anderson J.M. Clostridium perfringens enterotoxin impairs bile flow in the isolated perfused rat liver and induces fragmentation of tight junction fibrils //Hepatology. - 1999. - V. 30. - P. 326A.
27. Sherman S. et al. Clostridium perfringens type A enterotoxin induces concurrent development of tissue damage and fluid accumulation in the rabbit ileum //J. Diarrheal Dis. Res. - 1994. - V. 12. - P. 200-207.
28. Singh U., Mitic L.L., Wieckowski E., Anderson J.M., McClane B.A. Comparative biochemical and immunochemical studies reveal differences in the effects of Clostridium perfringens enterotoxin on polarized CaCo-2 cells versus Vero cells //J. Biol. Chem. - 2001. - V. 276. - P. 33402-33412.
29. Smedley J.G., Fisher D.J., Sayeed S., Chakrabarti G., McClane B.A. The enteric toxins of Clostridium perfringens //Rev. Physiol. Biochem. Pharmacol.- 2004-V.152. - P.183-204.
30. Smedley J.G. III, Saputo J., Parker J.C. et al. Noncytotoxic Clostridium perfringens Enterotoxin (CPE) Variants Localize CPE Intestinal Binding and Demonstrate a Relationship between CPE-Induced Cytotoxicity and Enterotoxicity //Inf. And Immunity. - 2008. - V. 76. - № 8. - P. 3793-3800.
31. Songer J.G. Clostridial Enteric Diseases of Domestic Animals //Clin. Microbiol. Rev. - 1996. - V. 9. - P. 216-234.
32. Sonoda N., Furuse M., Sasaki H. et al. Clostridium perfringens enterotoxin fragments remove specific claudins from tight junction strands: evidence for direct involvement of claudins in tight junction barrier //J. Cell Biol. - 1999. - V. 147. - P. 195-204.
33. Vaishnavi C., Kaur S. Clostridium perfringens enterotoxin in antibiotic-associated diarrhea//Indian J. Pathol. Microbiol. - 2008. - V.51 (2). - P. 198-199.
34. Voth D.E., Ballard J.D. Clostridium difficile Toxins: Mechanism of Action and Role in Disease //Clin. Microbiol. Rev. - 2005. - V. 18. - P. 247-263.
35. Wieckowski E.U., Kokai-Kun J.F., McClane B.A. Characterization of membrane-associated Clostridium perfringens following pronase treatment //Infect. Immun. - 1998. - V. 66. - P. 5897-5905.
36. Wieckowski E.U., Wnek A.P., McClane B.A. Evidence that an ~50-kDa mammalian plasma membrane protein with receptor-like properties mediates the amphiphilicity of specifically-bound Clostridium perfringens enterotoxin //J. Biol. Chem. - 1994. - V. 269. - P. 10838-10848.

## ԱՍՓՈՓՈՒՄ

ՍՈՒՐ ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՊՁՈՒՄ *C. PERFRINGENS* A ՏԵՍԱԿԻ ԷՆՏԵՐՈՏՈՔՍԻՆԻ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՌՈԳԵՆԵՏԻԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Գյուլազյան Ն.Մ.

ԵՊԲՀ, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն

**Բանալի բառեր՝** *C. perfringens*, *Enterotoxigenic E. coli* (EPEC), սուր աղիքային վարակների (ՍԱՎ) պաթոգենեզ, անտիբիոտիկասոցացված դիարեա (ԱԱԴ), սննդային թունավարակների հարուցիչներ, կլոստրիդիային տոքսինների հայտնաբերում:

Վերջին տարիներին հետազոտողները մեծ ուշադրություն են դարձնում ՍԱՎ-ի նոր հարուցիչների բացահայտմանը, որոնցից է դասական ՍՏԻ հարուցիչը՝ պաթոգեն *C. perfringens*-ը: Ըստ ժամանակակից պատկերացումների՝ EPEC արտադրող *C. perfringens* շտամները պայմանավորված են ոչ միայն ՍՏԻ-ով, այլև, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, անտիբիոտիկասոցացված դիարեայով (ԱԱԴ): ՍՏԻ առաջացող *C. perfringens* շտամների մեծ մասը քրոմոսոմներում կրում է EPEC տեսակի գենը (*cpe+*), մինչդեռ սննդային թունավարակների մեկուսացած շտամների դեպքում վերջինս հայտնաբերվում է պլազմիդներում: ՍՏԻ-ի, ԱԱԴ-ի և սպորադիկ դիարեայի դեպքում փորլուծությունը և աղիքային զալարակծկումները պայմանավորված են EPEC-ով:

EPEC-ի և զգայուն բջիջների փոխազդեցությունը հանգեցնում է վերջիններիս ծակոտկենությանը և հետագայում թա-

փանցելիության խանգարմանը, մակրոմոլեկուլների սինթեզի արգելակմանը, բջջակմախքի դեզինտեգրացիային և բջիջ քայքայմանը: EPEC-ն հզոր ցիտոտոքսիկ ակտիվություն ունի ինչպես էպիթելիային բջիջների, այնպես էլ էուկարիոտային բջիջների նկատմամբ արյան շրջանառություն թափանցելու դեպքում:

Գործնականում *C. perfringens*-ի EPEC-ի հայտնաբերումը հազվադեպ է կիրառվում, սակայն, համաձայն մեր տվյալների, ՍԱՎ-ի 40%-ի դեպքում պաթոլոգիական գործընթացի զարգացումը պայմանավորված է կլոստրիդիային տոքսինների լրացուցիչ ազդեցությամբ (հաճախ *C. difficile*-ը և *C. perfringens*-ը համատեղ): Կլոստրիդիային տոքսինների մարկերների բացահայտման բարձր զգայունությամբ պարզ իմունաբանական մեթոդը (ռեկոմբինանտ սպիտերով պլանշետների վրա կոագյուլոտինացիայի ռեակցիան) կարող է կիրառվել որպես աղիքային բակտերիային վարակների ախտորոշման լրացուցիչ թեստ՝ ախտածագումը ուսումնասիրելու, անտիբիոտիկասոցացված կոլիտով ռիսկի ենթակա հիվանդներին բացահայտելու, ինչպես նաև հիվանդության ծանրությունը գնահատելու և բուժման արդյունավետության համար:

## SUMMARY

ON THE PATHOGENETIC MECHANISMS OF ACTION OF *C. PERFRINGENS* TYPE A TOXIN AT ACUTE INTESTINAL INFECTIONS

Gyulazyan N.M.

YSMU, Department of Infectious Diseases

**Keywords:** *C. perfringens* type A toxin, pathogenesis of acute intestinal infections, antibiotic-associated diarrhea (AAD), food-borne illness pathogens (FI), detection of clostridial toxins.

In recent years, researchers have been paying much attention to detecting new etiological agents of infectious diseases including *Clostridium perfringens* - a classic food-borne illness pathogen. According to modern understanding, *Clostridium perfringens* type A strains, producing enterotoxin, are associated not only with FI but also, as shown by clinical and epidemiological studies, with AAD. Most *C. perfringens* strains, causing FI, carry type A enterotoxin gene (*cpe+*) in chromosomes, whereas AAD isolated strains are found in plasmids. Type A enterotoxin is responsible for the diarrhea and intestinal motility disorders observed in patients with FI, AAD and sporadic diarrhea.

Enterotoxin interaction with sensitive cells leads to porosity followed by disruption of permeability, inhibition of macromo-

lecular synthesis, disintegration of cytoskeleton and cell lysis. Enterotoxin has strong cytotoxic activity and is active not only with relation to epithelial cells but also to other eukaryotic cells by entering the systemic circulation.

In routine clinical practice, the identification of *C. perfringens* type A enterotoxin is rarely used. However, according to our data, in 40 % of cases of acute intestinal infections, the development of the pathological process is due to the additional effect of clostridial toxins (often a combination of *C. difficile* with *C. perfringens*). Identification of toxin markers by a simple immunological method with high sensitivity (coagulation reaction on plates based on clostridium toxin recombinant proteins) can be used as an additional test in diagnosis of intestinal bacterial infections; pathogenesis of acute intestinal infections; in assessing the severity of a disease and the effectiveness of a therapy; and in identification of patients at risk of developing antibiotic-associated colitis.

ՀՏԴ. 615.4:617-001.4

# ՎԵՐՔԵՐԸ ԲՈՒԺԵԼՈՒ ԶԱՄԱՐ ՆՈՐ ԴԵՂԱՁԵՎԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՏԵՆՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Արշակյան Ն.Ի.

ԵՊԲՀ, դեղերի տեխնոլոգիայի ամբիոն

**Բանալի բառեր՝** վերքային ծածկույթներ, սորբենտեր, վերքային արտազատուկ, հիդրոֆիլ կենտրոններ, կոլագենային սպունգ, տեքստիլ կաղապարներ:

Վերքերի բուժումը գործնական վիրաբուժության պատմական, բայց ոչ հնացող խնդիրներից է: Չնայած այրվածքների և տարբեր ծագման վերքերի բուժման համար բազմաթիվ միջոցների առկայությանը՝ դրանց բուժման մեթոդների և միջոցների կատարելագործումը հրատապ խնդիր է (Կուզին Մ. Ի., 1990, Գոստշցեվ Վ. Կ., 1996, Պարամոնով Բ. Ա. և համահեղինակներ, 2000): Ներկայումս վիրաբուժական ուղղվածության հիվանդների 35-49%-ը թարախային բորբոքումներով տառապողներն են: Ավելի քան 30 մլն մարդ աշխարհում տառապում է սորոֆիլ խոցերից: Այդ ախտաբանությունը մեծ խնդիր է ոչ միայն հիվանդների, այլև առողջապահական ողջ համակարգի համար, քանի որ դեռ բավականին թանկ է բուժման արժեքը և երկար՝ բուժման ընթացքը [5]: Զարյուրամյակների ընթացքում վերքերը բուժելու համար հիմնական և անփոխարինելի միջոց հանդիսացող վիրակապի որակական և քանակական բնութագրերը էական փոփոխությունների չեն ենթարկվել: Սակայն նոր տեխնոլոգիաների շնորհիվ դեղագործության անսխառեպ զարգացումը հնարավորություն է ընձեռել վերքերը բուժելու համար ստեղծելու նոր դեղաձևեր՝ նոր դեղանյութերով և նոր տեխնոլոգիական լուծույթներով:

Վերքերի բուժման արդյունավետությունը բարձրացնելու, նոր դեղաձևերի կամ նոր դեղանյութեր ստեղծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ճիշտ պատկերացում կազմել վերքային պրոցեսի վերաբերյալ: Ըստ Կուզինի [3]՝ վերքային պրոցեսի փուլերն են՝

1. բորբոքման փուլ (արտահայտված է անոթային բուռն երևույթներով, որոնց հաջորդում է մեռուկացված հյուսվածքներից ինքնամաքման պրոցեսը),
2. վերականգնման փուլ (շարակցական հյուսվածքի առաջացում և հասունացում),
3. Էպիթելացում և սպիացում:

Զաջորդ քայլն արդեն նոր դեղաձևի նախագծումն է, որի ընթացքում խստորեն հաշվի են առնվում՝

1. օգտագործվող դեղանյութերի բնութագրերը (ցածր մոլեկուլային կշիռը, ցածր իոնիզացման

աստիճանը և ճարպալուծությունը),

2. համակարգի բնութագրերը (դեղանյութերի բարձր կոնցետրացիան համակարգում, դեղանյութերի լուծելիության աստիճանը, օժանդակ նյութերի բաղադրությունը և մածուցիկությունը, թափանցելիությունը մեծացնող նյութերի առկայությունը, համակարգի մակերեսը),
3. մաշկի բնութագրերը (մաշկի հիդրատացիայի մակարդակը, հաստությունը, վնասվածության աստիճանը, ջերմաստիճանը):

Այնուհետև, ելնելով նշված փուլերի առանձնահատկություններից և վերքի լավացման վրա ազդելու հիմնական գործոններից՝ կատարյալ վերքային ծածկույթների դեպքում անհրաժեշտ է.

1. Ապահովել վերքային արտազատուկի և թունավոր նյութերի առավելագույն ներծծումը՝ օժտված լինելով համապատասխան ներծծող տարողությամբ:
2. Վերքի մակերեսին ապահովել օպտիմալ խոնավություն:
3. Ապահովել անարգել գազափոխանակություն:
4. Ապահովել օպտիմալ ջերմաստիճանային ռեժիմ:
5. Ապահովել ստերիլություն և ապիրոգենություն:
6. Կանխարգելել վարակի թափանցումը:
7. Ապահովել առանց վնասելու և անցավ հեռացում:
8. Չպարունակել թունավոր բաղադրիչներ:
9. Ունենալ բավարար մեխանիկական ամրություն:
10. Չերծ մնալ դյուրավառ նյութերից:
11. Ունենալ պահպանման հնարավորինս երկար ժամկետ:
12. Արժեքը լինի մատչելի [1]:

Ըստ հատկությունների՝ վերքային ծածկույթները լի-

- նում են՝
1. ներծծող,
  2. պաշտպանիչ,
  3. դեղանյութեր պարունակող,
  4. ոչ վնասվածքային (ատրավմատիկ):
- Իդեալական տարբերակում ցանկալի է համատեղել այս բոլոր հատկությունները կամ գոնե դրանցից մի քանիսը:

Վերքային պրոցեսի առաջին փուլը բուժելու համար

կարևոր է, որ վիրակապը ներծծող և պաշտպանիչ լինի: Օրվա ընթացքում վերքից կարող է արտահոսել մինչև 0,35 մլ/մ<sup>2</sup> արտազատուկ, որի հեռացումն անհրաժեշտ է՝ մեռուկացված հյուսվածքներից արտազատված թունավոր նյութերի ետծծումը կանխելու համար [2]: Սորբենտների դասական օրինակ են տեքստիլ նյութերը, որոնք իրենց որոշ հատկանիշների շնորհիվ վերքային ծածկույթների համար հիմնական կրիչներ են: Այդ հատկանիշներն են՝ բարձր ներծծող հատկությունը, առաձգականությունը, վերքի մակերեսի ամբողջական ընդգրկումը, ոչ վնասվածքայնությունը, գազաօդափոխանակությունը, մեխանիկական ամրությունը, պահպանման երկար ժամկետը, ախտահանման պայմանների հեշտությունը: Տեքստիլ ծածկույթները ցանկալի ազդեցությամբ օժտելու համար համեմատաբար ոչ բարդ տեխնոլոգիական միջոցներով (դաշում, անշարժացում) նրանց մեջ մտցվում են տարբեր դեղանյութեր (հակամեխիլներ, ցիտոտոքսիկներ, հակաօքսիդանտներ, ցավազրկողներ և այլն) [11]: Ուստի նոր կրիչներ ստեղծելու համար սերտ համագործակցություն է առաջանում դեղագործական գիտահետազոտական և տեքստիլ նյութերի գիտահետազոտական ինստիտուտների միջև [14]: Օրինակ՝ սովորական բամբակյա գործվածքի թրջելիության արագությունը 2,1վրկ. է, խոնավակլանումը՝ 210%, բամբակյա և պոլիէթերային գործվածքի թրջելիության արագությունը 5,7վրկ. է, խոնավակլանումը՝ 420%, բամբակ-վիսկոզա գործվածքինը՝ համապատասխանաբար 3,0վրկ. և 1600% [14]: Ռուսական պոլիֆեայան վիրակապը, որը ստացվում է լիզինի վերամշակումից, վերքային արտազատուկի կլանմանը զուգընթաց, կլանում է նաև միկրոօրգանիզմները [2]: Բնական ծագման նյութերի անբավարար և թանկ լինելու պատճառով աշխատանքներ են տարվում դրանց սինթետիկ փոխարինողներ ստեղծելու ուղղությամբ, որոնք սովորաբար էական հատկություններով գերազանցում են իրենց՝ բնական ծագում ունեցող նախորդներին: Այսպես՝ վիսկոզայի թելիկների քիմիական մոդիֆիկացիայի հիմքի վրա ստեղծված վիսցելոտ ԻՄ հիպոսկոպիկ բժշկական վիրաբուժական բամբակը օժտված է 2000% կլանող հատկությամբ [1]:

Ներծծող վերքամոքիչ ծածկույթների մեկ այլ խմբի ստացման տեխնոլոգիայի հիմքում բժշկական սորբենտների կիրառումն է, որոնք կարող են լինել փոշենման, դոնորոլանման և սպունգանման: Փոշենման սորբենտներ են Մոսկվայի «Բիոտեխնոլոգիա» ԳԱՄ-ի կողմից մշակված գալարգան (չոր հիդրոկոլոիդ փոշու տեսքով) և գալակտոն (մածուկանման սուսպենզիա չոր բաղադրիչներից) պատրաստուկները [3]: Պատրաստուկների հիդրոկոլոիդ հիմքը, փոխազդելով վերքային արտազատուկի սպիտակուցների հետ, վերքի մակերեսին առաջացնում

է ոչ ջրալույծ համալիրներ՝ ադիեզիոն (կաշուն) ծածկույթի տեսքով: Վերքային պրոցեսի առաջին փուլի թարախային վերքերը բուժելու համար բավականին արդյունավետ է «Պոլիմերսինթեզ» ԳԱՄ-ի (Վլադիմիր) կողմից ստեղծված ցելեսորբը, որը մաքրված կարբօքսիմեթիլցելյուլոզի մոդիֆիկացված նատրիումական աղի հիմքի վրա ստեղծված, մեծ հիդրոֆիլությամբ օժտված դոնորոլ է: Դոնորոլանման սորբենտները բիոիներտ պոլիմերներ և դեքստրանի ածանցյալներ են: Ստացվում են հիդրոֆիլ նյութերից (դոնորոլ, ագար-ագար, տրագականտ, օսլա, պեկտին), որոնք, լուծվելով ջրում, առաջացնում են կոլոիդ համակարգեր, օրինակ՝ էմալան հիդրոգելը: Ազդման մեխանիզմով հիդրոգելերը նման են էմուլսիաներին, իսկ կառուցվածքով՝ քունքներին: Բժշկական պրակտիկայում հաջող կիրառում գտած պրոցել և ֆոլիդերմ հիդրոգելերը փորձնականորեն ապացուցեցին, որ հիդրոգելերը պահպանում են վերքը կրկնակի վարակումից, կանխում են հարմեռուկացված մասերի չորացումը և վերքի խորացումը, ապահովում են վստահելի հակամանրեային ազդեցություն, կանխում են բորբոքային պրոցեսի մանիֆեստացիան և լավագույն պայմաններ են ստեղծում հյուսվածքի վերականգնման համար [9]: Հիդրոգելերը ազդող դեղանյութերի համար կարող են հանդես գալ նաև որպես կրիչ (դեպո) [16]: Օրինակ՝ գելեպրանը պոլիվինիլպիրոլիդոնային հիմքով թափանցիկ դոնորոլ է, ունի հիդրոֆիլ կենտրոններ, որոնցում կարող է պահվել մինչև 75% ջուր կամ ազդող նյութերի ջրային լուծույթներ: Ուղղորդված բուժիչ ազդեցության համար արտադրվում են գելեպրանի այլ տարբերակներ ևս՝ գելեպրան-ՄՄ, որի հիդրոֆիլ կենտրոններում պահեստավորված է միրամիստինի լուծույթը, և այն ունի հակամեխիլ ազդեցություն, արագացնում է վերքի լավացումը, օգտագործվում է II-III կարգի բորբոքված այրվածքների համար, կամ գելեպրան-ԼԿ-ն, որի հիդրոֆիլ կենտրոններում պահեստավորված է լիդոկաինի լուծույթը: Այս գելեպրանը ունի տեղային անզգայացնող հատկություն, օգտագործվում է սուր ցավոտ վերքերի և այրվածքների համար [6]: Բժշկական սորբենտների ընտանիքի մյուս ներկայացուցիչներն են սպունգները, որոնք ունեն լավ արտահայտված արյունականգ, հակամեխիլ և վերքամոքիչ հատկություններ: Սրանց դասից է Ս. Պետերբուրգի Արյունաբանության ԳՀԻ-ում մշակված թիմակոլը: Թիմակոլը խոշոր եղջերավոր անասունների թիմուսից առանձնացված պոլիպեպտիդային ֆրակցիաների համալիր է՝ ներծծված կուլագենային սպունգում: Արդյունավետ է ջերմային այրվածքները բուժելու համար [3]: Սինթետիկ պոլիմերային սորբենտներից է նաև հիդրոֆիլ պոլիուրետանը: Պոլիուրետանային սպունգները առաձգական են, փափուկ, լավ օդաթափանց և խոնավաթափանց (սիսպուր դերմ, Գեր-

մանիա): Պոլիուրետանի ներծծող հատկությունը 1800-2000% է: Պոլիուրետանային սպունգների թերությունն այն է, որ դրանք ներծծող հատկություններ դրսևորում են հատկապես վերջային արտազատուկի նկատմամբ և կայուն են վերքի մակերեսին [1]:

Գլյուկանի հիմքի վրա ստեղծված Էուզլիպոր սպունգը պարունակում է Էտադեն (հակաալրվածքային), դիօքսիդին, նովոկաին, ունի վերականգնողական, հակամանրեային, ցավազրկող հատկություններ [3]:

Սանգվիկոլը փափուկ, առածգական, թույլ դեղնավուն, բարակ սպունգ է, ստացվում է կոլագենի և սանգվիրիտրինի 1%-անոց լուծույթի լիոֆիլ չորացմամբ: Ցուցաբերում է լայն սպեկտրի հակամիկրոբային ազդեցություն, օգտագործվում է վիրաբուժության, գինեկուլոգիայի, ատամնաբուժության մեջ [8]:

### Պաշտպանիչ ծածկույթներ

Սրանք հիմնականում հանդես են գալիս որպես մեկուսիչներ՝ կանխելով մանրէների թափանցումը վերքի մեջ [2], սահմանափակում են խոնավության կորուստը: Սրանց հիմնական կամ երբեմն էլ միակ կառուցվածքային բաղադրիչն առածգական պոլիմերային թաղանթն է, որն օգտագործվում է պատրաստի վիճակում կամ ձևավորվում է անմիջականորեն վերքի վրա: Դրանցից են՝ պոլիվինիլսպիրտային վինիպլենը, ասիպլենը, դուրդերմը (ԱՄՆ), օպրաֆլեքսը (Գերմանիա), Էպիգարդը (ԱՄՆ): Սրանց հիմնական բաղադրիչներից են պոլիէթիլենը, պոլիպրոպիլենը, պոլիվինիլբրոմիդը, պոլիէթիլենտերեֆտալատը, սիլիկոնը, պոլիէթիլակրիլատը: Անմիջականորեն վերքի վրա ձևավորվող թաղանթները ստացվում են հիմնականում ցողացրման միջոցով (աերոզոլ): Համապատասխան խառնուրդը վերքի վրա ցողացրելուց 1-2 րոպե անց լուծիչը գոլորշիանում է, և առաջանում է թաղանթաձև ծածկույթ, օրինակ՝ լիֆուզոլը (Ռուսաստան), պլաստուբոլը (Հունգարիա), Նոբելուտանը (Շվեդիա), լիկվիդոպլաստ S-ը (Գերմանիա): Լիֆուզոլի առաջացրած թաղանթը վերքի վրա կարող է պահպանվել 6-8 օր, ջրային գոլորշիների համար թափանցելիությունը  $14 \text{ մգ/սմ}^2/24 \text{ ժամ}$  է [1]: Այս դասի վերջային ծածկույթները հակացուցված են արնահոսող, արտահայտված արտազատմամբ վերքերի, ոչ աերոբ վարակների դեպքում, քանի որ թաղանթի տակ կուտակված արտազատուկը կարող է քայքայել այն: Հետևաբար սրանք ցուցված են վերջային պրոցեսի II փուլի համար: Պաշտպանիչ թաղանթների հիմնական խնդիրն է կարգավորել վերքից հյուսվածքային հեղուկի գոլորշիացման արագությունը և դրա հետևանքով առաջացող ջերմության կորուստը: Ամբողջականությունը չխախտված մաշկից հյուսվածքային հեղուկի գոլորշիացման արագությունը  $0,5-2,2 \text{ մգ/սմ}^2/ժ$  է,

իսկ վնասվածքի դեպքում՝  $60-100 \text{ մգ/սմ}^2/ժ$ : Պաշտպանիչ թաղանթից գոլորշիացող հյուսվածքային հեղուկի քանակը չպետք է գերազանցի  $1400 \text{ գ/սմ}^2/օր$ :

### Վերջային ծածկույթներ դեղանյութերով

Վերջային ծածկույթների բուժիչ ազդեցությունը մեծացնելու համար կարևոր տեխնոլոգիական լուծում է դրանց մեջ տարբեր ազդեցություններով դեղանյութերի, դրանց համադրությունների ներմուծումը, որն իրականացվում է վիրակապական նյութերի (կրիչ) ֆիզիկական կամ քիմիական ձևափոխումների շնորհիվ: Համապատասխան օժանդակ նյութերի, տեխնոլոգիական միջամտությունների օգնությամբ ապահովվում է ազդող նյութերի դանդաղ ձերբազատումը և տևական բուժիչ ազդեցությունը: Մասնավորապես իրականացնելով պլդեիդային խմբերի ջրածնային օքսիդացում՝ կարելի է դրանք բաշխել տեքստիլ կաղապարներում (կրիչ, մատրիցա)՝ ա) մակերեսորեն, բ) հավասարաչափ՝ ըստ ծավալի, գ) դեպի կաղապարի կենտրոն՝ ըստ գծայնորեն նվազող կոնցետրացիայի:

Նույն տեխնոլոգիայով կարելի է իրականացնել նաև կաղապարում կենսաբանական ակտիվ նյութերի բաշխումը: Բամբակյա կրիչի որոշ ֆիզիկական փոխարկումների շնորհիվ հնարավոր է փոխել պատրաստի արտադրանքի մի շարք հատկություններ՝ կոշտությունը, առածգականությունը, տարողունակությունը, որոշ կինետիկ բնութագրեր [1]: Կրիչներ կարող են լինել պոլիվինիլսպիրտային թելիկների չիոսված մասսան, նատրիումի դիբրոմիդոգիանուրատով կամ ջրածնի պերօքսիդով ակտիվացված ֆտորոլոնային միացությունները, պոլիհիդրօքսիէթիլմետակրիլատի հիդրոգելները, բնափոխված բջջանյութը, տարբեր սպունգներ և թաղանթներ [2]: Վերջին տարիներին տարբեր գիտնականների կողմից հաստատվել է, որ վերջային պրոցեսը, ըստ էության, ֆերմենտատիվ երևույթ է, հետևաբար լավ արդյունքների կարելի է հասնել՝ վիրակապի մեջ ֆերմենտներ ներմուծելով: Պրոտեոլիտիկ ֆերմենտներն ունեն նեկրոլիտիկ, հակաբորբոքային, հակաալտոցային ազդեցություն, նպաստում են վերքի արագ մաքրմանը և լավացմանը [3]: Վիրակապի մեջ ֆերմենտների ներմուծումը կատարվում է հիմնականում ֆերմենտների ամրակցման եղանակով (մոլեկուլյար մոդելավորման տեխնոլոգիա՝ մոլտիֆերմ): Այս տեխնոլոգիայի շնորհիվ երկարացվում է դեղանյութերի ակտիվության ժամկետը (վերքին դրված վիրակապը ակտիվ է 48 ժամ), նվազեցնում է ֆերմենտների բուժիչ կոնցետրացիան, արյունային համակարգում սահմանափակում է ֆերմենտների ներծծման հնարավորությունը:

Այս խմբին են պատկանում՝

◆ մոլտիֆերմը (Ռուսաստան). պարունակում է

խիտոզան և ծովախեցգետնի հեպատոպանկրեասից անջատված ֆերմենտներ, որոնք օժտված են հզոր վերականգնողական հատկություններով,

- ❖ պոլիպորը (Ռուսաստան). պենոպոլիուրետա-նային համակարգ է՝ անշարժացված տրիպսինով,
- ❖ դալցեկստրիպսինը (Ռուսաստան). տրիպսինն է՝ անշարժացված բժշկական թանգիվի վրա,
- ❖ տերալգինը. սպունգ է՝ ներծծված տերալգին ֆերմենտով,
- ❖ ֆերանցելը (Բելուռուսիա). քիմոտրիպսինն է՝ անշարժացված մոնոկարբօքսի-ցելյուլոզի վրա [1]:

### Ոչ վնասվածքային (ատրավմատիկ) վիրակապեր

Վիրակապերի լուրջ թերություններից է վերքի մալերևույթին կաչելու (ադիեզիա) հատկությունը, որի արդյունքում վիրակապումը դառնում է ցավոտ, և վնասվում է վերականգնվող հյուսվածքը [20]:

Ադիեզիայի պատճառներն են.

1. Վերքի մակերեսի և վիրակապի «սոսնձումը» (որպես սոսինձ հանդես է գալիս արտազատուկը, որը չորանալով առաջացնում է կեղև, կրիչների հիդրոֆիլության մեծացմանը զուգընթաց՝ մեծանում է «սոսնձման» վտանգը):
2. Վերքի լավացման փուլում հատկավոր հյուսվածքի և կրիչի սերտաճումը:

Չկաչող, ոչ վնասվածքային վիրակապեր ստեղծելու համար կան տեխնոլոգիական մի քանի լուծումներ: Դրանցից է՝ վիրակապը վերքին կաչող կողմի պատումը բարակ, հիդրոֆոբ նյութի թաղանթով: Որպեսզի վիրակապը չկորցնի ներծծող հատկությունը, վերցնում են ծակոտկեն թաղանթներ [2]:

Այս տեսակի վիրակապերի առաջին ներկայացուցիչներից է լումիերը (խոշոր անցքերով բամբակյա ցանց է՝ պատված փափուկ պարաֆինի, մոմի, պերուական բալզամի նրբաթաղանթով):

Այս հարցի լուծման մեկ այլ ճանապարհ է շփվող շերտ պատրաստելու համար այնպիսի սինթետիկ պոլիմերային նյութերի օգտագործումը, ինչպիսիք են պոլիէթիլենը, պոլիվինիլբլորիդը, պոլիամիդը, սիլիկոնը [1]: Լավագույն արդյունքներ են ցուցաբերում պոլիվինիլպիրոլիդոնի և պոլիէթիլենգլիկոլի զուգորդված համակարգերը [13, 17]: Մեկ այլ տեխնոլոգիական լուծում է շփվող շերտի պատումը մետաղական փոշու նրբաշերտով, որն իրականացվում է վակուումում՝ սիլիկոնային կամ ակրիլային խեժով ներծծված ZnO, Al<sub>2</sub>O<sub>3</sub>, Ag կամ Al պարունակող մետաղական փոշու փոշեցրմամբ [19]:

Այս հարցի լուծման եղանակներից է նաև բժշկական թաղանթների օգտագործումը, որոնք ձևավորվում են վերքի վրա՝ առանց հատուկ կողմնակի միջոցների օգտագործման: Ամուր կաչելով վերքի մակերեսին՝ այս թաղանթներն ապահովում են լիարժեք գազափոխանակություն և արտաքին ազդակներից առավելագույն պաշտպանվածություն: Դրանցից են՝ բիոդեսպոլը, պոլիվինիլ սպիրտային վինիլալեն և ասիալեն ծակոտկեն թաղանթները կամ «խելացի» կիսաթափանց արտաքին թաղանթները (օրինակ՝ կոմֆիլ պլյուսը), որոնք կարգավորում են գոլորշիացման պրոցեսը վերքի մակերեսից՝ ըստ վերքային արտազատուկի քանակի. ուժեղ արտահայտված արտազատման ժամանակ անցքերը մեծանում են՝ մեծացնելով գոլորշիացման հնարավորությունը, իսկ քիչ արտազատման դեպքում անցքերը նեղանում են՝ չափավորելով գոլորշիացման մակարդակը [3]:

Վիրառվում են նաև վերքին կաչող, բայց ոչ վնասվածքային, բնական կամ սինթետիկ պոլիմերներից ծածկույթներ, որոնք ամբողջապես ներծծվում են վերքի մակերեսից: Ներծծվող պոլիսախարիդային թաղանթներից են կարբօքսիմեթիլցելյուլոզը, օքսիալկիլ ցելյուլոզը, ամիլոզը, դեքստրանը [1]: Սրանք բոլորը հիդրոֆիլ են և օրգանիզմում ներծծվում են՝ պլազմայում և ջրում իրենց բարձր լուծելիության շնորհիվ: Այս տեսակի վերքային ծածկույթները կիրառվում են վերքային պրոցեսի II փուլում և խթանում են վերականգնման պրոցեսները: Լուծվող կոլագենի հիմքի վրա մշակված լավագույն ծածկույթներից է կոմբուտեկը (Ռուսաստան): Այն կոլագենային սպունգ է (4000% կլանող հատկությամբ), չունի թունավոր բաղադրիչներ, չի գրգռում հյուսվածքները: Վերքի վրա այն քիմիապես վերափոխվում է դոնորոլի՝ վերքում խթանելով վերականգնման պրոցեսները: Այս ծածկույթը նպատակահարմար է օգտագործել վերքի բորբոքային արտազատուկը մաքրելուց և հեռացնելուց հետո [1]: Ներծծվող վիրակապական ծածկույթները կարող են պատրաստված լինել նաև այնպիսի սինթետիկ պոլիմերներից, ինչպիսիք են պոլիպրոպիլենը, պոլիլակտիդը և այլն:

Թվում է, թե վերքային ծածկույթների, վիրակապական նյութերի այսպիսի բազմազանության դեպքում կարելի է դեղագործական և վիրաբուժական շատ խնդիրներ լուծված համարել: Սակայն, այս ասպարեզում դեղագործությունը մեկ այլ կարևոր խնդիր ունի, այն է՝ հաղթահարել գոյություն ունեցող միջոցների միակողմանի ազդեցությունը և դրանց հիման վրա ստեղծել բազմաֆունկցիոնալ, բազմաբաղադրիչ նոր դեղաձևեր և համակարգեր:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абаев Ю. К. "Раневые повязки в хирургии" (БГМУ)
2. Абаев Ю. К. "Справочник хирурга. Раны и раневые инфекции." (Ростов-на-Дону-2006г)
3. Алексеева И. В. "Разработка лекарственных форм для лечения ран" (Фармация, 2003г., N2)
4. Алиев Ф. Ш. "Общие принципы лечения гнойно-воспалительных заболеваний и ран на современном этапе" (Тюмень, 2008 г.)
5. Блатун Л. А. "Местное медикаментозное лечение ран. Проблемы и новые возможности их решения" (ФГУ Институт хирургии им. А.В. Вишневского, Москва)
6. Девярых Е. А. "Гидрогелевые раневые покрытия в лечении венозных трофических язв" (Москва, 2006г.)
7. Иванов К. А. "Разработка составов и технологии получения конструируемых пластырей" (Москва 2002 г.)
8. Истранова Е. В., Чернова С. В., Абянц Р. К., Барсуков А. А., Истранов А. П. "Сангвикол-новая лекарственная форма сангвиритрина" (Фармация, 2002г., N4)
9. Карнович А.Г. "Применение современных синтетических и биотехнологических раневых покрытий для лечения ран различного генеза" (Краснодар, 2005г.)
10. Кузнецова А. С., Кабакова Т. И., Карпенко В. А., Глушко А.А., Мазурина М.В. "Исследования по разработке двухслойного раневого покрытия с прополисом" (Fundamental research, N4, 2012)
11. Левшова Н. В. "Разработка технологии получения текстильных материалов для лечения трофических язв" (2002г.)
12. Леонова М.В., Белоусов Ю.Б. "Лекарственные формы с модифицированным высвобождением и системы доставки лекарств"
13. Новиков Б. "Адгезия и вязкоупругие свойства гидрофильных систем поливинилпирролидон – полиэтиленгликоль" (Москва 2005 г.)
14. Олтаржевская Н. Д., Коровина М. А., Савиложа Л. Б. "Текстиль и медицина. Перевязочные материалы с пролонгированным лечебным действием" (Рос. Хим. Журнал, 2002, N1)
15. Слюсар О. И. "Разработка составов и технологии мягких лекарственных форм ранозаживляющего действия с левомицетином и метилурацилом" (Москва, 2002г.)
16. Успенская М. В. "Акриловые гидрогели в качестве полимерных связующих" (Санкт-Петербург, 2009 г.)
17. Фельдштейн М. М. "Гидрофильные полимерные адгезивы, структура, свойства и применение" (Москва 2005 г.)
18. Фокина Н. А. "Разработка технологии медицинских льносодержащих нетканых материалов гидросртовойм способом" (Москва 2009 г.)
19. Thomas S. "The role of dressings in the treatment of moisture-related skin damage" (Mar, 2008)
20. Turner T. O., Schmidt P. J., Harding K. G. "Advances in wound management" (London, John Wiley and Sons, 1986)

## РЕЗЮМЕ

## ТЕХНОЛОГИЧЕСКИЕ РЕШЕНИЯ СОЗДАНИЯ НОВЫХ ЛЕКАРСТВЕННЫХ ФОРМ ДЛЯ ЛЕЧЕНИЯ РАН

Аршакян Н.Т.

ЕГМУ, Кафедра технологии лекарств

**Ключевые слова:** раневые покрытия, сорбенты, раневой экссудат, гидрофильные центры, коллагеновая губка, текстильная матрица.

Лечение ран относится к числу наиболее древних, но не стареющих проблем практической хирургии. Несмотря на обилие препаратов для местного лечения ожогов и ран, совершенствование методов их лечения попрежнему остается актуальной задачей. Для повышения эффективности этих препаратов необходимы знания о фазности раневого процесса. Наиболее удобна для практического применения классификация, предложенная М. И. Кузиным, в соответствии с которой есть 3 фазы течения раневого процесса: воспаление, регенерация, реорганизация рубца и эпителизация.

Учитывая особенности этих фаз и основные факторы, влияющие на выздоровление ран, идеальным раневым покрытием предъявляются следующие требования: обеспечить максимальную сорбцию раневого экссудата и токсинов, оптимальную влажность и температуру поверхности ран, газообмен, стерильность и апирогенность, предотвратить реинфицирование, не содержать токсические соединения, быть атравматичной, механически прочной, доступной по цене, не быть легко воспламеняемой, длительно храниться. Раневые покрытия разделяются на: 1. сорбционные, 2. защитные, 3. содержащие лекарственные препараты, 4. атравматичные. Для лечения в первой фазе главной задачей является обеспечение сорбционных и защитных качеств покрытия. Классическими сорбентами являются текстильные материалы. Применяются также

порошкообразные (Галарган, Галактон), гелеобразные (Целесорб, Эмалан, Процел, Фолидерм), губкообразные (Тимокол, Сангвикол, Сис-Пур Дерм, Эуглипор) сорбенты. Защитные повязки выполняют функцию изоляции, ограничивают влагопотерю (Дуодерм, Опрафлекс, Эпигард). Для повышения лечебного эффекта, одним из важных технологических решений является включение в покрытия лекарственных препаратов различной направленности действия. Основным методом – это метод физической или химической модификации перевязочных материалов с иммобилизацией на них лекарственных препаратов, что обеспечивает их медленное высвобождение и пролонгированное лечебное действие. В последние годы было доказано, что раневой процесс по своей сущности ферментативный. Поэтому применение для лечения ран ферментосодержащих препаратов патогенетически оправдано (Полипор, Тералгин, Феранцел). Главной задачей усовершенствования технологии атравматичных повязок является преодоление и исключение адгезии повязок к ране. Для неприлипания повязок поверхность повязки, обращенной к ране, покрывают тонкой пленкой гидрофобного полимера или тонким слоем металла, или изготавливают из гидрофобного полимерного материала.

Кажется, имея такой арсенал раневых покрытий, можно считать многие фармацевтические и хирургические проблемы решенными, но это не так. У фармации в этой сфере есть главная задача – преодолеть однонаправленность существующих средств, создать многофункциональные, многокомпонентные новые эффективные лекарственные формы.

## SUMMARY

## TECHNOLOGICAL SOLUTIONS OF CREATING NEW MEDICINAL FORMS FOR WOUNDS TREATMENT

Arshakyan N.I.

YSMU, Department of Pharmaceutical Technology

**Keywords:** wound covers, sorbents, wound exudates, hydrophilic centers, collagen sponge, textile matrix.

Wounds treatment is an actual problem for practical surgery for all times. It is necessary to create new medicinal forms for wound treatment. For increasing the efficiency of the remedies it's necessary to have knowledge about the phases of wound processes. For practical use the classification of this process by M. I. Kuzin is more suitable. There are three phases: 1) inflammation, 2) regeneration, 3) scars reorganization and cuticularization.

Considering specific features of these phases and basic factors, which have an influence on wounds treatment, there are the following requirements for ideal wound covers:

1. Ensure maximum sorption of wounds exudates and toxins, optimal moisture and temperature in wounds surface, gas exchange, sterility, non-pyrogenicity,
2. Prevent reinfection,
3. Not to include toxic combinations,
4. Be atraumatic, mechanically solid, accessible,
5. Be non-flammable,
6. Have a long expire date.

Wound covers are classified into: 1) sorptive, 2) preserving, 3) including medications, 4) atraumatic.

For the first phase treatment the main objective is to ensure the sorptive and preserving properties of covers. The textile materials are classical sorbents (as natural as synthetic textile). In new technological processes powder-sorbents (Galargan, Galakton), jelly-sorbents (Celesorb, Emalan, Procel) and sponge-sorbents (Sangvicol, Thimacol, Sis-purDerm, Euglipor) are used. The preserving covers have the properties of isolation and limitation of the moisture loss.

For increasing the efficiency of treatment, one of the very important technological solutions is inclusion of medicines of different effects in wound covers.

The basic method is physical or chemical modification of dressing materials. Recent years scientists have used some ferments for wounds treatment, because processes that take place in wounds are fermentative (Polipor, Theralgin, Ferancel).

It seems that having so many wound covers, dressing materials, many pharmaceutical and chemical problems may be solved, but it isn't so. The main objective in this sphere for pharmacy is to overcome unidirectionality of the existing tools, to create multi-functional, multi-component new effective medical forms.

ՀՏԴ. 616.379-008.64-091

## ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԻ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ՖԵՆՈՏԻՊԱՅԻՆ ՀԵՏԵՐՈ- ԳԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՆԹԱՍԱՄՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՁԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խոստիկյան Ն.Գ., Մարդանյան Լ.Ս., Ավետիսյան Է.Ե.

ԵՊԲՀ, ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն

**Բանալի բառեր՝** *ֆենոտիպային հետերոգենություն, β-բջջի պրոլիֆերացիա, ապոպտոզ, կղզյակային նեոգենեզ:*

Շատ հիվանդություններ, այդ թվում նաև երկրորդ տիպի շաքարային դիաբետը ֆենոտիպորեն հետերոգեն են: Անկախ օբյեկտիվ կլինիկական հատկանիշներից, մասնավորապես անթրոպոմետրիկ ցուցիչներից [1] (մարմնի զանգվածի ինդեքս, գոտկագոտի-կոնքագոտի հարաբերություն)՝ հիվանդները դրսևորում են միևնույն հիպերգլիկեմիկ համախտանիշը: Սակայն հենց այս նույն հիպերգլիկեմիկ ամենատարբեր ֆենոտիպերը տարբեր բարդությունների առաջացման պատճառ են դառնում: Այդ իսկ պատճառով կարևոր է տարբերակել այս հետերոգենության տարբերակները՝ առավել նպատակաուղղված բուժում իրականացնելու համար:

Ներկայումս հայտնի է, որ շատ հիվանդությունների, այդ թվում նաև երկրորդ տիպի շաքարային դիաբետի ֆենոտիպային հետերոգենության հիմքում գենետիկական հետերոգենությունն է: Գենետիկորեն պայմանավորված հետերոգենությունն է բացատրում այն փաստը, որ ճարպակալումով անձանց շրջանում միշտ չէ, որ զարգանում է շաքարային դիաբետ: Հաստատված է նաև այն փաստը, որ առանց ճարպակալման անձանց շրջանում դիաբետով հիվանդանալու ռիսկը անհամեմատ ավելի բարձր է: Նախնական այս վարկածը հաստատող աշխատանքներից էր գենետիկական մի հետազոտություն [2], որտեղ հետազոտողները երկրորդ տիպի շաքարային դիաբետով հիվանդներին բաժանեցին երկու խմբի՝ առանց ճարպակալման և ճարպակալումով խմբերի: Նույնակալանացվեց և կրկնապատկվեց գենի մեկ լոկուս յուրաքանչյուր ՄՉԻ-ի խմբում, մասնավորապես LAMA1 գենից ստացվող ազդակը՝ առանց ճարպակալման խմբում, HMG20A գենից ստացվող ազդակը՝ ճարպակալումով խմբում: Արդյունքում այս հետազոտությունից պարզվեց, որ առանց ճարպակալման երկրորդ տիպի շաքարային դիաբետով հիվանդներն ավելի են «ծանրաբեռնված» դիաբետի ռիսկի

գեներով, քան ճարպակալումով դիաբետիկները: Եվրոպացիների շրջանում հաստատված 36 ալլելներից 20-ը [3] հայտնաբերվեց անհամեմատ ցածր ՄՉԻ-ի խմբում: Այսպիսով, մասնագետները նշեցին LAMA1 և HMG20A գեների առկայության և երկրորդ տիպի շաքարային դիաբետի ռիսկի միջև առկա կորելյացիան: Ցույց տրվեց, որ առանց ճարպակալման դիաբետիկները «հարստացված» են դիաբետիկ ռիսկի ալլելներով (զույգ քրոմոսոմի այլընտրանքային հատվածներով)՝ ի տարբերություն ճարպակալում ունեցողների: Սա վկայում է այն մասին, որ մեծ մասամբ դիաբետի ախտաբանական կարևոր օղակը β-բջջիցների դիսֆունկցիան է: Ի հակադրություն սրա՝ ճարպակալումով դիաբետիկների շրջանում, որոնց դեպքում քիչ են դիաբետի ռիսկի ալլելները, հիվանդության առաջացման կարևոր նախապայմանը Էկզոգեն (արտածին) միջավայրային պայմաններն են: Այսինքն՝ մենք գործ ունենք հիվանդության՝ երկու տարբեր էթիոլոգիաներով մոդելի հետ. գենետիկական, որն արտահայտվում է β-բջջիցների ֆունկցիայի ընկճումով, և միջավայրային գործոն, որն արտահայտվում է ինսուլինառեզիստենտականությամբ: Գենետիկական այս հետերոգենությունը փաստում են նաև այլ աշխատանքներ [4]:

Ֆենոտիպային այս տարբերության վերաբերյալ կատարված աշխատանքները մեծ մասամբ կլինիկական բնույթ ունեն [5,6,7]: Արդյոք այս ֆենոտիպային հետերոգենությունը անդրադառնում է նաև ենթաստամոքսային գեղձի ձևաբանական փոփոխություններին. խնդիրը ուսումնասիրության կարիք ունի:

Լանգերհանսի կղզյակը նորմալ ֆիզիոլոգիական պայմաններում մեծահասակների շրջանում կազմում է պանկրեասի զանգվածի 1-2%-ը: Կղզյակի 65-80%-ը կազմում են ինսուլին արտադրող β-բջջիցները: β-բջջիցների պրոֆիլերացիան, ապոպտոզը և կղզյակային նեոգենեզը այն գլխավոր 3 գործոններն են, որոնք նրբորեն կարգավորում են β բջջիցների զանգվածը [8]: Ըստ մասնագիտական գրականության տվյալների՝ դիաբետիկների շրջանում այս բջջիցների ապոպտոզը 3-10 անգամ ավելի է, քան

ոչ դիաբետիկների շրջանում [9]՝ պայմանավորված ինչպես գլյուկոզատոքսիկությամբ, լիպոտոքսիկությամբ, այնպես էլ մոլեկուլյար կարգավորիչ մեխանիզմների խաթարմամբ: Եթե  $\beta$ -բջիջների պրոլիֆերացիան նրանց ինքնառեպլիկացիան է, ապա կղզյակային նեոգենեզը պրոգենիտոր բջիջների տարբերակումն է և կամ ոչ  $\beta$ -բջիջների տրանստարբերակումն է  $\beta$ -բջիջների [10]: Այս պրոցեսը հայտնաբերվում է սաղմնային զարգացման ընթացքում և վաղ հետծննդյան շրջանում՝ հանգեցնելով  $\beta$ -բջիջների զանգվածի ավելացման: Բացի սրանից, կղզյակային նեոգենեզը դիտվում է նաև ինսուլինի նկատմամբ պահանջի բարձրացման պայմաններում, օրինակ՝ ճարպակալման և հղիության դեպքում [11]: Այն իրականանում է 2 ուղիներով՝ ցողունային (պրոգենիտոր բջիջներ) և հասուն պանկրեատիկ բջիջների տրանստարբերակման միջոցով: Հաստատված ինսուլինառեզիստենտականության պայմաններում  $\beta$ -բջիջների զանգվածը սկզբնական շրջանում նույնիսկ ավելանում է  $\beta$ -բջիջների հիպերպլազիայի և հիպերտրոֆիայի շնորհիվ, սակայն գենետիկորեն դետերմինացված  $\beta$ -բջիջների ադապտիվ հնարավորությունները սահմանափակ են, և որոշ ժամանակ անց (ինչն անհատական է), հիպերտրոֆիան փոխարինվում է ատրոֆիայով ու ապոպտոզով, և  $\beta$ -բջիջների զանգվածը նվազում է: Չանգվածի նվազման հիմնական պատճառը ապոպտոզն է: Հայտնի է, որ II տիպի շաքարային դիաբետի դեպքում առկա գլյուկոտոքսիկությունը, որոշ դեպքերում նաև առկա լիպոտոքսիկությունը կղզյակային ամփոփողալի պեպտիդը խթանում են  $\beta$ -բջիջների ապոպտոզը [12,13]: Ֆեդերիցիի և համահեղինակների աշխատանքները [14] ցույց են տալիս, որ գլյուկոզայի բարձր կոնցենտրացիաները խթանում են  $\beta$ -բջիջների պրոապոպ-

տոտիկ գեների՝ Bad, Bid, Bik գերէքսպրեսիան, իսկ հակաապոպտոիկ Bcl-2 գենի էքսպրեսիան մնում է անփոփոխ: Այսինքն՝ ապոպտոզի բարձր ակտիվությունը պայմանավորված է պրո- և հակաապոպտոտիկ գեների էքսպրեսիայի անհաշվելիչությամբ: Բացի դրանից, ի պատասխան գլյուկոզայի բարձր կոնցենտրացիաների,  $\beta$ -բջիջներն արտադրում են ԻL-1 $\beta$  [15], որն ակտիվացնում է ապոպտոտիկ կասկադը (NF- $\kappa$ բկորիզային գործոնի ակտիվացում, FAS [16] ապակարգավորում, DNA-ի հատվածավորում): Սատուրացված ճարպաթթուները համանման ազդեցություն են թողնում [17]: Ապոպտոզի ենթարկված  $\beta$ -բջիջները կնճռոտված են, պարունակում են կոնդենսացված քրոմատին, միջնուկլեոսոմար ԴՆԹ-ի ֆրագմենտացված հատվածներ, ապոպտոտիկ մարմնիկներ: Դրանք շրջապատված են «աղբահավաք» մակրոֆագերով: Ապոպտոզը, օքսիդատիվ սթրեսը իրենց հերթին բորբոքման առաջացման և բորբոքային օջախում քեմոցիտոկինների կուտակման պատճառ են դառնում, որոնք ևս նպաստում են բջիջների վնասմանը:

Այսպիսով, երկրորդ տիպի շաքարային դիաբետի դեպքում առկա է գենոտիպորեն հաստատված ֆենոտիպային հետերոգենություն: Միաժամանակ հաստատված է, որ այս տիպի դիաբետը բնութագրվում է  $\beta$ -բջիջների զանգվածի նվազումով (նախկինում այն կարծիքն էր իշխում, որ ինսուլինառեզիստենտականությունը «be all and end all» աստիճանաբար փոխվում է) և ենթաստամոքսային գեղձի խայտաբղետ ձևաբանական փոփոխություններով: Ֆենոտիպային տարբեր խմբերում գերակայող ձևաբանական փոփոխությունը հստակեցնելով՝ կարելի է իրականացնել առավել նպատակաուղղված, թիրախային բուժում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. K.A. Jimoh, O.S. Adediran, S.M. Agboola, D. Tomi-Olugbodi, S.A. Adebisi: A Study Of Correlation Between Derived And Basic Anthropometric Indices In Type 2 Diabetes Mellitus. TheInternetJournalofEndocrinology. 2009 Volume 5 Number 2.
2. Perry JR, Voight BF, Yengo L, Amin N, Dupuis J, Ganser M, Grallert H, Navarro P, Li M, Qi L, Steinthorsdottir V, Scott RA, Almgren P, Arking DE, Aulchenko Y, Balkau B, Benediktsson Stratifying type 2 diabetes cases by BMI identifies genetic risk variants in LAMA1 and enrichment for risk variants in lean compared to obese cases.(2012 May;8(5):e1002741. doi)
3. Herder, C; Roden, M (2011 Jun). "Genetics of type 2 diabetes: pathophysiologic and clinical relevance". European journal of clinical investigation 41 (6): 679–92. doi:10.1111/j.1365-2362.2010.02454.x. PMID 21198561
4. Hyunju Ryoo, Ijiyoung Woo, I Younyoung Kim, I and Chaeyoung Lee 1,\* Eur J Hum Genet. 2011 June; 19(6): 672–675. PMID: PMC3110056 (Heterogeneity of genetic associations of CDKAL1 and HHEX with susceptibility of type 2 diabetes mellitus by gender)
5. Is type 2 diabetes a different disease in obese and non obese patients Pr ando R, Cheli V, Melga P, Giusti R, Ciuchi E, Odetti P. Diabetes Care. 1998 Oct; 21(10):1680-5
6. Vaag AL, Lund SS (Non-obese patients with type 2 diabetes and prediabetic subjects: distinct phenotypes requiring special diabetes treatment and (or) prevention?) Appl Physiol Nutr Metab. 2007 Oct; 32(5):912-20
7. Clinical and biochemical profile of lean type 2 diabetes mellitus. P.D. Barma, S. Ranabir (diabetologia 54 ,2012, p. 1684-1692)
8. Bonner -Weir S. : Islet growth and development in the adult. (J.Mol. endocrinol 24:2000, p.297-302)
9. (Butler AE, Janson J, Bonner -Weir S, Ritzel R, Rizza RA,  $\beta$ -cell deficit and increased  $\beta$ -cell apoptosis in humans type 2 diabetes-Diabetes 2003, 52(1), p102-110)
10. Regulated and reversible induction of adult human beta-cell replication (diabetes 2012, p.481-424)
11. Diabetes 2003 52(1) 102-110, Endocrinology 1999 140(9) 4208-4213
12. Janson J, Ashley RH, Harrison D, McIntyre S & Butler PC. The mechanism of islet amyloid polypeptide toxicity is membrane disruption by intermediate-sized toxic amyloid particles. Diabetes 1999 48 491-498.
13. Soeller WC, Janson J, Diabetes 47 1998, p. 743-750
14. High glucose causes apoptosis in cultured human pancreatic islets of langerhans: a potential role for regulation of specific bcl family genes toward an apoptotic cell death program. Federici M, Hribal M, Perego L, Ranalli M, Caradonna Z, Perego C, Usellini L, Nano R, Bonini P, Bertuzzi F, Marlier LN, Davalli AM, Carandente O, Pontiroli AE, Melino G, Marchetti P, Lauro R, Sesti G, Follif. Diabetes. 2001 Jun; 50(6):1290-301
15. Donath MY, Schumann DM, Faulenbach M, Ellingsgaard H, Rützi S, Perren A, Böni-Schnetzler M, Ehses JA. Islet inflammation in Type 2 diabetes: from metabolic stress to therapy. Diabetes Care 31: S161-S164, 2008./
16. Maedler K, Sergeev P, Ris F, Oberholzer J, Joller-Jemelka HI, Spinas GA et al. Glucose-induced beta cell production of IL-1 $\beta$  contributes to glucotoxicity in human pancreatic islets. Journal of Clinical Investigation 2002 110 851-860.)
17. Lupi R, Dotta F, Marselli L, Del Guerra S, Masini M, Santangelo C et al. Prolonged exposure to free fatty acids has cytostatic and pro-apoptotic effects on human pancreatic islets: evidence that beta-cell death is caspase mediated, partially dependent on ceramide pathway, and Bcl-2 regulated. Diabetes 2002 51 1437-1442.)

## РЕЗЮМЕ

## ФЕНОТИПНАЯ ГЕТЕРОГЕННОСТЬ САХАРНОГО ДИАБЕТА ВТОРОГО ТИПА И МОРФОЛОГИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ ПОДЖЕЛУДОЧНОЙ ЖЕЛЕЗЫ: ОБЗОР ЛИТЕРАТУРЫ

Хостибян Н.Г., Мардарян Л.С., Аветисян Э.Е.

ЕГМУ, кафедра патологической анатомии и клинической морфологии

**Ключевые слова:** фенотипная гетерогенность, пролиферация  $\beta$ -клеток, апоптоз, островковый неогенез.

Многие болезни, в том числе и сахарный диабет второго типа, фенотипически гетерогенны. В основе фенотипической гетерогенности лежит генетическая гетерогенность. При сахарном диабете второго типа известны более чем 36 аллелей, из которых 20 выявлены у диабетиков с фенотипом без ожирения. При этом фенотипе в этиологии болезни главная роль принадлежит генетике, которая приводит к дисфункции  $\beta$ -клеток поджелудочной железы. А при фенотипе с ожирением главная роль принадлежит к факторам окружающей среды

которые приводят к инсулиновой резистентности. Научные работы посвященные к фенотипической гетерогенности, в основном имеют клинический характер. А к каким изменениям подвергается морфологическая картина поджелудочной железы при разных фенотипах, подлежит исследованию. Известно, что при сахарном диабете второго типа, в панкреасе выявляются различные морфологические изменения, включая апоптоз, некроз, воспаление, отложение амилоидных масс. При разных фенотипных группах различные морфологические изменения подсказывают более целенаправленную, соответствующую терапию.

## SUMMARY

## PHENOTYPICAL HETEROGENEITY OF TYPE TWO DIABETES MELLITUS AND PANCREATIC MORPHOLOGICAL CHANGES

Khostikyan N.G., Mardanyan L.S., Avetisyan E.E.

YSMU, Department of pathological anatomy and clinical morphology

**Keywords:** phenotypical heterogeneity,  $\beta$ -cell proliferation, apoptosis, islet neogenesis.

Certain ECG abnormalities can help identify patients at increased risk for SCD. These include the presence of AV block or intra-ventricular conduction defects and QT prolongation, an increase in resting HR to >90 b.p.m, and increased QT dispersion in survivors of out-of-hospital cardiac arrest. A recent study failed to support the usefulness of QT dispersion in predicting risk in patients after MI [42]. The presence of complex ventricular As, such as non-sustained VT, is also a marker [11,43] (Figure 4).



**Figure 4.** Relationship between left ventricular ejection fraction (EF) and ventricular premature depolarizations (VPD) and survival during 3 years of follow-up after MI. [3].

Unfortunately, most of these more stable risk factors lack sufficient sensitivity, specificity, and predictive accuracy to pinpoint the patient at risk with a degree of accuracy that would permit using a specific therapeutic intervention before an actual event. This probably relates, at least in part, to the transient nature of many risk factors, such as myocardial ischemia and reperfusion; hemodynamic dysfunction; abnormalities in electrolytes, such as hypokalemia and hypomagnesemia, often due to diuretics; changes in pH or  $PO_2$ ; the influence of central and peripheral neurophysiological actions; and the transient effects of toxins such as drugs [44] or alcohol [30,11].

Structural cardiac abnormalities of the myocardium, coronary arteries, or cardiac nerves provide the substrate on which a transient risk factor operates. Although it is possible that intense functional changes alone may create electrical instability of the normal heart to the degree that

a ventricular tachy A can be provoked, the vast majority of cardiac arrests occur in patients with hearts that have structural abnormalities. One group that was identified before a cardiac arrest with sufficient accuracy to warrant ICD placement was the MADIT population [28], who were post MI and had spontaneous non-sustained VT, inducible sustained VT not suppressed by intravenous procainamide, and an ejection fraction <35%.

As noted earlier, the most common structural abnormality is coronary atherosclerosis and its consequences, such as MI. Interestingly, only ~ 20% of patients who survive cardiac arrest develop features of a transmural MI, and it is assumed that transient myocardial ischemia, perhaps caused by coronary spasm or unstable platelet thrombi [11, 36], plays an important role in precipitating a lethal ventricular tachy A.

Myocardial hypertrophy, HF, and cardiac dilation [16, 37], as well as regional autonomic dysfunction, [7,26] all may be important. Although almost 50% of deaths in HF patients are sudden, among patients with CMs, those with better-preserved functional capacity (NYHA functional classes I and II) have lower total death rates, but the fraction of all deaths that are sudden and unexpected is higher; among class IV patients, total death rates are higher, but the fraction of sudden deaths is lower; thus, the impact of reducing SCD in this population will be influenced by competing causes of other mechanisms of death [30,11,43].

Silent course of ischemic cardiomyopathy is a big problem for cardiology, because it is usually very difficult to differentiate from non-ischemic dilated cardiomyopathy. It was proven that carotid bifurcation atherosclerosis and coronary artery disease have been shown to be strongly correlated.

We examined the value of extra cranial carotid atherosclerosis in distinction between ischemia and non-ischemic etiology in patients with clinically unexplained cardiomyopathy [23]. It is obvious that carotid ultrasound is very useful screening and decision-making method in patients with cardiomyopathy of unidentified cause. Patients with carotid atherosclerosis are likely to have severe coronary artery diseases. Coronary angiography seems to be considered early during their evaluation. Quite, the opposite, a negative carotid ultrasound predicts non-ischemic cardiomyopathy [23].

Time of day is also important, with more SCD, strokes, and MIs occurring in the morning on arising from bed, perhaps related to increased sympathetic discharge in response to venous pooling that then triggers increased blood viscosity and platelet aggregation [29]. The lack of asso-

ciation between the times of day in almost 600 patients who had at least two separate cardiac arrests supports the hypothesis that a person's activity may also play a role in triggering the cardiac arrest [32].

All above mentioned concerning to SCD indicates the

actuality of current problem in cardiology and high necessity to study its etiology more and manage prophylactic and therapeutic strategies against risk factors, life threatening arrhythmias for the prevention of its development, especially among young population.

## REFERENCES

1. Adamyan K.G., Astvatsatryan A.V., Chilingaryan A.L. Acute coronary syndrome. (In Russian). Manual. Kiev. 2006. ООО «Четверта хвиля». 311 p.
2. Albert C.M., McGovern B.A., Newell J.B., Ruskin J.N. Sex differences in cardiac arrest survivors. *Circulation*. 1996; 93:1170-1176.
3. Bigger J.T. Relation between left ventricular dysfunction and ventricular arrhythmias after myocardial infarction. *Am J Cardiol*. 1986;57:8B
4. Brugada P., Talajic M., Smeets J., et al. The value of the clinical history to assess prognosis of patients with ventricular tachycardia or ventricular fibrillation after myocardial infarction. *Eur Heart J*. 1989; 10:747-752.
5. Burke A.P., Farb B.A., Malcom G.T., et al. Coronary risk factors and plaque morphology in men with coronary heart disease who died suddenly. *N Engl. J. Med*. 1997; 336:1276-1282.
6. Burke A.P., Farb A., Malcom G.T., et al. Effect of risk factors on the mechanism of acute thrombosis and sudden coronary death in women. *Circulation*. 1998; 97:2110-2116.
7. Calkins H., Allman K., Bolling S., et al. Correlation between scintigraphic evidence of regional sympathetic neuronal dysfunction and ventricular refractoriness in the human heart. *Circulation*. 1993; 88:172-179.
8. Corrado D., Basso C., Schiavon M., Thiene G. Screening for hypertrophic cardiomyopathy in young athletes. *N Engl. J. Med*. 1998; 339:364-369.
9. De Vreede Swagemakers J.J.M., Gorgels A.P.M., et al. Out-of-hospital cardiac arrest in the 1990's: a population-based study in the Maastricht area on incidence, characteristics and survival. *J. Am Coll. Cardiol*. 1997; 30:1500-1505.
10. Doval H.C., Nul D.R., Grancelli H.O., et al, GESICA-GEMA Investigators. Non-sustained ventricular tachycardia in severe heart failure: Independent marker of increased mortality due to sudden death. *Circulation*. 1996; 94:3198-3203.
11. Engelstein E.D., Zipes D.P. Sudden cardiac death. In: Alexander R.W., Schlant R.C., Fuster V., Eds. *The Heart, Arteries and Veins*. New York, N.Y.: McGraw-Hill; 1998:1081-1112.
12. Escobedo L.G., Zack M.M. Comparison of sudden and non-sudden coronary deaths in the United States. *Circulation*. 1996; 93:2033-2036.
13. Friedlander Y., Siscovick D.S., Weinmann S., et al. Family history as a risk factor for primary cardiac arrest. *Circulation*. 1998;97:155-160.
14. Herre J.M., Sauve M.J., Malone P., et al. Long-term results of amiodarone therapy in patients with recurrent sustained ventricular tachycardia or ventricular fibrillation. *J. Am Coll. Cardiol*. 1989; 13:442-449.
15. James T.N., St. Martin E., Willis P.W. III, Lohr T.O. Apoptosis as a possible cause of gradual development of complete heart block and fatal arrhythmias associated with absence of the AV node, sinus node, and intermodal pathways. *Circulation*. 1996; 93:1424-1438.
16. Kaab S., Nuss H.B., Chiamvimonvat N., et al. Ionic mechanism of action potential prolongation in ventricular myocytes from dogs with pacing-induced heart failure. *Circ Res*. 1996; 78:262-273.
17. Kannel W.B., Schatzkin A. Sudden death: lessons from subsets in population studies. *J. Am Coll. Cardiol*. 1985;5(suppl.):141B-149B.
18. Leor J., Poole W.K., Kloner R.A. Sudden cardiac death triggered by an earthquake. *N Engl. J. Med*. (1996) 334:413-419.
19. Libershton R.R. Sudden death from cardiac causes in children and young adults. *N Engl. J. Med*. 1996; 334:1039-1044.
20. Link M.S., Wang P.J., Pandian N.G., et al. An experimental model of sudden death due to low-energy chest-wall impact (commotio cordis). *N Engl. J. Med*. 1998; 338:1805-1811.
21. Mahavir Senan, Astvatsatryan A.V. Hyperglycemia on admission in patients with unstable angina is a predictor of cardiac mortality. "My ESC Congress Services", Abstract 366, 22.03.2010.
22. Mahavir Senan, Astvatsatryan A.V. Prognostic value of early interleukin-10 elevation in patients with acute coronary syndrome and left bundle branch block. "My ESC Congress Services", Abstract 367, 22.03.2010.
23. Mahavir Senan. Usefulness of carotid ultrasound in differential diagnosis of ischemic and non-ischemic cardiomyopathy. *The New Armenian Medical Journal*, 2010; V.4, 2:37-44.
24. Maron B.J., Epstein S.E., Roberts W.C. Causes of sudden death in competitive athletes. *J. Am Coll. Cardiol*. 1989; 7:204-214.
25. Maron B.J., Shirani J., Poliac L.C., et al. Sudden death in young competitive athletes: clinical, demographic, and pathological profiles. *JAMA*. 1996; 276:199-204.
26. Mitrani R.D., Klein L.S., Miles W.M., et al. Regional cardiac sympathetic denervation in patients with ventricular tachycardia in the absence of coronary artery disease. *J. Am Coll. Cardiol*. 1993; 22:1344-1353.
27. Mittleman M.A., Maclure M., Tofler G.H., et al, Determinants of Myocardial Infarction Onset Study Investigators. Triggering of acute myocardial infarction by heavy physical exertion: protection against triggering by regular exertion. *N Engl. J. Med*. 1993; 329:1677-1683.
28. Moss A.J., Hall W.J., Cannom D.S., et al, Multicenter Automatic Defibrillator Implantation Trial Investigators. Improved survival with an implanted defibrillator in patients with coronary disease at high risk for ventricular arrhythmia. *N Engl. J. Med*. 1996; 335:1933-1940.
29. Muller J.E., Kaufmann P.G., Luepker R.V., et al, for the Mechanisms Precipitating Acute Cardiac Events Participants. Mechanisms precipitating acute cardiac events: review and recommendations of an NHLBI workshop. *Circulation*. 1997; 96:3233-3239.
30. Myerburg R.J., Castellanos A. Cardiac arrest and sudden death. In: Braunwald E., ed. *Heart Disease: A Textbook of Cardiovascular Medicine*. Philadelphia, Pa: WB Saunders; 1997:742-779.
31. Neuspiel D.R., Kuller L.H. Sudden and unexpected natural death in childhood and adolescence. *JAMA*. 1985; 254:1321-1325.
32. Peckova M., Fahrenbach C.E., Cobb L.A., Hallstrom A.P. Circadian variations in the occurrence of cardiac arrests: initial and repeat episodes. *Circulation*. 1998; 98:31-39.
33. Schwartz P.J., Zipes D.P. Autonomic modulation of cardiac arrhythmias and sudden cardiac death. In: Zipes D.P., Jalife J., eds. *Cardiac Electrophysiology: From Cell to Bedside*. Philadelphia, Pa: WB Saunders. In press.
34. Sgarbossa E.B., Pinsky S.L., Barbagelata A., et al. Electrocardiographic diagnosis of evolving acute myocardial infarction in the presence of left bundle branch block. *N Engl. J. Med*. (1996) 334:481-487.
35. Stevenson W.G., Stevenson L.W., Middlekauff H.R., Saxon L.A. Sudden death prevention in patients with advanced ventricular dysfunction. *Circulation*. 1993; 88:2953-2961.
36. Theroux P., Fuster V. Acute coronary syndromes: unstable angina and non-Q-wave myocardial infarction. *Circulation*. 1998; 97:1195-1206.
37. Tomaselli G.F., Beuckelmann D.J., Calkins H.G., et al. Sudden cardiac death in heart failure: the role of abnormal repolarization. *Circulation*. 1994; 90:2534-2539.
38. Thygesen Kristian, Alpert Joseph S. and Harvey White D. on behalf of the Joint ESC/ACC/AHA/WHF Task Force for the Redefinition of Myocardial Infarction. Universal definition of myocardial infarction. *European Heart Journal* 2007 28(20):2525-2538.
39. Wang J.S., Jen C.J., Kung H.C., Lin L.J., Hsiue T.R., Chen H.I. Different effects of strenuous exercise and moderate exercise on platelet function in men. *Circulation*. 1994; 90:2877-2885.
40. Weinberg B.A., Miles W.M., Klein L.S., et al. Five-year follow-up of 589 patients treated with amiodarone. *Am Heart J*. 1993; 125:109-120.
41. Wong C-K, French J.K., Aylward PEG, et al. Patients with prolonged ischemic chest pain and presumed-new left bundle branch block have heterogeneous outcomes depending on the presence of ST-segment changes. *J Am Coll. Cardiol*. (2005) 46:29-38
42. Zabel M., Klingenhoben T., Franz M.R., Hohnloser S.H. Assessment of QT dispersion for prediction of mortality or arrhythmic events after myocardial infarction: results of a prospective, long-term follow-up study. *Circulation*. 1998; 97:2543-2550.
43. Zipes D.P., Wellens H.J.J. Sudden Cardiac Death. *Circulation*. 1998; 98:2334-2351.
44. Zipes D.P. Unwitting exposure to risk. *Cardiol. Rev*. 1993; 1:1-3.

## ԱՍՓՈՓՈՒՄ

## ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՄՐՏԱԾԻՆ ՄԱՅ

Պետրոսյան Ա.Յ.<sup>1</sup>, Մահավիր Ս.<sup>2</sup><sup>1</sup> Երևանի Պետական Բժշկական Համալսարան<sup>2</sup> Հնդկաստանի ազգային ինստիտուտ, Կոլկատա

**Բանալի բառեր՝ հանկարծակի սրտածին մահ, սրտի իշեմիկ հիվանդություն, սրտամկանի սուր ինֆարկտ, կյանքին վտանգ սպառնացող առիթմիաներ:**

ԱՄՆ-ում տարեկան մոտ 400 հազար հանկարծակի սրտածին մահվան (ՀՍՄ) դեպք է գրանցվում: ՀՍՄ-ն սովորաբար զարգանում է ՍԻՀ-ի բարդություն հանդիսացող փորոքային տախիարիթմիաների, ֆիբրիլյացիայի հետևանքով: Վիճակագրության տվյալների համաձայն՝ ՀՍՄ-ի դեպքում վերակենդանացման արդյունավետությունը 5% -ից ցածր է:

ՀՍՄ-ով անձինք ենթակա են լուրջ մանրագին հետազոտման՝ մահվան պատճառը հստակեցնելու նպատակով: Եթե անձը մահացել է մինչև սրտամկանում ախտաբանական փոփոխությունների ի հայտ գալը, ապա դժվար է հստակ ասել՝ մահացու առիթմիայի պատճառը սրտամկանի սուր ինֆարկտ (ՍՍԻ) է եղել, թե՞ ոչ: Նման դեպքերում մահը վրա է հասնում հանկարծակի, և շատ դեպքերում պատճառը անհայտ է, անավել ևս եթե հիվանդը նախապես չի ունեցել սիրտ-անոթային համակարգի կողմից որևէ զանգատ կամ ԷՍԳ-ի փոփոխություն: ՍՍԻ-ի ախտորոշումը շատ դժվար է Հիսի խրճի ձախ ոտիկի պաշարման առկայության դեպքում, նույնիսկ եթե V1-V3 արտածումներում գրանցվել է ST-T սեգմենտի էլևացիա: Նման դեպքերում ՍՍԻ-ի բացահայտման հարցում կարող է օգնել նախկինում կատարված ԷՍԳ-ի պատկերը: Նման հիվանդները կարող են մահանալ նույնիսկ մինչև արյան կենսաթիվի ցուցանիշների որոշումը: Ամեն դեպքում, եթե ԷՍԳ-ով գրանցվում է ST սեգմենտի էլևացիա կամ ախտա-

բանական Q-ատամիկ, ՀՍՄ-ի պատճառ պետք է դիտարկել ՍՍԻ-ը: Ի լրումն նշենք, որ թեպետ ՀՍՄ-ով անձանց 80%-ի դեպքում առկա է ՍԻՀ, այնուամենայնիվ տարբեր երկրների մասնագետներ ՀՍՄ-ի պատճառի վերաբերյալ ունեն տարբեր կարծիքներ: այսպես, օրինակ, ԱՄՆ-ում պատճառ է ՍՍԻ-ը, իսկ Ճապոնիայում՝ ուղեղի կաթվածը: Սակայն այս մոտեցումը արժանի է վերանայման:

ՀՍՄ-ի ռիսկի գործոններ են ծխելը, տարիքը, սեռը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, հուզական սթրեսը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, պլազմայում խոլեստերինի բարձր մակարդակը, պսակաձև անոթների աթերոսկլերոտիկ ախտահարումը, աթերոթրոմբոզը, վահանիկների ապակալունացումը, սրտամկանում սպինների առկայությունը, ՁՓ-ի դիսֆունկցիան, ՁՓ-ի ցածր արտամղման ֆրակցիան՝ <30%, իշեմիկ կարդիոմիոպաթիան, փորոքների՝ իշեմիայով պայմանավորված ֆիբրիլյացիան, ինչպես նաև ապոպտոտիկ պրոցեսը, որը կարող է իր ուրույն նշանակությունն ունենալ կյանքին վտանգ սպառնացող առիթմիաների, հաղորդչականության խանգարումների առաջացման գործում:

ՀՍՄ-ին վերաբերող բոլոր վերոնշյալ փաստերը վկայում են սրտաբանության բնագավառում այս խնդրի արդիակալության մասին հատկապես երիտասարդ ազգաբնակչության շրջանում: Այս առումով անչափ կարևորվում է ՀՍՄ-ի պատճառների առավել մանրակրկիտ ուսումնասիրությունը, ՀՍՄ-ի ռիսկի գործոնների դեմ պայքարի մեթոդների մշակումը, ինչպես նաև կյանքին վտանգ սպառնացող առիթմիաների բուժման մարտավարության մշակումը:

## РЕЗЮМЕ

## ВНЕЗАПНАЯ СЕРДЕЧНАЯ СМЕРТЬ

Петросян А.Г.<sup>1</sup>, Махавир С.<sup>2</sup><sup>1</sup> Ереванский государственный медицинский университет<sup>2</sup> Национальный институт Индии, Колката

**Ключевые слова:** внезапная сердечная смерть, ишемическая болезнь сердца, инфаркт миокарда, угрожающие жизни аритмии.

Ежегодно в США 400 тысяч человек умирают по причине внезапной сердечной смерти (ВСС). Триггером ВСС служит желудочковая тахикардия или фибрилляция желудочков, как следствие осложнения ишемической болезни сердца (ИБС).

По статистическим данным при случаях ВСС эффективность реанимации составляет ниже 5%.

Случаи ВСС требуют серьезных доскональных обследований с целью выявления причин. Если смерть наступила до появления патологических изменений в миокарде, то трудно сказать, был ли инфаркт миокарда причиной смертельной аритмии или нет. В таких случаях смерть наступает внезапно, и во многих случаях причина смерти остается неизвестной, тем более, если больной до этого не имел каких-либо жалоб со стороны сердечно-сосудистой системы (ССС) или ЭКГ-изменений. Диагностика острого инфаркта миокарда (ОИМ) сильно затрудняется при наличии блокады левой ножки Гисса, даже если зарегистрировались элевации сегмента ST-T в V1-V3 - отведениях. В таких случаях для выявления ОИМ могут быть полезны заранее сделанные ЭКГ - обследования. Смерть может постигнуть таких больных до получения данных

биохимического исследования крови. В любом случае, если на ЭКГ отмечается элевация ST сегмента или патологический Q-зубец, причиной ВСС следует считать ОИМ. В дополнение к этому отметим, что хотя у 80% случаев ВСС присутствует ИБМ, тем не менее у специалистов разных стран мнения об этом различны. Например, в Америке причиной ВСС считают ИБС, а в Японии - мозговой инсульт. Но такой подход требует пересмотра.

Факторами ВСС являются: курение, возраст, пол, социально-экономический статус, эмоциональный стресс, физические нагрузки, высокий уровень холестерина в сыворотке, атеросклероз коронарных сосудов, наличие рубцовых изменений в миокарде, дисфункция левого желудочка, низкая фракция выброса левого желудочка (<30%), ишемическая кардиомиопатия, фибрилляция желудочков, обусловленная ишемией, а также апоптотический процесс, который может играть свою роль в происхождении жизненно опасных аритмий, нарушениях проводимости. Все вышеуказанные факты свидетельствуют об актуальности данной проблемы в кардиологии. Таким образом, важно более подробно исследовать причины ВСС, определить методы борьбы с факторами риска ВСС, а также определить стратегии лечения угрожающих жизни аритмий.

ՉՏԴ. 355.3:614.2(479.25)+616.9-022-083.98

# ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԷՆՏԵՐԱԼ ՃԱՆԱՊԱՐՅՈՎ ՓՈ- ԽԱՆՑՎՈՂ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ասոյան Ա.Վ.<sup>1</sup>, Սարգսյան Յ.Տ.<sup>2</sup>, Նազարյան Տ.Ջ.<sup>3</sup>, Ալեքսանյան Վ.Հ.<sup>4</sup>

<sup>1</sup> ԵՊԲՀ, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն

<sup>2</sup> ԵՊԲՀ, ռազմաբժշկական ֆակուլտետ, արտակարգ իրավիճակների բժշկության և ռազմական թունաբանության ամբիոն

<sup>3</sup> ԵՊԲՀ, ռազմաբժշկական ֆակուլտետի բժշկական ծառայության կազմակերպման և մարտավարության ամբիոն

<sup>4</sup> ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց

**Բանալի բառեր՝** Հայաստանի Հանրապետություն, զինված ուժեր, բուժօգնություն, կազմակերպում, վարակիչ հիվանդություններ, վիրուսային հեպատիտներ:

Զինված ուժերում, մարտական գործողությունների ժամանակ բժշկական օգնության տեսակ ասելով՝ հասկանում ենք որոշակի բուժկանխարգելիչ միջոցառումների համալիր, որոնք անցկացվում են անձնակազմի ախտահարման (վիրավորումներ և հիվանդություններ) ժամանակ զինված ուժերի անձնակազմի և բժշկական ծառայության կողմից մարտի դաշտում և տարհանման փուլերում: Արդի պայմաններում գործում են բժշկական օգնության հետևյալ տեսակները՝

- ◆ առաջին բուժօգնություն,
- ◆ մինչբժշկական օգնություն,
- ◆ առաջին բժշկական օգնություն,
- ◆ որակավորված բժշկական օգնություն,
- ◆ մասնագիտացված բժշկական օգնություն:

Առաջին բուժօգնություն ցուցաբերվում է սանիտարների, սանիտար-հրաձիգների, սանիտար-հրահանգիչների կողմից, ինչպես նաև հիվանդանալու կամ վիրավորվելու վայրում ինքնօգնության (զինծառայողը ցուցաբերում է առաջին բուժօգնություն ինքն իրեն) և փոխօգնության (զինծառայողը ցուցաբերում է առաջին բուժօգնություն մեկ այլ զինծառայողի) միջոցով: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ սանիտարների և սանիտար-հրահանգիչների կողմից բուժօգնություն ցուցաբերվել է 53% դեպքում, ինքնօգնություն՝ 5,9%, փոխօգնություն՝ 32,3%, գումարտակների բուժակների կողմից՝ 2,6%, զորամասերի բժիշկների կողմից՝ 6,2%, իսկ 84,4% դեպքում բուժօգնություն ցուցաբերվել է անմիջապես մարտի դաշտում: Ինքնօգնության և փոխօգնության միջոցով առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար բոլոր զինծառայողները համալրվում են անհատական բժշկական պաշտպանության միջոցներով [1,2,3,4,8], որոնք են՝

- 1. անհատական դեղատուփը,
- 2. անհատական վիրակապական փաթեթը,

3. անհատական հակաքիմիական փաթեթը:

Առաջին բուժօգնության նպատակն է ժամանակավորապես դադարեցնել և բացառել այն երևույթները, որոնք սպառնում են վիրավորի (հիվանդի) առողջությա- նը: Դրանք են՝

- ◆ վիրավորների դուրսբերումը փլատակներից, մարտական տեխնիկայից,
- ◆ վառվող համազգեստի մարումը,
- ◆ ներարկիչ-պարկուճի միջոցով ցավազրկող դեղի ներարկումը, որն առկա է անհատական դեղատուփում,
- ◆ շնչահեղձությունը կանխելու նպատակով արյունից, լորձից և հնարավոր օտար այլ մարմիններից վերին շնչուղիների մաքրումը: Լեզվի հետանկման, փսխման, քթից առատ արյունահոսության դեպքում տուժածին պառկեցնում են կողքի: Եթե շնչահեղձության (ասֆիքսիայի) պատճառը լեզուն է, ապա այն ծակում են անգլիական քորոցով (առկա է անհատական վիրակապական փաթեթում) և վիրափաթեթով ամրացնում պարանոցին կամ կզակին: Շնչա- ռության կանգի դեպքում կատարվում է արհեստական շնչառություն S-աձև խողովակի կամ բերան-բերան, բերան-քիթ մեթոդով,
- ◆ արտաքին արյունահոսության ժամանակավոր դադարեցում հնարավոր բոլոր միջոցներով՝ ռետինե լարանի տեղադրում (ստանդարտ կամ ձեռքի տակ եղած միջոցներով), ճնշող վիրակապ, մագիստրալ անոթի սեղմում մատներով,
- ◆ վերքի, այրվածքի վրա հականեխիչ (ասեպտիկ) վիրակապի տեղադրում, իսկ բաց պնևմոթորաքսի դեպքում՝ անհատական վիրակապական փաթեթի թաղանթով օկյուզիոն վիրակապի տեղադրում,
- ◆ հակազագի հագցնում, եթե տեղանքը ախտահարված է,
- ◆ քիմիական զենքի կիրառման դեպքում հակա-

թուլնի ներարկում ներարկիչ-պարկուճի միջոցով, որն առկա է անհատական դեղատուփում,

- ❖ մաշկի և հանդերձանքի դեզազացիա անհատական հակաքիմիական փաթեթի հեղուկով,
- ❖ անհատական դեղատուփից հակաբակտերիային, հակափսխումային միջոցներ տալը [1,2]:

Պարենտերալ ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդություններն այսօր բավականին տարածված են երկրագնդի վրա: Այս առումով առաջատար են վիրուսային հեպատիտ B-ն, վիրուսային հեպատի C-ն, ՄԻԱՎ-ը: Ուսմասսիվելով տարբեր մասնագետների կարծիքները այս վարակիչ հիվանդությունների փոխանցման մեխանիզմների վերաբերյալ՝ անհրաժեշտ է ընդգծել, որ այս վարակիչ հիվանդությունները փոխանցվում են նաև արյունաշփումային ճանապարհով, երբ վարակված արյունը շփվում է մաշկի հետ և միկրովնասավածքների միջոցով վարակիչ հիվանդության հարուցիչը կարող է մաշկի միջով ներթափանցել առողջ մարդու օրգանիզմում հարուցիչների համապատասխան քանակի դեպքում հիվանդություն առաջացնել: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով երկրագնդի բնակչության 1/3-ից ավելին վարակված է վիրուսային հեպատիտ B-ով, և ամեն տարի այս հիվանդության տարբեր կլինիկական ձևերից մահանում է մոտ մեկ միլիոն մարդ [6,7,5]: Այս հիվանդությունները չեն շրջանցել նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ այս հիվանդություններով հիվանդներ և վիրուսակիրներ նույնպես կան:

Լայնածավալ մարտական գործողությունների ընթացքում խիստ անհրաժեշտության դեպքում հնարավոր է պահեստագործից զորակոչվեն քաղաքացիներ, որոնք վարակված են տվյալ վարակիչ հիվանդություններով:

Ռազմական գործողությունների ժամանակ, հատկապես մարտի դաշտում հրազենային և ականապայթյունային վիրավորումներ ստացած զինծառայողների վերքերը հիմնականում արյունահոսում են և փոխօգնության ժամանակ՝ վերոհիշյալ միջոցառումներն իրականացնելիս, սովորաբար տուժածի արյունով արյունոտվում են օգնություն ցուցաբերողի մատները, ձեռքերը: Եթե առաջին բուժօգնություն ցուցաբերող զինծառայողի մատներին, ձեռքերին առկա են միկրովնասավածքներ, որոնց առաջացումը հավանական է մարտական գործողությունների ժամանակ, ապա ենթադրում ենք, որ եթե վիրավորը հիվանդ է կամ վիրուսակիր է պարենտերալ ճանապարհով փոխանցվող որևէ վարակիչ հիվանդությամբ, ապա հնարավոր է, որ բուժօգնություն ցուցաբերող զինծառայողը վարակվի տվյալ հիվանդությամբ: Այս ենթադրությունը բացառելու համար առաջարկում ենք զինծառայողի անհատական բժշկական պաշտպանության միջոցների մեջ ընդգրկել նաև ռետինե կամ լատեքսից պատրաստված ոչ ախտահանված ձեռնոցներ: Փոխօգնության կարգով բուժօգնություն ցուցաբերողը, մի քանի վայրկյանների ընթացքում հազնելով ձեռնոցները, ապահովագրում է իրեն արյան միջոցով (պարենտերալ ճանապարհով) փոխանցվող վարակներից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Агафонов В.И., Борисов Е.Н., Гринь В.А., Комаров Ф.И. и др. Военно-медицинская подготовка (подред. Комарова Ф.И.) // М.: "Медицина", 1984, с. 81-94
2. Асанин Ю.С., Георгиевский Н.С., Горюнов Л.Ф. Организация и тактика медицинской службы (подред. Иванова Н.Г., Лобастова О.С.) // Учебник, Ленинград, 1988, с. 44-55
3. Карачиев Н.И. Военная токсикология и защита атомного и химического оружия (подред. Артамонова В.И.) // Учебник, М.: "Медицина", 1988, 368 с.
4. Шапошников Ю.Г., Маслов В.И. Военно-полевая хирургия // Учебник, М.: "Медицина", 1995, 432 с.
5. Зуева Л.П., Яфаев Р.Х. Эпидемиология // Учебник, СПб: "Фолиант", 2005, 752 с.
6. Лобзин Ю.В., Васильев В.В., Жданов К.В. и др. Руководство по инфекционным болезням // СПб: "Фолиант", 2003, 1040 с.
7. Учайкин В.Ф., Чередниченко Т.В., Смирнов А.В. Инфекционная гепатология // Руководство для врачей, М.: ГЭОТАР-Медиа, 2012, 640 с.
8. Փարսադանյան Ա.Մ., Մարգարյան Մ.Գ., Գալստյան Ս.Գ. և ուրիշներ Ռազմաշտային վիրաբուժական ծառայության կազմակերպման հիմունքները գործող բանակում // Երևան, "Աստղիկ", 2005. - 219 էջ:

## РЕЗЮМЕ

**ПОДХОДЫ К ОРГАНИЗАЦИИ ПЕРВОЙ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ ВО ВРЕМЯ ВОЕННЫХ СТОЛКНОВЕНИЙ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПРОФИЛАКТИКИ ИНФЕКЦИОННЫХ ЗАБОЛЕВАНИЙ, ПЕРЕДАВАЕМЫХ ПАРЕНТЕРАЛЬНЫМ ПУТЕМ**

Асоян А.В.<sup>1</sup>, Саргсян А.Т.<sup>2</sup>, Назарян Т.Дж.<sup>3</sup>, Алексанян В.О.<sup>4</sup>

<sup>1</sup> ЕГМУ, кафедра инфекционных заболеваний

<sup>2</sup> ЕГМУ, Военно-медицинский факультет, кафедра медицины чрезвычайных ситуаций и военной токсикологии

<sup>3</sup> ЕГМУ, Военно-медицинский факультет, кафедра организации медицинской службы и тактики

<sup>4</sup> Клиническая инфекционная больница “Норк” МЗ РА

**Ключевые слова:** Республика Армения, вооруженные силы, медицинская помощь, организация, инфекционные заболевания, вирусный гепатит.

Первая медицинская помощь оказывается в порядке само- и взаимопомощи обычно на месте заболевания или ранения. На поле боя раны военнослужащих, получивших огнестрельные или минно-взрывные ранения, кровоточат. В случае наличия у пострадавшего какого-либо инфекционного заболевания,

передающегося парентеральным путем, во время оказания взаимопомощи возможна передача данной инфекции лицу, оказывающему данную помощь, гемоконтактным механизмом через участки поврежденной поверхности кожи последнего. Во избежание передачи предполагаемой инфекции подобным образом, считаем целесообразным в набор средств индивидуальной защиты включить нестерильные резиновые или латексные перчатки.

## SUMMARY

**APPROACHES TO ORGANIZATION OF THE FIRST AID DURING MILITARY COLLISIONS FROM THE STANDPOINT OF PREVENTION OF INFECTIOUS DISEASES TRANSMITTED THROUGH PARENTERAL WAY**

Asoyan A.V.<sup>1</sup>, Sargsyan H.T.<sup>2</sup>, Nazaryan T.J.<sup>3</sup>, Aleksanyan V.H.<sup>4</sup>

<sup>1</sup> YSMU, Department of infectious diseases

<sup>2</sup> YSMU, Faculty of Military Medicine, Department of Disaster medicine and Military Toxicology

<sup>3</sup> YSMU, Faculty of Military Medicine, Department of Health Care Organization and Tactics

<sup>4</sup> “Nork” Clinical Infectious Hospital of RA MoH

**Keywords:** Republic of Armenia, military forces, health care, organization, infectious diseases, viral hepatitis.

The first aid is performed in the form of self-and mutual aid, usually on the site of disease or wounding. The fire and mine-explosive wounds received on a battlefield bleed.

In case of presence of any parenterally transmitted infectious

disease in the wounded person, during the mutual aid the infection can be transmitted through the damaged surface of skin to the person providing the aid (by the hemocontact mechanism). In order to prevent the transmission of the supposed infection in such a way, it's considered expedient to include unsterile rubber or latex gloves into a set of items for personal protection.

## ՔԻՄԻԱԿԱՆ ՉԵՆՔԻՑ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ալեքսանյան Վ.Յ., Չովհաննիսյան Լ.Գ., Սարգսյան Յ.Տ.  
ԵՊԲՀ, ռազմարժշկական ֆակուլտետ

**Բանալի բառեր՝** քիմիական զենք, սանիտարական կորուստներ, բժշկական ծառայություն:

Մարդկության ողջ պատմությունը կապված է պատերազմների հետ, որոնց առանձնահատուկ բովանդակությունը զինված հակամարտությունն է, այսինքն՝ հակամարտող կողմերի ռազմական գործողությունների ամբողջությունը՝ որոշակի բաղաբաղական և ռազմական նպատակներին հասնելու համար: Կիրառվող զենքերի տարբեր տեսակները և մասշտաբները, նրանցից պաշտպանվելու աստիճանը և բնույթը որոշվում են անձնակազմի և տեխնիկայի կորուստների մեծությամբ և կառուցվածքով: Այդ պատճառով ժամանակակից զինատեսակների զարգացման հեռանկարների, նրանց կիրառման ձևերի և ինտենսիվության մասին գիտելիքները պարտադիր պայման են դառնում անձնակազմի բժշկական ապահովման կազմակերպման ճիշտ պլանավորման համար: Գիտության և տեխնիկայի նորագույն ձեռքբերումները միշտ օգտագործվել են բանակների մարտական տեխնիկայի և սպառազինությունների կատարելագործման համար: Ժամանակակից զենքը, ըստ ախտահարող ազդեցության բնույթի և մասշտաբի, լինում է երկու տեսակի՝ սովորական զինատեսակներ և զանգվածային ախտահարման զենքեր (ՉԱԶ): Սովորական զինատեսակները լիցքավորվում են պայթուցիկ նյութերով կամ այրող խառնուրդներով: Դրանցից են հրազենային, ռեակտիվ, հրթիռային, ականային և այլ զինատեսակները: ՉԱԶ-ին բնորոշ առանձնահատկություններն են՝ ախտահարված տարածքի մակերեսի մեծությունը, հարձակման անսպասելիությունը, ախտահարման միաժամանակությունը և զանգվածայնությունը: ՉԱԶ են միջուկային, քիմիական և կենսաբանական զենքերը: Քիմիական զենքը մարտական թունավոր նյութերն են (ՄԹՆ)՝ դրանց կիրառման և տեղափոխման միջոցներով: Քիմիական զենքի կիրառումն արգելված է Ժնևյան կոնվենցիայով, որն ընդունվել է 1925թ., և որին միացել են ավելի քան 100 երկիր: Այն առաջին անգամ օգտագործվել է 1915-ի ապրիլի 22-ին գերմանական բանակի կողմից անգլո-ֆրանսիական զորքերի դեմ, երբ ռազմաճակատի 6կմ հատվածում 5 րոպեի ընթացքում օգտագործվեց 180 տ. բլոր: Գազաբալոնային գրոհի հետևանքով թունավորվեց 15 000 մարդ, որոնցից 5 000-ը մահացավ: Նույն թվականի հոկտեմբերին գերմանացիները կիրառեցին ֆոսգեն, 1916-ի մայիսին՝ բլորպիրին, իսկ 1917-ի հուլիսին՝ իպրիտ [1]:

Քիմիական զենքի կիրառման դեպքում անձնակազմի ախտահարումները տարաբնույթ են՝ պայմանավորված թունավոր նյութի տեսակով, խտությամբ, ախտահարման զարգացման սուր ընթացքով և թունավոր նյութերի դետորքցիայի դեպքում երկրորդային ախտահարումների վտանգով:

Թույլների թունաբանական կամ կլինիկական դասակարգումը հիմնված է օրգանիզմի վրա ԹՆ-ի այս կամ այն թունավոր ազդեցության գերակշռման վրա [6]: Ըստ դրա՝ ԹՆ-երը բաժանվում են 6 խմբի՝

- ◆ Նյարդակաթվածային ազդեցության ԹՆ-եր (տաբուն, գարին, զոման, Vx-գազեր),
- ◆ ընդհանուր թունավոր ազդեցության ԹՆ-եր (կապտաթթու, ցիանիդներ, բլորցիան, ածխածնի երկարժեք օքսիդ),
- ◆ հեղձուցիչ ազդեցության ԹՆ-եր (բլոր, ֆոսգեն, դիֆոսգեն, բլորպիրին),
- ◆ մաշկառեգործով ազդեցության ԹՆ-եր (իպրիտ, լյուկզիտ),
- ◆ զրգռիչ ազդեցության ԹՆ-եր (ադամսիտ, CS, CR, բլորացետոֆենոն),
- ◆ պսիխոտոմիմետիկ ազդեցության ԹՆ-եր (BZ, LSD, մեսկալին):

Նյարդակաթվածային ազդեցության ԹՆ-երը, ըստ քիմիական կառուցվածքի, ֆոսֆորական թթվի էսթերներ են, որոնք քիմիական զենքի զինանոցում եղած հայտնի սինթետիկ միացություններից ամենավտանգավորն են: Դա բացատրվում է նրանց բարձր թունայնությամբ, բլոր հնարավոր ուղիներով օրգանիզմ ներթափանցելու կարողությամբ, այդ թվում նաև անվնաս մաշկի միջով, հոտի, գույնի, որևէ զրգռիչ ազդեցության բացակայությամբ, տեղաբնույթ բարձր կայունությամբ, ախտահարման կայծակնային զարգացման հնարավորությամբ: Մարտի դաշտում մահը վրա է հասնում առաջին 5-10 րոպեների ընթացքում: Այս թույլները դրսևորում են հակախոլինէսթերազային ազդեցություն (ֆերմենտի անդամալի պաշարում), որի հետևանքով ացետիլխոլինի հիդրոլիզային և չի կատարվում, և այն կուտակվում է սինապսներում՝ դրդելով խոլինընկալիչները: Դրանք M- և N-խոլինընկալիչների վրա ունեն նաև ուղղակի, դրդող ազդեցություն: Յետևաբար նյարդակաթվածային ազդեցության թույլներով ախտահարումն ուղեկցվում է նյարդային համակարգի (ՆՀ) խոլիներգիկ բաժնի գերդրմամբ, ապա զարգանում է ՆՀ-ի ընկճում և կաթված [4, 5, 6, 7]:

**Աղյուսակ 1**

*Քիմիական օջախների բժշկա-մարտավարական դասակարգումը*

Օջախի տեսակը	ԹՆ
1. կայուն ախտահարման օջախ, արագ ազդող ԹՆ	գարին, զոման, Vx -գազեր, լյոդիտ, CS
2. անկայուն ախտահարման օջախ, արագ ազդող ԹՆ	կապտաթթու, քլորոցիան, քլորացետոֆենոն
3. կայուն ախտահարման օջախ, դանդաղ ազդող ԹՆ	իպրիտ, Vx- գազեր (մաշկով)
4. անկայուն ախտահարման օջախ, դանդաղ ազդող ԹՆ	ֆոսգեն, BZ

Քիմիական ախտահարման օջախը (ՔԱՕ) քիմիական զենքի ազդեցությանը ենթարկված տարածքն է, այնտեղ գտնվող զորքերը, մարտական տեխնիկան և նյութական միջոցները: ՔԱՕ-ի չափերն ու բնույթը պայմանավորված են հակառակորդի քիմիական հարձակման ձևով (կիրառման եղանակով և ԹՆ-ի տեսակով), ԹՆ-ի կիրառման ժամանակով և տեղանքով, բնակլիմայական պայմաններով: ԹՆ-ի ախտահարման օջախների բժշկա-մարտավարական բնութագիրը տրվում է երեք հիմնական չափանիշներով: Ըստ վերջնական ազդեցության՝ տարբերում ենք մահացու ազդեցության ԹՆ-եր, որոնք ախտահարումից հետո՝ երեք օրվա ընթացքում, հանգեցնում են ծանր աստիճանի՝ 100%-ի և միջին աստիճանի՝ 50%-ից ոչ պակաս ախտահարվածների մահվան (գարին, Vx գազեր, ֆոսգեն, կապտաթթու, իպրիտ), և ժամանակավորապես շարքից դուրս բերող ԹՆ-եր՝ 6-8 օր տևողությամբ՝ եզակի մահացու էլքերով (գրգռիչ ազդեցության ԹՆ-եր և պսիխոտոմիմետիկներ): Ըստ օրգանիզմի ախտահարման զարգացման արագության՝ ԹՆ-երը լինում են՝ արագ ազդող, որոնք թունավորման երևույթներն առաջացնում են ազդեցության 1 ժամվա ընթացքում, և դանդաղ ազդող՝ 1ժ-ից հետո (գաղտնի շրջանը տևում է 1ժ և ավելի): Ըստ տեղանքի վարակման տևողության՝ տարբերում ենք կայուն ԹՆ-եր, որոնք տեղանքում 1 ժամից ավելի են պահպանում թունավոր հատկությունները, և անկայուն ԹՆ-եր՝ 1 ժամից պակաս:

Արագ ազդող ԹՆ-ով առաջացրած քիմիական ախտահարման օջախներին բնորոշ են՝

- ◆ գորամասի, ստորաբաժանման անձնակազմի միաժամանակ մեծ քանակով ախտահարումը,
- ◆ գորամասի, ստորաբաժանման բժշկական անձնակազմի մասնակի ախտահարման հավանականությունը,
- ◆ մեծ քանակով ծանր աստիճանի ախտահարվածների առաջացման հավանականությունը, որոնց կյանքի տևողությունը ժամանակին արդյունավետ օգնության բացակայության դեպքում չի գերազանցում մեկ ժամը՝ սկսած ախտա-

- հարման կլինիկայի առաջացման պահից,
- ◆ բժշկական ծառայության համար օջախը վերացնելու նպատակով անհրաժեշտ պահեստային ժամանակի բացակայությունը,
- ◆ օջախում և բժշկական տարհանման փուլերում սահմանված օպտիմալ ժամանակահատվածում արդյունավետ բժշկական օգնության ցուցաբերման անհրաժեշտությունը և ախտահարվածների ու վիրավորների՝ գերազանցապես մեկ երթով օջախից տարհանումը:

Դանդաղ ազդող ԹՆ-ով առաջացրած քիմիական ախտահարման օջախներին բնորոշ են՝

- ◆ մի քանի ժամվա ընթացքում ախտահարվածների և վիրավորների ախտահարման նշանների հերթականությամբ ի հայտ գալը. այս դեպքում կարևոր նշանակություն են ձեռք բերում ռազմական առաջադրանք կատարող անձնակազմի շարքերում ախտահարվածների ակտիվ հայտնաբերման միջոցառումները,
- ◆ արդյունավետ օգնության բացակայության դեպքում V<sub>x</sub>-գազերով ծանր ախտահարվածների կյանքի տևողությունը չի գերազանցում մեկ ժամը, իսկ իպրիտով և ֆոսգենով ախտահարման դեպքում՝ մի քանի ժամը, օրը,
- ◆ անհրաժեշտ պահեստային ժամանակի առկայությունը (մի քանի ժամ) օջախի վերացման աշխատանքները կազմակերպելու համար՝ պայմանավորված մարտի պայմաններով,
- ◆ մի քանի երթով օջախից ախտահարվածների տարհանումը, ԲՏՓ կատարելու հնարավորությունը՝ ըստ նրանց հայտնաբերման [7] (աղ. 1):

Մարտական գործողությունների ժամանակ զորքերի կրած մարդկային բոլոր կորուստները կոչվում են ընդհանուր կորուստներ: Ընդհանուր կորուստները լինում են անդառնալի և սանիտարական: Անդառնալի կորուստներ են զոհվածները, գերի ընկածները և անհայտ կորածները: Սանիտարական կորուստներ են կոչվում այն անձինք, որոնք կորցրել են իրենց մարտունակությունը և ընդուն-

վել բժշկական հաստատություններ: Ըստ առաջացման պատճառի՝ տարբերում ենք մարտական և ոչ մարտական սանիտարական կորուստներ: Մարտական կոչվում են այն սանիտարական կորուստները, որոնք առաջացել են հակառակորդի մարտական գործողությունների արդյունքում կամ անմիջականորեն պայմանավորված են մարտական խնդիրների կատարմամբ: Ըստ պատճառափոխության հատկանիշի՝ մարտական սանիտարական կորուստները բաժանվում են 6 դասի՝ մեխանիկական, ջերմային, ճառագայթային, քիմիական, կենսաբանական, հոգեշարժական ախտահարումների: Պայմանավորված զենքի տեսակով և միևնույն զենքի տարբեր ախտահարող գործոնների ազդեցությամբ՝ տարբերում են եզակի, բազմակի, զուգակցված և համակցված ախտահարումներ: Բացի նշված դասակարգումից, գոյություն ունի նաև սանիտարական կորուստների օպերատիվ դասակարգում, ըստ որի՝ նրանք բաժանվում են երկու խմբի՝ վիրավորների և հիվանդների: Օպերատիվ նպատակների համար օգտագործում են սանիտարական կորուստների դասակարգում՝ ելնելով ծանրության աստիճանից՝ թեթև, միջին և ծանր [2]:

Սանիտարական կորուստների գլխավոր բնութագրող ցուցանիշներն են սանիտարական կորուստների մեծությունը և կառուցվածքը, որոնք կարևոր են բժշկական ապահովման կազմակերպման ընթացքում: Սանիտարական մեծությունն ասելով՝ հասկանում են սանիտարական կորուստները՝ արտահայտված բացարձակ թվերով: Սանիտարական կորուստների կառուցվածքը տարբեր տեսակի վիրավորների և հիվանդների տոկոսային հարաբերությունն է սանիտարական կորուստների ընդհանուր թվին: Ժամանակակից մարտի պայմաններում սանիտարական կորուստների մեծությունը և կառուցվածքը պայմանավորված են մարտական գործողությունների բնույթով և ինտենսիվությամբ, կիրառվող զինատեսակով և մասշտաբներով, անձնակազմի պաշտպանվածության աստիճանով, զբաղեցրած տեղանքում անձնակազմի խտությամբ, բնակլիմայական պայմաններով [3]: Սանիտարական կորուստների մեծությունը քիմիական զենքի դեպքում պայմանավորված է մի շարք գործոններով. դրանք են՝ ԹՆ-ի տեսակը, ԹՆ-ի կիրառման միջոցները և մասշտաբները, հանկարծակի կիրառելիության գործոնը, անձնակազմի հակաքիմիական պաշտպանվածության աստիճանը, անձնակազմի ֆիզիկական և բարոյական վիճակը: Ժամանակակից պատկերացումների համաձայն, որը հիմնված է հրամանատարաշտաբային զորավարությունների ժամանակ կատարված հաշվարկների, ինչպես նաև մաթեմատիկական մոդելավորման մեթոդների կիրառմամբ հետազոտությունների վրա՝ պաշտպա-

նական մարտի ժամանակ քիմիական զենքից օրական միջին սանիտարական կորուստները դիվիզիայում կազմում են 2-4%, բանակում՝ 0,4-0,5%, իսկ հարձակողական մարտի ժամանակ համապատասխանաբար՝ 2-5% և 0,5-0,7%: Նյարդակաթվածային ազդեցության ԹՆ-ի քիմիական ախտահարման օջախում սանիտարական կորուստների մեծությունը թեթև, միջին և ծանր աստիճանի ախտահարվածների շրջանում կազմում է 30%, 10%, և 60%, իսկ հեղձուցիչ ազդեցության ԹՆ-ի դեպքում՝ համապատասխանաբար 50%, 40% և 10% [6]:

Քիմիական զենքով ախտահարվածների բուժարհանման բնութագիրը պայմանավորված է ԹՆ-ի տեսակով, օրգանիզմ թափանցելու ուղիներով (ինհալացիոն, մաշկային), ախտահարման աստիճանով, թույնի չափաբաժնով, պաշտպանական միջոցների ժամանակին և արդյունավետ կիրառմամբ [7]:

Այսպիսով, անձնակազմի բժշկական ապահովումը կազմակերպելու դեպքում պետք է հաշվի առնել ԹՆ-ից սանիտարական կորուստների հետևյալ առանձնահատկությունները՝

- ◆ կարճ ժամանակահատվածում զգալի կորուստների առաջացման հնարավորությունը,
- ◆ ախտահարումների բազմազան բնույթը, հետևաբար նաև բժշկական միջոցառումների բազմազանությունը,
- ◆ ախտահարումների արագ զարգացումը, հատկապես ծանր թունավորումների դեպքում, որով պայմանավորված՝ ախտահարվածներին ցուցաբերած բժշկական օգնությունը և տարհանումը պետք է իրականացվի առավելագույնս կարճ ժամանակահատվածում,
- ◆ երկրորդային ախտահարումների վտանգը ախտահարվածների հագուստից, կոշիկներից, զենքից, պաշտպանական միջոցներից ԹՆ-ի դեպքում, հետևաբար նաև հատուկ մշակման անհրաժեշտությունը և պաշտպանական միջոցների օգտագործումը,
- ◆ երկրորդային վարակների ներթափանցման և բարդությունների առաջացման վտանգը:

Ախտահարվածների բուժապահովումը ՉԱԶ կիրառելու դեպքում պետք է իրականացվի թերապևտիկ և վիրաբուժական ուղղվածության բժիշկ-մասնագետների կողմից, ուստի խաղաղ պայմաններում անհրաժեշտ է բժիշկների բազմակողմանի, նպատակաուղղված նախապատրաստում: Հետևաբար քիմիական զենք կիրառելու դեպքում բուժառաջարկության կարևորագույն խնդիրը բուժարհանման փուլերում կանխարգելիչ և բուժարհանման միջոցառումների արդյունավետ կազմակեր-

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՆԻ ՈՒ ԱՆՆՎԱՅՈՒՄՆԻ Է:

1. Александров В.Н., Емельянов В.И. Отравляющие вещества: Учебное пособие / 2-е изд., перераб. и доп. / М.: Воениздат, 1990, 271 с.
2. Агафонов В.И., Борисов Е.И., Гринь В.А. и др. Военно-медицинская подготовка. Учебник / Под ред. Ф.И. Комарова, М.: Медицина, 1984, 448 с.
3. Асанин Ю. С., Георгиевский А.С., Горюнов И.Ф. Организация и тактика медицинской службы / Под ред. Н.Г.Иванова, О.С. Лобастова, Ленинград, 1988, 306 с.
4. Анджелов Г.О. 55 острых отравлений / Анджелов Г.О., Ер.: Ван Арьян, 2002, с. 126
5. Вергейчик Т.Х. Токсикологическая химия. Учебник / Под ред. Е.Н. Вергейчика, М.: МЕД пресс-информ., 2009, 400 с.: ил.
6. Каракчиев Н.И. Военная токсикология и защита от ядерного и химического оружия / Ташкент, Медицина, 1988, с. 7-40
7. Куценко С.А., Бутомо Н.В., Гребенюк А.Н. и др. Военная токсикология, радиобиология и медицинская защита. Учебник / Под ред. С.А. Куценко, СПб: ООО, Изд. ФОЛИАНТ, 2004, 528 с.: ил.

## РЕЗЮМЕ

## ХАРАКТЕРИСТИКА САНИТАРНЫХ ПОТЕРЬ ПРИ ПРИМЕНЕНИИ ХИМИЧЕСКОГО ОРУЖИЯ

Александрян В.О., Оганисян Л.Г., Саргсян А.Т.  
ЕГМУ, Военно-медицинский факультет

**Ключевые слова:** химическое оружие, санитарные потери, медицинская служба.

Санитарные потери – это те лица, которые потеряли свою боеспособность и поступили в медицинские учреждения. Основными показателями санитарных потерь являются масштабы и структура санитарных потерь. При современных боевых условиях они зависят от характера и интенсивности боевых действий, от степени защиты личного состава и плотности его расположения, от природно-климатических условий и используемого вида оружия. Следовательно в случае применения хи-

мического оружия санитарные потери зависят от вида химического оружия и его концентрации, от масштабов и средств использования токсического вещества, от внезапности его применения и от степени противохимической защиты личного состава.

При использовании химического оружия основной задачей медицинской службы является организация и проведение профилактических и лечебно-эвакуационных мероприятий на различных этапах медицинской помощи.

## SUMMARY

## THE CHARACTERISTIC OF SANITARY LOSSES FROM CHEMICAL WEAPONS

Aleksanyan V.H., Hovhannisyan L.G., Sargsyan H.T.  
YSMU, Military Medical Faculty

**Keywords:** chemical weapons, sanitary losses, medical service.

Sanitary losses are called the persons who have lost their efficiency and were accepted to medical institutions. The main characterizing indicators of sanitary losses are the size and the structure of sanitary losses. In modern battle, they depend on the nature and intensity of combat operations, the staff protection degree, the density of the staff in the occupied area, climatic

conditions, the kind of weapon used. Hence, in case of chemical weapons they depend on the type and the concentration of a chemical agent, as well as the scale and used resources of a chemical agent, its sudden use, the degree of the staff anti-chemical protection, physical and moral condition of the staff. Therefore, in case of the use of chemical weapons, the main problems in medical service are the organization of preventive and medical events with high efficiency.

## ՑԻՆԿԻ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ ԵՎ ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՆՐԱ ԱՆԲԱ- ՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՈՒՄ

Բաղդասարյան Ն.Գ., Այվազյան Գ.Ս., Մնացականյան Ն.Ռ.  
ԵՊԲՀ, մանկաբուժության թիվ 1 ամբիոն

**Բանալի բառեր՝** *ցինկ, էսենցիալ միկրոէլեմենտ, ցինկի անբավարարություն, մանկական տարիք, հիվանդացություն, մահացություն:*

Սննդային անբավարարությունը համաշխարհային մեծ խնդիր է, որը կարող է հանգեցնել աճի, իմուն համակարգի, ճանաչողական և մտոր գարգացման, վարքագծի անբավարարության: Չնայած նախկինում հիմնական ուշադրությունը սևեռված էր սպիտակուցային էներգետիկ անբավարարության բացասական հետևանքների վրա, սակայն այժմ առավել հետաքրքրորեն են սկսել ուսումնասիրել միկրոէլեմենտային անբավարարության արդյունքները [1]: Վերջին տարիներին գիտական միտքը առավել հետաքրքրված է ցինկով:

Ցինկը էսենցիալ միկրոէլեմենտ է և պատկանում է մարդու սնուցման և առողջության մեջ կարևորագույն դեր ունեցող միկրոէլեմենտների ենթախմբին [2]: Ցինկը լայնորեն մասնակցում է ենթաբջջային նյութափոխանակության մեջ: Օրինակ՝ այն ֆերմենտների կատալիտիկ հատվածի մի մաս է յուրաքանչյուր դասի նվազագույնը մեկ ֆերմենտի համար [2,3,4]: Այժմ բացահայտված է ավելի քան 300 ֆերմենտ, որոնք ներկայացնում են ավելի քան 50 տարբեր խմբեր, որոնց ֆունկցիաներն իրականացնելու համար ցինկ է անհրաժեշտ [4]:

Ցինկը միկրոէլեմենտ է, որը կենտրոնական դեր է կատարում բջջի աճի, հատկապես ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի սինթեզի համար անհրաժեշտ ֆերմենտների ձևավորման հարցում: Ցինկը մեծ քանակությամբ առկա է գլխուղեղում, որտեղ այն կապված է սպիտակուցների հետ: Այսպիսով այն ունի ինչպես կառուցողական, այնպես էլ ֆունկցիոնալ նշանակություն [1]: Այն անհրաժեշտ է բջջի բաժանման ցանկացած պրոցեսի համար (աճ, վերքերի լավացում, սպերմատոգենեզ և այլն), ակտիվ մասնակցություն ունի նուկլեինաթթուների նյութափոխանակության մեջ և սպիտակուցի սինթեզում, մտնում է ԴՆԹ- և ՌՆԹ-պոլիմերազայի, թիմիդին կինազայի կազմի մեջ, ընկճող ազդեցություն ունի ռիբոնուկլեազայի վրա, նվազեցնում է ԱԵՖ-ազայի ակտիվությունը մակրոֆագերում, ազդում է որպես ինքնուրույն ֆերմենտ՝ ճեղքելով ՌՆԹ-ի ֆոսֆոդիեթերազային կամուրջը, կայունացնում է ԴՆԹ-ի կառուցվածքը: Ցինկի ոչ բավարար մատակարարումը բացասաբար է ազդում արագ աճող

եմբրիոնի, պտղի, վաղ հասակի երեխաների և իմուն պատասխանի ու հյուսվածքների վերականգնման կարիք ունեցող հիվանդների վրա: Ցինկի անբավարարության կենդանական (կաթնասուններ) մոդելում ցուցադրված բավականին արագ զարգացող ազդեցությունը աճի և տարբերակման վրա ցույց է տալիս, որ ցինկի անբավարարության դեպքում առավել խոցելի են արագ փոփոխվող, հատկապես իմունային համակարգի բջիջները: Սակայն այլ օրգան-համակարգերը, որոնց բջիջները արագ չեն փոփոխվում, օր.՝ նյարդային համակարգը, նույնպես խոցելի են ցինկի պակասի դեպքում [2,5]: Կեղանիների ցինկի ծանր անբավարարությունը պայմանավորված է եղել գլխուղեղի զարգացման կոպիտ արատներով, ինչպիսիք են անէնցեֆալիան, միկրոցեֆալիան, հիդրոցեֆալիան և վարքագծային փոփոխություններով՝ ակտիվության նվազումով, կարճաժամկետ հիշողության անբավարարությամբ և այլն: Մարդկանց ծանր ցինկի անբավարարությունը հանգեցնում է ուղեղիկի գործունեության և վարքագծային ու հուզական ռեակցիաների խաթարման [1,4]: Այն առավել վտանգավոր է բուռն աճի շրջաններում՝ անտենատալ շրջանում՝ մինչև երեք տարեկանը [6]:

Ցինկը մեծ դեր ունի աճի պրոցեսում: Այն փոխազդում է ոսկրային աճի վրա ազդող կարևորագույն հորմոնների՝ սոմատոմեդին-Կ-ի, օստեոկալցինի, տեստոստերոնի, թիրեոիդ հորմոնների և ինսուլինի հետ: Ցինկը մասնակցում է աճի հորմոնի սինթեզին, արտազատմանը և լյարդի կողմից սոմատոմեդին-Կ-ի արտադրության դրդմանը: Բացի դրանից, այն ոսկրերի աճառային հատվածում նպաստում է սոմատոմեդին-Կ-ի ակտիվացմանը: Ցինկը սերտորեն կապված է ոսկրի նյութափոխանակության հետ. այդ պատճառով այն դրական ազդեցություն ունի աճի և զարգացման վրա: Տեստոստերոնը առավել հզոր անաբոլիկ գործոններից մեկն է: Այն ավելացնում է քաշը, մկանային զանգվածը և արագացնում է գծային աճը: Առկա է ուղիղ կապ արյան մեջ ցինկի և տեստոստերոնի մակարդակների միջև: Ցինկի անբավարարությամբ դրդված ստերոիդոգենեզի խանգարումը հանգեցնում է հիպոգոնադիզմի: Ցինկի պարունակությունը ոսկրում, այլ հյուսվածքների համեմատ, բավականին բարձր է և մատրիքսի կալցիֆիկացիայի

հիմնական գործոններից է [7]: Ցինկը մասնակցում է ոսկրային հյուսվածքի աճի և նյութափոխանակության գործընթացներին, մտնում է հիմնային ֆոսֆատազային կազմի մեջ, դրականորեն է ազդում ֆոսֆոր-կալցիումական փոխանակության վրա [4]: Այն ոսկրերում, օստիոցիտներում ԴԼԹ-ի սինթեզի ակտիվացման միջոցով նպաստում է նաև վիտամին D-ի նյութափոխանակային ազդեցությանը: Ցինկը, լինելով հիմնային ֆոսֆատազայի մի մասը, ազդում է նրա սինթեզի վրա և կարևոր ազդեցություն ունի ֆերմենտի գործունեության մեջ: Այն անփոխարինելի է զգայական օրգանների (հոտի, համի, տեսողության) նորմալ զարգացման և գործունեության համար: Ցինկի անբավարարության դեպքում սկզբում է համի և հոտառության զգացողությունը [4]: Ցինկը կարող է փոփոխել ախորժակի կարգավորումը՝ ազդելով ԿԼՅ-ի վրա և փոխելով ընկալիչների ռեակցիան նեյրոտրանսմիտորների նկատմամբ: Ցինկի անբավարարությունը ուղեկցվում է համի և հոտի զգացողության փոփոխությամբ, անոռեքսիայով և քաշի կորստով: Այսպիսով, ցինկի անբավարարությունը հանգեցնում է աճի դանդաղեցմանը և հիպոգոնադիզմի [7]:

Ցինկը ազդում է իմուն համակարգի տարբեր օղակների վրա: Այն էսենցիալ գործոն է բջջային իմունիտետի, նեյտրոֆիլների և բնական քիլերների գործունեության համար: Մակրոֆագերի գործունեությունը նույնպես տուժում է ցինկի անբավարարությունից: Ֆագոցիտոզը, ներբջջային ոչնչացումը, ցիտոկինների արտադրությունը, բոլորը տուժում են ցինկի անբավարարության պատճառով [8,9]: T- և B-լիմֆոցիտների աճը նույնպես տուժում է ցինկի անբավարարությունից: Ցինկի անբավարարությունը պոտենցիում է ապոպտոզը, ազդում է ցիտոկինների արտադրության և ակտիվության վրա: Ցինկն ունի հակաօքսիդանտային և թաղանթակայունացնող հատկություններ:

Կարևոր գործոն է նաև ուրցագեղձի կողմից արտադրվող թիմուլին հորմոնը, որը իմուն մեդիատոր է: Թիմուլինը նաև ապացուցվել է հորմոն է, արտադրվում է ուրցագեղձի էպիթելային բջիջների կողմից [10]: Այն կապվում է T-լիմֆոցիտների բարձր աֆինություն ունեցող ընկալիչների հետ և նպաստում T-լիմֆոցիտների հասունացմանը [8,11]: Բացի դրանից, թիմուլինը կարգավորում է հասուն T-լիմֆոցիտների գործունեությունը ծայրամասերում (պերիֆերիայում): Բացահայտված է, որ թիմուլինը նպաստում է ծայրամասային արյան մոնոնուկլեար բջիջների կողմից ցիտոկինների սինթեզին և CD8 T-լիմֆոցիտների պրոլիֆերացիային: T-լիմֆոցիտների IL-2 բարձր աֆինություն ունեցող ընկալիչի արտահայտվածությունը կարգավորվում է թիմուլինի կողմից [24]: Այսպիսով, թիմուլինը նպաստում է T-լիմ-

ֆոցիտների հասունացմանը, ցիտոտոքսիկությանը և նրանց կողմից IL-2-ի արտադրությանը [11]: Ցինկը 1:1 հարաբերությամբ կապվում է թիմուլինի հետ: Թիմուլինի ակտիվությունը *in vitro* և *in vivo* պայմաններում ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների դեպքում պայմանավորված է շիճուկում ցինկի կոնցենտրացիայով: Այսպիսով, ցինկի յուրացման նույնիսկ սահմանային փոփոխություններն ազդում են թիմուլինի ակտիվության վրա [10,11]: Թիմուլինը հայտնաբերվում է ցինկի անբավարարություն ունեցող անձանց շրջանում, բայց այն ակտիվ չէ [8, 10, 11]: Ցինկի կապումը պեպտիդինին հանգեցնում է կառուցվածքային փոփոխության, որն էլ նպաստում է թիմուլինի ակտիվությանը [10, 11]:

Ցինկը կարևոր դեր ունի T-լիմֆոցիտների զարգացման գործում: Ցինկի անբավարարությունը հանգեցնում է միտոզների ազդեցությամբ T-լիմֆոցիտների պրոլիֆերացիայի ընկճմանը: Ցինկը կարգավորում է լիմֆոցիտների հոմեոստազը՝ ոչ միայն ազդելով պրոլիֆերացիայի վրա, այլև ապոպտոզի կարգավորմամբ [12]:

T-լիմֆոցիտների սուբպոպուլյացիաների հետազոտությունները ցույց են տվել, որ CD4 և CD8 բջիջների փոխհարաբերությունը պայմանավորված է ցինկի կարգավիճակով: Ցինկի անբավարարության դեպքում դիտվում է այդ փոխհարաբերության նվազում [13]: Փոփոխվում է Th1/Th2 հարաբերությունը, որը իր հերթին հանգեցնում է TH1 ցիտոկինների IFN- $\gamma$  և IL-2 արտադրության նվազման: Th2 ցիտոկինների՝ IL-4, IL-5, IL-6, IL-10, արտադրությունը չի փոխվում: Փաստորեն ցինկի անբավարարության դեպքում տուժում է Th1 օղակը: Այսպիսով, բջջային իմուն պատասխանը խանգարվում է, միևնույն ժամանակ Th2 միջնորդավորված հումորալ իմուն պատասխանը ավելի քիչ է տուժում: Բացի դրանից, դանդաղ տիպի գերզգայունությունը, մասնավորապես Th1 միջնորդավորված գերզգայունության ռեակցիան խախտվում է ցինկի անբավարարության դեպքում: T բջջային միջնորդավորված պատասխանի փոփոխությունը կարող է հանգեցնել ինֆեկցիաների ընկալունակության փոփոխության և ազդել աուտոիմուն հիվանդությունների և ալերգիաների զարգացման վրա [8,13,14]: Յետազոտությունները ցույց են տվել, որ ցինկի անբավարարության դեպքում դիտվում է ցիտոտոքսիկ T-լիմֆոցիտներին պատկանող CD8 և CD73 T-լիմֆոցիտների տոկոսի նվազում: CD73 մոլեկուլը ցիտոտոքսիկ T-լիմֆոցիտների նկատմամբ պատասխանատու է անտիգենի ճանաչման, պրոլիֆերացիայի և ցիտոլիզի համար: Այս և այլ նկարագրված փոփոխությունները վերանում են ցինկ ընդունելուց հետո [11]:

Սկսած 1960-ական թվականներից՝ հետաքրքրություն սկսեց ներկայացնել ցինկի անբավարարության

կամ նյութափոխանակության խանգարման ազդեցության ուսումնասիրությունը տարբեր հիվանդությունների ընթացքում՝ սկսած պարզ շնչառական հիվանդություններից մինչև վիրահատված հիվանդների վերքերի լավացումը [2]:

Ցինկի անբավարարությունը զարգացող երկրներում հիվանդացության և մահացության ավելացման 10 մեծ ռիսկի գործոններից մեկն է: ԱՅԿ-ի 2002 թվականի գեկուցման մեջ այս հարցի շեշտադրումը նպաստեց նրան, որ ավելացան այն ծրագրերը, որոնք նպաստում են ցինկի տրմանը և սննդի բարելավմանը [15]: Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տվել, որ ցինկի անբավարարությունը տարածված է ամբողջ աշխարհում և վտանգում է բնակչության առողջությունը և բարեկեցությունը [16]: Հետևելով IZINCG-ին (Ցինկի սնուցման միջազգային խորհրդատվական խումբ)՝ ցինկի անբավարարության տարածվածությունը գնահատվում է 31%՝ տարբեր տարածաշրջաններում տատանվելով 4-73%-ով: Հիմնվելով այս տվյալների վրա՝ ցինկի անբավարարությունն առաջացնում է 176.000 մահ փորլուծությունից, 406.000՝ թոքաբորբից և 207.000՝ մալարիայից:

Ցինկի անբավարարությունը, որը հանգեցնում է աճի դանդաղեցմանը, հիպոգոնադիզմին, իմունային անբավարարությանը և կոգնիտիվ ֆունկցիայի վատացմանը, դիտվում է զարգացող երկրների շուրջ երկու միլիարդ մարդկանց շրջանում: Չնայած ցինկը առկա է բազմաթիվ սննդամթերքներում, սակայն ցինկի սննդային անբավարարությունը տարածված է լայնորեն, քանի որ ցինկի կենսամատչելիությունը նվազեցնում է ներծծումը ընկճող գործոնները՝ բուսական ծագման սննդում առկա բուսաբջջանքը և ֆիտատները (սրանք բուսական միացությունների շարք են, որոնք չեն մարսվում ստամոքսաղիքային համակարգում) [4, 16, 17, 18]:

Երեխաները ցինկի անբավարարության պատճառով առավել խոցելի են ակտիվ աճի և զարգացման շրջանում՝ վաղ մանկական տարիքում և դեռահասության փուլում: Հետազոտությունները ցույց են տվել, որ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները վաղ մանկական հասակում և դեռահասության շրջանում արյան պլազմայում ցինկի ցածր կոնցենտրացիա ունեն, իսկ սննդային հետազոտությունները միջին եկամուտ ունեցող ընտանիքներում ցույց են տվել, որ վաղ մանկական հասակում առկա է թերթև աստիճանի ցինկի անբավարարություն [18]:

Ներանգանդային ցինկի անբավարարությունը բացասաբար է ազդում ներզատական գեղձերի գործունեության վրա (հիպոֆիզ, ենթաստամոքսային գեղձի ներզատական հատված և այլն): Անտենատալ ցինկի

անբավարարության ընթացքում ընկճվում է մայրական հակամարմինների՝ ընկերթթվ անցումը, բջջային իմունիտետը, CD4/CD8 բջիջների փոխհարաբերությունն է փոխվում, փոխվում է լիմֆոցիտների նյութափոխանակությունը և կառուցվածքը, նվազում է ֆագոցիտար ակտիվությունը, դիտվում է ուրցագեղձի չափերի փոքրացում և անհասություն, նվազում է շնչառական և ստամոքսաղիքային համակարգի էպիթելի պատնեշային ֆունկցիան, վնասվում է վերմաշկային էպիթելը [6]:

Անցած դարում ծանր կամ կլինիկական ցինկի անբավարարությունը բնորոշվել է որպես կարճահասակություն, հիպոգոնադիզմ, իմուն համակարգի ընկճում, մաշկային փոփոխություններ և անոռեքսիա [16]: Ցինկի ծանր անբավարարությունը հանդիպում է acrodermatitis enteropathica-ի (գենետիկ հիվանդություն), առանց ցինկի լրիվ պարենտերալ սնուցման, ալկոհոլի գերօգտագործման և պենիցիլինամինով բուժման դեպքում [2, 4, 19]: Ցինկի ծանր անբավարարության ընթացքում տուժում են մաշկը, ստամոքսաղիքային, նյարդային, իմուն, ոսկրամկանային և վերարտադրողական համակարգերը: Ցինկի ծանր անբավարարության արտահայտություններն են բուլյոզ պուստուլյար դերմատիտը, մազաթափությունը, փորլուծությունը, հոգեհուզական խանգարումները, քաշի կորուստը, ինտերկուրենտ հիվանդությունները՝ պայմանավորված բջջային իմունիտետի անբավարարությամբ, հիպոգոնադիզմը, նեյրոսենսոր խանգարումները և վերքերի ուշ լավացումը: Եթե այս վիճակը չի բացահայտվում և բուժվում, ապա այն հանգեցնում է մահվան [2, 19]:

Չնայած ցինկի ծանր անբավարարություն քիչ է հանդիպում, սակայն թերթև և միջին ծանրության անբավարարությունը տարածված է ժամանակակից ամբողջ աշխարհում [16]: Ցինկի միջին աստիճանի անբավարարությունը դեռահասների շրջանում հանգեցնում է տղաների հիպոգոնադիզմի և աճի դանդաղեցման, մաշկի կոպտության, ախորժակի վատացման, վերքերի դանդաղ լավացման, բջջային իմունիտետի ֆունկցիայի խանգարման և նյարդազգայական փոփոխությունների [19]:

Անանդա Ս. Պրագադի հետազոտություններում տղամարդկանց շրջանում սննդից ցինկի սահմանափակման ճանապարհով ստեղծվել է ցինկի թերթև անբավարարության մարդու փորձարարական մոդել: Հետազոտության արդյունքում շիճուկում հայտնաբերվել է տեստոտերոնի մակարդակի նվազում, օլիգոսպերմիա, ԲԿ (NK) բջիջների ակտիվության նվազում, T helper բջիջների կողմից IL-2 արտադրության նվազում, հիպերամոնեմիա, համի զգացողության փոփոխություն, թիմուլինի ակտիվության նվազում, մթին չհարմարվելու պատկեր:

Այսպիսով, պարզ է, որ ցինկի թեթև անբավարարությունը բացասաբար է ազդում մարդու օրգանիզմում կլինիկական, կենսաքիմիական և իմունաբանական ֆունկցիաների վրա [19]:

Մայրերի շրջանում ցինկի սննդային անբավարարությունը պայմանավորված է եղել նորածինների ուշադրության անբավարարությամբ [1,20] և վեց ամսական հասակում ավելի վատ մոտոր ֆունկցիայով [1,21]: Ցինկ տալու արդյունքում դիտվել է ավելի լավ մոտոր զարգացում շատ ցածր քաշով ծնված երեխաների շրջանում, ավելի ակտիվ գործունեություն Ջնդկաստանի վաղ հասակի երեխաների շրջանում և ֆունկցիոնալ ակտիվություն Գվատեմալայի վաղ հասակի երեխաների շրջանում [1]: Ցինկի անբավարարության դեպքում հղիների 1/3-ի շրջանում դիտվում է հղիության ընդհատման վտանգ, կեսի դեպքում՝ հետտոզներ, ամեն հինգերորդի դեպքում՝ վիժումներ, 30%-ի դեպքում՝ գերշրջություն, 28%-ի դեպքում՝ ընկերքի ախտաբանական փոփոխություններ: 1/3-ից ավելին (36%) ունեն գինեկոլոգիական խնդիրներ [6]: Մայրերի շրջանում ցինկի անբավարարությունը հանգեցնում է երկակի ռիսկի՝ պտղի վիճակի և նորածնի վիճակի վատացման: Մի կողմից հղիների շրջանում ցինկի անբավարարությունը հանգեցնում է հղիության ընթացքի և ծննդաբերության փոփոխության, ընկերքի շերտազատման, վաղաժամ ծննդաբերության, ծննդաբերական ուժերի թուլության, ծննդաբերական և հետծննդյան շրջանում արյունահոսության, որը նվազեցնում է երեխայի հարմարվողական հնարավորությունները, մեծացնում է նորածնային հիվանդացությունը ու մահացությունը, մյուս կողմից մոր անբավարար վիճակը նպաստում է պտղի անբավարար վիճակի առաջացմանը՝ օրգանիզմի ֆիզիոլոգիական համակարգերի ձևավորման հետագա խանգարմամբ [4,6]: Ապացուցված է, որ ցինկի անբավարարություն ունեցող կանանց հասուն ծնված երեխաներն ունեն ավելի ցածր անթրոպոմետրիկ /մարդաբանական/ ցուցանիշներ: Սա վերաբերում է նորածնի մարմնի զանգվածին և երկարությանը, գլխի և կրծքավանդակի շրջագծին [6]: Ապացուցված է, որ կյանքի առաջին տարում անթրոպոմետրիկ նվազած ցուցանիշները (հատկապես երկարությունը) սերտորեն պայմանավորված են ծնվելիս արյան մեջ ցինկի ցածր ցուցանիշներով: Պորտալային արյան մեջ ցինկի անբավարար քանակով ծնված երեխաների մարմնի զանգվածի և հասակի միջին ցուցանիշները կյանքի առաջին տարում սովորաբար ավելի ցածր են, քան ցինկի նորմալ ցուցանիշներով երեխաների շրջանում: Սա հնարավորություն է տալիս ենթադրելու, որ ցինկի պաշարները, որոնք երեխան ստացել է մորից, կյանքի առաջին տարում աճն ապահովելու համար

մեծ նշանակություն ունեն [6]:

Այժմ որոշ հետազոտություններ ցույց են տվել, որ զարգացող երկրներում ցինկի անբավարարությունը բավականին տարածված է և ազդում է շուրջ երկու միլիարդ մարդկանց վրա՝ տարբեր տարածաշրջաններում տատանվելով 4-73%-ով: Աճի դանդաղումը, որը նկատվում է այդ երկրներում, իսկապես կարող է լինել ցինկի անբավարարության հետևանք [12,18,19,22]: Չարգացող երկրներում, որտեղ առկա է ցինկի անբավարարություն, երեխաները վարակային հիվանդություններով հիվանդացության և մահացության բարձր ռիսկի խմբում են: Չնայած իմուն համակարգը տուժում է անգամ թեթև աստիճանի ցինկի անբավարարության դեպքում, սակայն դրա կարևորությունը՝ պայմանավորված մանկական հիվանդացությամբ, միայն վերջերս է կարևորվում [19,23]: Չարգացող երկրներում ցինկի անբավարարության զգալի տարածվածությունը և դրա կապը հիվանդացության և մահացության հետ վկայում են այն մասին, որ այս խնդրի սահմանները բավականին ընդլայնված են [15]: Հաշվարկված է, որ շուրջ 800.000 մահվան դեպք /ընդհանուր մահերի մոտ 1,5%/ և պերինատալ մահացության շուրջ 20%-ը ամբողջ աշխարհում պայմանավորված են ցինկի անբավարարությամբ, որը նախատրամադրող գործոն է փորլուծության և թոքաբորբի համար, որոնք մինչև հինգ տարեկան երեխաների մահվան երկու հիմնական պատճառներն են [18]: Չնայած որոշ դեպքերում սննդակարգի փոփոխությամբ կարելի է հասնել ցինկի ներմուծման բարելավման՝ ապահովելով կենդանական ծագման սննդի բավարար մատակարարումը կամ ցինկի ներծծումը խանգարող սննդի բացառումը, այնուամենայնիվ որոշ տարածաշրջաններում և սոցիալական խմբերում դա կարող է խնդիր դառնալ: Պատահական ընտրությամբ /ռանդոմիզացված/ պլացեբո հսկվող հետազոտությունների արդյունքները լավագույնս ցույց են տալիս ցինկի տրման դրական արդյունքները: ԱՅԿ-ի կողմից պատահական ընտրությամբ /ռանդոմիզացված/ հետազոտությունների վերլուծությունը ցույց է տվել, որ ցինկի անբավարարությունը մեծացնում է թոքաբորբի ռիսկը [16]: Պատահական ընտրությամբ /ռանդոմիզացված/ վերահսկող հետազոտությունների քննությունը ցույց է տվել, որ ցինկի դեղահաբեր տալը նվազեցնում է փորլուծության հիվանդացությունը 18%-ով, իսկ թոքաբորբինը՝ 41%-ով [15,23,24,25]:

Ամփոփելով մասնագիտական գրականության վերը նշված տվյալները և հետազոտությունների արդյունքները՝ պարզ է դառնում ցինկ միկրոէլեմենտի կարևորագույն դերը օրգանիզմի նորմալ գործունեության զարգացման և հատկապես մանկան առողջության համար:

Հաշվի առնելով համաշխարհային սովալները և օր օրի աճող հետաքրքրությունը մարդու օրգանիզմում ցինկի և նրա դերի վերաբերյալ՝ հասկանալի է դառնում ցինկի հետազոտման կարևորությունը Հայաստանում ևս, քանի որ առկա են երկրաբանական և սննդային սովորությունների տարբերություններ: Այս ամենը արդիական է դարձնում ցինկի անբավարարության հետազոտությունը բժշկագիտության տարբեր ոլորտներում:

### Ամփոփում

Ցինկը էսենցիալ միկրոէլեմենտ է և պատկանում է մարդու սնուցման և առողջության մեջ կարևորագույն դեր ունեցող միկրոէլեմենտների ենթախմբին: Այն լայնորեն մասնակցում է ենթաբջջային նյութափոխանակությանը: Ցինկը միկրոէլեմենտ է, որը կենտրոնական դեր է

կատարում բջջի աճի, հատկապես ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի սինթեզի համար անհրաժեշտ ֆերմենտների ձևավորման գործում: Ցինկը ազդում է իմուն համակարգի տարբեր օղակների վրա: Էսենցիալ գործոն է բջջային իմունիտետի, նեյտրոֆիլների և բնական քիլերների գործունեության համար: Մակրոֆագերի գործունեությունը նույնպես տուժում է ցինկի անբավարարությունից: Ցինկի անբավարարությունը զարգացող երկրներում հիվանդացության և մահացության ավելացման 10 մեծ ռիսկի գործոններից մեկն է: Այժմ որոշ հետազոտություններ ցույց են տվել, որ զարգացող երկրներում ցինկի անբավարարությունը բավականին տարածված է և ազդում է շուրջ երկու միլիարդ մարդկանց վրա՝ տարբեր տարածաշրջաններում տատանվելով 4-73%-ով:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Maureen M Black: Zinc deficiency and child development. Am J Clin Nutr. 1998 August ; 68(2 Suppl): 464S-469S
2. Michael Hambidge: Human Zinc Deficiency. American Society for Nutritional Sciences 2000
3. Fierke, C. Function and mechanism of zinc. J. Nutr. 130: 1437S-1446S., 2000
4. Ю.Г. Мухина, С.О. Ключников, О.К. Нетребенко, Л.А. Щеплягина: Клиническое значение нарушений метаболизма цинка. Авторские лекции по педиатрии 2005 www.dezprima.ru/t3/22.htm
5. Frederickson, C. J. Importance of zinc in the central nervous system. J.Nutr. 130: 1471S-1483S., 2000
6. Л.А.Щеплягина, Т. И. Легонькова: Дефицит цинка и его влияние на здоровье матери и ребенка .Возможности коррекции .ГУ Научный Центр Здоровья Детей РАМН, 2005 http://www.nczd.ru/art25.htm
7. Maria J. Salgueiro, BS, Marcela B. Zubillaga, Alexis E. Lysionek, BS, Ricardo A. Caro, Ricardo Weill, Eng, and Jose R. Boccio, The Role of Zinc in the Growth and Development of Children Nutrition 18:510 -519, 2002
8. Ananda S Prasad: Zinc in Human Health: Effect of Zinc on Immune Cells M O L M E D 1 4 ( 5 - 6 ) 3 5 3 - 3 5 7 , M A Y - J U N E 2 0 0 8
9. Ananda S. Prasad: Zinc: role in immunity, oxidative stress and chronic inflammation Clinical Nutrition and Metabolic Care 2009, 12:646-652
10. M Dardenne: Zinc and immune function European Journal of Clinical Nutrition (2002) 56, Suppl 3, S20-S23
11. Anuraj H Shankar and Ananda S Prasad: Zinc and immune function: the biological basis of altered resistance to infection Am J Clin Nutr 1998;68(suppl):447S-63S
12. Brown KH, Pearson JM, Allen LH, Rivera J: Effect of supplemental zinc on the growth and serum zinc concentrations of prepubertal children: a meta-analysis of randomized, controlled trials. Am J Clin Nutr 75:1062-1071, 2002.
13. Ananda S. Prasad: Effects of Zinc Deficiency on Th1 and Th2 Cytokine Shifts The Journal of Infectious Diseases 2000;182(Suppl 1):S62-8
14. Andrea Hönscheid, Lothar Rink and Hajo Haase: T-Lymphocytes: A Target for Stimulatory and Inhibitory Effects of Zinc Ions Endocrine, Metabolic & Immune Disorders - Drug Targets, 2009, 9, 132-144
15. Roger Shrimpton, Rainer Gross, Ian Darnton-Hill and Mark Young: Zinc deficiency: what are the most appropriate interventions? BMJ 2005;330;347-349
16. Laura E. Caulfield, Robert E. Black: Comparative Quantification of Health Risks Chapter 5 Zinc deficiency: WHO
17. Mary Penny: The Role of Zinc in Child Health. Published by International Zinc Association http://www.zincworld.org.
18. Jerome Nriagu: Zinc Deficiency in Human Health. Elsevier 2007
19. Ananda S. Prasad: Impact of the Discovery of Human Zinc Deficiency on Health. Journal of the American College of Nutrition, Vol. 28, No. 3, 257-265 (2009)
20. Kirksey A, Wachs TD, Yunis F, et al. Relation of maternal zinc nutriture to pregnancy outcome and infant development in an Egyptian village. Am J Clin Nutr. 1994; 60:782-792. [PubMed:7942587]
21. Sazawal S, Bentley M, Black RE, Dhingra P, George S, Bhan MK. Effect of zinc supplementation on observed activity in preschool children in an urban slum population. Pediatrics. 1996; 98:1132-1137. [PubMed: 8951265]
22. Robert E. Black: Zinc Deficiency, Infectious Disease and Mortality in the Developing World J. Nutr. 133: 1485S-1489S, 2003
23. Usha Dhingra, Girish Hiremath, Venugopal P. Menon, Pratibha Dhingra, Archana Sarkar, Sunil Sazawal: Zinc Deficiency: Descriptive Epidemiology and Morbidity among Preschool Children in Peri-urban Population in Delhi, India. J HEALTH POPUL NUTR 2009 Oct;27(5):632-639
24. Bhandari, N., Bahl, R., Taneja, S., Strand, T., Molbak, K., Ulvik, R. J., Sommerfelt, H. & Bhan, M. K. (2002) Routine zinc supplementation prevents pneumonia in children 6 months to 3 years of age: a randomized controlled trial in an urban slum. BMJ 324: 1358-1360.
25. Zinc Investigators Collaborative Group. Prevention of diarrhea and pneumonia by zinc supplementation in children in developing countries: Pooled analysis of randomised controlled trials. J Pediatr 1999;135: 689-97.

## РЕЗЮМЕ

**ЗНАЧЕНИЕ ЦИНКА В ОРГАНИЗМЕ И СВЯЗЬ ЕГО НЕДОСТАТОЧНОСТИ С БОЛЕЗНЯМИ В ДЕТСКОМ ВОЗРАСТЕ**

Багдасарян Н.Г., Айвазян Г.С., Мнацаканян Н.Р.  
ЕГМУ, Кафедра педиатрии N 1

**Ключевые слова:** цинк, эссенциальный микроэлемент, недостаточность цинка, детский возраст, заболеваемость, смертность.

Цинк является эссенциальным микроэлементом и принадлежит к подгруппе микроэлементов, которые играют важную роль в питании и здоровье человека. Цинк участвует в субклеточном метаболизме. Он играет центральную роль в росте клетки, в частности в формировании ферментов, которые необходимы для синтеза ДНК и РНК. Цинк влияет на разные

звенья иммунной системы. Является эссенциальным фактором для функции клеточного иммунитета, нейтрофилов и NK клеток. Функции макрофагов тоже страдают при дефиците цинка. Дефицит цинка является одним из десяти факторов риска заболеваемости и смертности в развивающихся странах. Исследования показали, что в наши дни в развивающихся странах дефицит цинка имеет большую распространенность, в разных регионах от 4% до 73% и влияет на здоровье около двух миллиардов людей.

## SUMMARY

**THE IMPORTANT ROLE OF ZINC IN THE BODY AND ASSOCIATION OF ZINC DEFICIENCY WITH CHILDHOOD DISEASES**

Baghdasaryan N.G., Ayvazyan G.S., Mnatsakanyan N.R.  
YSMU, Department of Pediatrics N1

**Keywords:** zinc, essential microelement, zinc deficiency, childhood ages, morbidity, mortality.

Zinc is one of the essential trace elements and, as such, a member of one of the major subgroups of the micronutrients that have attained such prominence in human nutrition and health. Zinc is ubiquitous in subcellular metabolism. Zinc is a trace mineral that plays a central role in cellular growth, specifically in the production of enzymes necessary for the synthesis of RNA and

DNA. It affects multiple aspects of the immune system. Zinc is crucial for normal development and function of cells mediating innate immunity, neutrophils, and NK cells. Macrophages also are affected by zinc deficiency. Zinc deficiency is one of the ten risk factors of morbidity and mortality in different countries. Research suggests that zinc deficiency is widespread and affects the health and well-being of about two billion people worldwide, ranging from 4–73% across subregions.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՍԵԼՈՒ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԿԱԼՑԻՈՒՄԻ ԵՎ ՄԱՐԿԵԶԻՆԻՄԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Քոթանյան Ա.Յ.

ԵՊԲՀ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոն

**Բանալի բառեր՝** խմելու ջուր, կոշտություն, կալցիում, մազնեզիում, մահացություն:

Վերջին տարիներին կանխարգելիչ և կլինիկական բժշկության մասնագետներն ավելի մեծ ուշադրություն են հատկացնում խմելու ջրում կոշտության աղերի կենսաբանական նշանակությանը: Կոշտությունը պայմանավորված է ջրում կալցիումի և մազնեզիումի իոնների պարունակությամբ: Բնական ջրերը հանքային տարրերի պարունակության առումով խիստ բազմազան են, այդ իսկ պատճառով խմելու ընթացքում և սննդամթերք պատրաստելիս ջրի միջոցով օրգանիզմ անցնող հանքային տարրերի մակարդակը կարող է տատանվել՝ պայմանավորված աշխարհագրական վայրով, ջրաղբյուրի տեսակով և այլ հանգամանքներով: Խմելու ջրի կոշտության աստիճանը կարևոր նշանակություն ունի սպառողների կողմից նրա համային հատկությունների ընկալման համար: Այն ունի նաև տնտեսական նշանակություն:

Հայտնի է, որ կալցիումի և մազնեզիումի հիմնական աղբյուրը սնունդն է, սակայն դրանք սննդամթերքի շատ տեսակներից օրգանիզմի կողմից վատ են յուրացվում: Սննդային կալցիումի հիմնական աղբյուրը կաթնամթերքն է, որն ապահովում է այս տարրի պահանջի ավելի քան 50%-ը: Բուսական մթերքներում կալցիումի պարունակությունը ցածր է, իսկ օքսալատների և ֆիտատների մեծաքանակ պարունակությունը նվազեցնում է կենսահասանելիությունը: Մազնեզիումի աղբյուր են տարբեր տեսակի բուսական ծագման մթերքները՝ հացահատիկները (չմշակված), ընկույզը, ինչպես նաև ծովամթերքը և կաթնամթերքը: Սննդից աղիքներում յուրացվում է մազնեզիումի 30%-ը, իսկ խմելու ջրից (որտեղ այն լուծված վիճակում է)՝ 40-60%-ը: Կալցիումի ներծծումը աղիքներում խմելու կամ հանքային ջրերից նույնքան (նույնիսկ ավելի) արդյունավետ է, որքան կաթնամթերքից:

Մյուս կողմից ժամանակակից սննդակարգը, որն աչքի է ընկնում ռաֆինացված մթերքների լայն ընդգրկմամբ, չի պարունակում հանքային տարրերի բավարար քանակներ, և նման պայմաններում չափահաս ազգաբնակչության մեծամասնության շրջանում արձանագրվում է որոշ տարրերի և հատկապես մազնեզիումի

անբավարարություն: Տնտեսապես զարգացած երկրներում տարբեր հետազոտողներ այդպիսի եզրահանգում են կատարել [10,16,19,21]: Այսպիսով, նշված հանքային տարրերի սննդային անբավարարության պայմաններում խմելու ջուրը կարող է փոխհատուցել այդ պակասը և կալցիումի ու մազնեզիումի լրացուցիչ կարևոր աղբյուր դառնալ [17]:

Սիրտ-անոթային համակարգի (ՍԱՀ) հիվանդությունների և խմելու ջրի կոշտության միջև հնարավոր կապի բացահայտման ուղղությամբ հիգիենիկ ուղղվածությամբ շատ հետազոտություններ են կատարվել [4,13,14,15,20]: Ըստ այդ հետազոտությունների՝ փափուկ ջուրը անբարենպաստ ազդեցություն ունի ՍԱՀ-ի հիվանդությունների ընթացքի վրա՝ հանգեցնելով մահացության մեծացմանը և, ընդհակառակը, կոշտ ջրի որոշ բաղադրիչներ սիրտ-անոթային համակարգի վրա ունեն պաշտպանիչ ազդեցություն: Այդպիսի հատկությունները առաջին հերթին վերագրում են մազնեզիումին, և այն տարածաշրջաններում, որտեղ խմելու ջրում առկա են մազնեզիումի բարձր խտություններ, բնակչության շրջանում առավել ցածր են մասնավորապես սրտամկանի սուր ինֆարկտից և ինսուլտից մահացության ցուցանիշները այն բնակավայրերի համեմատ, որտեղ խմելու ջրերում մազնեզիումի պարունակությունը քիչ է [8]:

Մազնեզիումը մասնակցում է մի քանի հարյուր էսենցիալ մետաբոլիկ ռեակցիաներում, այդ թվում ԱԵՖ-ի, սպիտակուցների, ածխաջրերի, ճարպերի, նուկլեինաթթուների սինթեզում: Այս էլեմենտը կառուցվածքային տարր է ոսկրային հյուսվածքում, կենսաբանական թաղանթներում, քրոմոսոմներում և կալցիումի ու կալիումի հետ միասին կարգավորում է իոնային տրանսպորտը կենսաբանական թաղանթներում [3]:

Մազնեզիումը կարող է հանդես գալ որպես կալցիումի ներհակորդ և դրանով հանդերձ կարգավորել մկանների ֆունկցիան և նեյրոմեդիատորների ձերբազատումը: Այս կենսաքիմիական գործունեության արդյունքում մազնեզիումն առանցքային դեր է կատարում սրտամկանի դրդելիության, նյարդամկանային հաղորդականության, անոթային տոնուսի, արյան ճնշման կարգավորման հարցերում [23]: Վերջին գիտական հե-

տագոտությունները փաստում են մագնեզիումի պաշտպանական դերը սիրտ-անոթային հիվանդությունների դեպքում [9, 23]:

Ուսումնասիրելով սննդային մագնեզիումի կարևորությունը՝ ԱՅԿ-ն տվել է հետևյալ կարևոր եզրահանգումը. փորձարարական, կլինիկական և համաճարակաբանական ուսումնասիրությունները հաստատում են այն վարկածը, որ մագնեզիումի ֆիզիոլոգիական նորմայի մակարդակներից քիչ քանակներ ընդունելը նպաստում է ՍԱՀ-ի հիվանդություններից կամ կաթվածից բնակչության մահվան դեպքերի, հնարավոր է նաև հիվանդացության ռիսկի բարձրացմանը [7, 17]:

Ամփոփելով խմելու ջրում կոշտության աղերի և սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների հնարավոր կապի վերաբերյալ 1957–2004թթ. ընթացքում ամբողջ աշխարհում կատարված մոտ 80 համաճարակաբանական ուսումնասիրությունների արդյունքները՝ ԱՅԿ-ն 2005-ի իր համապատասխան վերլուծության մեջ [17] արձանագրել է, որ՝

- ◆ խմելու ջրում կոշտության աղերի (ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին-առանձին՝ կալցիումի և մագնեզիումի խտությունները) դրական նշանակությունը առավել հաճախ առնչվում է սրտի իշեմիկ հիվանդությունից մահացության ցածր ցուցանիշների հետ,
- ◆ համոզիչ են խմելու ջրում մագնեզիումի խտությունների բարենպաստ ազդեցության վերաբերյալ արձանագրված փաստերը:

2009-ին ԱՅԿ-ի փորձագետները, անդրադառնալով այս հարցին, նշում են, որ համաճարակաբանական հետազոտությունները չնայած չեն ապացուցում խմելու ջրի կոշտության և սրտանոթային հիվանդությունների միջև հնարավոր կապի վարկածը, սակայն հաստատում են խմելու ջրում մագնեզիումի պարունակության և սրտանոթային հիվանդություններից մահացության միջև առկա կապը: Նրանք նշում են, որ որոշ իրավիճակներում ջրի միջոցով օրգանիզմ անցնող մագնեզիումի քանակի ավելացումը կարող է օգտակար լինել բնակչության հատկապես այն խմբերի համար, որոնց սննդում այս քիմիական տարրի պարունակությունը անբավարար է [7]:

2011-ի ուղեցույցում [12] ԱՅԿ-ն, որպես օժանդակ փաստաթուղթ հիմք ընդունելով 2009-ի վերլուծությունը (կալցիումի և մագնեզիումի օրական պահանջում խմելու ջրի ներդրման և առողջության վրա հնարավոր բարենպաստ ազդեցության գնահատման վերաբերյալ [6]), եզրահանգում է. «Չնայած սիրտ-անոթային մահացության դեպքում խմելու ջրի մագնեզիումի կամ կոշտության պաշտպանական ազդեցության վերաբե-

րյալ համաճարակաբանական հետազոտությունների ապացույցների առկայությանը, սակայն այդ տվյալները դեռևս վիճարկելի են: Հետագա հետազոտություններն այս ուղղությամբ շարունակվում են: Մինևույն ժամանակ բացակայում են այնպիսի տվյալներ, որոնք կհաստատեն հանքային տարրերի առավելագույն կամ նվազագույն խտությունները, քանի որ նրանց համապատասխան քանակների անցումն օրգանիզմ պայմանավորված է շատ այլ գործոններով: Նշված հանգամանքներից ելնելով՝ կոշտության համապատասխան նորմատիվային արժեքներ չի առաջարկվում»:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ներկայացվող աշխատանքի **Նպատակն** է գնահատել ՀՀ առանձին տարածաշրջաններում խմելու ջրի քիմիական բաղադրությունը և տալ բնակչության առողջության վրա կոշտության աղերի հնարավոր ազդեցության հիգիենիկ գնահատականը:

### Նյութերը և մեթոդները

Առաջադրված նպատակին հասնելու համար ամփոփվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի 4 մարզային լաբորատորիաների 73 խմելու ջրաղբյուրների ջրի որակի 2008-2011թթ. հետազոտությունների արդյունքները՝ աղային կազմի ցուցանիշներով:

Մի շարք երկրներում գործում են խմելու ջրի մակրո- և միկրոէլեմենտային կազմի ֆիզիոլոգիական լիարժեքության նորմատիվները: Օրինակ՝ Բելառուսիայի Հանրապետությունում «խմելու ջրի ֆիզիոլոգիական լիարժեքության պահանջներում» որպես սանիտարական նորմա ընդունված են ջրում կալցիումի 25-130մգ/լ և մագնեզիումի 5-65մգ/լ քանակները [5]:

Մեզ համար ստացված արդյունքերը ամփոփելու համար հիմք են ծառայել հայրենական հիգիենիստների կողմից խմելու ջրում կոշտության աղերի նվազագույն անհրաժեշտ քանակների վերաբերյալ առաջարկված մոտեցումները: Ըստ այդմ՝ կալցիումի խտությունը խմելու ջրում պետք է լինի 20-25մգ/լ-ից ոչ պակաս, իսկ մագնեզիումի պարունակությունը՝ 10մգ/լ-ից ոչ պակաս [1]: Ընդհանուր կոշտության 2- 4մմոլ/լ ցուցանիշների դեպքում խմելու ջուրը ամենաքիչն է առնչվում այս կամ այն հիվանդությունների զարգացմանը [11]: Նշենք, որ առաջարկված այս ցուցանիշները եսպես չեն տարբերվում վերը նշված ֆիզիոլոգիական լիարժեքության նորմատիվներից:

Աշխատանքում օգտագործվել են նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2005-2009թթ. տվյալները Հայաստանի մի շարք տարածաշրջաններում մահվան հիմնական պատճառների (բնակչության մահվան դեպքերի) վերաբերյալ, ինչպես նաև Առող-

ջապահության ազգային ինստիտուտի հանրապետական տեղեկատվական կենտրոնի տվյալները նույն տարածաշրջաններում բնակչության ընդհանուր հիվանդությունների, այդ թվում բրոնխիալ կաթնաթորանքի դեպքերի վերաբերյալ: Հետազոտության ընթացքում կիրառվել են վարիացիոն վիճակագրության և դիսպերսիոն վերլուծության մեթոդները Excel ծրագրով:

### Արդյունքները և քննարկումը

Տնտեսական խմելու ջրամատակարարման ժամանակակից հաշվեկշռում Հայաստանի Հանրապետությունում ստորգետնյա աղբյուրները առաջատար դեր են կատարում: Բացառություն են կազմում Դիլիջանը, Բերդը, Արթիկը, Քաջարանը, մասամբ նաև Կապանը և Մեղրին, որոնց ջրամատակարարումը կազմակերպվում է մակերեսային ջրաղբյուրներից՝ մաքրման կայաններում ջրի համապատասխան մաքրումից և վարակազերծումից հետո [2]: Մնացած ջրաղբյուրների դեպքում ջուրը ենթարկվում է միայն վարակազերծման: ՀՀ տարածքում բնական ջրերի քիմիական կազմի ձևավորումը պայմանավորված է առաջին հերթին ֆիզիկաաշխարհագրական պայմաններով, ջրախառնիչ ապարների լիթոլոգիական և մարզի երկրակառուցվածքային առանձնահատկություններով:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքների և բնակավայրերի ջրաղբյուրներում ընդհանուր հանքայնացման ցուցանիշը միջինը 248,5մգ/լ է,  $SD = 138$  (աղ. 1), նշված ջրաղբյուրների շուրջ 30%-ի ընդհանուր հանքայնացման ցուցանիշը ցածր է օպտիմալ մակարդակներից: Հանքայնացման առավել ցածր ցուցանիշներ (<120մգ/լ) են արձանագրվել Արագածի, Թալինի և Աշոցքի շրջանների բնակավայրերի ջրաղբյուրներում: Նշված տարածքներում խմելու ջրի ցածր հանքայնացումը ջրաղբյուրների՝ մթնոլորտային տեղումներով արտահայտված նոսրացման հետևանք է:

Հետազոտված ջրաղբյուրների 7,5%-ի ընդհանուր հանքայնացման ցուցանիշի արժեքը բարձր է 500մգ/լ-ից, այն առավելագույնի (1029մգ/լ) է հասնում Բաղրամյանի շրջանի բնակավայրերի ջրաղբյուրներում: Այս ջրերի քիմիական կառուցվածքի ձևավորման մեջ առաջնային դեր են կատարում ջրախառնիչ ապարները:

ՀՀ քաղաքների և բնակավայրերի հետազոտված ջրաղբյուրներում ընդհանուր կոշտության ցուցանիշը միջինը 2,0մմոլ/լ է,  $SD = 1,35$  (աղ. 1): Բերդ, Տաշիր, Ստեփանավան, Ապարան, Արթիկ, Թալին, Եղեգնաձոր, Ջերմուկ, Գորիս, Ագարակ, Աշոցք, Դիլիջան, Արտաշատ, Վեդի և Աշտարակ քաղաքների և բնակավայրերի ջրաղբյուրներում կոշտության ցուցանիշը ցածր է 2,0մմոլ/լ-ից (այս մակարդակը համապատասխանում է խմելու ջրում

կոշտության աղերի նվազագույն անհրաժեշտ քանակներին): Ընդհանուր առմամբ կոշտության ցուցանիշը հետազոտված ջրաղբյուրների 60%-ի դեպքում ցածր է 2,0մմոլ/լ-ից, ընդ որում, 37,5%-ի դեպքում այն չի գերազանցում 1,0մմոլ/լ-ը: Կոշտության ցուցանիշի 3,5մմոլ/լ և ավելի արժեքներ են արձանագրվել Իջևանի, Մասիսի, Արմավիրի և Բաղրամյանի շրջանների ջրամատակարարման աղբյուրներում:

Ինչպես նշվել է, ըստ մասնագիտական գրականության տվյալների, կալցիումի պարունակությունը խմելու ջրում պետք է լինի 25մգ/լ-ից ոչ պակաս, իսկ մագնեզիումի պարունակությունը՝ 10մգ/լ-ից ոչ պակաս:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պարզել ենք, որ 67% հետազոտված ջրաղբյուրներում կալցիումի պարունակությունը ցածր է 25մգ/լ-ից, ընդ որում, 22,8%-ի դեպքում այն չի գերազանցում 10,0մգ/լ ցուցանիշը: Կալցիումի պարունակության նվազագույն մակարդակներ (5-8մգ/լ) դիտարկվել են Եղեգնաձոր, Թալին, Արթիկ, Բերդ բնակավայրերի ջրաղբյուրներում:

Կալցիումի օպտիմալ պարունակությամբ աչքի են ընկնում Հրազդանի, Ծաղկաձորի, Աբովյանի, Սևանի, Իջևանի, Սպիտակի և Վայքի բնակավայրերի ջրաղբյուրները:

ՀՀ քաղաքների և բնակավայրերի հետազոտված ջրաղբյուրներում մագնեզիումի խտությունը միջինը 10,1մգ/լ է,  $SD = 8,5$  (աղ. 1): Մագնեզիումի պարունակության ցածր մակարդակներ դիտարկվել են Բյուրեղավան, Աշտարակ, Ապարան, Արթիկ, Թալին, Աշոցք, Դիլիջան, Բերդ, Գավառ, Վարդենիս, Մարտունի, Եղեգնաձոր, Ջերմուկ, Գորիս քաղաքների և բնակավայրերի ջրաղբյուրներում, այսինքն՝ շուրջ 68% հետազոտված ջրաղբյուրներում: Մագնեզիումի պարունակության նվազագույն մակարդակներ (1-3մգ/լ) դիտարկվել են Ջերմուկի, Գորիսի, Թալինի, Արթիկի, Եղեգնաձորի, Բերդի ջրաղբյուրներում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քաղաքների և բնակավայրերի հետազոտված ջրաղբյուրների մեծամասնության դեպքում կոշտության աղերի պարունակությունը (ինչպես ընդհանուր կոշտության, այնպես էլ կալցիումի և մագնեզիումի առանձին վերցրած ցուցանիշները) ցածր է առաջարկվող նվազագույն անհրաժեշտ քանակներից:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ բարենպաստ կլիմայական պայմաններում միջին ֆիզիկական բեռնվածության դեպքում օրվա ընթացքում մարդուն անհրաժեշտ է 3լ ջուր, ապա հետազոտված ջրաղբյուրներից ջրի միջոցով օրգանիզմ կարող է անցնել կալցիումի օրական պահանջի (800մգ) միջին 8,7%-ը, մագնեզիումի օրական պահանջի (400մգ) միջին 7,5%-ը (աղ.

**Աղյուսակ 1.**

«Հայքրոմոլոյուդի» ՓԲԸ շահագործվող ստորերկրյա և մակերևութային ջրաղբյուրների խմելու ջրի քիմիական ցուցանիշների միջին մակարդակները 2008-2011թթ. ընթացքում

Ցուցանիշները	Ընդհանուր հանքայնացում, մգ/լ	Կոշտություն, մմոլ/լ	Կալցիում, մգ/լ	Մագնեզիում, մգ/լ	Ֆտորիդներ, մգ/լ
<b>M</b>	248,5 n =200	2,02 n =200	23,2 n =200	10,14 n =200	0,23 n =200
<b>SD</b>	138,4	1,35	16,0	8,5	0,19
առավելագույն	915,0	8,05	90,0	60,0	0,9
նվազագույն	71,7	0,28	5,0	1,0	0

**Աղյուսակ 2.**


Ջրի միջոցով օրգանիզմ անցնող կալցիումի, մագնեզիումի և ֆտորիդների քանակները տարբեր տիրույթներում կրանց պարունակության դեպքում

Ցուցանիշները	Կալցիում (օրական պահանջ), %	Մագնեզիում (օրական պահանջ), %	Ֆտորիդներ (օրական պահանջ), %
<b>M</b>	8,7	7,5	26,5
<b>SD</b>	2,7 - 14,7	1,1 - 13,9	4,6 - 48,5
Առավելագույն	34	45	104
նվազագույն	1,8	0,7	0

2): Առանձին ջրաղբյուրներում, երբ կալցիումի և մագնեզիումի պարունակությունները հասնում են առավելագույն ցուցանիշների (համապատասխանաբար՝ 90 և 60մգ/լ), ջրի միջոցով օրգանիզմ կարող է անցնել նշված էլեմենտների օրական պահանջի 34-45%-ը: Այսպիսով, ՀՀ հետազոտված տարբեր ջրաղբյուրներից ջրի միջոցով օրգանիզմ կարող է անցնել կալցիումի օրական պահանջի միջինը 2,7-14,7%-ը, մագնեզիումի միջինը 1,1-13,9%-ը: Նշենք, որ խմելու ջրում կոշտության աղերի միջին քանակների դեպքում այն կարող է ապահովել նշված տարրերի օրական պահանջի 20-25%-ը:

Բնակչության հիվանդացության և մահացության ցուցանիշների վրա խմելու ջրի քիմիական կազմի ազդեցությունը բացահայտելու նպատակով մեր կողմից առանձնացված տարածքայիններում խմելու ջրի աղային կազմի առանձին ցուցանիշների և բնակչության մահացության և հիվանդացության ցուցանիշների միջև կատարվել է կորելիացիոն վերլուծություն՝ Սպիրմենի ռանգերի մեթոդով, որի արդյունքում հնարավոր չէրզավ հայտնաբերել վիճակագրորեն նշանակալի կապեր: Այնուամենայնիվ, մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ խմելու ջրում մագնեզիումի իոնների պարունակության նվազմանը զուգահեռ՝ բնակչության շրջանում դիտվում է մահվան դեպքերի հաճախացում որոշ հիվանդություններից (սրտամկանի սուր ինֆարկ-

տից և ուղեղի անոթային հիվանդություններից): Այս հանգամանքով պայմանավորված՝ մի շարք բնակավայրերում բնակչության վերը նշված հիվանդություններից մահվան դեպքերի տարածվածության և խմելու ջրում մագնեզիումի իոնների պարունակության տարբեր մակարդակների միջև իրականացրինք դիսպերսիոն վերլուծություն (աղ. 3):



**Նկ.1.** Սրտամկանի սուր ինֆարկտից և ուղեղանոթային հիվանդություններից բնակչության մահացության ցուցանիշները խմելու ջրում մագնեզիումի պարունակության ցածր, միջին և բարձր մակարդակների դեպքում:

Այս վերլուծության արդյունքում պարզել ենք, որ սրտամկանի սուր ինֆարկտից և ուղեղի անոթային

**Աղյուսակ 3.**

ՀՀ մի շարք տարածաշրջաններում սրտամկանի սուր ինֆարկտից և ուղեղի անոթային հիվանդություններից բնակչության մահացության ցուցանիշները խմելու ջրում մագնեզիումի պարունակության տարբեր մակարդակների դեպքում

Մագնեզիումի պարունակության տարբեր մակարդակներ մգ/լ		< 3	4 - 19		>20		
Բնակավայրերը		Արթիկ	Աշոցք	Ստեփանավան	Իջևան	Սևան	Արմավիր
Սրտամկանի սուր ինֆարկտից մահացության ցուցանիշները	2005թ.	84	49	36	115	77	51
	2006թ.	149	68	54	99	79	47
	2007թ.	128	10	60	165	65	90
	2008թ.	86	45	88	124	70	84
	2009թ.	141	42	88	179	65	-
Ուղեղանոթային հիվանդություններից մահացության ցուցանիշները	2005թ.	275	169	78	155	110	-
	2006թ.	161	103	26	173	120	-
	2007թ.	173	130	0	155	103	-
	2008թ.	200	130	68	180	129	-
	2009թ.	187	118	58	132	124	-

*P < 0,05*

հիվանդություններից բնակչության մահացության ցուցանիշները վիճակագրորեն իրարից տարբերվում են խմելու ջրում մագնեզիումի իոնների պարունակության տարբեր մակարդակների դեպքում: Այդ մասին են վկայում դիսպերսիոն վերլուծության հաջորդ փուլում մահացության ցուցանիշների միջև իրականացված վերլուծությունները բազմակի համեմատության մեթոդի Տյուկի ցուցանիշներով, որոնք հնարավորություն են տալիս միմյանց հետ համեմատելու առանձին խմբերի ցուցանիշների միջին արժեքները և փաստելու վիճակագրորեն նշանակալի տարբերությունները: Ինչպես երևում է նկ. 1-ից, նշված հիվանդություններից մահացությունն ամենաբարձրն է այն բնակավայրերում, որտեղ խմելու ջրում մագնեզիումի իոնների պարունակությունը 3մգ/լ-ից ցածր է: Այս դեպքում մեր հետազոտության արդյունքները համընկնում են գիտական այն հետազոտությունների հետ, որոնք առաջ են քաշում այն վարկածը, որ մագնեզիումը առաջին հերթին պաշտպանում և կանխարգելում է հանկարծամահությունը սրտամկանի սուր ինֆարկտից, այլ ոչ թե ընդհանուր առմամբ սրտի իշեմիկ հիվանդություններից [18,22]: Խմելու ջրում մագնեզիումի պարունակության և սրտամկանի սուր ինֆարկտից հիվանդացության կապի վերաբերյալ իրենց աշխատություններում մասնագետները ևս արձանագրել են, որ մագնեզիումի իոնների միջինը 3մգ/լ և ավելի

ցածր պարունակությունները առավել անբարենպաստ ազդեցություն են թողնում:

Այսպիսով, ՀՀ քաղաքների և բնակավայրերի հետազոտված ջրաղբյուրների մեծամասնության դեպքում կոշտության աղերի պարունակությունը (ինչպես ընդհանուր կոշտության, այնպես էլ կալցիումի և մագնեզիումի առանձին վերցրած ցուցանիշները) ցածր է առաջարկվող նվազագույն անհրաժեշտ քանակներից: ՀՀ տարբեր ջրաղբյուրներից ջրի միջոցով օրգանիզմ կարող է անցնել կալցիումի օրական պահանջի միջինը 2,7-14,7%-ը, մագնեզիումի միջինը 1,1-13,9%-ը: Խմելու ջրում մագնեզիումի իոնների պարունակության տարբեր մակարդակների դեպքում դիտարկվեցին ՍՍԻ-ից և ուղեղի անոթային հիվանդություններից բնակչության մահացության ցուցանիշների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Նշված հիվանդություններից մահացությունն ամենաբարձրն էր այն բնակավայրերում, որտեղ խմելու ջրում մագնեզիումի իոնների պարունակությունը միջինը 3մգ/լ-ից ցածր էր:

Հիմնվելով վերը նշված փաստերի և վերլուծությունների վրա՝ անհրաժեշտ ենք համարում մշակել միջոցառումներ՝ ազգաբնակչությանը կալցիումի և մագնեզիումի բավարար քանակներով ապահովելու վերաբերյալ: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Асмангулян Т.А. //Краткий учебник гигиены и экологии человека. – Ереван. – 2000. – С. 175
2. Бабалян Г.Г. //Эколого-гидрохимическая оценка современного состояния некоторых водных объектов Республики Армения. –Ереван. – 2006. – С. 10
3. Королев А.А.// Гигиена питания . – Москва. – 2006. – С.146 -126
4. Онищенко Г.Г. // О санитарно-эпидемиологическом состоянии окружающей среды. – Гиг. и сан. –2013. –№ 2. – С. 4-10
5. Санитарные нормы и правила ,Требования к физиологической полноценности питьевой воды, Постановление Министерства здравоохранения Республики Беларусь.- 25 октября 2012.- №166
6. Calcium and Magnesium in Drinking-Water Public health Significance. Geneva: WHO; 2009. [http://whqlibdoc.who.int/publications/2009/9789241563550\\_eng.pdf](http://whqlibdoc.who.int/publications/2009/9789241563550_eng.pdf)
7. Calderon RL, Hunber P. Epidemiological Studies and the Association of Cardiovascular Disease Risks With Water Hardness, Calcium and Magnesium in Drinking Water Public health Significance. Geneva: WHO; 2009, pp. 108–142
8. Catling LA, Abubakar I, Lake IR, Swift L, Hunter PR. A systematic review of analytical observational studies investigating the association between cardiovascular disease and drinking water hardness. J Water Health 2008, 6:433-42.
9. Chiuvе SE, Sun Q, Curhan GC, et al. Dietary and plasma magnesium and risk of coronary heart disease among women. J Am Heart Assoc 2013, 2:e000114
10. Ctr for Magnesium Educ & Research. Magnesium in Refined vs. Whole Foods. <http://www.magnesiumeducation.com/whole-vs-refined-food>, Accessed 4/19/13,2013
11. Golubev, I.M., Zimin, V.P. (1994). On the standard of total hardness in drinking water. Gig. sanit. 1994, No. 3 : 22-23.
12. Guidelines for Drinking-water Quality. FOURTH EDITION .World Health Organization, 2011.- p.377
13. Kousa A, Moltchanova E, Viik-Kajander M, et al. Geochemistry of ground water and the incidence of acute myocardial infarction in Finland. J Epidemiol Community Health 2004, 58:136-139.
14. Marque S, Jacqmin-Gadda H, Dartigues JF, Commenges D. Cardiovascular mortality and calcium and magnesium in drinking water: an ecological study in edery people. Eur J Epidemiol 2003, 18:305-309.
15. Nerbrand C, Agreus L, Lenner RA, et al. The influence of calcium and magnesium in drinking water and diet on cardiovascular risk factors in individuals living in hard and soft water areas with differences in cardiovascular mortality. BMC Public Health 2003, 3:21-29.
16. Nicklas TA, O'Neil CE, Fulgoni 3rd VL. The role of dairy in meeting the recommendations for shortfall nutrients in the American diet. J Am Coll Nutr 2009, 28(Suppl 1):73S-81S.
17. Nutrients in Drinking Water //Water, Sanitation and Health Protection and the Human Environment, World Health Organization, Geneva , 2005. [www.who.int/water\\_sanitation\\_health/dwq/nutrientsindw.pdf](http://www.who.int/water_sanitation_health/dwq/nutrientsindw.pdf)
18. Rubenowitz, E., Molin, I., Axelsson, Rylander, R. Magnesium in drinking water in relation to morbidity and mortality from acute myocardial infarction. Epidemiology 2000, 11: 416-421.
19. Ruprich, J. et al. System of Monitoring the Environmental Impact on Population Health of the Czech Republic. Subsystem 4: Health effects and risks of human dietary exposure to contaminants from food chain. Report – 2000. (in Czech). Státní zdravotní ústav, Praha, 153-154, 159-160.
20. Sauvant MP, Pepin D. Geographic variation of the mortality from cardiovascular disease and drinking water in a French small area (Puy de Dome). Environ Res 2000, 84:219-227.
21. Schimatschek, H.F. Calcium and magnesium occurrence, significance and analysis. (in German). In: Grohmann, A., Hässelbarth, U., Schwerdtfeger, W. (eds.) Die Trinkwasserverordnung. 4th ed. Erich Schmidt Verlag, Berlin; 2003, 511-515.
22. Teitge, J.E. Incidence of myocardial infarct and the mineral content of drinking water. (in German). Z. Gesamte Inn. Med 1990, 45 (478-485).
23. Ueshima K. Magnesium and ischemic heart disease:a review of epidemiological,experimental, and clinical evidences // The Second Division of Internal Medicine, Iwate Medical University, Morioka, Japan Magnesium Research 2005, 18 (4): 275-84

## РЕЗЮМЕ

## ГИГИЕНИЧЕСКАЯ ОЦЕНКА СОДЕРЖАНИЯ КАЛЬЦИЯ И МАГНИЯ В ПИТЬЕВЫХ ВОДОИСТОЧНИКАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Котанян А.О.

ЕГМУ, Кафедра гигиены и экологии

**Ключевые слова:** питьевая вода, жесткость, кальций, магний, смертность.

В последнее время специалисты профилактической и клинической медицины уделяют все большее внимание биологическому значению содержания солей жесткости в питьевой воде. Жесткость воды обусловлена наличием в ней катионов кальция и магния. Известно, что вышеуказанные элементы, поступающие в организм с пищей из некоторых продуктов, усваиваются плохо. С другой стороны, современный рацион, будучи богатым рафинированными продуктами, не содержит достаточного количества минералов. В связи с этим у большинства взрослого населения регистрируется недостаточность некоторых минералов, в частности, магния. В таких условиях даже малые количества магния в питьевой воде могут иметь определенную роль в исключении или снижении недостаточности этого элемента.

Целью этой работы явились оценка с гигиенической точки зрения химического состава питьевой воды в отдельных регионах РА и выявление возможного влияния этих факторов на здоровье населения.

## КАЛЬЦИЯ И МАГНИЯ В ПИТЬЕВЫХ ВОДОИСТОЧНИКАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В результате исследований выяснилось, что в водоисточниках большинства городов и сел Армении содержание солей жесткости (как общей, так и содержание кальция и магния в отдельности) ниже рекомендуемых минимальных количеств этих элементов. Из разных водоисточников РА с питьевой водой в организм может поступать в среднем от 2,7 до 14,7% кальция и от 1,1% до 13,9% магния суточной потребности.

С целью выявления влияния химического состава питьевой воды на показатели заболеваемости и смертности населения в некоторых регионах Армении проводился корреляционный анализ между отмеченными факторами, в результате которого не были выявлены статистически значимые связи. Однако, в результате проведенного в последующем дисперсионного анализа, при различных уровнях содержания магния в питьевой воде наблюдались статистически значимые различия между распространенностью случаев смерти от острого инфаркта миокарда и сосудистых заболеваний мозга. Самая высокая смертность населения от отмеченных заболеваний наблюдается в тех регионах, где содержание магния в питьевой воде ниже 3мг/л.

## SUMMARY

**HYGIENIC ASSESSMENT OF CALCIUM AND MAGNESIUM CONTENT IN DRINKING WATER SOURCES IN RESPUBLIC OF ARMENIA***Kotanyan A.O.**YSMU, Department of Hygiene and Ecology*

**Keywords:** *drinking water, water hardness, calcium, magnesium, mortality.*

Recently specialists of preventive and clinical medicine have been paying more attention to the biological significance of the hard salt content in drinking water. Hardness of drinking water is determined by cations of calcium and magnesium. It's not a secret that those are taken badly by the organism from many food products. On the other hand, today those food products which include a wide range of purified (refined) products, do not contain enough amount of mineral elements, thus insufficiency of some elements especially of magnesium is registered among the majority of the adults. In such conditions even small quantities of magnesium in drinking water can have a certain role in eliminating or reducing the deficiency of this element.

The aim of this work was to give hygienic evaluation of the chemical composition of drinking water in different regions of the RA and to find out the possible effect of saline composition and some chemical ingredients of drinking water on the health of the population.

The investigations have shown that in overwhelming majority

of the investigated water sources of the RA cities and dwelling places the content of hardness salts (both the general hardness and the indices of calcium and magnesium in particular) are less than minimal recommended amounts of them. Water from different sources of RA cities and dwelling places can provide an organism from 2.7% to 14.7% of calcium and from 1.1% to 13.9% of magnesium from the total daily intake.

To reveal the influence of the drinking water chemical composition on the morbidity and mortality indices of the population we conducted correlation analysis between the morbidity and mortality rates and some indices of the salt composition of drinking water in the selected regions. As a result, we failed to reveal any statistically significant correlations.

However, the further ANOVA test revealed statistically significant differences of incidences of fatal cases caused by the acute myocardial infarction, and cerebral vascular diseases have been observed in case of different levels of magnesium ions in drinking water. Mortality rate because of the mentioned diseases was the highest in the regions where the content of magnesium ions in drinking water was on the average less than 3mg/l.

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԵՐԸ

Սողոմոնյան Մ.Ռ.

ԵՊՀ, իրավագիտական խմբի վարիչ

**Բանալի բառեր՝ քրեական պատասխանատվության սուբյեկտ, իրավաբանական անձ, հանցավոր գործունեություն, քաղաքացիաիրավական պատասխանատվություն, իրավաօրենսդրական բարեփոխումներ:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանվում է, որ **«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ»:**

Մարդու իրավունքների կիրառելիության սկզբունքն իրավաբանական անձանց վրա տարածումը տրամաբանական է և արդարացված: Եվ այն առաջ է բերում նաև իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ անալոգիկ մոտեցումներին և օրենսդրական ամրագրումների անհրաժեշտությանը, մասնավորապես իրավաբանական անձին քրեական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու տեսանկյունից:

Փորձենք վերհանել իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն նախատեսելու նպատակահարմարությունը և հիմքերը, առանձնահատկությունները, դրա կիրառման ակնկալվող արդյունքները:

Ինչպես պատմությունից հայտնի է, դարերով ընդունված է եղել քրեական պատասխանատվության սուբյեկտ ճանաչել մարդուն: Այսինքն՝ հանցագործության բնորոշումը վերաբերվել է կոնկրետ անձի գործողություններին կամ անգործությունը: Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ որոշ հանցագործություններ նույնիսկ ունեցել են կոնկրետ հեղինակներ: Օրինակ՝ «խուլիգանություն» տերմինը, ըստ որոշ աղբյուրների, առաջացել է կոնկրետ անձանց անունից: Այն ծագել է իռլանդական մի ընտանիքի՝ «Հոլիգան» (Hooligan) ազգանունից: Հոլիգան ընտանիքը 18-րդ դարի վերջերին բնակվել է Լոնդոնում և ընտանիքի անդամները հայտնի են եղել իրենց արտառոց և ագրեսիվ վարքագծով: Այդ ընտանիքի վարքագիծն այնքան սկանդալային է եղել, որ հետագայում հասարակական կարգը խախտող անձանց անվանում են «խուլիգաններ» [1]: Ինչպես հայտնի է, հետագայում, արդեն 20-րդ դարում «խուլիգան» տեր-

մինը միջազգայնացվել և իրավական ձևակերպումներ է ստացել:

Ներկայումս իրադրությունը այլ է և որոշ երկրներ իրենց ազգային օրենսդրությամբ քրեական պատասխանատվության սուբյեկտ են ճանաչում ոչ միայն մարդուն, այլ նաև իրավաբանական անձին: Հայաստանի, ինչպես նաև մի շարք այլ երկրների օրենսդրությունները չեն ճանաչում իրավաբանական անձի քրեական պատասխանատվության սկզբունքը: Ավելին՝ Հայաստանի առաջատար քրեագետ գիտնականներից շատերը գտնում են, որ իրավաբանական անձին որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելը հակասում է քրեական իրավունքի սկզբունքներին:

Իրավաբանական անձինք իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ են, որոնց իրավագործություններն ամրագրված են օրենսդրությամբ: Իրավաբանական անձի նշանակությունն իրավունքի տարբեր ճյուղերում ի հայտ է գալիս տարբեր ձևերով և դրա հետ կապված իրավահարաբերություններն առավել զարգացած է հատկապես քաղաքացիական իրավունքի ոլորտում: Թերևս, իրավաբանական անձի հիմնական հատկանիշերից մեկը՝ գույքային առանձնացվածությունը, քաղաքացիական շրջանառության մեջ հիմնական մասնակցության առանձնահատուկ դերակատարումն է:

Ներկայումս իրավաբանական անձինք բավականին զարգացած ինստիտուտներ են և ունեն առանձնահատուկ հատկանիշեր, ինքնավարություն, ինչպես նաև ներկառուցվածքային ինքնուրույն կառավարման մեխանիզմներ: Իրավաբանական անձինք զգալի և բավականին լուրջ դերակատարություն ունեն երկրի տնտեսության մեջ, առողջապահության, սոցիալական, ձեռներեցության ոլորտներում, ինչպես նաև հասարակական հարաբերություններում:

Գաղտնիք չէ, որ որոշակի իրավաբանական անձինք ունենալով մեծ ֆինանսական հնարավորություններ առավել շատ գայթակղություն են ունենում տնտեսության մեջ ազդեցիկ լինելու՝ մեծացնելով կազմակերպության շահույթը, զուգահեռաբար ցանկություն են ունենում կլանել տնտեսության ոլորտներ, դրանով իսկ շուկայից դուրս մղելով փոքր կազմակերպություններին և ձեռներեցներին: Ինչպես ցույց է տալիս փորձը որոշ ազդեցիկ ու խոշոր կազմակերպություններ իրենց գոր-

ծողությունները զուգորդում են օրենքի խախտմամբ՝ տարբեր դրսևորումներով:

Այդպիսի դրսևորումներ են կան նաև այլ ոլորտներում, անկախ ֆինանսական հնարավորություններից՝ առողջապահական հաստատությունների, տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող և այլ կազմակերպությունների կողմից:

Օրինակ. Առողջապահական ոլորտում գործող իրավաբանական անձինք՝ բուժհաստատությունները, դեղատները՝ հատկապես վերջին տարիներին, հաճախ իրականացնում են օրենքով արգելված գործողություններ, բավականին քողարկված մեթոդներով: Մասնավորապես, բուժհաստատություններում արդեն սովորական երևույթ է ապօրինի աբորտի կիրառումը կամ դեղատների կողմից չգրանցված դեղերի վաճառքը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող իրավաբանական անձանց կողմից վերջին տարիներին բավականին շատ տարածում են ստացել անձանց համակարգչային տեղեկատվության չարտոնված օգտագործումը կամ այլ ձևով դրա տարածումը, որի արդյունքում խախտվում են մարդկանց և իրավաբանական անձանց կարևոր իրավունքները: Օրինակ՝ Ֆրանսիայի օրենսդրությամբ նմանատիպ գործողությունները դիտվում են որպես հանցագործություն և քրեական օրենսգրքով համակարգչային հանցագործություններ կատարելու համար իրավաբանական անձի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ՝ տուգանքի տեսքով, ընդ որում՝ հինգ անգամ ավելի շատ քան նույն արարքը ֆիզիկական անձանց համար, կամ իրավաբանական անձի հարկադիր լուծարում, կամ ձեռնարկատիրական գործունեության տեսակներով կամ դրանց որոշ մասով գործունեության արգելում, կամ 5 տարի ժամկետով դադարեցում և այլն [2]:

Այսպիսով, իրավաբանական անձանց նկատմամբ առավել խիստ՝ քրեական պատասխանատվության միջոցների սահմանումը և կիրառումը, ի տարբերություն քաղաքացիական և վարչական պատասխանատվության միջոցների, կարող է կանխարգելիչ և կարգավորիչ նշանակություն ունենալ:

Այսինքն, առաջին հերթին իրավաբանական անձին ճանաչելով, որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ, հնարավորություն է ընձեռնում լուծելու պետության համար խնդիր հանդիսացող կազմակերպությունների ամենաթողության միջավայրը՝ քրեաիրավական պատժամիջոցների կիրառման միջոցով հնարավորինս նեղացնելով այն հնարավոր սողանցքները, որոնք հնարամտորեն օգտագործում են իրավաբանական անձինք:

Ֆիզիկական անձը կամ անձինք ստեղծելով իրա-

վաբանական անձ, նրան օժտում են որոշակի նպատակներով, գործառույթներով, գույքով և ինքնուրույն հանդես գալու հնարավորություններով: Այս դեպքում և անձը, և իր կողմից ստեղծված իրավաբանական անձն ինքնուրույն և հավասար սուբյեկտներ են հանդիսանում: Իրավունքի առջև հավասարության հատկանշական բնորոշում է տալիս Վ. Ներսեսյանցը. «Իրավունքի բոլոր սուբյեկտները (ոչ միայն պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, այլ նաև՝ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք), անկախ իրենց իրավական կարգավիճակի տարբերություններից և իրավունքի իրագործման գործընթացում նրանց դերից հասարակական կյանքում՝ իրավահարաբերություններում հանդես են գալիս որպես ձևականորեն հավասար սուբյեկտներ: Ինչպես արդարացիորեն ասել է Ցիցերոնը. **քաղաքացիների ազատությունը պաշտպանելիս չկան մասնավոր անձինք:**» [3]: Թերևս այս միտքը սույն հոդվածի առարկայի համար կարևոր հիմնավորում կարող է լինել:

Չակիրճ վերհանենք իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մասին արտերկրյա փորձը և օրենսդրությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրավաբանական անձին, որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելը, բավականին մոտիվացված է և պատասխանատվության միջոցները խելամիտ մոտեցումներով են:

Մասնավորապես. ԱՄՆ-ի քրեական օրենսդրությամբ սահմանվում է, որ կազմակերպությունը պատասխանատու է առևտրային գործունեությունում խաբեության և կաշառակերության համար [4]: Ֆրանսիայի քրեական օրենսգրքով իրավաբանական անձը կարող է լինել այնպիսի հանցագործությունների սուբյեկտ, ինչպիսին է օրինակ խաբեությունը, վստահության չարաշահումը, գույքի ձեռք բերումը հանցավոր ճանապարհով և այլն [5]: Կանադայում գոյություն ունի «Մենդային և բուժիչ միջոցների մասին» օրենք, որով արգելվում է օրինակ հայտարարել, որ որևէ արտադրանք կարող է կանխարգելել, բուժել՝ ալկոհոլիզմը, քաղցկեղը, դեպրեսիան, սրտային, երիկամային հիվանդություններ, պոլիոմելիտ և այլն: Այս օրենքի խախտման համար Կանադայի օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսվում [6]: Ճապոնիայում կազմակերպությունը կարող է ճանաչվել քրեական պատասխանատվության սուբյեկտ՝ հարկային օրենսդրության խախտման համար:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ արտերկրյա պրակտիկայի վերլուծությունը հիմք է տալիս վերհանել դրա կիրառ-

ման հետևյալ հիմնավորումները.

- ◆ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը չի բացառում նաև ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելը, ինչն իր հերթին պահպանում է անձնական պատասխանատվության սկզբունքը,
- ◆ իրավաբանական անձն օրենսդրության կողմից ընդունվում է որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, որը գոյություն ունի անկախ ֆիզիկական անձանցից: Եվ այս պարագայում հնարավոր է իրավաբանական անձին մեղավոր ճանաչել հանցագործությունների առանձին տեսակների կատարման մեջ,
- ◆ իրավաբանական անձանց համար միայն քաղաքացիական, վարչական և այլ իրավական պատասխանատվության տեսակները չեն արտացոլում իրավաբանական անձանց կողմից կատարվող գործողությունների հասարակական վտանգավորությունը և պատժելիության համարժեքությունը:

Հայաստանում քրեագիտական քննարկումներում կամ հետազոտություններում դեռևս չի արձանագրվել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ որևէ շարունակական գործընթաց կամ քննարկումներ, այդ թվում 1996 թվականի մայիսի 24-ին Հայաստանի Ազգային ժողովի կողմից քրեական օրենսգրքի ընդունմանը նախորդած ժամանահատվածում: Իհարկե ասվածից բացառություններ կան և որոշակի իրավագիտական ամբիոններում՝ քննարկվող առարկայի շուրջ հիմնավորումներ ու վերլուծություններ առկա են [7]:

Թերևս ընդունված է համարել, որ հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հասել է օրենքով սահմանված հասակի, քանի որ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը հակասում է անձի մեղսունակության պատասխանատվության սկզբունքին և իրավաբանական անձը զուրկ է մարդկային ֆիզիկական հատկանիշերից, այն չի կարող ազատագրվել, որոնք սակայն քրեական պատիժների հիմնական տեսակներն են: Եվ վերջապես ընդունված է իրավաբանական անձանց գործունեության օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնել միայն քաղաքացիական, հարկային, ֆինանսական իրավունքի սահմաններում՝ սահմանելով միայն նյութական պատասխանատվություն: Կարծիքներ կան նաև այն մասին, որ նպատակահարմար չէ իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն սահմանել, քանի որ, օրի-

նակ ձեռնարկատիրական գործունեության ընթացքում օրենքի խախտումները կարելի է վերացնել քաղաքացիաիրավական միջոցներով:

Սակայն գտնում ենք, որ քրեական պատասխանատվությամբ պաշտպանվող հարաբերությունների խախտման դեպքում՝ քաղաքացիաիրավական, վարչաիրավական միջոցների կիրառումով բավարարվելն անթույլատրելի է, քանի որ իրավունքի այդ ճյուղերի պատժամիջոցները չեն արտացոլում իրավաբանական անձանց կողմից կատարվող գործողությունների հասարակական վտանգի փաստացի աստիճանը:

Այսպիսով, իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե հասարակական վտանգավորություն ներկայացնող գործողությունները կատարվել են ֆիզիկական անձանց կողմից, միտումնավոր՝ ի շահ իրավաբանական անձի: Ընդ որում, քրեական պատասխանատվության սուբյեկտներ չեն կարող լինել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմավորումները (հիմնարկ, ստորաբաժանում, առանց պետական գրանցման հասարակական կազմակերպություն):

Իրավաբանական անձը պետք է պատասխանատվություն կրի իր մարմինների (տնօրենների խորհուրդ, գործադիր մարմին) որոշումների հասարակական վտանգավոր արարքների համար: Բնականաբար այս դեպքում չի կարելի բացառել նաև զուգահեռ ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության հնարավորությունը:

Անհրաժեշտ է վերանայել մեր մոտեցումները իրավաբանական անձանց ապօրինի գործողությունների համար զսպաշապիկներ սահմանելու առումով և քննարկումներ ծավալել, ուշադրության կենտրոնում պահել իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ իրավական բարեփոխումների անհրաժեշտության հարցը՝ կարգավորիչ և կանխարգելիչ որոշ մեխանիզմներ ներմուծելով օրենսդրության մեջ: Ինչպես արդեն վերն ասվեց, այս առումով ուսանելի է մի շարք արտերկրյա պետությունների փորձը, որտեղ ակնհայտ է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ոչ միայն հնարավոր, այլև երբեմն նաև անհրաժեշտ միջոց է:

Հատկապես կարևոր է այս հարցը քննարկել Հայաստանի անցումային շրջանում և ներկայումս իրականացվող իրավական բարեփոխումների գործընթացների ներքո, հաշվառելով նպատակահարմարությունը, անհրաժեշտությունը և ուսումնասիրելով արտերկրյա հաջողված իրավակիրառար փորձը: Գտնում ենք հնարավոր է և անհրաժեշտ ներդնելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկե-

լու ինստիտուտը ազգային օրենսդրության մեջ, դրանց հաղորդելով որոշակի առանձնահատկություններ:

Հաշվի առնելով, որ իրավաօրենսդրական բարեփոխումներն անընդհատ իրականացվող գործընթաց է և այդ գործընթացի շարունակականության նպատակն օրենսդրության բարելավումն է, կարևորում ենք իրավական բարեփոխումների ուշադրության կենտրոնը բևեռել նաև քրեական օրենսդրությանը: Ուսումնասիրելով արտերկրյա փորձը և համադրելով հայաստանյան օրենսդրությունն ու իրավապրակտիկան, առկա իրադրությունը, հանգում ենք եզրակացության, որ Հայաստանի քրեական օրենսդրության բարեփոխումները կարող են դրական արդյունքերի նախադրյալ լինել: Խոսքը չի վերաբերում միայն սույն հոդվածի առարկա

հանդիսացող՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու խնդրին, այլ գտնում ենք, որ լուրջ հետազոտությունների առարկա կարող է լինել նաև քրեական օրենսգրքում պատժաչափերի առավել հստակեցման հարցը, առանձին իրավիճակների համար հնարավորինս որոշակիացնելով պատժաչափը: Այս ուղղությամբ օրենսդրական բարեփոխումները կարող են կոռուպցիայի դեմ պայքարի լուրջ հնարավորություններ լինել:

Գտնում ենք, որ թվարկված փաստարկները արդարացնում են սույն հոդվածով բարձրացված հարցերի անհրաժեշտությունը և արդիականությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Власов В.П., Лубшев Ю.Ф., Борьба с хулиганством, 1972.
2. Ֆրանսիայի Քրեական օրենսգիրք, 1992.
3. «Իրավունքի և պետության տեսություն», Վ. Ներսեսյանց, թարգմանությունը իրավագիտության դոկտոր Վ. Լազարյանի, Երևան, 2001.
4. ԱՄՆ Քրեական օրենսգիրք.
5. Ֆրանսիայի Քրեական օրենսգիրք, 1992.
6. Снайдер Д.Л., Преступления корпораций в Канаде, Предварительный доклад (Перевод с англ. В.Г. Стоянов, Canadian Journal of Criminology, 1978. Т. 20., № 2., С. 142-163).
7. Зограбян Н.Ю. Проблемы квалификации преступлений по признакам субъекта /Дис. канд. юр. наук, Ереван, 2009/.

## РЕЗЮМЕ

### УГОЛОВНЫЕ ПРИЗНАКИ ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

Согомонян М.Р.

ЕГМУ, заведующий группы правоведения

**Ключевые слова:** субъект уголовной ответственности, юридическое лицо, преступная деятельность, гражданско-правовая ответственность, законодательные реформы.

В данной статье рассматриваются основания, особенности и целесообразность признания юридических лиц, в том числе медицинских учреждений, предприятий, и иных организаций субъектами уголовной ответственности, учитывая значитель-

ную роль юридических лиц в экономике страны, в сфере здравоохранения, в различных сферах предпринимательства, а также в общественной и политической жизни. Статья может послужить основанием для предотвращения незаконных действий юридических лиц, разработки концепции об ограничении их возможностей и реализации законодательных реформ.

## SUMMARY

### CRIMINAL ELEMENTS IN LEGAL LIABILITY OF LEGAL ENTITIES

Soghomonyan M.R.

YSMU, Law Programme Chair

**Keywords:** subject of criminal liability, legal entity, criminal activity, civil/legal liability, legislative reforms.

This article studies the expediency of recognizing - legal entities inter alia medical institutions, corporations and other organisations - as subject of criminal liability, the grounds and specificities thereof and the expected outcomes of such application of law. These aspects are studied having due regard to the signifi-

cant role legal entities play in economy, healthcare sector, in different fields of entrepreneurship and in social as well as political life. The article can serve a ground for preventing illegal actions of legal entities and for designing a concept paper on forcing a strait-jacket for legal entities into the law machinery and implementing relevant legal and legislative reforms.

ՉՏԴ. 615.917.2/9+543/632.911

## ՈՐՈՇ ԶԱԿԱԿՈՒՈՉԻՈՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ԶԻԳԻԵՆԻԿ-ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՐԱՏՈՒՄԸ

Պողոսյան Ս.Բ., Ճանճապանյան Ա.Ն., Տեր-Չաքարյան Ս.Յ., Դալայան Ս.Յ.  
ԵՊԲՀ ԳՀԿ շրջակա միջավայրի հիգիենայի և թունաբանության լաբորատորիա

**Բանալի բառեր`** ազգաբնակչության առողջություն, թունավոր արտամղումներ, հիգիենա, թունաբանություն:

Ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում ամեն տարի ներդրվում են բազմաթիվ պոլիմերներ, որոնց թվում վերջերս լայն կիրառում ստացած պոլիմերային պատվածքները՝ նախատեսված խմելու ջուրը ամբարելու, արտադրական տարբեր տարածքների, տարողությունների ներքին մակերևույթները քայքայումից պահպանելու համար: Սակայն երկարատև շփման դեպքում դրանք կարող են արտամղել քիմիական միացությունների մի ամբողջ բարդ համալիր՝ բաղկացած չպոլիմերացված մոնոմերների մագորդներից, շղթաների տարբեր երկարությամբ օլիգոմերներից, պոլիմերացմանը մասնակցած բազմաթիվ այլ արգասիքներից: Ակնհայտ է, որ նման ծածկույթները լայն կիրառության դեպքում պետք է ենթարկվեն մանրակրկիտ ընտրության և հիգիենիկ հետազոտության, քանի որ հատկապես խմելու ջրի ամբարման համար կիրառելիս արտամղված միացությունների ներթափանցումը այսպես թե այնպես կիջեցնի խմելու ջրի որակը՝ հնարավոր ռիսկեր առաջացնելով առողջության նկատմամբ:

### Աշխատանքի նպատակը

Ջրամատակարարման համակարգում որպես պատվածք գործածելու դեպքում էպօքսիդային մածուկի և հիդրոմեկուսիչ բաղադրանյութի թունաբանա-հիգիենիկ գնահատումը՝ ազգաբնակչության առողջության նկատմամբ հնարավոր վնասակար ազդեցությունները բացահայտելու համար:

### Չետազոտությունների նյութն ու մեթոդները

Չետազոտության առարկա են եղել հայրենական արտադրության հակակոռոզոն էպօքսիդային մածուկը և հիդրոմեկուսիչ բաղադրանյութը, որոնք նախատեսված են խմելու ջրի ամբարման տարողությունները, ջրավազանների ներքին մակերեսները պատելու համար:

Էպօքսիդային մածուկը բարդ համադրություն է, որը կազմված է պլաստիֆիկացնող, ամրացնող և տարբեր այլ բաղադրիչներից:

Չիդրոմեկուսիչ բաղադրանյութի կազմում պոլիմերացմանը անհրաժեշտ այլ միացությունների հետ մեկ-

տեղ կան պոլիվինիլսպիրտ,  $\text{Na}^+$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Cl}^-$  իոններ պարունակող միացություններ: Էպօքսիդային մածուկը պատրաստվում է օգտագործելուց անմիջապես առաջ՝ նրա երկու բաղադրիչները միմյանց խառնելով, մինչև համասեռ զանգված ստանալը:

Չետազոտությունները անցկացվել են լաբորատոր, բնականին մոտ և ագրավացված պայմաններում՝ համաձայն համապատասխան մեթոդական ցուցումների [1-3]՝ հաշվի առնելով օգտագործման տեխնոլոգիական պահանջները: Ռեսուլտատները էպօքսիդային մածուկի հիմնական բաղադրիչը խառնվել է պլոնցուցիչի հետ 10:1 հարաբերությամբ և 3 շերտով քսվել առարկայական ապակիների վրա՝ սկզբնական 2 շերտերը չորացնելով 12-ական ժամ, վերջինը՝ 7 օր տևողությամբ: Այնուհետև քսված ապակիները լվացվել են թորած ջրով և ընկղմվել թորած ջրի մեջ հետևյալ հաշվարկով. հետազոտվող նյութի մակերեսի և առնչվող միջավայրի հարաբերությունը 1:20 (բնական պայմաններին մոտ) և 1:10 ու 1:1 սմ<sup>2</sup>/մլ հարաբերությամբ (ագրավացված պայմաններ): Ջրի շերտաստիճանը լցնելու պահին 20°C է: Ջրային հանուկները պահպանվել են 24-72 ժամ 35-38°C պայմաններում:

### Սանիտարա-քիմիական հետազոտություններ

Ելնելով էպօքսիդային մածուկի բաղադրությունից՝ ուսումնասիրվող միջավայրում սպասելի էին հետևյալ վնասակար նյութերի արտամղումները՝ էպիքլորհիդրին (ԵՊՀ), որի արտամղման թույլատրելի չափաբանակը (ԱԹՉ) 0,1մգ/լ է, պոլիէթիլենպոլիամին (ՊԵՊԱ), որի սահմանային թույլատրելի քանակը (ՍԹՔ) 0,005մգ/լ է և դիբուքիլֆտալատ (ԴԲՖ), որի ԱԹՉ-ն 0,2 մգ/մլ է:

ԵՊՀ-ի քանակական որոշումը իրականացվել է մոդելային հանուկների նմուշների գազային քրոմատոգրաման մեթոդով, ԴԲՖ-ն՝ նրբաշերտ քրոմատոգրաման, ՊԵՊԱ-ն՝ ֆոտոմետրման եղանակով [4]:

Չիդրոմեկուսիչ բաղադրանյութի ազդեցությունը մոդելային ջրամբարի սանիտարական ռեժիմի վրա որոշվել է ԹԿՊ-ով (թթվածնի կենսաբանական պահանջ), «ջրամբարի» մանրէական սերմանումով: Բաղադրանյութից «ջրամբարի» ջուր տարաշարժվող իոնների՝  $\text{Na}^+$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Cl}^-$  չափաբանակները ջրում որոշելը նպատակահարմար չի եղել այն պատճառով, որ

**Աղյուսակ 1**

Էպոքսիդային մածուկի սանիտարա-քիմիական հետազոտությունների արդյունքները

Փորձի ընթացքը	Հարաբերակցություն (սմ <sup>2</sup> /մլ)	Լցման ու պահման ջերմաստիճան (°C )	Պահման ժամկետը (ժամ)	Ցուցանիշներ				
				ԷՊՀ (մգ/լ)	ՊԷՊԱ (մգ/լ)	ԴԲՖ (մգ/լ)	Օքսիդայնություն (մգ/Օ <sub>2</sub> /լ)	Բրոմայնություն (մգ/լ)
1-ին լցումից հետո	1:20	35-38	24	0	0,06	0	3,4	0
Նույն նմուշների ու «ավազանի» ողողումից ու 2-րդ լցումից հետո	1:20	35-38	24	0	0,02	0	1,2	0
Նույն նմուշների ու «ավազանի» ողողումից ու 3-րդ լցումից հետո	1:20	35-38	24	0	0	0	0	-
Նույն նմուշների ու «ավազանի» ողողումից ու 3-րդ լցումից հետո	1:10	35-38	24	0	0,066	0	0	-
Նույն նմուշների ու «ավազանի» ողողումից ու 4-րդ լցումից հետո	1:20	35-38	24	-	0	-	-	-
	1:10	35-38	24	-	0	-	-	-
	1:1	35-38	24	-	0	-	-	-
Նույն նմուշների ու «ավազանի» ողողումից ու 5-րդ լցումից հետո	1:20	35-38	96	-	0	-	-	-
	1:10	35-38	96	-	0	-	-	-
	1:1	35-38	96	-	0	-	-	-

տեխնոլոգիական կիրառման դեպքում անգամ «ագրավացված» պայմաններում, եթե նույնիսկ այդ իոններից յուրաքանչյուրը տարաշարժի 100%-ով, ապա այն չի գերազանցի ջրամբարներում հաստատված հիգիենիկ պահանջները: Հիդրոմեկուսիչ բաղադրանյութի մյուս բաղադրիչ պոլիվինիլսպիրտը օգտագործվում է դեղորայքի պարկուճները պատրաստելու համար: Մնացած այլ բաղադրիչների տարաշարժը դեպի մոդելային ջրամբար ուսումնասիրվել է նմուշների ջրածնային ցուցիչով рН և պերմանգանատային օքսիդացմամբ [4]:

Ծածկույթներով պատված մոդելավորված տարողությանների մեջ պահվող ջրի նկատմամբ կատարվել են զգայորոշման հետազոտություններ՝ համի, հոտի, պղտորության, նստվածքի առկայության վերաբերյալ:

**Թունաբանական հետազոտություններ**

Թունաբանական հետազոտություններն իրականացվել են՝ ելնելով պատվածքների կիրառման բնագավառներից՝ ըստ ընդունված մեթոդական ցուցումների [5-9]: Օգտագործվել են սեռահասուն, երկսեռ առնետներ ստուգիչ և փորձնական խմբերով: Արտամոլված հնարավոր վնասակար նյութերի ազդեցությունը ուսումնասիրվել է բրոնխիալ փորձով: Առնետները ջրի փոխարեն երկարատև խմել են «ավազանը» պատող ծածկույթների հետ շփման մեջ եղած մոդելային ջրային հանուկը: Ուսումնասիրությունների ընթացքում որպես թունավոր ազդեցության չափանիշ ծառայել է կենդանիների ընդհանուր զգացողությունը, վարքի փոփոխությունը, թունավորման կլինիկական պատկերն ու ախտանշանների ի հայտ գալու ժամանակը, առնետների անկման փաստն ու ժամանակը, մաշկային ծածկույթների և տեսանելի լորձաթաղանթների վիճակը, մարմնի զանգվածի դինամիկան, ախտաբանա-անատոմիական զննումն

ու այլ ցուցանիշներ [5]: Իրականացվել է առնետների ծայրամասային արյան շրջանառության ձևավոր տարրերի քանակական ուսումնասիրություն [6]: Կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիոնալ վիճակը գնահատվել է՝ առնետների նախաշեմբային էլեկտրական իմպուլսների գումարը (СПГ) որոշելով [7]: Լյարդի ֆունկցիոնալ վիճակը գնահատվել է արյան շիճուկում ամինոտրանսֆերազների ակտիվությամբ, երիկամների՝ օրական դիուրեզի /օրամեզի/, մեզի տեսակարար կշռի և արյան շիճուկում միզանյութի բաղադրությամբ [6]: Յուրաքանչյուր փորձի ավարտին կատարվել է փորձակենդանիների դիախերձում, զննվել են ներքին օրգանները, վերջիններս կշռվել և հաշվարկվել են ներքին օրգանների կշռային գործակիցները:

Պատվածքների հանուկների հնարավոր ալերգիկ ակտիվությունը գնահատվել է սկարիֆիկացնող նմուշով, հակազենով, էլյկոցիտների լիզոսին բնորոշ ռեակցիայով (РСЛЛ) և էլյկոցիտներին բնորոշ ազլոմերացիայով (РСАЛ): Որպես հակազեն ծառայել են պատվածքների ջրային հանուկները [8,9]: Հետազոտությունների արդյունքները մշակվել են վարիացիոն վիճակագրության ընդունված մեթոդներով [10]:

Հետազոտությունների ավարտին կատարվել է կենդանիների դիախերձում, ներքին օրգանների արտաքին զննում, վերջիններս կշռվել են, և հաշվարկվել են նրանց կշռային գործակիցները:

**Հետազոտության արդյունքները**

Սանիտարա-քիմիական հետազոտություններ

Էպոքսիդային մածուկով պատված մոդելային տարողությունը 4 անգամ դատարկելուց և ողողելուց ու նորից լցնելուց հետո ջրային հանուկներում հայտնաբերվել է ՊԷՊԱ՝ սահմանային թույլատրելի քանակնե-

**Աղյուսակ 2**

Հիդրոմեկուսիչ բաղադրանյութի սանիտարա-բիմիական հետազոտությունների արդյունքները

Ցուցանիշներ	Խմբեր	1ժ	Հետազոտության ժամկետը (օրեր)									
			1	3	5	7	10	15	30	60	90	
1-ին սերիա												
pH	Փ	12,0	11,0	11,0	11,1	11,1	11,1	11,1	11,1	10,9	10,9	10,8
	Ս	6,50	6,60	6,40	6,60	6,80	6,50	6,80	6,70	6,80	6,70	6,70
Պերմանգանատային օքսիդացում	Փ	1,12	4,56	4,08	6,32	4,16	4,82	4,46	4,56	4,36	4,45	4,45
ԹԿՊ	Փ	-	-	-	0,49	-	-	-	-	-	-	-
	Ս	-	-	-	0,48	-	-	-	-	-	-	-
2-րդ սերիա												
pH	Փ	9,3	10,3	10,0	9,7	9,6	9,0	9,0	9,0	9,0	9,0	9,0
	Ս	6,5	5,8	5,8	6,0	5,7	6,0	6,2	6,1	6,2	6,2	6,2
Պերմանգանատային օքսիդացում	Փ	1,04	2,0	2,64	2,08	2,48	2,16	2,0	2,22	2,12	2,10	2,10
ԹԿՊ	Փ	-	-	-	0,50	-	-	-	-	-	-	-
	Ս	-	-	-	0,46	-	-	-	-	-	-	-

Փ - փորձնական; Ս - ստուգիչ; ԹԿՊ – թթվածնի կենսաբանական պահանջ:

**Աղյուսակ 3**

Փորձակենդանիների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը բնորոշող որոշ ցուցանիշները էպօքսիդային մածուկից արտանդված վնասակար նյութերով քրոնիկական թունավորման դեպքում

Ցուցանիշներ	Վիճակագրական մեծություններ	Փորձնական խումբ	Ստուգիչ խումբ
Մարմնի զանգված (կգ)	$X \pm S \bar{x}$ P	0,206±0,045 >0,05	0,196±0,022
ԿՆՀ-ի նախաշեմբային իմպուլսների գումար (պ.մ.)	$X \pm S \bar{x}$ P	3,7±0,2 >0,05	3,9±0,1
Հեմոգլոբինի բաղ. արյան մեջ (Գ/L)	$X \pm S \bar{x}$ P	152,9±5,7 >0,05	161,3±3,4
Էրիթրոցիտների քանակը արյան մեջ ( $10^{12}/L$ )	$X \pm S \bar{x}$ P	5,2±0,1 >0,05	5,3±0,08
Լեյկոցիտների քանակը արյան մեջ ( $10^9/L$ )	$X \pm S \bar{x}$ P	9,0±0,2 >0,05	9,9±0,8
AcT-ակտիվությունը արյան շիճուկում (մմոլ/լժ)	$X \pm S \bar{x}$ P	0,71±0,02 >0,05	0,74±0,04
AlT-ակտիվությունը արյան շիճուկում (մմոլ/լժ)	$X \pm S \bar{x}$ P	1,50±0,08 >0,05	1,60±0,2
Միզանյութի բաղադրությունը արյան շիճուկում (մմոլ/լ)	$X \pm S \bar{x}$ P	6,30±0,3 >0,05	7,60±1,6
Օրական դիուրեզ (մլ)	$X \pm S \bar{x}$ P	3,9±0,7 >0,05	3,3±0,12
Մեզի տեսակարար կշիռը (գ/լ)	$X \pm S \bar{x}$ P	1,029±0,08 >0,05	1,041±0,06
Միզանյութի բաղադրությունը մեզում (մմոլ/24ժամ)	$X \pm S \bar{x}$ P	197,0±3,0 >0,05	193,0±3,0

**Աղյուսակ 4**

Առնետների ներքին օրգանների կշռային գործակիցները էպոքսիդային մածուկի ջրային հանուկով քրոնիկական թունավորումից հետո

Ներքին օրգաններ	Վիճակագրական մեծություններ	Փորձական խումբ	Ստուգիչ խումբ
Ուղեղ	$X \pm S \bar{x}$ P	7,4±0,4 >0,05	8,3±1,3
Սիրտ	$X \pm S \bar{x}$ P	4,5±0,1 >0,05	3,9±0,4
Թոքեր	$X \pm S \bar{x}$ P	7,9±0,9 >0,05	6,6±1,4
Լյարդ	$X \pm S \bar{x}$ P	31,4±1,7 >0,05	31,4±1,9
Փայծաղ	$X \pm S \bar{x}$ P	4,3±0,4 >0,05	3,3±0,7
Երիկամներ	$X \pm S \bar{x}$ P	7,2±0,3 >0,05	6,9±0,6
Մակերիկամներ	$X \pm S \bar{x}$ P	0,35±0,07 >0,05	0,25±0,10

**Աղյուսակ 5**

Փորձակենդանիների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը բնորոշող որոշ ցուցանիշներ հիդրոմեկուսիչ բաղադրակազմի արտամղված վնասակար նյութերով քրոնիկական թունավորման դեպքում

Ցուցանիշներ	Վիճակագրական մեծություններ	Փորձական խումբ	Ստուգիչ խումբ
Մարմնի զանգված (կգ)	$X \pm S \bar{x}$ P	0,151±0,041 >0,05	0,164±0,07
ԿԼՅ-ի նախաշեմքային իմպուլսների գումար (պ.մ.)	$X \pm S \bar{x}$ P	5,1±0,4 >0,05	5,2±0,3
Յնոզոլորբիլի բաղ. արյան մեջ (Գ/Լ)	$X \pm S \bar{x}$ P	159,3±11,3 >0,05	151,3±7,1
Էրիթրոցիտների քանակը արյան մեջ (10 <sup>12</sup> /Լ)	$X \pm S \bar{x}$ P	3,4±0,1 >0,05	3,1±0,4
Լեյկոցիտների քանակը արյան մեջ (10 <sup>9</sup> /Լ )	$X \pm S \bar{x}$ P	11,4±0,7 >0,05	10,9±0,9
ԱՇԾ- ակտիվությունը արյան շիճուկում (մմոլ/լ/ժ)	$X \pm S \bar{x}$ P	1,70±0,02 >0,05	1,70±0,02
ԱՄԾ- ակտիվությունը արյան շիճուկում (մմոլ/լ/ժ)	$X \pm S \bar{x}$ P	1,90±0,07 >0,05	1,90±0,08
Միզանյութի բաղադրությունը արյան շիճուկում ( մմոլ/լ)	$X \pm S \bar{x}$ P	9,86±0,77 >0,05	9,80±1,3
Օրական դիուրեզ (մլ)	$X \pm S \bar{x}$ P	1,6±0,5 >0,05	1,2±0,3
Մեզի տեսակարար կշիռը (գ/լ )	$X \pm S \bar{x}$ P	1,039±0,007 >0,05	1,037±0,004
Միզանյութի բաղա-դրությունը մեզում (մմոլ/24ժամ)	$X \pm S \bar{x}$ P	652,8±55,9 >0,05	629 ,0±55,9

**Աղյուսակ 6**

Առնետների ներքին օրգանների կշռային գործակիցները հիդրոմեկուսիչ բաղադրանյութի ջրային հանուկով քրոնիկական թունավորումից հետո

Ներքին օրգաններ	Վիճակագրական մեծություններ	Փորձնական խումբ	Ստուգիչ խումբ
Ուղեղ	$X \pm S \bar{x}$ P	8,9±0,7 >0,05	8,3 °0,5
Սիրտ	$X \pm S \bar{x}$ P	7,3±0,4 >0,05	7,0±0,6
Թոքեր	$X \pm S \bar{x}$ P	8,7±0,9 >0,05	7,2±0,6
Լյարդ	$X \pm S \bar{x}$ P	28,7 °2,6 >0,05	25,2 °2,0
Փայծաղ	$X \pm S \bar{x}$ P	7,4±0,5 >0,05	6,7±0,5
Երիկամներ	$X \pm S \bar{x}$ P	8,2 °1,2 >0,05	7,8±0,5
Մակերիկամներ	$X \pm S \bar{x}$ P	2,7±0,1 >0,05	2,5±0,2

րով (աղյուսակ 1): Տարողությունը 5-րդ անգամ լցնելուց և 4 օր պահելուց հետո ջրում ՊԷՊԱ չի հայտնաբերվել: Մոդելավորված ջրի հանուկներում ԷՊՅ և ԴԲՖ չի հայտնաբերվել հետազոտության և ոչ մի փուլում: Մոդելավորված ջրի բրոմացման ցուցանիշը չի տարբերվել ստուգիչ նմուշի նույն ցուցանիշից:

Փորձարկվող հարաբերակցությամբ Էպօքսիդային մածուկի ջրային հանուկները զգայորոշման ցուցանիշների նկատմամբ հավաստի փոփոխություններ չեն առաջացրել: Հիլզերոդ անգամ 1:20 և 1:10 սմ<sup>2</sup>/մլ հարաբերությամբ պատված տարողությունները լցնելուց և ողողելուց հետո ջրի մոդելային նմուշները կողմնակի համ, հոտ, գունավորում, նստվածք չեն ունեցել: Հիդրոմեկուսիչ բաղադրանյութի ուսումնասիրումը ցույց է տվել, որ տարբեր ջերմային ռեժիմներում (+5°, +20°, +37° և >80°) մոդելավորված «ավազանների» ջրին այն չի հաղորդում կողմնակի համ և հոտ, չի պղտորում, փրփրեցնում, գունավորում և նստվածք չի առաջացնում:

Հիդրոմեկուսիչ բաղադրանյութով պատված «ավազանի» ջրում թթվածնի կենսաբանական պահանջի և մանրէական սերմանման հավաստի փոփոխություններ չեն առաջացրել (աղյուսակ 2), սակայն ջրի մոդելների ագրավացված (1:1) պայմաններում արձանագրվել է տհաճ հոտ և տտիպ համ, որոնք փորձի ընթացքում աստիճանաբար ուժգնանում են ստուգիչի նկատմամբ: Ելնելով նշվածից՝ հիդրոմեկուսիչ բաղադրանյութը ջրամատակարարման մեջ կիրառելու դեպքում խորհուրդ է տրվել խստորեն պահպանել տեխնոլոգիական պայմանները, որոնք անվտանգ կիրառման երաշխիք են:

Թունաբանական հետազոտություններ

Էպօքսիդային մածուկի ջրային 1:20 սմ<sup>2</sup>/մլ հարաբերությամբ ջրային հանուկներով քրոնիկական թունավորման արդյունքները ցույց են տվել, որ փորձի ամբողջ ընթացքում կենդանիների թունավորման կլինիկական պատկեր և մահվան ելք չի արձանագրվել: Փորձակենդանիները արտաքին տեսքով, վարքով, մաշկային ծածկույթների և տեսանելի լորձաթաղանթների վիճակով չեն տարբերվել ստուգիչից: Քրոնիկական թունավորման ընթացքում և նրա ավարտին առնետների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը բնութագրող հետազոտությունների արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Թունաբանական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող Էպօքսիդային մածուկի և հիդրոմեկուսիչ բաղադրանյութի ջրային հանուկներով քրոնիկական թունավորման ժամանակ օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը բնորոշող դիտարկված որոշ ցուցանիշների հավաստի փոփոխություն չի գրանցվել:

Էպօքսիդային մածուկի հնարավոր ալերգիկ ակտիվության գնահատումից ստացվել են հետևյալ արդյունքները՝ լեյկոցիտների լիզիսին բնորոշ ռեակցիա 2,4% ստուգիչի 2,1%-ի հանդեպ (<10%), իսկ լեյկոցիտներին բնորոշ ազլումերացիաների քանակը հավաստի փոփոխության չի ենթարկվել ստուգիչի նկատմամբ: Որպես հակազեն ծառայել են պատվածքների ջրային հանուկները: Հիդրոմեկուսիչ բաղադրանյութի ազդեցությամբ լեյկոցիտներին բնորոշ լիզիսի ռեակցիայի արդյունքը 2,6% է ստուգիչի 2,3%-ի հանդեպ: Էպօքսիդային մածուկի և հիդրոմեկուսիչ բաղադրանյութի տվյալ նմուշների փորձարկման ժամանակ սենսիբիլացնող ազդեցություն

չի հայտնաբերվել:

Այսպիսով, իրականացված հետազոտությունների արդյունքները առնետների վրա փորձարկվող պատվածքների կողմից դրսևորվող թունավոր ազդեցությունն չեն արձանագրել:

Էպոքսիդային հակակոռոզիոն ծածկույթի ջրամատակարարման համակարգում գործածության երաշ-

խավորող պայմանը շահագործումն է միայն պատված մակերեսների առնվազն հնգակի վնասումից հետո հետևյալ հերթականությամբ՝ ջրի ուժեղ շիթով վնասում, հաջորդական 24-ժամյա լցում, դատարկում:

Հիդրոմեկուսիչ բաղադրանյութ կիրառելու դեպքում անվտանգ կիրառությունը կապահովի միայն տեխնոլոգիական պայմանների խստիվ պահպանումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Методические указания по гигиеническому контролю за изделиями из синтетических материалов, предлагаемых для использования в практике хозяйственно-питьевого водоснабжения N 1200-74
2. Методические указания по санитарно-химическому исследованию резин и изделий из них, предназначенных для контакта с пищевыми продуктами. Москва, "Медицина", 1988
3. Методические указания по разработке и научному обоснованию предельно допустимых концентраций вредных веществ в воде водоемов. М., 1976
4. Новиков В.И. и др. Методы исследования качества воды водоемов. Москва, "Медицина", 1990, с. 261
5. Кост Е.У. Справочник по клиническим лабораторным методам исследования. Москва, "Медицина", 1975, с. 3-25
6. Ронин В.С., Старобинец Т.М., Утевский Н.Л. Руководство к лабораторным исследованиям. Москва, "Медицина", 1987
7. Сперанский С.В. О преимуществах нарастающего тока при исследовании белых крыс и мышей к сумме подпороговых электрических импульсов. "Фармакология и Токсикология", 1965, т. 1, с. 17
8. Оценка вредных веществ на кожные покровы. МУ, Москва, 1980
9. Алексеева О.Г., Дуева Л.А. Аллергия к промышленным химическим соединениям. Москва, "Медгиз", 1978, с. 72-82
10. Бельский М.Л. Элементы количественной оценки фармакологического эффекта. Москва, "Медгиз", 1978

## РЕЗЮМЕ

### ТОКСИКОЛОГО-ГИГИЕНИЧЕСКАЯ ОЦЕНКА НЕКОТОРЫХ АНТИКОРРОЗИОННЫХ ПОКРЫТИЙ

Погосян С.Б., Джанджапанян А.Н., Тер-Закарян С.О., Далалян М.Г.

ЕГМУ, НИЦ лаборатория гигиены окружающей среды и токсикологии

**Ключевые слова:** публичное здоровье, токсическая миграция, гигиена, токсикология.

В последнее время широко используются противокоррозийные полимерные покрытия для накопления и сохранения питьевой воды, солевых ванн при получении поваренной соли и в других технологических процессах. Опасность применения синтетических веществ в водоснабжении связана с их способностью выделять в воду вредные химические вещества, которые могут изменить физико-химические свойства воды, нарушить баланс питательных веществ в ней, способствовать накоплению вредных соединений, размножению или длительному выживанию микроорганизмов, небезопасных для здоровья человека.

Гигиенические исследования изученных полимерных покрытий были проведены по принятым методическим указаниям.

Объектом исследований явились новые отечественные покрытия: противокоррозийная эпоксидная паста и гидроизолирующий состав. Покрытия исследованы в модельных условиях, имитирующих их производственное применение. Исходя из рецептуры эпоксидной пасты, можно было ожидать миграцию из нее в модельную воду полиэтиленполиамида (ПЭПА),

эпихлоргидрина (ЭПХ), дибутилфталата (ДБФ). При исследовании же гидроизолирующего состава определение ионов  $\text{Na}^+$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Mg}^{2+}$  и  $\text{Cl}^-$  сочли нецелесообразным, поскольку даже при большой степени аггравации и 100% их миграции полученные концентрации не превысили бы их допустимые уровни. Были проведены органолептические, санитарно-химические, микробиологические исследования модельных водоемов, покрытых объектами исследований. Результаты исследований показали, что в испытываемых концентрациях покрытия не придают воде какого-либо привкуса, запаха, цвета. Ожидаемых мигрируемых соединений после 5-кратного наполнения водой, 4-х дневного выдерживания и водного полоскания обнаружить не удалось. Проведенные токсикологические исследования покрытий не обнаружили изменений функционального состояния организма крыс в экспериментах острого, подострого и хронического отравления модельными жидкостями, не выявили сенсibiliзирующего воздействия их на крыс при изучении возможного аллергенного воздействия.

Рекомендованные условия применения покрытий с учетом полученных результатов гигиенических и санитарно-химических исследований: после 5-кратного наполнения и последовательного полоскания.

## SUMMARY

## TOXICOLOGICAL-HYGIENIC EVALUATION OF SOME POLYMERIC COVERINGS

Poghosyan S.B., Tshantshapanyan A.N., Ter-Zaqaryan S.A., Dalalyan M.H.  
YSMU, CRC, Laboratory of Environment Hygiene and Toxicology

**Keywords:** *the population health state, toxic discharges, hygiene, toxicology.*

In recent decades the polymeric materials have got a wide spread in the sanitary practice, particularly, as metal substitutes and anticorrosive polymeric coverings for accumulation and saving of drinking water as well as salt baths in the salt production and other technological processes. The danger of synthetic substances in the water supply system is in their capacity to secrete the harmful chemicals into water and change its physical-chemical properties, to impair the nutrients balance in water, to contribute to accumulation of toxicants, division of hazardous microorganisms or their prolonged survival. The hygienic studies of polymeric materials were performed based on the approved methodical directives.

New polymeric means, in particular, the anticorrosive epoxide pasta and the hydro-isolating compound used in the water supply and in the other technological processes, served as the object of the study. These coverings have been studied in the models imitating their industrial use. Considering the formula of epoxide pasta, a migration of polyethylenpolyamine (PEPA), epichlorhydrine (EPH) and dibuthylfthalate (DBF) into water could be

expected. When studying the hydro-isolating content, determination of  $\text{Na}^+$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Cl}^-$  ions was not expedient because even at the high grade of aggravation and at 100% of their migration, their levels would not exceed the accepted norm.

The organoleptic, sanitary-chemical, microbiological studies of the model water-basins covered with the studying objects have been performed. Results of the study revealed that the coverings at the given concentrations do not endow water with the side taste, smell and color. There were no anticipated migrating compounds after filling the water the 5<sup>th</sup> time, keeping it for 4 days and the water washing out process.

The provided toxicological studies of the coverings did not reveal any changes in the rats' functional state in the experiments of acute, sub-acute and chronic intoxications with the model liquids, as well as any sensibilizing effects on the rats.

There were recommended instructions of use of the coverings, considering the results of the hygienic and sanitary-chemical investigations. There were also instructions on safe exploitation of the coverings after the 5th filling, 4-day keeping and the consecutive washing out process.

## ОБУЧЕНИЕ, ОСНОВАННОЕ НА ПРОБЛЕМЕ

Даниелян И.Э.

ЕГМУ, кафедра семейной медицины

**Ключевые слова:** проблемное обучение, клиническое мышление, традиционное обучение.

*И кажется порой, что нужно только  
Переплести мотивы, отношения,  
Среду, проблемы – и произойдет  
Событие...*

**И. Бродский**

В течение последнего времени непрерывное медицинское образование претерпело значительные изменения как в плане теоретической основы и используемой методологии, так и в отношении оценки контроля качества медицинского образования. Коррекция образовательных программ имеет целью поднять уровень профессиональной деятельности врачей, и в итоге, улучшить показатели выздоровления пациентов. Поиск наиболее эффективных программ в медицинском образовании и обучающих технологий в преподавательской деятельности приводят к пониманию необходимости более широкого внедрения в практику занятий со студентами таких методов как проблемно-ориентированное обучение (ПОО), обучение в команде, интерактивные лекции и др.

Проблемное обучение основывается на теоретических предположениях американского философа, психолога и педагога Дж. Дьюи (1859 - 1952), основавшего в 1894 г. в Чикаго опытную школу, в которой учебный план был заменён игровой и трудовой деятельностью. В медицинском образовании ПОО начало внедряться в университете Мак-Мастера в Канаде в середине 1960-х. Вскоре после этого три других медицинских школы – университет Лимбурга в Маастрихте, Нидерланды, университет Ньюкасла в Австралии и университет в Нью-Мексико в Соединенных Штатах – адаптировали разработанную модель ПОО и внедрили ее в собственной педагогической практике.

Сущность проблемного обучения И.Я. Лернер видит в том, что «учащийся под руководством учителя принимает участие в решении новых для него познавательных и практических проблем в определенной системе, соответствующей образовательно-воспитательным целям школы».

На основе обобщения практики и анализа резуль-

татов теоретических исследований М.И. Махмутов дает следующее определение понятия «проблемное обучение»: «Проблемное обучение - это тип развивающего обучения, в котором сочетаются систематическая самостоятельная поисковая деятельность учащихся с усвоением ими готовых выводов науки».

В концепции проблемного обучения вместо традиционного изучения болезней приоритет отдается воссозданию практически значимых проблемных ситуаций и их самостоятельному решению студентами, при этом вполне допускаются ошибки с их последующим анализом и исправлением.

Эффективность применения этого метода в медицинском образовании объясняется тем фактом, что в реальной жизни встреча врача с пациентом предполагает необходимость решать клинические проблемы, которые редко бывают стандартными, поэтому традиционное лекционное обучение, представляющее собой пассивную передачу студентам чужого мнения и включающее, помимо прочего, также тестовый принцип оценки знаний с единственно правильным ответом, мало способствует становлению специалиста.

Готовые знания и инструкции, преподносимые преподавателем, в «чистом» виде не имеют объективной ценности, поскольку в медицинской практике способность решать проблемы предполагает большее, чем просто аккумулятивное знание. Традиционное стандартизированное обучение становится барьером для развития клинического мышления, особенно для студентов с творческим подходом к работе, ограничивает их и в дальнейшей жизни за пределами учебной аудитории, где клинические случаи представляют собой постоянно меняющееся разнообразие условий, целей, препятствий и неизвестных величин, влияющих в конечном итоге на подходы к их решению.

Изучение материала в процессе ПОО обычно проходит в виде занятий в небольших по численности группах студентов, обычно в форме дискуссии, направляемой преподавателем. При этом каждый студент становится автором какой-то идеи и какой-то части информации. Расчет на преподавателя как на основного источника информации и наскучивающая необходимость заучивания и запоминания готового материала, сменяется активизацией собственной познавательной

активности, критической оценкой смысла задачи, инициативность. Роль преподавателя может сводиться к роли эксперта по обсуждаемой проблеме, руководителя по пользованию информационными источниками и консультанта в выполнении группового задания. Все это обеспечивает прочность приобретенных знаний, ибо они добываются в самостоятельной деятельности, становятся логически доказанными.

Таким образом, ПОО способствует лучшему осмыслению, усвоению и грамотному применению учебного материала путем формирования постоянного познавательного интереса, усвоения навыков работы с проблемами и противоречиями, развивает желание учиться, поскольку появляется осознание необходимости получения тех или иных знаний для их практического применения.

Таким образом, основными характеристиками проблемного обучения, являются:

- ◆ использование задач, основанных на реальных клинических случаях, сфокусированных на ключевых направлениях программы медицинского образования,
- ◆ замена обучающих методов, сосредоточенных на преподавателе, методами, ориентированными на студента,
- ◆ повышение ответственности студента за собственное обучение и поощрение его самостоятельной работы,
- ◆ решение задач через обсуждение в малых группах.

Метод ПОО позволяет развить у студента:

- ◆ навык решения проблем в новых, неожиданных ситуациях,
- ◆ творческое, критическое мышление,
- ◆ способность генерировать гипотезы и определять вопросы, нуждающиеся в дальнейшем изучении для принятия решения,

- ◆ самостоятельный поиск возможных путей решения,
- ◆ эффективные навыки работы в команде.

Проблемные ситуации, создаваемые преподавателем, должны создаваться согласно следующим правилам:

1. должны содержать посильное познавательное затруднение,
2. должны быть максимально реалистичны и в то же время неожиданными для развития интереса и познавательной активности студентов,
3. изначально должны содержать минимум информации, которая необходима для начала разнонаправленного поиска,
4. преподаватель должен оставаться координатором в поиске знаний, но не их источником,
5. занятие должно имитировать профессиональную деятельность.

Схематично цикл ПОО можно представить следующим образом:

Чтение клинического случая → выдвижение гипотез → определение проблемных вопросов → самостоятельный поиск информации → обсуждение и анализ полученной информации → окончательное решение.

На кафедре семейной медицины ЕГМУ преподавание основано на гибком сочетании традиционных методов с интерактивными, включая проблемное обучение, которое особенно активно применяется в последипломной образовательной программе. На наш взгляд, пересмотр программ бакалавриата, в котором наряду с традиционными методами обучения будет применяться также эта технология, будет способствовать повышению качества обучения студентов и поможет подготовке специалистов со сформировавшимся клиническим мышлением.

## ЛИТЕРАТУРА

1. А.И. Артюхина, Н.А. Гетман, М.Г. Голубчикова, Е.В. Лопанова, Т.Б.Рабочих, Н.Н.Рыбакова. Компетентно-ориентированное обучение в медицинском вузе, Омск, 2012, 200стр.
2. Отчет по изучению международного опыта по планированию и разработке интегрированных программ в медицинском образовании. Медицинская школа Университета Нью-Мексико, Альбукерке, США, 2012
3. Квалификационные требования к преподавателям высшей медицинской школы / Под ред. Лопановой Е.В. – Омск: Полиграфический центр «КАН», 2012. – 64 с.
4. Программа психолого-педагогической подготовки преподавателей медицинских вузов к профессиональной деятельности / Под ред. Лопановой Е.В. – Омск: Полиграфический центр КАН, 2012. – 120 с.
5. Скосарев Ю.П. К разработке модели системы проблемного обучения в вузе // Сайт проекта Интернет-конференции «Актуальные проблемы медицинского образования»-<http://vgmu.vitebsk.net/intconf/sect3/1.htm>
6. Снапковская С.В. Проблемное обучение как средство интенсификации педагогического процесса в системе работы кафедры педагогики и психологии // Сайт проекта Интернет-конференции «Актуальные проблемы медицинского образования»- <http://vgmu.vitebsk.net/intconf/sect4/10.htm>
7. Аканов А.А, Хамзина Н.К, Ахметов В.И. и др. КазНМУ: на пути инновационных преобразований. – Алматы, 2010.
8. Бартош Н.О., Подчерняева Н.С. Перспективы применения модульной технологии в обучении студентов медицинских вузов и медицинских факультетов университетов по специальности «Лечебное дело» – Публикации сотрудников об ИОП, Московская медицинская академия им. И.М.Сеченова. 2010
9. Материалы международной конференции Teaching Excellence / Использование электронных средств в обучении / И. Чеснокова / КарГМУ, Караганда, 5.11.2010.
10. Ситаров В.А. Дидактика: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / Под ред. В. А. Сластенина. – 2-е изд., стереотип. – М.: Издательский центр «Академия», 2004. – 368 с.
11. Лептина И., Семенова Н. Применение эффективных технологий обучения // Учитель. 2003. №1.
12. Лернер И.Я. Вопросы проблемного обучения на Всесоюзных педагогических чтениях.//Советская педагогика, 1986.-№ 7.
13. Махмутов М.И. Организация проблемного обучения в школе. – М.: Педагогика, 1977
14. Problem-based Learning applied to Team Environments: A Visual Literature Review, Barbara Lauridsen, MBA. Core Adjunct Faculty, National University, Learner, ABD Information Technology Education, Capella University Quarterly, Review of Distance Education, 9(1), 1-16,105-106. ProQuest Education Journals.
15. USA, 2012, blauridsen@gmail.com, Barbara.Lauridsen@natiuniv.edu. An, Y., & Reigeluth, C. (2008). Problem-based learning in online environment.
16. Han S., & Bhattacharya, K. (2011, April 8). Constructionism, learning by design, and project based learning. Emerging Perspectives on Learning, Teaching and Technology. [Webpage]. Available from [http://projects.coe.uga.edu/epltt/index.php?title=Constructionism,\\_Learning\\_by\\_Design,\\_and\\_Project\\_Based\\_Learning](http://projects.coe.uga.edu/epltt/index.php?title=Constructionism,_Learning_by_Design,_and_Project_Based_Learning)
17. Brundiars, K., Wiek, A. & Redman, C. L. (2010). Real-world learning opportunities in sustainability: f rom classroom into the real world. International Journal of Sustainability in Higher Education, 11(4), 308-324. ProQuest Education Journals
18. NEBHE. (2010). PBL challenge implementation guide. New England Board of Higher Education [NEBHE]. Version 1.3. Retrieved from <http://www.nebhe.org/wpcontent/uploads/Implementation-Guide.pdf>
19. Jonassen, D. H. (2010, September-October). Research issues in problem solving. The 11th International Conference on Education Research: New Paradigm for Learning and Instruction. Retrieved from <http://www.aect.org/publications/whitepapers/2010/JonassenICER.pdf>
20. Pierrakos, O., Zilberberg, A., & Anderson, R. (2010). Understanding undergraduate research experiences through the lens of problem-based learning: Implications for curriculum translation. Interdisciplinary Journal Of Problem-Based Learning, 4(2), 35-62.
21. Massa, N., Dischino, M. Donnelly, J., & Hanes, Fenna, F. (2009, June). Problem-based learning in Photonics technology education: Assessing student learning. 2009 Education and Training in Optics and Photonics (ETOP) Conference. Retrieved from <http://www.nebhe.org/wp-content/uploads/ETOP2009-AssessingStudentLearning1.pdf>
22. Clark, R. (2009, January). Accelerating expertise with scenario-base learning. T + D,63(1), 84-85. Retrieved from ABI/INFORM Global.
23. Jonassen, D. H., & Hung, W. (2008, October) All problems are not equal: Implications for problem-based learning. The Interdisciplinary Journal of Problem-based Learning, 2(2), 6-28.
24. Yeo, R. K. (2008). How does learning (not) take place in problem-based learning 11(3), 317-330. doi:10.1080/13678860802102609
25. McLaren, T. S., Vuong, D. C. H., & Grant, K. (2007). Do you know what you don't know? Critical reflection and concept reflection and concept mapping in an information systems strategy course. Communications of AIS, 2007(20), 892-908. EBSCOhost.
26. Pritchard, R. D. (2007). Darwin, descartes and dewey: The biological basis for a problem-based learning curriculum [Electronic Document] Radical Pedagogy. ISSN: 1524\_6345. Retrieved from [http://radicalpedagogy.icaap.org/content/issue9\\_1/pritchardr@philau.edu](http://radicalpedagogy.icaap.org/content/issue9_1/pritchardr@philau.edu)

## ԱՄՓՈՓՈՒՄ

## ԽՆԴՐԻ ՎՐԱ ԶԻՄՆՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ. ԶԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ՆՈՐ ՇՈՒՆՉ

Դանիելյան Ի.Է.

ԵՊԲԶ, ընտանեկան բժշկության ամբիոն

**Բանալի բառեր՝** խնդրի վրա հիմնված ուսուցում, կլինիկական մտածելակերպ, ավանդական ուսուցում:

Չայտնի է, որ ավանդական բժշկական ուսուցումը ենթադրում է առանձին հիվանդությունների ուսումնասիրում, որի ընթացքում ուսանողին պասիվ ձևով փոխանցվում է գիտելիքների որոշակի ծավալ: Ի տարբերություն դրան՝ խնդրի վրա հիմնված ուսուցումը, որը կիրառվել է Կանադայում 60-ականների կեսերից, ուսանողից պահանջում է առաջարկված կլինիկական դեպքերում լուծումներ գտնելու և սեփական գիտելիքների բացը ինքնուրույն լրացնելու ունակություն: Դա սովորեցնում է նրան մտածել և նպաստում է ստեղծագործ մոտեցումների և կլինիկական մտածելակերպի զարգացմանը:

Այս մեթոդի արդյունավետությունը բացատրվում է այն հանգամանքով, որ իրական կյանքում բժիշկը հազվադեպ է հանդիպում միանշանակ լուծման եղանակով դասական «դա-

սագրքային» դեպքերի: Խնդրի վրա հիմնված ուսուցումը օգնում է ուսանողին ինքնուրույն կողմնորոշվելու իրական բարդ կլինիկական դեպքերում, որոնելու լուծումներ, իսկ դասախոսը ղեկավարում է այդ որոնումների գործընթացը, օգնում է գտնելու տեղեկատվական աղբյուրներ, բայց ինքը չի մատուցում պատրաստի նյութեր:

Խնդրի վրա հիմնված ուսուցումը բաղկացած է հետևյալ քայլերից՝ կլինիկական դեպքի ուսումնասիրում, վարկածների առաջարկում, խնդրին առնչվող հարցերի որոշում, տեղեկատվության ինքնուրույն որոնում, ստացված տեղեկատվության քննարկում և գնահատում, վերջնական որոշում:

Նշված մեթոդի՝ բժշկական կրթական ծրագրում լայնածավալ կիրառումը կնպաստի ժամանակակից հմուտ մասնագետ պատրաստելուն:

## SUMMARY

## PROBLEM-BASED LEARNING: NEW BREATH OF THE OLD METHOD

Danielyan I.E.

YSMU, Department of Family Medicine

**Keywords:** *problem-based learning, clinical thinking, traditional medical teaching.*

It is known that traditional medical teaching supposes separate study of diseases, during which certain volume of knowledge is passively passed to the students. Unlike this, problem-based learning, which was first used in Canada in the mid-sixties, requires students to find their own solutions to the suggested clinical cases and to develop ability of filling their knowledge gaps. This teaches them to think and contributes to the development of creative approaches and clinical thinking.

The effectiveness of this approach is explained by the fact that in real life doctors rarely meet classical “textbook” cases

with univocal solutions. Problem-based learning helps students to deal with real-life complicated clinical cases on their own, look for solutions, while the lecturer leads the search, helps them find sources of information but does not provide ready materials.

Problem-based learning consists of the following steps: studying the clinical case, proposition of hypothesis, identifications of issues, related to the problem, independent search of information, discussion and assessment of the acquired information, final decision.

A wider use of the method in the educational program will contribute to better training of modern specialists in the medical field.

# ԱԽՏԱՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՅՎԱԾ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Նավասարդյան Գ.Ա.  
ԵՊԲՀ, բժշկակենսաբանական ցիկլային հանձնաժողով

**Բանալի բառեր՝** կլինիկական ախտաֆիզիոլոգիա, ախտաֆիզիոլոգիական անալիզ, ապացուցողական, արձանագրային, անհատականացված բժշկություն:

**«Չի կարող լինել մեր ոգին գերի սերտած խոսքերի, կոտած մտքերի»**  
**Ե. Չարենց**

Բոլոնիայի գործընթացի շրջանակում բարեփոխումների նոր փուլ թևակոխած բժշկական բարձրագույն կրթության հիմնահարցերից է ուսուցման մեթոդաբանության նորարացման, վերակառուցման անհրաժեշտությունը: Մեր նախորդ հաղորդումներում անդրադարձել ենք կրթության որակի ապահովման որոշ նոր մոտեցումներին՝ ուսանողակետորոն ուսուցում, խնդրի վրա կառուցված դասավանդում և այլ հիմնահարցեր, որոնք ամբողջապես բխում են կարգաբերման (tuning) մեթոդաբանությունից և Էֆեկտիվ գործառույթներ ունեն [1,2,3]:


Խնդրո առարկան ներկայումս առավել ակտուալություն է ձեռք բերում անհատականացված բժշկության նոր հայեցակարգին անցնելու կապակցությամբ: Այստեղ առանձնահատուկ դերակատարում է ստանում կլինիկական ախտաֆիզիոլոգիան, նրա տեղը և գործառույթը բարձրորակ բժշկական կադրեր պատրաստելու գործընթացում:


Ախտաֆիզիոլոգիան հիմնարար բժշկագիտական ճյուղ է, որն ուսումնասիրում է հիվանդությունների պատճառները և զարգացման մեխանիզմների ֆունկցիոնալ ասպեկտները միջավայրի հետ ունեցած փոխհարաբերության դինամիկայում (կառուցվածքի, դիզայնի մշակում, ընդհանուրից անցում անհատականացման): Այն ինտեգրատիվ, ընդհանուր օրինաչափություններ ուսումնասիրող գիտաճյուղ է: Այսպիսով, ախտաֆիզիոլոգիան այն տեսական հենքն է, որով ապահովվում է. ա) մասնագիտական մտածողության ձևավորումը, բ) արդյունավետ մասնագիտական գործունեությունը: Վերջինս իր հերթին աղերսվում է կլինիկական ախտաֆիզիոլոգիայի հետ, որի հիմնական գործիքը՝ ախտաֆիզիոլոգիական վերլուծությունն է

[9]: Որևէ կլինիկական դեպքի, կամ փորձարարական հետազոտության տվյալների վերլուծությունը օգնում է ձևավորելու կլինիկական գործունեության քարտեզը, այն է՝ հորիզոնական և ուղղահայաց փաստարկման մեթոդաբանությամբ կիրառելով բազմաբայլ գործողություններ, ճշգրտել հիվանդության պատճառագիտության և ախտածնության, տիպային տեղաշարժերի գործող օղակները, վերհանել հնարավոր մեխանիզմները, ուրվագծել պրոցեսների ճանաչման սկզբունքները, հիմնավորել նրանց կորեկցիայի, վերացման և կանխարգելման ուղիների ընտրությունը:

Ասվածից ելնելով, կարելի է եզրահանգել, որ ախտաֆիզիոլոգիական անալիզը յուրատիպ «know how» է, որը կիրառելի է և՛ ախտաբանական պրոցեսների ու հիվանդությունների մասին ընդհանուր գիտելիքի ձևավորման, ապացուցողական բազայի ստեղծման, և՛ առանձին անձանց մոտ հիվանդության մասնավոր պատկերի վերլուծության, առանձնահատկությունների վերհանման, դրանց հիման վրա անհրաժեշտ գործողությունների ծավալման համար: Ախտաֆիզիոլոգիական անալիզը դրանով իսկ կամրջում է հիվանդության մասին եղած ընդհանուր գիտելիքները, հասկացությունները և մասնավոր դեպքերում վերջիններիս դրսևորման առանձնահատկությունները, այսինքն՝ կապ է հաստատում արձանագրային (պրոտոկոլային) և անհատականացված բժշկությունների միջև:

Վերևում բերվածը կարելի է քարտեզագրել հետևյալ կերպ:





Վերոբերյալից կարելի է եզրակացնել, որ ախտաֆիզիոլոգիան որպես տեսական բժշկության գիտաճյուղ ունի որոշակի գործնական ուղղվածություն՝ ըստ ամենայնի նպաստելով մասնագետի կլինիկական մտածողության ձևավորմանը, հիվանդության ճշգրիտ ախտաճանաչմանը և տվյալ հիվանդի բուժման համալիրի ընտրությանը [5,7,8]:

Այս համատեքստում ուրվագծվում են կլինիկական ախտաֆիզիոլոգիայի գլխավոր նպատակները.

1. Կազմակերպման տարբեր մակարդակներում տեղի ունեցող իրադարձությունների մանիֆեստացիայի՝ դրսևավորված ախտանշանների հաշվառում,
2. Դրանց միջև գործող պատճառ-հետևանքային կապերի, խմբավորումների (կլաստերների) ճանաչում: Կլաստերների համադրումը հնարավորություն է ընձեռում հասկանալու և ճանաչելու հիվանդության պատճառը և զարգացման ենթադրվող դիսամֆիկան, ըստ այդմ՝ ընտրելու բուժման եղանակը և միջոցը: Պատճառների և զարգացման ընթացքի վերլուծությունն, իր հերթին, բժշկին կողմնորոշում է կանխագուշակելու հիվանդության ելքը: Նշյալ գործողությունների իրականացման հիմնական գործիքը՝ ախտաֆիզիոլոգիական անալիզն է, որը գիտական փաստարկման հիմք է դառնում՝
  - ա) ֆունկցիոնալ և կենսաքիմիական ախտաճանաչման համար,
  - բ) լաբորատոր հետազոտությունների արդյունքների գնահատման համար, որի շնորհիվ բացահայտվում են համակարգային մետաբոլիկ խանգարումները,
  - գ) պաշտպանական-հարմարվողական մեխանիզմների ուժեղացմանն ուղղված մեթոդների ընտրության հիմնավորման համար: Նշված բաղադրիչների տվյալները ամփոփագրվում են (ապացույցների բազա), համեմատվում համապատասխան արձանագրությունների հետ, և բուժող բժշկի կողմից կատարվում է էթիոս-

րոպ, պաթոգենետիկ, սիմպտոմատիկ բուժման միջոցների հասցեական ընտրություն և կիրարկում:

Բերված նյութի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ ախտաֆիզիոլոգիական վերլուծության մեթոդաբանության տիրապետումը սովորողին հնարավորություն է տալիս դատողությունների ճիշտ շարքով վերլուծել կլինիկական և մտացածին իրադրական դեպքերը, քարտեզագրել պատճառահետևանքային կապերը, նշագրել կատարելիք գործողությունները: Մյուս կողմից՝ տվյալների նմանատիպ վերլուծության կարողականությունը հնարավորություն է ընձեռում վերհանելու որևէ հիվանդության հարացույցները, մշակել ալգոռիթմերը, դրանց հիման վրա ձևակերպել «protocol»-ը: Բացի այդ, սույն մեթոդաբանությամբ հնարավոր է դառնում պարզաբանելու տվյալ անհատի մոտ հիվանդության դրսևորման մասնավոր էթիոպաթոգենետիկ կլաստերը, քարտեզագրելու առանձնահատկությունները, որոնց հիման վրա էլ՝ ընտրելու բուժման համարժեք միջոցներն ու մեթոդները: Այսինքն՝ «բուժվում է հիվանդը, ոչ թե հիվանդությունը»: Եվ վերջապես՝ երկուսի շարունակական համադրումը կբերի նրան, որ արձանագրությունները չեն լինի «քարացած» (կաղապարված), դրանք շարունակաբար կլրամշակվեն հիվանդության մասին ունեցած ժամանակակից բժշկության նվաճումներով ու իննտվացիոն տեխնոլոգիաների արդյունքներով:

Մեկ դիտողություն ևս. «ալգոռիթմ» եզրույթը մեր օրերում շատ տարածուն է և օգտագործման լայն դաշտ է ընդգրկում: Եզրույթի «ռիթմ» արմատը ինքնին ենթադրում է փոփոխություն, կայուն շարժում որոշակի ժամանակի մեջ: Ախտաֆիզիոլոգիական անալիզի մեթոդաբանությունը այդ եզրույթին վերադարձնում է իր նախնական իմաստը, բովանդակությունը, ի ցույց դնելով երևույթների մեկնաբանման փոփոխելիությունը, նրանց դրսևորման քանակական և որակական լայն սպեկտրը: Տեղին է նկատել, որ բժշկական մտածողությունը կազմավորվում է երկու կլաստերներից՝ ա) գիտելիք (սովորած, մտապահած ինֆորմացիա) և բ) կոմպետենցիա (կարողություն և հմտություն): Վերոբերյալը իր հերթին ուղենշում է բժշկական մասնագիտական մտածողության ձևավորման համար անհրաժեշտ դեպքերի պատրաստումը (նկարագրիչները)՝ ոչ միայն նյութի «սերտվածություն», այլև կրեատիվություն: Ախտաֆիզիոլոգիական վերլուծությունը որպես մեթոդաբանություն ապահովում է վերոբերյալ երկու կողմերն էլ, փոխկապակցելով արձանագրային և անհատականացված բժշկության սկզբունքները: Գործընթացը (քայլերը) կարելի է ամրագրել հետևյալ ալգոռիթմով. հիվանդության գործող արձանագրություն → նրա անհատականացում →

անհատականացվածի միջոցով պրոտոկոլի ամրապնդում, լրամշակում:

Պատկերավոր ասած՝ հիվանդության պրոտոկոլը տրանսկրիպցիան է, մոդելը, անհատականացվածը՝ տվյալ հիվանդի մոտ հիվանդության յուրատիպ դրսևորման պատկերը, տրանսյացիան, մոդուլը: Այս ճանապարհով ապահովվում է նաև պրոֆեսիոնալ զարգացման սպիրալածն ընթացքը (ինչն այսօր ուսուցման գլխավոր ուղղվածություն է դիտարկվում):

Ախտաֆիզիոլոգիական վերլուծությունը, այսպիսով, ծառայում է որպես կլինիկական դեպքերի ինտեգրատիվ գնահատման մեթոդ, պատասխանելով հիմնական հարցին, թե ինչ պիտի կարողանա բժիշկը իր մասնագիտական որակյալ գործունեության մեջ: Որո՞նք են դրանք.

1. տվյալ հիվանդի մոտ՝ հիվանդության նշանների և գանգատների գիտականորեն հիմնավորված մեկնաբանություն
2. լաբորատոր տվյալների մեկնաբանություն
3. ֆունկցիոնալ-դիագնոստիկ, կենսաքիմիական և մորֆոլոգիական հետազոտությունների արդյունքների համադրում, համեմատություն և եզրահանգում
4. դիֆերենցիալ դիագնոստիկա
5. հիվանդության ընթացքի կանխատեսում
6. գրականության նորագույն տվյալների իմացություն
7. թերապևտիկ կամ վիրահատական բուժման հնարավոր ուղիների ճիշտ ընտրություն:

Գործողությունների այս շրջարկում առավել կիրառելի են հետևյալ բառերը. **Գիտելիք, Ընկալում, Կիրառում, Վերլուծություն, Սինթեզ, Գնահատում:** Նշվածները «գործող անձեր» են դառնում կլինիկական ախտաֆիզիոլոգիայի դասավանդման ընթացքում:

Այսպիսով կլինիկական ախտաֆիզիոլոգիայի դասընթացը օգնում է սովորողին տիրապետելու և կոնկրետ կլինիկական դեպքերում կիրառելու ախտաֆիզիոլոգիական վերլուծության մեթոդը, որի արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է կլինիկական մտածողությունը, այլ կերպ ասած, տեղի է ունենում տեսական գիտելիքի պրակտիկ հմտության վերածվելու շարունակա-

կան գործընթաց: **Ասվածից հետևում է կլինիկական ախտաֆիզիոլոգիայի դասընթացի ձևաչափի նորովի մշակման և մասնագիտական կրթական ծրագրերում ներդրման անհրաժեշտությունը** [4,6]:

Մյուս կողմից՝ ախտաֆիզիոլոգիական անալիզը այն գործիքն է, որն առավել գործունակ է կլինիկական ախտաֆիզիոլոգիայի դասընթացում, շեշտադրելով նրա դերը բժշկական գործունեության արդյունավետության, մասնագետի որակավորման բարձրացման մեջ:

Կլինիկական ախտաֆիզիոլոգիայի գործառույթներն են՝

- ◆ ինքնուրույն աշխատելու (ուսումնառության) հմտությունների ձեռք բերում,
- ◆ խնդրահարույց իրադրություններում կողմորոշվելու և պրոբլեմը լուծելու կարողականություն,
- ◆ քննադատական դատողության ձեռք բերում,
- ◆ տվյալները ներկայացնելու հմտություն (պրեզենտացիա, դիզայն) → ձևաթերթի մշակում,
- ◆ ինտելեկտուալ թիմային աշխատանքի կարողություն: Տեղին է նկատել, որ ախտաֆիզիոլոգիական վերլուծության մեթոդը արդյունավետ միջոց է նաև սովորողի մոտ հետազոտական կարողությունների մշակման և իրականացման գործընթացում:

### Եզրահանգում

**Կլինիկական ախտաֆիզիոլոգիայի դասընթացը սովորողին ուղղորդում է դեպի՝**

- ա) «բազիսային գիտելիք» - «կլինիկական բժշկություն» կապի հաստատում,
- բ) ուսումնասիրելու, կարողալու ժամանակակից բժշկության վերաբերյալ գրականությունը,
- դ) ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ուղղակի կապակցում ելքային կրթական արդյունքների հետ,
- զ) դյուրինացնում է ցկյանս (շարունակական) ուսումնառության գործընթացը, հանդիսանալով վերջինիս իրականացման կարևոր գործիքներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բոլոնիայի գործընթացը Հայաստանում», ուղեցույց, Երևան, 2008
2. «Նպաստենք Բոլոնիայի գործընթացին Հայաստանում», Երևան, 2011, էջ 34-44
3. Գ. Նավասարդյան «Բժշկական բարձրագույն կրթության բակալավրիատի աստիճանում ուսանողակենտրոն դասավանդման ուղենիշերի շուրջ», «Բժշկություն, գիտություն և կրթություն», 2012, էջ 99-102
4. Гоженко А.И., Свирский А.А. и др. Клиническая патофизиология и задачи реформирования учебного процесса на кафедрах патологической физиологии // Таврический медико-биологический вестник, т. 5, N 3, ч. 2, 2012, с. 284-285
5. Ельский В.Н. и соавт. Преподавание патологической физиологии на современном этапе развития высшего медицинского образования // Таврический медико-биологический вестник, т. 5, N 3, ч. 2, 2012, с. 263-265
6. Kathryn L., Mc Chance and al. Pathophysiology, Introduction to pathophysiology, 2010
7. Kovach Zdenko, Pathophysiological foundation of personalized medicine, 2013
8. Gurwitz D. Personalized participatory medicine sharing knowledge and uncertainty // Genome Med., 2011, 3, pp. 69-78
9. Peter F., Litvitsky Integrative role of pathophysiology in shaping the physician's thinking at the under- and postgraduate stages of medical training // Pathophysiology, 1996, pp. 91-93
10. Standards and Guidelines for quality Assurance in the European Higher Education Area ENQA, part 1, Helsinki, 2007

РЕЗЮМЕ

**ПАТОФИЗИОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ КАК ИНСТРУМЕНТ ВЗАИМОСВЯЗИ ПРОТОКОЛЬНОЙ И ИНДИВИДУАЛИЗИРОВАННОЙ МЕДИЦИНЫ, ФОРМИРОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО МЫШЛЕНИЯ**

Навасардян Г.А.

ЕГМУ, медико-биологическая цикловая комиссия

**Ключевые слова:** *клиническая патофизиология, патофизиологический анализ, доказательная протокольная индивидуализированная медицина.*

Метод патофизиологического анализа применяем на всех уровнях преподавания патофизиологии и направлен на выявление причин, механизмов развития болезней, разбора отдельных клинических и случаев симуляции, а также на систематизацию их функциональных аспектов в динамике взаимодействия с окружающей средой. В этом контексте патофизиологический анализ представляется как “know how”, соединяющий между собой общие современные представления о болезни и особенностях (специфику) проявлений изменений у конкретного больного, тем самым предоставляя воз-

можность врачу в пределах утвержденного и действующего протокола составить индивидуальный план эффективного лечения.

Из сказанного можно сделать вывод, что патофизиологический анализ является эффективным методом (инструментом) интеграции протокольной и индивидуализированной медицины. С другой стороны, патофизиологический анализ создает реальную возможность для определения конкретных кластеров этиологии и патогенеза, выявления причинно-следственных связей, особенностей проявлений, т.е. патофизиологический анализ является способом формирования и развития профессионального медицинского мышления и приобретения научно-исследовательских компетенций, навыков.

SUMMARY

**PATHOPHYSIOLOGICAL ANALYSIS AS A TOOL OF PROFESSIONAL MENTALITY AND CONNECTION IN PROTOCOL AND INDIVIDUALIZED MEDICINE**

Navasardyan G.A.

YSMU, Medical-Biological Cyclic Committee

**Keywords:** *clinical pathophysiology, pathophysiological analysis, evidential protocol individualized medicine.*

The method of pathophysiological analysis is implemented in all the stages of teaching pathophysiology and is aimed at revealing the causes of clinical and imaginary cases and diseases development mechanisms to systemize their functional aspects in the dynamics of their interrelation. In this context, pathophysiological analysis is the “know how” that unites general update knowledge about existing disease together with noticeable changes in clinical characteristic in a patient. This allows a doctor to formulate the patient’s individual, unique plan of treatment

in the frames of the existing protocol.

It can be concluded that pathophysiological analysis is a productive tool for connecting protocol and individualized medicine, as well as for research activities of students.

On the other hand, pathophysiological analysis gives possibility to establish the etiology and pathogenetic clusters in case of any disease to find out causative-consequent connection and peculiarities of its manifestation. In other words, it serves as a means of formation and development of medical specialized mentality.

ՋՏԴ. 614.2:616-083-053.7(479.25)+614.1:312

## ՄԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՍԵՌԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԻ ԵՎ ՈՒՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սարգսյան Գ.Ռ.

ԵՊԲՀ, Հանրային առողջություն և առողջապահության միջոցառումներ

**Բանալի բառեր՝** դեռահասներ, սեռական և վերարտադրողական առողջություն, սեռակրթություն:

Սեռական հարցերի շուրջ իմացության ոչ բավարար մակարդակի պայմաններում ռիսկային սեռական վարքագծային դրսևորումներն անխուսափելի են, իսկ սեռական վարքագծի ու սեռական հարցերի շուրջ իմացության մակարդակի միջև առկա անհամապատասխանությունն ինքնին սեռական դաստիարակության ուղղորդիչների փոփոխության անհրաժեշտության, ճիշտ ձևաչափերի սեռակրթության պահանջարկ է, որի իրագործումն հատկապես արդիական է դեռահասության տարիքի անձանց շրջանում:

Մեր կողմից իրականացված աշխատանքի նպատակն է դեռահասների սեռական ռիսկային վարքագծային դրսևորումների նվազեցման ճանապարհով սեռական և վերարտադրողական առողջության պահպանումն, որին հասնելու համար մշակվել է «Դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունների ուսումնասիրության» հատուկ տեղեկատվական հարցաթերթիկ, ինչի հիման վրա կատարված հարցման արդյունքում վեր են հանվել դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունները, սեռական հարցերի շուրջ նրանց իմացության մակարդակը: Բացահայտվել է գնահատվել են վաղ ռիսկային սեռական կապերի հետևանքների տարածվածությունը դեռահասության տարիքի անձանց շրջանում, մշակվել է «Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջություն» կրթական ծրագիր, իրականացվել են դասընթացներ 464 դեռահասների և 62 ուսուցիչների շրջանում, որի արդյունքում գնահատվել է մեր կողմից առաջարկված «Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջություն» կրթական ծրագրի արդյունավետությունը:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են փորձարարական, համաճարակաբանական, սոցիոլոգիական հարցման, վիճակագրական վերլուծության մեթոդներ: Առաջնային տվյալների պահպանումն ու մշակումը իրականացվել է ստանդարտ և հատուկ համակարգչային վիճակագրական ծրագրերի փաթեթների կիրառմամբ (Access, Excel և այլն):

Ժամանակակից դեռահասի սոցիալիզացիայի գործընթացում ռիսկերի բացառումը ոչ իրատեսական է, և

նպատակահարմար չէ ուղղորդվել «որքան դեռահասի վարքագիծը պակաս ռիսկային է, այնքան հեշտ է կատարվում սոցիալիզացիան» դրույթով, ի նկատի ունենալով, որ ռիսկային վարքագիծը նախ և առաջ դեռահասության տարիքի հոգեբանական բնութագիր է և հետո՝ սոցիալական ադապտացիայի գործոն:

Մերժողական մոտեցումները արդիական չեն, և մեր կողմից առաջարկված սեռակրթության նպատակը վաղ սեռական կապերի բացառումը չէ, այլ՝ ռիսկերի ճիշտ կոորդինացիայի միջոցով սեռական և վերարտադրողական առողջության պահպանումը: Դեռահասին վաղ ռիսկային սեռական կապերի համար մեղադրելու փոխարեն անհրաժեշտ է իրազեկել թույլատրելի ռիսկի աստիճանի մասին և շարժադրոյի միջոցների օգտությամբ բարձրացնել նրա պատասխանատվությունը սեփական արարքների հետևանքների հանդեպ: Վաղ սեռական վարքագծի ֆենոմենի նկատմամբ ռացիոնալ մոտեցումը կնպաստի դեռահասի ճկուն ադապտացիային և ռիսկային սեռական վարքագծային դրսևորումների նվազեցմանը, ինչը հնարավոր է ճիշտ ձևաչափերով սեռակրթության միջոցով:

Հայ դեռահասների վաղ սեռական վարքագծի ֆենոմենի նկատմամբ համապատասխան ռացիոնալ մոտեցումներ և ճիշտ ձևաչափի սեռակրթության ծրագիր մշակելու նպատակով դեռահասների, նրանց կրթողների և ծնողների շրջանում մեր կողմից իրականացվել են խորը և բազմակողմանի հետազոտություններ. ուսումնասիրվել են ՀՀ պետական կրթական ծրագրերում ներառված «Առողջ ապրելակերպ» առարկայի թեմաները («Առողջ ապրելակերպ ուսուցիչ ձեռնարկ», 2009), կրթական նյութի մատուցման և ընկալման արդյունավետության գնահատման նպատակով սեռական դաստիարակության մեջ ընդգրկված մասնագետների և «Առողջ ապրելակերպ» դասընթացն անցած 13-18 տարեկան դեռահասների շրջանում անցկացվել են հարցումներ «Առողջ ապրելակերպ» ուսուցիչ ձեռնարկում ներառված թեստերով, կատարվել է ստացված տվյալների վերլուծություն, ինչի արդյունքում վեր են հանվել սեռական հարցերի շուրջ դեռահասների իրազեկվածության, կրթական նյութի մատուցման և ուղղորդիչների հետ կապված խնդիրներ:

ՀՀ դպրոցներում 8-րդ և 9-րդ դասարանցիների

դասավանդվող «Առողջ ապրելակերպ» առարկայի կրթական ծրագրի մեջ սեռակրթությանն առընչվող թեմաների նյութի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ դրանք հիմնականում մակերեսային են, ոչ ամբողջական, առկա է դասընթացի ուղղորդիչների էական փոփոխության անհրաժեշտություն, քանզի դրանք խիստ մերժողական են՝ «նպատակաուղղված զանազան գայթակղությունների» դեմ, մինչդեռ, վաղ սեռական կապերը մեր օրերում դեռահասների հոգեբանական բնութագիր են, սոցիալական հարմարվողականության միջոց, այլ ոչ՝ «գայթակղություններ»: Հավելենք, որ մեր կողմից կատարված հետազոտության տվյալներով՝ դեռահասության տարիքի տղաների 31,44%-ը և աղջիկների 5.93%-ը նշում են սեռական կյանքի փորձի մասին, այսինքն՝ առողջության պահպանման տեսանկյունից մերժողական մոտեցումներն արդիական չեն, քանզի առկա խնդիրներն այլ բնույթի են և պահանջում են ըստ էության ավելի խոր, իրատեսական լուրջ մոտեցումներով լուծումներ:

Դեռահասներին տրամադրված գիտելիքները պետք է լինեն ճիշտ ձևաչափի և համապատասխան ուղղորդիչներով, այլապես դրանք կկորցնեն իրենց ինքնապաշտպանական կանխարգելիչ նշանակությունը: Սեռական հարցերի շուրջ թերի կրթությունը վաղ սեռական կապերի համար իսկապես կարող է շարժադրիչ գործոն դառնալ, իսկ ընտրված մերժողական ուղղորդիչները և արտահայտված խուսափողական մոտեցումները առողջության պահպանման տեսանկյունից սին են:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ դեռահասների սեռական դաստիարակության գործընթացում առկա հակասություններն բազմազան են. այսպես, առաջարկված սեռակրթությունը իր ձևաչափերով չի համապատասխանում ժամանակակից դեռահասների պահանջներին, սեռակրթության դասերը պրակտիկորեն վարում են ֆիզիկական դաստիարակության ուսուցիչները, ովքեր ըստ մեր ուսումնասիրությունների սեռակրթությանն առընչվող հարցերում արհեստավարժ չեն, չեն տիրապետում դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության արդի խնդիրներին, խիստ բացասական և մերժողական են ուսուցիչների մոտեցումները վաղ սեռական կապերի, ինչպես նաև իրենց կողմից մատուցվող նյութի հանդեպ, իսկ սեռական հարցերին առընչվող թեմաների մատուցման հետ կապված նրանց բարոյությունները վատթարում են սեռակրթության գործընթացը:

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ փաստարկները հավաստիորեն վկայում են ժամանակակից դեռահասների սեռական դաստիարակության էական բացթող

ղումների և թերությունների մասին, մինչդեռ սեռակրթությունը սեռական դաստիարակության որոշիչ փուլ է, իսկ սեռակրթության գործընթացում որոշիչ է կրթողի իմացության մակարդակը և մոտեցումները իրենց իսկ կողմից մատուցվող նյութի հանդեպ:

Այսպիսով, եթե խնդիրը դիտարկվում է դեռահասների սեռական դաստիարակության և առողջության պահպանման տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ առկա է ճիշտ ձևաչափի սեռակրթության և արհեստավարժ կրթողների պահանջարկ, իսկ դեռահասների սեռական դաստիարակության գործընթացի առկա բացթողումները և թերությունները կարելի է շտկել մանկավարժների պատրաստման և վերապատրաստման կրթական ծրագրերում ներառելով համապատասխան թեմաներով և արդիական ուղղորդիչներով սեռակրթության դասընթացներ, քանզի առկա արժեքային համակարգի փոփոխությունները թելադրում են վերաբերմունքի փոփոխություն և համարժեք ռացիոնալ մոտեցումներ, ինչը հնարավոր է սեռական հարցերի շուրջ թեկուզ նվազագույն, բայց ճիշտ գիտելիքների պայմաններում:

Դեռահասության տարիքի անձանց սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով առաջնակի հիվանդացության, սեռական հարցերի իմացության բացահայտման նպատակով դեռահասների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման, ինչպես նաև «Առողջ ապրելակերպ» առարկա դասավանդող ուսուցիչների և դեռահասների ծնողների շրջանում իրականացված հարցման տվյալների խորը և բազմակողմանի վերլուծության և գնահատման հիման վրա մեր կողմից վեր են հանվել հայ դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունները, ինչպես նաև դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության վրա ազդող առողջապահական, կրթական, սոցիալական, ընտանեկան և անձնական գործոնները, որոնց նշանակությունը էական է առողջության և անվտանգ վարքագծի ձևավորման գործընթացում:

Ելնելով իրականացված վերոնշյալ հետազոտության տվյալների վերլուծության և գնահատման արդյունքներից ու հաշվի առնելով հայ դեռահասի տարիքային, ազգային, մշակութային առանձնահատկությունները, մշակվել է «Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջություն» կրթական ծրագիր ուսուցիչների համար, որը նպատակադրված է դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանմանը սեռական վարքագծային ռիսկերի նվազեցման ճանապարհով: Ծրագիրը ներառում է հետևյալ թեմաները.

1. Սեռական օրգանների անատոմիա և ֆիզիոլո-

գիա:

2. Սեռական հասունացում:
3. Դեռահասների տարիքային առանձնահատկությունները:
4. Սեռի հիգիենա:
5. Ձեռնաշարժություն:
6. Բեղմնավորում:
7. Բեղմնականխիչ միջոցներ:
8. Սեռական և վերարտադրողական առողջություն, դրանց փոխհարաբերությունը:
9. Ցանկալի և պլանավորված վերարտադրությունը որպես անհատի ինքնահաստատման միջոց:
10. Սեռական առողջություն և սեռային հավասարություն:
11. Սեռական առողջություն և սեռական իրավունք:
12. Սեռական առողջությունը ոչ միայն հիվանդության բացակայություն:
13. Սեռական կողմնորոշում:
14. Սեռական խանգարումներ:
15. Սեռական բռնություն և չարաշահում:
16. Հոգեկենդան գործունեություն (ալկոհոլի և թմրանյութերի ազդեցությունները):
17. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ և դրանց նվազեցման ուղիներ:
18. Դեռահասների սոցիալիզացիայի գործընթացի առանձնահատկությունները:
19. Ռիսկը որպես սոցիալական ադապտացիոն գործընթացի հոգեբանական բնութագրիչ:
20. Տարբեր սոցիալական խմբերի դեռահասների վարքագծային ռիսկերը և ադապտացիայի առանձնահատկությունները:
21. Տարբեր սոցիալական խմբերի դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունները:
22. Դեռահասների վաղ սեռական կապերը որպես ադապտացիոն գործոն:
23. Անվտանգ սեռական կապեր:

Մեր կողմից առաջարկված սեռակրթությունը ներառում է ժամանակակից դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման տեսանկյունից անհրաժեշտ արդիական թեմաներ: Այդ ծրագրի համաձայն՝ դեռահասը, ուսուցանվելով արհեստավարժ ուսուցչի կողմից, ընկալում է վաղ սեռական կապերի, դրանց հետևանքների՝ վաղ մայրության, սեռավարակների, հղիության արհեստական ընդհատումների բացասական նշանակությունը առողջության պահպանման գործընթացում, գնահատում է անվտանգ սեռական վարքագծի նշանակությունը, իսկ ոչ մերժողական, կառուցողական իրավիճակային մոտեցումները

թույլ են տալիս ընդլայնել դեռահասների ինքնապաշտպանական հնարավորությունների սահմանները, և ձեռք բերած հմտությունները ճիշտ կիրառելու դեպքում մեծանում է սեռական վարքագծային ռիսկերի նվազեցումը հավանականությունը: Առ այդ, կրթական ծրագիրը թույլ է տալիս սեռական կյանքի փորձի բացակայության դեպքում սուբլիմացիոն գործիքների կիրառմամբ բարձրացնել դեռահասների սեռական զսպվածության շեմը:

Մեր կողմից առաջարկված սեռակրթությունը հնարավոր է կիրառել և դեռահասների դաստիարակության գործընթացում էական դրական փոփոխությունների հասնել նախ և առաջ ուսուցիչներին սեռական հարցերի շուրջ համապատասխան գիտելիքներ տրամադրելով, ինչի արդյունքում կփոխվեն նրանց մոտեցումները սեռակրթության հանդեպ և ճիշտ ձևաչափերի սեռակրթության պայմաններում արհեստավարժ մանկավարժը կարող է դառնալ սեռական դաստիարակության ու դեռահասների առողջության պահպանման գործընթացների կարևորագույն մասնակիցներից մեկը:

Մեր կողմից մշակված «Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջություն» կրթական ծրագրով «Առողջ ապրելակերպ» առարկա դասավանդող հարցված 62 ուսուցիչների շրջանում մեր իսկ կողմից իրականացվել են դասընթացներ և ապա՝ ետդասընթացային հարցումներ: Հարցումներն անցկացվել են «Առողջ ապրելակերպ» ուսուցչի ձեռնարկում ներառված 12 հարցից կազմված «Սեռավարակներ» թեստով: Կատարված հարցումների նախադասընթացային և ետդասընթացային տվյալների համեմատական վերլուծության և գնահատման արդյունքները հավաստիորեն վկայում են սեռական հարցերի շուրջ ուսուցիչների իրազեկվածության մակարդակի զգալի դրական տեղաշարժերի, սեռական հարցերի նկատմամբ նրանց մոտեցումների էական փոփոխությունների մասին: Դասընթացից հետո փոխվել է ուսուցիչների վերաբերմունքը սեռակրթության, դեռահասների վաղ սեռական կապերի և սեռական կյանքի փորձի հանդեպ: Նրանք ընդունում են ոչ մերժողական ուղղորդիչների դրական նշանակությունը ժամանակակից դեռահասների սեռական դաստիարակության գործընթացում և կարևորում ճիշտ ձևաչափերի սեռակրթության դերն ու նշանակությունը առողջ ապրելակերպի խթանման գործում:

Սեռական վարքագծային ռիսկերի նվազեցման ճանապարհով դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման գործընթացում էական են նաև ծնողների, դեռահասներին սպասարկող առողջապահական կազմակերպությունների դերն ու նշանակությունը:

Այսպիսով, մեր կողմից իրականացված հետազո-

տության արդյունքները փաստում են ՀՀ դպրոցական կրթական ծրագրում սեռակրթությանը առնչվող ուսումնական նյութերի մի շարք թերությունների ու բացթողումների, ինչպես նաև սեռակրթության գործընթացում ներառված ուսուցիչների սեռական հարցերի շուրջ իմացության ոչ պատշաճ մակարդակի, մերժողական մոտեցումների և ժամանակակից դեռականների սեռական դաստիարակության պահանջների անհամապատասխանության մասին: Դասընթացից հետո գրանցված տվյալները փաստում են սեռական հարցերի շուրջ ուսուցիչների իրազեկվածության մակարդակի զգալի աճի, վաղ սեռական կապերի ֆենոմենի հանդեպ մոտեցումների փոփոխություններին մասին, ինչը «Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջություն» կրթական ծրագրի արդյունավետության լուրջ գնահատական է:

տասխանության մասին: Դասընթացից հետո գրանցված տվյալները փաստում են սեռական հարցերի շուրջ ուսուցիչների իրազեկվածության մակարդակի զգալի աճի, վաղ սեռական կապերի ֆենոմենի հանդեպ մոտեցումների փոփոխություններին մասին, ինչը «Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջություն» կրթական ծրագրի արդյունավետության լուրջ գնահատական է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Журавлева И.В. Репродуктивное здоровье подростков и проблемы полового просвещения //Социология здоровья и медицины. СОЦИС. - М., 2004. - № 7. - с. 132-142.
2. Кон И.С. Психология ранней юности.Учебное пособие для студентов высших учебных заведений. - М., 2004. - 384 с.
3. Кулагина И.Ю., Колюцкий В.Н. Возрастная психология; Полный жизненный цикл развития человека. Уч. пособие. - М., 2001. - 464 с.
4. Митин М.Ю. Распространенность и структура гинекологической заболеваемости в подростковом возрасте. Диссертация канд. мед. наук. -М.,2006. - 123 с.
5. Овсиенко И.А. Подготовка будущего учителя к нравственно-половому воспитанию школьников. Автореферат дисс. канд. пед. наук. – Калуга, 2003. -18 с.
6. Уварова Е.В, Халимова Д.Р. Сексуальное поведение девушек-подростков как показатель репродуктивного здоровья общества //Гинекология. –М., 2012. - №1, том 14. – 3 с.
7. Bennett S E, Assefi N. P. School-based teenage pregnancy prevention programs: a systematic review of randomized controlled trials. //Journal of Adolescent Health 2005. – WHO. - № 36(1). - PP. 72-81.
8. Kinsey A. Ch. Early life and education. - N. Y., 1990. <http://www.indiana.edu/kinsey/publications/column2.html>. 15.12.2009

## РЕЗЮМЕ

### НАШЕ ОТНОШЕНИЕ К ФОРМАТУ И ВЕКТОРАМ ПОЛОВОГО ОБРАЗОВАНИЯ

Саргсян Г.Р.

ЕГМУ, кафедра общественного здоровья и здравоохранения

**Ключевые слова:** подростки, половое и репродуктивное здоровье, сексуальное образование.

Результаты проведенных нами исследований свидетельствуют о различных дефектах и упущениях в учебных материалах школьных программ, связанных с половыми вопросами, а так же несоответствие требований полового воспитания современных подростков с негативными отношениями и не-

удовлетворительным уровнем знаний учителей, вовлеченных в процесс полового образования. Полученные данные после обучения свидетельствуют о значительном росте уровня осведомленности учителей, изменения отношения к феномену ранних половых связей и являются серьезной оценкой учебной программы “Половое и репродуктивное здоровье подростков”.

## SUMMARY

### OUR APPROACHES TO THE SEXUAL EDUCATION FORMAT AND VECTORS

Sargsyan G.R.

YSMU, Department of Public Health and Healthcare

**Keywords:** adolescents, sexual and reproductive health, sexual education.

The results of the research carried out by us prove that in the educational program in Armenian schools teaching materials are several shortcomings and gaps concerning sexual education, the level of knowledge of sexual matters of the teachers involved in the process is inadequate, the denying attitudes and the educa-

tional demands of modern adolescent are inadequate, and the after-training data show that the teachers' awareness of sexual issues increased significantly, approaches to early sexual relations phenomenon have changed, which is a serious evaluation of the effectiveness of the “Adolescent sexual and reproductive health” educational program.

ՋՏԴ. 614.2:616-083-053.7(479.25)+614.1:312

## ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏԱԿԱՆԸ

Սարգսյան Գ.Ռ., Հայրապետյան Ա.Կ.

ԵՊԲՀ, Հանրային առողջություն և առողջապահության ամբիոն

**Բանալի բառեր՝** դեռահասներ, վերարտադրողական և սեռական առողջություն, սեռակրթություն:

Սեռակրթությունը սեռական դաստիարակության որոշիչ փուլ է, իսկ ադեկվատ սեռակրթության պայմաններում իրատեսական է սեռական վարքագծային ռիսկերի նվազումը, քանզի իրազեկված դեռահասի ինքնապաշտպանական հնարավորություններն ավելի մեծ են և իրազեկվածության մակարդակի բարձրացմանը զուգընթաց ձևավորում են համապատասխան մոտեցումներ ու իմացությանը համարժեք վարքագծային դրական փոփոխություններ [2, 3, 4, 8, 9, 10]:

Հատկապես դեռահասների վերարտադրողական առողջության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերարտադրողական առողջության պահպանման գործընթացում առաջնային է բժշկա-սոցիալական կանխարգելիչ միջոցառումների նշանակությունը, իսկ վերարտադրողական բաղադրիչի նկատմամբ անհատի ակտիվ ինքնապաշտպանական վարքագիծ կարող է ձևավորվել ժամանակին համապատասխան սեռական դաստիարակության և ճիշտ ձևաչափերի սեռակրթության միջոցով [1, 5, 6, 7]:

Սույն գիտական աշխատանքի նպատակն է սեռական վարքագծային ռիսկերի նվազեցման ճանապարհով դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանումը: Որպես վարքագծային փոփոխություն մեր կողմից դիտարկվում է ոչ թե սեռական կապի բացառումը, այլ սեռական և վերարտադրողական առողջության տեսանկյունից ոչ ռիսկային՝ անվտանգ սեռական հարաբերությունը: Նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝ բացահայտել և գնահատել վաղ ռիսկային սեռական կապերի հետևանքների տարածվածությունը դեռահասության տարիքի անձանց շրջանում, մշակել դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունների ուսումնասիրության տեղեկատվական հարցաթերթիկ, որոշել սեռական հարցերի շուրջ դեռահասների իմացության աստիճանը և նրանց վարքագծային առանձնահատկությունները, մշակել կրթական ծրագիր ռիսկային սեռական վարքագծային դրսևորումների նվազեցման ուղղությամբ, գնահատել մշակված ծրագրերի արդյունավետությունը:

Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ իրազեկվածության, այդ հարցերի նկատմամբ նրանց վերաբերմունքի, ինչպես

ևսև սեռական վարքագծային առանձնահատկությունների խորը և բազմակողմանի ուսումնասիրության նպատակով մեր կողմից մշակվել է «Դեռահասների սեռական դաստիարակության առանձնահատկությունների ուսումնասիրության» տեղեկատվական հարցաթերթիկ, որի համար հիմք են հանդիսացել մեր իսկ կողմից իրականացված հետազոտության արդյունքները և առկա համաշխարհային գիտական փորձը: Հարցաթերթիկը բաղկացած է հիմնական հարցերից և ենթահարցերից, որոնք խմբավորվել են ըստ հետևյալ խմբերի՝ անձնական տվյալներ, սեռական հարցերի շուրջ իրազեկվածություն, վնասակար սովորություններ, սպասարկող բժշկական հաստատությունների հաճախումներ, վաղ սեռական վարքագծային դրսևորումներ և դրանց հետևանքներ:

Մեր կողմից հատուկ մշակված տեղեկատվական հարցաթերթիկով Երևան քաղաքի բոլոր վարչական տարածքների 11 օժանդակ և հիմնական դպրոցներում 13-18 տարեկան դեռահասների շրջանում իրականացվել է անանուն հարցում: Կամավորության սկզբունքով նախադասընթացային հարցմանը մասնակցել են 464, իսկ ետդասընթացային՝ 462 դեռահասներ, որոնց 58%-ը աղջիկներ են, իսկ 42%-ը՝ տղաներ: Նախադասընթացային հարցման տվյալները հավաստում են, որ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ դեռահասների իրազեկվածության մակարդակը բավականին ցածր է, իսկ տեղեկատվության աղբյուրները պատահական են՝ հասակակիցներ, համացանց և այլն. 31,10%-ը (200) սեռական հարցերի շուրջ տեղեկանում են հասակակիցներից, 17,42%-ը (112)՝ համացանցից, 15,55%-ը (100)՝ ուսուցիչներից, 9,95%-ը (64)՝ հատուկ գրականություն կարդալով, իսկ նրանց 17,73%-ը (114) չեն ցանկացել նշել սեռական հարցերի իրազեկման աղբյուրների մասին: Հարցված դեռահասների 79,74%-ը (370) անցնում են «Առողջ ապրելակերպ» առարկան, 80,48%-ի (301) կարծիքով սեռական հարցերի շուրջ թեմաները շրջանցվում են կամ մատուցվում բարդ, ավելի շատ անհասկանալի: Առ այդ, դեռահասների 76,08%-ի (353) կարծիքով անհրաժեշտ է կրթական ծրագրերում ներառել տարիքին համապատասխան սեռակրթության դասընթացներ: Նրանց վերաբերմունքը հանդեպ վաղ սեռական կապերը դրական է, ավելին՝ հարցվածների գերակշռող մասի՝ 62,0%-ի կարծիքով վաղ սեռական կապերը առողջության վրա ազդողություն չեն թողնում, իսկ տղաների 31,44%-ը ու աղջիկների 5,93%-ը նշում են իրենց և հա-

**Աղյուսակ 1**

Չեռագոտության մեջ ընդգրկված դեռահասների սեռական կյանքի փորձի վերաբերյալ նախա և ետդասընթացային տվյալներ

Չարց	Նախադասընթացային						Ետդասընթացային					
	ար.		իգ.		ընդ.		ար.		իգ.		ընդ.	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
այո	61	31,44	16	5,93	77	16,59	55	32,74	17	5,78	72	15,58
ոչ	77	39,69	247	91,48	324	69,83	77	45,80	264	89,80	341	73,81
չեմ պատ.	56	28,87	7	2,59	63	13,58	36	21,40	13	4,42	49	10,61
ընդ.	194	100	270	100	464	100	168	100	294	100	462	100

սակակիցների սեռական կյանքի փորձի մասին:


Ըստ դեռահասների՝ վաղ սեռական կապերը նպաստում են սոցիալական ադապտացիային և ինքնահաստատմանը, որոնք այդ տարիքին բնորոշ հատկանիշներ են, սակայն, եթե դեռահասը ընտրում է սեռական կապերով ադապտացվելու կամ ինքնահաստատվելու ճանապարհը, ապա դա արդի ժամանակների բնորոշ երևույթ է և ինքնին՝ սեռական դաստիարակության մոտեցումների փոփոխության պահանջարկ: Եթե երեխան պատշաճ սեռակրթության միջոցով ստանա ճշմարիտ գիտելիքահեն պատասխաններ, ապա և՛ ադապտացիայի, և՛ ինքնահաստատման գործընթացում չի տուժի ամենակարևորը՝ դեռահասի առողջությունը:

Ըստ հետազոտության տվյալների վերլուծության արդյունքների, դասընթացից հետո փոխվել է դեռահասի պատկերացումները սեռական վարքագծի անվտանգության վերաբերյալ: Այսպես, եթե դասընթացից առաջ դեռահասը կարծում էր, որ անվտանգը խնդիրն իրենից հեռացնելն է, ապա դասընթացից հետո նա գիտակցում է, որ եթե ոչ այսօր, ապա վաղը, դա իրական լուծումներ պահանջող խնդիր է, իսկ ճիշտ լուծում է անվտանգ վարքագծի վերաբերյալ իմացությամբ զինվելը: Ընդ որում, դեռահասը հասկանում է, որ վարքագծային ռիսկերը կարելի է կարգավորել տարիքին համապատասխան ձևաչափերի սեռակրթությամբ:

Եթե դաստիարակության գործընթացում կրթվողի ինքնագիտակցությունը հասնում է մի աստիճանի, երբ վարքագծի անվտանգությունը դիտարկվում է սեփական և զուգընկերոջ առողջության անվտանգության տեսանկյունից, ապա իմացության մակարդակում առկա են լուրջ որակական փոփոխություններ:

Ըստ սեռական կյանքի փորձի վերաբերյալ հարցի պատասխանների (աղ. 1, նկ. 1), դեռահասների հասակակիցների գրեթե 43,10%-ը (200) ունեն սեռական կյանքի փորձ, իսկ սեփական փորձի վերաբերյալ նախադասընթացային հարցման տվյալներով դրական պատասխան տվել են հարցված դեռահասների 16,59%-ը (77), ընդ որում, այդ պատասխանների 31,44%-ը (61) նշել են տղա-

ները, 5,93%-ը (16)՝ աղջիկները, ընդ որում, սեռական կյանքի սկզբի տարիքը միջինում կազմել է 15,4 տարեկանը:



**Նկ. 1** Դեռահասների սեռական կյանքի փորձի վերաբերյալ համեմատական տվյալներ

Դասընթացից հետո սեռական կյանքի փորձի մասին նշում են դեռահասների 15,58%-ը, առ այդ դրական պատասխան տվել են դեռահաս տղաների 32,74%-ը (55) և աղջիկների՝ 5,78%-ը (17): Չարցին չեն ցանկացել պատասխանել դասընթացից առաջ և հետո հարցվածների համապատասխանաբար 13,58%-ը (63) և 10,61%-ը (49):

Ըստ նախադասընթացային հարցման տվյալների մասնակիցների 69,83%-ը (324) չունեն սեռական կյանքի փորձ, իսկ այդպիսի պատասխան դասընթացից հետո նշել են հարցվածների 73,81%-ը (341):

Բերված համեմատական վերլուծության տվյալները և դրանց գնահատման արդյունքները հավաստիորեն փաստում են, որ սեռական կյանքի փորձ ունեցող դեռահասների մասնաբաժինը դասընթացից հետո էապես ( $X^2=2,35; P>0,05$ ) չի նվազել: Ընդ որում, սեռական կապերի բացառումը որպես սեռական վարքագծային փոփոխություն մեր կողմից չի դիտարկվել, քանզի այն իրատեսական չէ, ինչի մասին փաստում են հետազոտության

**Աղյուսակ 2**

Վերջին հարաբերության ընթացքում բեղմնականիսիչ միջոցների օգտագործման վերաբերյալ համեմատական տվյալներ

Հարց	Նախադասընթացային						Ետդասընթացային					
	ար.		իգ.		ընդ.		ար.		իգ.		ընդ.	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
այո	21	34,43	10	62,50	31	40,26	43	78,18	14	82,35	57	79,17
ոչ	40	65,57	6	37,50	46	59,74	12	21,82	3	17,65	15	20,83
ընդ.	61	100	16	100	77	100	55	100	17	100	72	100

վերոնշյալ արդյունքները:

Նախադասընթացային տվյալներով, սեռական կյանքի փորձով դեռահասների 1,51%-ը (7) նշել են, որ չպաշտպանված սեռական հարաբերության ելքում՝ զուգընկերներից, վարակվել են քլամիդային վարակներով, հետանցքասեռական գորտնուկներով և գարդներեյլոզով (աղ. 2):


Նախադասընթացային տվյալներով, հարցված աղջիկների 0,76%-ը (2) որպես ռիսկային սեռական կապերի հետևանք նշում են հղիության մասին, ինչը ընդհատել են արհեստական եղանակով, ևս 0,76%-ը (2) չեն ցանկացել պատասխան տալ, դասընթացից հետո հարցին դրական պատասխանողներ չեն եղել, իսկ պատասխան չեն տվել դեռահաս աղջիկների 0,76%-ը (2):

Դեռահասների սեռական և վերարատադրողական առողջության պահպանման հարցում մեր կողմից խիստ կարևորվում են դեռահասներին սպասարկող բժշկական ծառայությունների խորհրդատվական, կանխարգելիչ և բուժական դերն ու նշանակությունը, սակայն, ըստ հարցման տվյալների, թույլ է կապը դեռահասության տարիքի երեխաների ու առաջնակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների միջև, ինչը լուրջ բացասական գործոն է ընդհանրապես հիվանդությունների կանխարգելման գործընթացում: Աշխարհի բազմաթիվ երկրներում սեռակրթությունը ուղեկցվում է բժշկական խորհրդատվությամբ, կանխարգելիչ հմտությունների ուսուցմամբ, սկրինինգ թեստերի կիրառմամբ, որոնք իրականացնում են բժշկական հաստատությունները:

Չնայած, ըստ նախադասընթացային և ետդասընթացային հարցումների տվյալների դեռահասների համապատասխանաբար 57,01%-ին և 62,24%-ին բավարարում են ստացած բժշկական ծառայությունների որակը, այնուամենայնիվ, կանխարգելիչ հետազոտությունների համար առողջապահական հիմնարկներ հաճախում են նրանց համապատասխանաբար 9,28 %-ը և 10,07%-ը:

Սեռակրթության դասընթացն անցած դեռահասը, ըստ վերը ներկայացված համեմատական վերլուծության տվյալների, ունի անհրաժեշտ գիտելիքներ սեռական և

վերարատադրողական առողջության հարցերի շուրջ, գիտի անպաշտպան սեռական հարաբերությունների բացասական հետևանքների և դրանցից պաշտպանվելու մասին և այդպիսի դրության մեջ իրատեսական է պատասխանատու վերաբերմունքը սեփական և զուգընկերոջ առողջության նկատմամբ ու վարքագծային փոփոխությունները սեռական ռիսկային դրսևորումների նվազեցման ճանապարհով:



**Նկ. 2** Վերջին հարաբերության ընթացքում բեղմնականիսիչ միջոցների օգտագործման վերաբերյալ համեմատական տվյալներ

Սեռական դաստիարակության գործընթացում Էական է իմացության ճիշտ կիրառումը սեռական կյանքում, ինչը կրթական ծրագրի ամբողջ ձևաչափի օբյեկտիվ գնահատականն է: Այսպես, վերջին սեռական հարաբերության ընթացքում բեղմնականիսիչ միջոցների օգտագործման վերաբերյալ հարցի նախադասընթացային հարցման տվյալներով (աղ. 2, նկ. 2), վերջին սեռական հարաբերության անվտանգության մասին հոգացել են սեռական կյանքի փորձով դեռահասների 40,26%-ը (31), ընդ որում, այդպիսի պատասխան նշել են սեռական կյանքի փորձով տղաների 34,43%-ը (21) և աղջիկների 62,50%-ը (10):

Դասընթացից հետո սեռական հարաբերության անվտանգության մասին հոգացել են սեռական կյանքի

փորձով դեռահասների 79,17%-ը (57), որը նախորդ ցուցանիշից մեծ է 2 անգամ, առ այդ, դասընթացից հետո պաշտպանված սեռական հարաբերություն ունեցել են սեռական կյանքի փորձով տղաների 78,18%-ը (43) և աղջիկների 82,35%-ը (14):

Վերոնշյալ համեմատական վերլուծության տվյալները և դրանց գնահատման արդյունքները հավաստիորեն փաստում են հարցված դեռահասների սեռական վարքագծի որակական փոփոխությունների մասին, ինչը ըստ ելության սեռակրթության դասընթացի արժանահավատ լինելու վերաբերյալ լուրջ գնահատական է ( $X^2=23,29$ ;  $P<0,05$ ):

Սեռական կյանքի փորձի առկայության պայմաններում դեռահասը ստանալով տարիքին համապատասխան ձևաչափերի սեռակրթություն դրսևորվեց որակապես առավել բարձր մակարդակում՝ անվտանգ սեռական վարքագծով: Այսպես, դեռահասը կարողացավ գնահատել ռիսկի աստիճանը և հասկացավ, որ տվյալ դեպքում ճշմարիտ լուծումը պաշտպանված՝ անվտանգ սեռական

վարքագծային դրսևորումն է և ներկայացավ որակապես առավել բարձր մակարդակում՝ անվտանգ սեռական վարքագծով:

Այսպիսով, որպես սեռակրթության դասընթացի և կրթական ծրագրի արդյունավետության օբյեկտիվ ցուցանիշ մեր կողմից ուսումնասիրվել է սեռական ռիսկային վարքագծային դրսևորումների որակական փոփոխությունները, ընդ որում, որպես վարքագծային փոփոխություն դիտարկվել է անվտանգ սեռական հարաբերությունը, այլ ոչ՝ դրանց բացառումը: Սեռական հարցերի շուրջ իրազեկվածության մակարդակի բարձրացման արդյունքում փոխվում են դեռահասների մոտեցումները ինդրին՝ նրանք կարողանում են գնահատել ռիսկային սեռական վարքագծի ազդեցությունը սեռական և վերարտադրողական առողջության պահպանման տեսանկյունից, քանզի իրազեկված են ռիսկի աստիճանի վերաբերյալ, իսկ սեռական հարցերի նկատմամբ նոր մոտեցումները նպաստում են առողջության համար անվտանգ՝ պաշտպանված սեռական վարքագծի դրսևորմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ершов, В.Н. Медицинские и социальные проблемы репродуктивного здоровья девушек-подростков / В.Н. Ершов // Контрацепция и здоровье женщины. 2001. - № 2. - С. 25-26.
2. Кон И.С. Подростковая сексуальность на пороге XXI века. Социально-педагогический анализ. Дубна: «Феникс+», 2001. - 208 с.
3. Сухарева Л.М., Куинджи Н.Н. Особенности формирования репродуктивного потенциала у современных школьников //Российский педиатрический журнал. 1998. -№1. - С. 14-18.
4. Чернышева, С. В. Научно-практические основы полового воспитания девочек-подростков в учебно-воспитательном процессе школы, 2008,
5. Bennett S E, Assefi N. P. School-based teenage pregnancy prevention programs: a systematic review of randomized controlled trials. //Journal of Adolescent Health 2005. - WHO. - № 36(1). - PP. 72-81.
6. Grigoryan S. Hakobyan A., Papoyan A. et al. HIV epidemiological surveillance in the Republic of Armenia 2007. Yerevan, Armenian national AIDS Foundation, 2008, 216 p.
7. Roelofs S.E., Khomasuridze T. The millennium development goals, social determinants and sexual and reproductive health: an overview in Europe //Entre Nous. - WHO, 2011. - № 73. - PP. 12-14.
8. Wellings K., Collumbien M., Slaymaker E. et al. Sexual behaviour in context: a global perspective //Sexual and Reproductive Health. - London, 2006. - № 2.
9. WHO. The WHO Strategic Approach to strengthening sexual and reproductive health policies and programmes. - Geneva, 2007. - 8 p.
10. Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ազգային ռազմավարություն

## РЕЗЮМЕ

### ОЦЕНКА РЕЗУЛЬТАТИВНОСТИ УЧЕБНОЙ ПРОГРАММЫ ПОЛОВОГО ВОСПИТАНИЯ

Саргсян Г.Р., Айрапетян А.К.

ЕГМУ, кафедра общественного здоровья и здравоохранения

**Ключевые слова:** подростки, половое и репродуктивное здоровье, сексуальное образование.

Исследования факторов влияющих именно на репродуктивное здоровье подростков, показали, что в деле охраны репродуктивного здоровья первичное значение имеют медико-социальные профилактические мероприятия, а самосохраняющее поведение к репродуктивному компоненту может сформироваться при адекватном половом воспитании и правильном формате полового образования.

Результаты наших исследований доказывают, что повышение уровня знаний подростков по половым вопросам по существу понижает риск половых поведенческих проявлений, поэтому половое образование с правильным форматом серьезный фактор охраны репродуктивного здоровья.

The results of the studies we have made prove that increasing the adolescent's knowledge of sexual matters significantly reduces the level of risky sexual behavioral manifestations, therefore the sexual education in correct format is a serious factor in perspective of reproductive health care.

## SUMMARY

### THE EVALUATION OF THE EFFICIENCY OF THE SEXUAL EDUCATION EDUCATIONAL PROGRAM

Sargsyan G.R., Hayrapetyan A.K.

YSMU, Department of Public health and healthcare

**Keywords:** adolescents, sexual and reproductive health, sexual education.

Studies on the factors affecting especially adolescent reproductive health indicate that in the reproductive health care process medical and social preventive measures are primary, and individual's active self-defense behavior towards the reproductive component may be formed through the appropriate time and

with the right format sexual education.

The results of the studies we have made prove that increasing the adolescent's knowledge of sexual matters significantly reduces the level of risky sexual behavioral manifestations, therefore the sexual education in correct format is a serious factor in perspective of reproductive health care.

Յեղիևակ	Էջ
Արրահամյան Ա.Յ.	24
Ալեքսանյան Վ.Յ.	129, 132
Աղաբեկյան Ս.Ա.	114
Այվազյան Գ.Ս.	136
Ասոյան Ա.Վ.	129
Ավագյան Մ.Ն.	24
Ավագյան Վ.Ս.	24
Ավետիսյան Է.Ե.	20, 89
Արշակյան Ն.Ի.	83
Բաղդասարյան Ն.Գ.	136
Բայկով Ա.Վ.	73
Դալայան Մ.Յ.	153
Եղունյան Մ.Ա.	37
Խոստիկյան Ն.Գ.	16, 20, 89, 92
Կալիկյան Չ.Գ.	24
Յակոբյան Ա.Ս.	16, 20
Յակոբյան Գ.Ա.	16, 20
Յակոբյան Վ.Է.	24
Յայրապետյան Ա.Վ.	172
Յայրապետյան Լ.Գ.	64
Յարությունյան Յ.Վ.	11
Յարությունյան Զ.Ս.	45
Յովհաննիսյան Լ.Գ.	132
Ղազարյան Ն.Լ.	73
Ճանճապանյան Ա.Ն.	153
Մարդանյան Լ.Ս.	89, 92
Միրզոյան Յ.Յ.	30, 37
Միրիչանյան Մ.Ս.	11
Մնացականյան Ն.Ռ.	136
Նազարյան Տ.Զ.	129
Նավասարդյան Գ.Ա.	164
Շողերյան Ս.Ա.	3

Պապյան Ա.Վ.	11, 92
Պատրիկյան Դ.Ա.	37
Պետրոսյան Ս.Ռ.	64
Պողոսյան Ս.Բ.	153
Սահակյան Ն.Ա.	3
Սարգսյան Գ.Ռ.	168, 172
Սարգսյան Յ.Տ.	45, 129, 132
Սելիմյան Ա.Ե.	24
Սիմոնյան Լ.Յու.	3
Սողոմոնյան Մ.Ռ.	149
Վարդանյան Լ.Շ.	24
Տեր-Չաքարյան Ս.Յ.	153
Քոթանյան Ա.Յ.	142
Փանարջյան Ռ.Վ.	37
Авагян В.М.	50
Авагян М.Н.	50
Акопян А.Э.	102
Арутюнян Г.А.	50
Гюлазян Н.М.	78
Даниелян И.Э.	160
Калайджян В.А.	95
Киракосян Р.Г.	50
Саакян Н.А.	7
Шаапуни А.Р.	67
Шахраманиян В.А.	102
Ягджян Г.В.	50
Arustamyan N.A.	119
Grigoryan B.E.	119
Harutyunyan A.S.	119
Mahavir S.	123
Movsesyan M.A.	119
Petrosyan A.H.	123
Yaghjian G.V.	119



